2469
2470

Для записей

Учетная

книга

№ 1-3

Регистрация

1968-1969

84
И-63



1204 ա

ԳԱՂՏԻՔ ԲԱՐԻՉՔ

84-
Ա-63

ԳԱՂՏՆԻՔ ՖԱՐԻԶԻ

ՀԵՂԻՆԱՑ

ԷՕԺԷՆ ՍԻՒ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Առաջին հատոր

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԶ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՐՆԻ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ
1868

Ս. ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NEW-YORK
S. DEVEJIAN LIBRARY

2011

685

2390
39 9

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԷՆ

ՉՊԱՏ լուսաւորեալ կամ լուսաւորելու շարժող ազգ մը որ Էօժէն Սիւի այս երևելի վիպասանութիւնը թարգմանած և զանազան տպագրութեամբ 'ի լոյս ընծայած չըլլայ։

Մեր ազգը, որ կ'ըսկսի ընթերցասիրութեան հակիլ, եթէ ոչ լուսաւորեալ ազգաց համընթաց, ինչու գոնէ անոնց հետևող չըլլայ, ինչու զրկուած ըլլայ այս բարեմասնութենէն, քանի որ շարժող մամուլ, գործող ձեռներ ու խորհող մտքեր ունինք։

Եւ քանի որ մեր ազգը այս հանգամանքներէն զուրկ չէ, ինչ բան արգելը կ'ըլլայ մեր քայլերուն, և ինչ բան կը պակսի մեր նպատակին հասնելու։— Գրասիրական ընկերութիւններ։

Ինչու այնպիսի ընկերութիւններ չունենայինք, որոնց նպատակն ըլլար միայն ազգային ընթերցանութիւնը տարածել, գրագէտները, թարգմանիչները վարձատրել, քաջալերել, և անոնց աշխատութիւնները 'ի լոյս ընծայել։

Քանի քանի ընկերութիւններ հաստատուած են մեր ազգին մէջ և կը հաստատուին ամէն օր, և բաւական գրամագլուխ ալ կը գտնեն, բայց անոնք ամէնքն ալ զանազան կէտեր ունին. այս նպատակաւ ընկերութիւն մը հաստատուած չէ դարդ։

Եւ քանի որ այս տեսակ ընկերութիւններ չկան, անկարելի է աւելի մեծ քայլեր յուսալ, այլ միշտ միևնոյն ընթացքով և միշտ մի և նոյն յուսահատականքայլով պիտի քալենք։

Գրագէտ մը հեղինակութիւն մը կը յօրինէ, թարգմանիչ մը թարգմանութիւն մը կ'ընէ, բայց քաջալերութիւն մը չտեսնելով կը վհատի, գործը մէկ կողմ կը նետէ, և ուրիշ զբաղման կը հետևի։

Հրատարակիչ մը՝ առանց արտաքին քաջալերութիւն մը ստանալու՝ որչափ և աղդասիրաբար զոհողութիւններ ընէ, որչափ և գրագէտներն ու թարգմանիչները քաջալերէ, մասնաւոր անձ մ'է, իւր զոհողութիւնները մինչև սահմանեալ կետ մը կը տարածէն, չկրնար ընկերութեան մը [illegible]տնելու գործը տեսնել, մանաւանդ երբ իւր մտաքը ելքին չհամապատասխաներ։

Նպատակս ազգին զոհողութիւն ընելս խմացընել չէ, այլ առաջարկել որ գոնէ երևելի քաղաքաց մէջ Գրասիրական ընկերութիւններ հաստատուին, որով ընթերցանութիւնը ազգերնուս մէջ տարածուի և ազգայինք փոխանակ ծոսի զուարճութիւններով իրենց ժամանակը և ստակը կորսնցընելու՝ ընթերցանութեան մէջ իրենց զուարճութիւնը գտնեն։

Այսու ամենայնիւ ես չպիտի կասիմ, եթէ այն ընկերութիւնները հաստատուին կամ ոչ, ազգին օգտին համար զոհողութիւններ ընել, սկսաս մի և նոյն եռանդով շարունակել, և ուրիշ կարևոր և օգտաւէտ հրատարակութիւններ ընծայել ազգիս 'ի ծաւալումն ընթերցանութեան և յօգուտ Հայրենեաց։

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԼԱՆ

2003

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

ԱԶԳԻՆ բարոյական և մտաւոր օգտին փոքր 'ի շատէ մտածող հայ լանասէր մը չկայ՝ որ երբ առաջին անգամ օտար գիրք մը կարդայ չդողէ · «Ո՞ւր էր թէ ասոր հայերէնը թարգմանուած ըլլար »։ Մի և նոյն ձայնն է-լաւ նաև մեր սրտէն երբ ասկէ տասն վեց տարի առաջ սոյն հռչակաւոր վիպասանութիւնը կարդացինք։ Սակայն, ինչպէս մեր փափաքը նիւթական միջոցներու չդոյութենէն անգործադրելի մնաց, նոյնպէս փորձառութիւնն ու ազգին կացութեան աւելի հասուն քննութիւն մը մեր այս փափաքին ապրբեր ուղղութիւն մը տուին · · ·։

Երբ այս անգամ՝ մանաւանդ՝ Մեծարգոյ Տիգբան Յարութիւն Տէտէեանը քաջալերեց և յորդորեց մեզ այս վէպիս թարգմանութեան, նորէն սա էս կան խնդիրը յուզաւ մեր մտքին մէջ։ «Մինթէ Գոլդնիֆ Բուրիվն օգտակար կրնայ ըլլալ ազգին, մինթէ պատմական, իմաստասիրական, գիտնական գիրքերու թարգմանութիւնն աւելի չնպաստե՞ր ազգային յառաջադիմութեան։

Այս խնդիրը՝ թէև առ երևոյթս պարզ ու մակէն, լուծելու համար քանի մը հարեւանցի խորհրդածութիւններ ընելու պէտքը կզգանք։

Մեր ազգը կրթուելու համար երկու միջոց ունի · ուսումնարան ու լրագիր, պարբերական թերթեր, գիրքեր են։ Առաջինը մանկուոյն համար, երկրորդը հասուն մարդուն։ Հայ մանկոին առ հասարակ գպրոցներու մէջ հազիւ փոքր ինչ ուսումի ճաշակը կառնու, քանի մ'օտար բառեր կը սորվի և շուկան կը նետուի · հայ մարդը՝ եթէ երբէք ուսումնասիրութեան կոչ մը սրտին մէջ կը վառի, օրական թերթերու մէջ ճարակ փնտռելու կ'ելնէ, և ստացած մտային վայելումը ծխափայտին մին պէս յօդս կը ցնդի։ Իսկ յաբառև հակում ու ճիգ ուսումի խորը թափանցելու, իսկ իրմ և աբ գրական վերհագոյն խնդիրներ ուսնելու ոչ միոյն և ոչ միւսին վրայ կը տեսնուի։ Ուրիշ առթի թողլով առ հասարակ հայ ուսումնարաններու ամբողջութեան խնդրոյն քննութիւնը, նպատակ ունինք հրանք են հայերուն այս անդրասիրութեան պատճառները։

Այս անդրասիրութիւն բնական չէ, հայերն անընթերցասէր ժողովուրդ մը չեն, ըստ որում կարող ենք ըսել թէ չկայ արևելքի մէջ ազգ մ'որ հայուն չափ էր ընթիկ գրականութեան հմտութիւն ունենայ, և արթուն ու ընդունակ ըլլայ ուսումի և գիտութեան։ Վկայ՝ հայաբնակ և օտարաբնակ հայերն որ Նարեկ, Շնորհալի, բազմաթիւ Շարականներ, և Աւետարանը գրեթէ գոց տեն, թէև ոմանք մեքենապէս։ Վկայ՝ Պոլսի հայ բեռնակիրներն որ կարդալ գրել և ուսում կը սորվին · վկայ՝ մեր 3րդ դարու գրական շարժումը · վկայ՝ այն երևելի գլուխներն որ մեր հին մատենագրութեան ասողերն եղան, թէև իրենց լայն գրսէն առին և ընթիցուցին (naturaliser)։ Վկայ՝ այժմու Եւրոպա դացող և հայ անուան պարծանք բերելու կերպով դարձող հայկական ուսումնականները, արուեստագէտները, գիտունները, բժիշկները, քաղաքագէտները, նոյնպէս անոնք որ իրենց հայրենի շրջանին մէջ մնալով թէև՝ անուն ստացած են հայոց գրական աշխարհին մէջ։ Վկայ՝ այն եռանդն որով կը բորբոքի ուր սրբեմն ժողովուրդն երբ հանով հոսով հրատարակութիւն մ'երևանելն է։

Սակայն այս արիթնութեան և ընդունակութեան սնունդ տալու և հանրական դործելու միջոցները պակաս են։

Եւ արդարև մեկ կողմէն ազգ մ'որ միտքը շինելու համար՝ փոխանակ ընդհանուր դործի մը՝ լեզուին, պէս պէս դործիներու կարօտ է. ազգ մ'որ ցիր ու ցան է և իրարու մոռացեալ անհաղորդ. ազգ մ'որ մի և նոյն ազգային դաստիարակութիւնը չընդունիր իր ուսումնարաններուն մէջ, ազգ մ'որ մանաւանդ նիւթական աղէտից ներքև կը տարապի և օրական պարէնը հայթայթելու երկանց մէջ է, այսպիսի ազգի մը համար դրաւիրութիւնն առ հարկի անհպելի յաւերժահարս մը, բարձրագոյն վայելում, ճոխութիւն, շռայլութիւն կը համարուի։

Միւս կողմէն՝ ազգ մ'որ թէև դրասէր ու ընթերցասէր, սակայն ընթերցասիրութեան ծարաւն անցնելու համար ոչ իր հին դրականութեան փոշոտ ու խրթին դրենոյն մէջ հրապոյր մը կը դտնէ, ոչ վանական ոմանց և մերթ անիմանալի երկասիրութիւններու մէջ անուշութիւն մը, դրգիռ մը, ժամանակիս ոգւոյն պատասխանող նոր ու ճշմարիտ ոգեբուռնք մը, իր հոգւոյն թելերը շարժող լեզու մը. ոչ ազգային նոր ու հզօր հանճարներ կը տեսնէ որ, կամ իր արդի կենաց ու բարուց նկարագիրը վիպական ձևով մը ներկայեն, կամ իր հին պատմութեան փոշին խառնեն և իմաստասիրական, մնտեսագիտական դասեր հանեն, մէկ խօսքով, բարոյական և բնական դիտութիւններու մէկ ճիւղը մշակելով հրապահանդիչ և զուարճալի հեղինակութիւններ 'ի լոյս ընծայեն, այսպիսի ազգ մը հարկաւ բոլորովին կ'օտարանայ ընթերցանութենէ, զանազան դեղեցիկ զուարճութիւններու մէջ սփոփում կը փնտռէ և ատեպ կործանում կը դտնէ։

Ահա այս մռայլին ծանր հիւանդութեան դուռը հասեր էին հայերը և անբաւական կը համարէին վանական դեղարաններէն իրենց արուած դեղերը։

Եւ արդարև վանական դպրութեան օրն անցաւ. ատեն մը օգտաւէտ էր. ատեն մը քանի մը վանքեր հայ գրականութեան շունչ տուին, աւերակներու և փոշիներու մէջէն անոր նշխարները հանեցին, և մերթ այլակերպելով՝ մեզի ընծայեցին՝ թէև քիչ մը սուղ, սակայն եթէ վանքերը՝ թէ հայկական ըլլան և թէ մխիթարեան, յանդգնին այժմ ևս խորհելու որ կրնան հայերուն մէջ ընթերցանութեան սէրն արծարծել՝ մեծապէս կը սխալին։ Վանական մը կրնայ գոհ ընել աշխարհականի մը միտքն ու սիրտը. միթէ մեր երևելի հայրապետները վանական էին. միթէ վանական մ'ազատութիւն ունի՞ մարդկային հոգին շարժող կիրքերն դործ ածել. ունի՞ սիրտ, ունի՞ ընտանեկան սէր, հայրական սէր, որդիական սէր, ազգային սէր, բաց 'ի վանական սիրէն։ Այո՛, պէտք է ժողովրդեան մէջ ապրիլ, անոր լեզուն սորվիլ ու խօսիլ, անոր պիտոյքը ճանչնալ, ժամանակիս ոգւոյն հաղորդ դտնուիլ, որպէս զի կարելի ըլլայ նոյն ժողովրդեան ցաւերուն դարման դտնել։ Վանական մ'իր անձուկ շրջանին մէջ կամ շատ աստուածաբան, շատ գիտուն, շատ հմուտ, շատ սրամիտ է, և կամ շատ կրօնամոլ, շատ շլամիտ ու տգէտ, սակայն ինչ որ ըլլայ, ազատամիտ կամ կարճամիտ՝ իր Միաբանութեան ոգւոյն ու սիրոյն հնազանդելն իր առաջին ու դեւերական պարտաւորութիւնն է, ապա թէ ոչ ուխտադրուժ է, և իրը պն՝ իր Միաբանութեան կարդէն կարտաքսուի։ Եւ արդէն գիտենք թէ կրօնակա-

Միաբանութեան մը սկզբունքն ալ դիտելու, խորհելու, յուսալու ազատութեան բացասութիւնն է։

Արդ քանի որ հայերն այս բացասական կրթութիւնն առնելով՝ հասեր էին մշտային մանկութեան մ'անդունդը, քանի որ անդոյ, անտարբեր էին ընթերցումի, որ առաջին քայլն է աւելի հիմնական և կարևոր ուսումներու շաւիղը մտնելու, ազգու և գօրաւոր ցնցումներու կարօտ էին, ինչպէս սատէպ անդամալոյծ անդամներու էլեկտրական ցնցում պէտք է։ Ազգին այս սպառնալից վիճակը ճանչնալու կարող, թէև ըստ ոմանց նորելուկ գրիչներ, ոչխարհեմ հրատարակիչներ, և անոր դարմանը ծանր դեղերու մէջ դտնող ազդասերներ, փորձ փորձեցին և կը փորձեն ցարդ ազգը ընթերցումի գրդռել այնպիսի վէպերու թարգմանութեամբը՝ որ թէև մեր ազգային կեանքին հետ յարաբերութիւն չունին, զուարճութիւն, բարոյական հրահանգ և գործնական դաս կ'ընծայեն մերթ ընդանեկան պէրոյ, մերթ դիւքազ այլ սուտիկ պէրոյ, մերթ հանդուգն-նեան մերթ ռեալիստական փոքանոնեան, մերթ Եւրոպայի ընկերական վիճակին վրայ զանազան հրապուրելի, օգտաւէտ, սրտագրաւ, սոսկալի, նկարագիրներ տալով։

Ուրեմն եռակի օգուտ ունի Եւրոպական անուանի վիպասանութիւններու թարգմանութիւնը մեր ազգին արդի վիճակին նկատմամբ՝

Ա. Ընթերցանութեան սէրը կը գրդռէ։

Բ. Միտքն ու սիրտը կը մշակէ, եթէ արդէն վատթարած չէ, և փոքր ինչ Եւրոպայի սիրահարները մոռցնելու կը դրդէ։

Գ. Պատրաստութիւն մ'է ծանրագոյն խնդիրներու վրայ գրուած գիրքերը կարդալու։ Թող այն դրական խնդիրն թէ՝ լեզուն ալ մշակելու և հարուստ գործելու կընպատակ։

Ահա այս օգուտները կշռելով յանձն առինք Էօժէն Սիւի այս վիպասանութեան վերծանութիւնը, մենք որ վէպերու սիրող չենք և կը փափաքինք որ արբուն հասակի հայ մարդերու կրթութեան գործիքը դլխովին վիպասանութիւնները չըլլային։ Երանի թէ ունենայինք հայ դրականութեան մէջ Էօժէն Սիւներ որ ազգին բարոյական ներքին վէրքերը, որ սակաւ չեն, քննելով՝ մեզի դարմանը ցոյց տային, ինչպէս կը ցուցնէ Էօժէն Սիւ երբ Բարիզի թշուառութեան կայանները և ոսկեփայլ սրահները կը պատրի։

Այս վիպասանութեան ամէն մէկ տողին մէջ բարոյն սէրն ու չարին ատելութիւնը կը փայլի, Եւ ի՞նչ է բարոյականութիւնը եթէ ոչ չարիքն ատելի ու զզուելի ընել, թշուառներու օգնել, ընկեցիկ օրիորդը մոլութեան վտանգէն, քաղցեալն անօթութենէն, մոլորեալ կինն անհաւատարմութեան շաւղէն աղատել, անդամները հալածել պատժել, առաքինութիւնը վարձատրել, կեղծաւորներուն դիմակը վար առնուլ, ընկերական դայլերու ակռաները խորտակել, թէ տղմի մէջ սողացող և թէ ոսկեթել վարազներու եռևը թաղուն մոլութիւնները երևան հանել, օրէնսդրական թերութիւնները նշաւակել, ուղղել, և վերջապէս ընկերութեան մէջ նախախնամութեան պաշտօնը վարել։ Ահա այս նպատակաւ դրուած է Բարիզի դաղանիքը և այն որ վրանիքաւոր կամ անբարոյական կ'անուանուի դայն՝ կամ կարդացած չէ, և կամ բարոյականութիւնն ձաք ֆերրանի կերպով կ'իմանայ...։

Թարգմանութեանս դժուարութիւններուն, ոճի, որոգի բացատրութիւնները ըստ կարի աշխարհիկ ռամկական գաղձուածներով բացատրելու փորձերուն վրայ երկարօրէն խօսելն աւելորդ համարելով՝ աշխարհիկ լեզուի մասին Ա. Ը-բդրի ըրած հետևեալ խորհրդածութիւններն միայն այս տեղ կը նշանակեն բ.։

Բարեկիրթ ազգերու մէջ անդամ՝ մի և նոյն լեզուն պէս պէս դոն և արտասանութիւն կ'ստանայ իւրաքանչիւր քաղքի բնակիչներու բնութեան, սովորութեան համաձայն և ընդհանրապէս ընկերային կեանք, ուսմունք և գիտութիւն ծաղկած տեղերը, որ մայրաքաղաքները կը լլլին, ազգային լեզուն ալ նոր փայլ, նոր հարստութիւն և ներդաշնակութիւն կ'առնու և տիրական լեզու մը դառնալու կը նկրտի։ Եւս առաւել ղղալի և մնաւանդ ցաւալի են լեզուի մը զանազանութիւններն այն երկիրները, ուր զայն խօսող ժողովուրդը ցիր ու ցան է, գերի է և օտար ազդեցութիւններու չափազանց ընդունակ։ Այս վիճակէն կը ծագի նաեւ տեղականնախասալարում մ'որ ամէն հիմնակն վերանորոգում կը մերժէ և մէն մի գաւառական կամ քաղաքային բարբառ իրրև նախնական և մայր լեզու պաշտել տալ կուզէ։ Իսկ արդէն վարքով բարքով զատուած ժողովրդեան մ'անդամները լեզուաւ ալ կը զատէ, իրարու անհաշտ և անհաղորդ մարմիններ կը կազմէ, և հանրական յառաջադիմութեան մէկ գործնական տարրը խաղառ կը կործանէ։

Պօլսեցին իր տաճկախառն լեզուն կը պաշտէ, և ինչպէս ատեն մը յոյնը օտար ազգերը, նոյնպէս ինքը գաւառական բարբառները բարբառիկ կ'անուանէ և իր բառդիրքին, գոնէ ունենար, կ'արտաքսէ։ Զմիրնցին իր նոր ջուղայական քանի մ'ընտիր ասածները կը հաւքէ և այնչափ օտար ու խորթ բառերով կը խառնէ որ անոնց համը հասը կը փախցունէ։ Ռուսաստանցին անդադար նորամուտ բառերով և ոճերով հայ լեզուն կ'աղաւաղէ և այս աղաւաղման մէջ կը-ջէրէլիոն կատարեալ գործութիւն մը կը դնէ։ Թուրքիոյ գաւառաբնակ հայերը որ ոչ յառաջ և ոչ ետեւ կ'երթան իրենց շրջանին մէջ, քանի մը բացառութեամբ, աւելի մեզի կը մօտենան։

Այս զանազան բարբառներէն որը ընտրել և հանրացընել, այս է խնդրոյն առաջին կէտը։ Փորձ մաս մը կուզէ գրաբառը ծաղկեցնել և իր նախկին գործածութեան վերածել։ Ասի ոչ միայն անբնական, այլ թիւր կարծիք մ'է, թիւր է, վասն զի մեքենախնիք անդամ՝ գրոց լեզուն, որ մեծաւ մասամբ թարգմանութիւններ են, բնաւ խօսած չէն, ինչպէս որ Խորենացին և այլ մատենագիրներ, որ ժողովրդեան լեզուաւ վկայութիւններ ուր ուրեմն մէջ կը բերեն, կը հաստատեն։ Ուստի այս կարծիքը ճիշտ գրաբառին հետ մեռած համարելու է։ Ոմանք կը պնդեն արդի աշխարհաբառը գրաբառով ճոխացնել և մշակել, անոր քերականական անգոյ կանոնները պահելով։ Այս կարծիքը մինակ Պօլսի շրջանին կը նայի և մեր խնդիրին դուրս է։ Գանուեցան նաև քանի մը գրագէտներ որ նոր լեզու մը ստեղծելու փորձ փորձեցին նոր քերականութիւն կամ Ուղղախօսութիւն մը հրատարակելով։ Կան նաև մէկ քանի բանաստեղծներ որ իրենց լեզուին Արարատեան անունը տալով՝ գուն գործեն Ցաճկաստանի հայերը անոր վարժ ընել, որպէս թէ թերթի մը վերեն վար ընկնելով կրնայ ամբողջ ժողովրդեան մը լեզուն շրջել, կամ կաթիլ մը անուշ ջուր ծովին համը փոխել։ Ընուշ կ'անուանեմ բուն Արարատեան լեզուն, որովհետև հայերենի անունը սիրելի է ինձ, բայց ոչ է այն և ոչ կը խօսուի...։ Ոչի կողմն ինչ որ է Մատենը Հիւսիսափայլն նոյն է Հիւսիսափայլը Հայոյոն կիսանին, նոյն է Կոսանը Մեղուին Հայոյոգանի։ Ասոնց մէջ արդի Արարատեան լեզուին նշոյլը չկայ։ Կը հաւատամ որ Սօս ու Ղարդիթերի լեզուն Աշտարակի լեզուն լինի կամ Մեշուխեշային լեզուն, Պօլսի ժողովրդեան լեզուն լինի, բայց չեմ կրնար ընդունիլ որ Շանչեանցի քրիստոնեականը Արարատեան լեզու լինի։ Ամէն տեղի գրիչները գրականին և ժողովրդեան լեզուին մէջ իրենց յատուկ ոճ մը ըստեղծեր են և այս տարբեր ոճերէն այն է ընդունելին որ հասկական ոգւոյն մօտ և համայն հայոց դիւրըմբռնելի է։

Ուրեմն ինչ ընել պէտք է հայոց յառաջադիմութեան և հաղորդակցութեան ամենէն կարեւոր գործին ձեռք ձգելու համար։ Ահա այս է խնդրոյն կենսական մասը՝ որուն գործնական լուծումը միակ միջոցի մը մէջ կը տեսնեմ։

Ամէն ազգի մէջ գրական և խօսուն լեզուներ կան. որոնք թէ ոճի և թէ ոարձուածքի կողմէ իրարմէ կը տարբերին։ Ժողովուրդը կոպտ լեզուն, իսկ հըստ և վարպետ գրիչներ ուսմանց և գիտութեանց յառաջադիմութեան համեմատ կը կոկեն, կը ճոխացնեն նոյն լեզուն և ժողովրդեան կը դարձնեն, թէեւ միշտ ռամկին բաժինն է այն տեղական դարձուածոց, խօսից հեղինակութիւնը որ իր հանճարին կամ ընութեան դրոշմը կը կրեն և բառարանները ընդունայն կ'աշխատին անոնց իմաստը արդարացնելու և արտայայտելու։ Հիմա հայերէն շատ բարբառներ կան որ իրենց տեղւոյն կնիքը կը կրեն, այլ ոչ ժողովրդեան ոգին, որովհետև ժողովուրդը շատ տեղ բարբ, վարբ և ոգի չունի։ Այս կնիքը տաճկական, ռուսական և եւրոպական է ընդհանրապէս։ Ուր որ գրիչ կայ և ճաշակ լեզուն կը զտուի և 'ի լոյս կընծայուի. ուր որ չկայ, լեզուն կը վատթարի օր ըստ օրէ, մանաւանդ երբ օտար հաղորդակցութիւնը կաւելնայ և ազգային դաստիարակութիւնը կը պակսի լիովին։

Զկայ աշխարհիս երեսը հայաբնակ վայր մ'ուր օտարին ոտքը մուտ ունեցած չլինի, ուրեմն չկայ անկիւն մ'ուր հայ լեզուն իր նախնական զուտ, ընտիր և բնական յատկութիւնները պահած լինի, ենթադրելով որ 'ի բնէ անոի պարսիկը, յոյնը, վրացին են, մեզի նոր բառեր և ոճեր տուած չեն։ Պակսին ամէն տեղ, մանաւանդ Հայաստանի կողմերը կը գտնուին, իր աւերակաց բեկորներուն պէս, Հայկական կամ Արարատեան լեզուինչխարները, իրրև մարգարիտ աւազի և փոշիի հետ խառն։ Ահա այս մարգարիտները զատել, ամփոփել ու շարելն է գործը։

Ուրեմն այսպիսի պարագայի մը մէջ կը մնայ մեզ ամէն դլխաւոր բարբառներէն ընտրել՝ առանց մանաւոր բարբառ մ'ընտրելու, և այնպիսի լեզու մը բնականապէս բաղադրել որ ընդհանրապէս ամենուն հա կանալի դառնայ։ Այս աշխատանքը ծանր է և հարկաւ իր դժուարութիւններն ունի, Մեծ մասամբ կը դիւրանայ այն՝ եթէ մանաւանդ Հայաստանի, Ցաճկաստանի և Ռուսաստանի քաղ և ներքին գրագէտներէն համալսարանի նման բան մը կազմուի՝ որ պաշտօն ունենայ այս խնդիրը քննել, պարզել և միշտ դրաբառին ոգին և քերականական հանրական սկզբունքն իրրև հիմ՝ և հոլովումներու և լծորդութիւններու պարզութեան վերածումը՝ առանց կրճատման և ժլատ բծախնդրութեան, իրր տրամադրութիւն բռնելով՝ քերականութիւն՝ը յօրինել, նոյնպէս

և բառագիրք մը, որ պարունակէ այն ամէն բառերը, ոճերը և դարձուածները որ հայկական են և անոնք որ գործածութեամբ հայացած են։ Եւ կամ պէտք է այնպիսի երևելի հանճար մը յերևան գայ որ ճանչէ հիմնովին բոլոր հայ բարբառները իր տաղանդին զօրութեամբը և անտարակուսելի ընտրանօք մաղէ, զտէ զանոնք և նշանաւոր հեղինակութիւններ հանէ ամէն տեսակ նիւթի վրայ, որպէս զի անկից ծագի նաև քերականական կանոն մը՝ որուն պակսութենէ ազգս և դրպէտ՝ գրիչ 'ի ձեռին՝ կը գրեն ըստ քմաց և անել բաղի մը մէջ կը ձգեն հայ ժողովուրդը և անոր աշխարհիկ գրականութիւնը, եթէ գրականութիւն կրնայ կոչուիլ պարբերական անոճ և անոգի թերթեր և բառական թարգմանութիւններ...։

. . . . . .

Լեզուի մը կազմութիւնը և արտադրութիւնը երկու էական պայման ունին մէկ չգիտեր, այս է քերականականը և տրամաբանականը։ Սակայն մինակ մեր գրիչները, որոնք ամենայն կարդացողներէն շատերը չգիտեն որ երբ այս պայմաններէն մին զանց առնեն լեզուին սխալ, անշնորհ, մութ կամ թիւր ու անհեթեթ կերպարանք մը կուտան։

Մեր արդի հայ գրիչներուն այն տարբերութիւնները, որ աշխարհիկ լեզուին քերականական հաստատուն կանոնաց չդոյութեան կը պատկանին, խստիւ գատելու չեմ համարձակիր, որովհետև ամէն գրող է նաև քերական կրող մը՝ որ ուզածին պէս իր լեզուն կը կարէ, կը ձևէ ու կը թափէ, և եթէ դուք գործ չունիս անոր գրչին թափթփուքը հաւքէ և անկից խնամատ մը հանէ, բաւական չէ. ահա նոր Զօրիլ մը ականջէս վար կառարկէ թէ ինչ իրաւամբ որ դաւ գրական ոճի մը կը հետեւիս՝ նոյն իրաւամբ կը հետեւիմ և ես ուրիշ ոճի մը։ Արդ՝ քանի-որ չունիս քերականական կշեռ մը՝ որով իմ չափելու ձեռնհաս դրութիւնս, չունիս նաև իրաւունք մը նոյնը վեր կամ վար դարձնելու,... մինչդեռ ինքնակոչ գրագետը քերականական օրինաւոր պայմանը մեր արդի գրութեան մէջ քանի մը բան կը համարի և քննադատութեան իրաւունքը կը ջնջէ, կը մոռնայ բանականութեան իրաւունքը որ ամէն իրաւունքէ և կանոնէ վեր է և հին, կը մոռնայ որ անոր ուժովը տրամաբանօրէն խորհելու և տրամաբանօրէն իր խորհուրդը արտադրելու պարտաւոր է։ Այս պայմանը ամէն լեզուին գրաւոր և աւագական կանոններուն մէջ յայտնի կամ անյայտ կերպով կը տիրէ։ Այս պայմանն է որ ասունը անասունէն կ'որոշէ, բանականը անբանէն կը զատէ։ Ջնջէ այս բանը և կը ջնջես մարդս, ջնջէ ամէն կանոն և իսկոյն բանաւոր մարդուն տրամաբանական հակումը նոր մը կատեղծէ լռելյայն՝ լեզուին կամ գրչին շարժում տալու ատեն։ Իսկ երբ բանական կանոնին կը միանայ նաև մտքի և սրտի նուրբ ներշնչութիւնները և հեռատեսէս օգտակարին, գեղեցկին եւ վսեմին ճաշակը, այն ատեն ոճի ուղղութիւնն ալ կը միանայ վայելուչ, ընտիր եւ ներդաշնակ արտադրութեան։

Այս իսկական պայմաններէն զատ՝ ոճ մը կը կրէ նաև գրող հանճարին յատուկ գրոշմը։ Այս գրոշմն է որ մի և նոյն կանոնաւոր լեզուին բացատրութիւնները անհունս կը զանազանէ, զանազանութիւն մը որ մարդկային մտքի և լնաւորութեան պէս անսահմանելի է և անստորոգելի։ Զգիտեմ որ հեղինակը ըստ է թէ աշխարհս մէջ ընդող հիմնական գաղափարները սահմանափակ են։ Թերևս այս գիտողութիւնը իրաւացի լինի։ Սակայն ինչու հատոր մի և նոյն

գաղափարը կամ՝ զգացումը երբ տարբեր գրիչներ կը բացատրեն տարբեր կերպով կը ներդրոշնեն մեր վրայ։ Ինչու համար կըսենք, այս տեսիլը մեզի ընտանի է, այլ ինչ բնական, անոյշ, վառվռուն, ինչ ընորհալի, ազդու և վսեմ գրուած է։ Ահա այս տարբերութեան շարժառիթը գրողին հոգին է, սիրտն է. երևակայութիւնն է, կամ իր բնատուր սուր և հզօր ըմբռման, ստացած հմտութեան եւ պարագայից արդասիքն է, որը կուգես սեպէ՝ միշտ հոգւոյ որ և է կարողութեան վրայ ըրած տպաւորութեան միտելով՝ եթէ հոգիդ կարողութիւն ունի զգալու եւ ըմբռնելու։

Ոճի մը երևին երևին գոյները, որ մինակ ընտիր հոգւոյ կամ կիրթ մտքի հիանալի ցոլացումն է, ոչ քերականութիւնները կրնան աւանդել մեզի եւ ոչ բառարանները։ Քերականը թերևս անսխալ գրէ, բառագիրքը բառեր շարէ, բայց մեծ հանճարի բաժինն է թղթի կտորի մը շունչ եւ ոգի տալ, լեզուն գործիք ընել եւ բանը անմահացնել։

Հիմակ... նկատէ թէ մեր գրական լեզուն որչափ հեռու է սոյն փափաքելի յատկութիւններէն, ինչ չոր ու անբերրի հողի վրայ կը բուսնի այն բազմաճղի տունկը, ինչպէս քանի մը բողբոջներ կ'արձակէ որ չի բացուած կը թառամին, ինչպէս քանի մը վտիտ ու նիհար պտուղներու մնունդ կտայ որ չի հասած փուչերու մէջ կը խեղդուին։

Բայց պիտի ըսես թէ մեր փնտռածը գրական լեզուին զարդն ու նրբութիւնները չեն, երևակայութեան եւ հանճարի թռիչները չեն, այլ պարզապէս ուղիղ, յատուկ եւ հասկանալի շարագրութիւն մը։ Շատ աղէկ։ Այս շարագրութեան քերականական սկզբունքն՝ որ կողմը դառնանք, հայկական լեզուէն պէտք է քաղենք, աշխարհիկ լեզուին չունեցած բառերը. երբ նեղը մնենք, դրաբառէն պիտի ընդունինք։ Այս աղբիւրը հարուստ ու առատ է ստուգիւ, բայց արի տես որ ընտրութեան արդի եղանակին մէջ ճաշակ եւ կանոն չկայ։ Կը ճանչեմ դրագէտ որ պարզ եւ իմանալի գրիչ մ'ունի, սակայն ուր ուրեմն այնպիսի խրթին բառ մը, ճաճանչ մը կը նետէ մէջ տեղը որ իր խօսքին ձեւը կը մթագնի։ Ուրիշ մը տափակ, թափթիկ ոճ մ'ունի որ ստէպ գրաբարին հոլովը և կերպը առնելով՝ բոլորովին անհամ, անլի և լղրձուկ ապուր մը կը դառնայ։ Միւսը բնական, սիրուն և եփուն ձև մ'ունի, սակայն այնպիսի օտարոտի դարձուած մը՝ պատ 'ի պատ շրջան մը կը գործածէ որ լեզուն և իմաստորոշի դարձուած մը՝ պատ 'ի պատ շրջան մը կը գործածէ որ լեզուն և իմաստորոշ կ'այլայլէ։ Սակայն ամենէն անսանելի ոճը որն է գիտես. այն ոճը որ ոչ գրաբառ է, և ոչ աշխարհաբառ, ոչ եւրոպական է և ոչ ասիական, այլ բաբելոնեան խառնուրդ մը, որով հայ մարդը հայ մարդուն լեզուն կարող չլինիր հասկնալ։

Անուրանալի է որ աշխարհիկ լեզուն օրէ օր իւր ոգին կը յայտնէ և հաստատութիւն կը գտնէ։ Բանիբուն գրիչը՝ եթէ ուիպուի անգամ գրաբառէն անսովոր՝ բառ մը, օտարէն ատատ մը, իր գլխէն հնար մը քաղել, կաշխատի այնպիսի նորալուր բացատրութիւնները մեղմել, աշխարհիկ ոգին յարմարցնել եւ այնպէս գրի առնել, որպէս զի թէ ուսեալ եւ թէ անուս հայուն գիւրին լինի իմանալ եւ ոչ ոք չի խրտնի...։

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԳԱՂՏՆԻՔ ՀԱՐԻՆՁԻ

ԳԼՈՒԽ Ա՝

ԿԱՊԼԻՈՆ

1838 Հոկտեմբեր ամսուն վերջերն անձրևոտ և ցրտկեկ իրկուն մը՝ ըմբշի հասակաւ մարդուն մէկը՝ որ յարդէ լայնածիր հին խոյր մը գրեր՝ կապուտ կտաւի բաղէն մը (blouse) հագեր էր՝ համագոյն սունապանին (pantalon) վրայ ծփին, Բոնդ-օ-Շանժէն անցաւ և Միջնաքաղաքը (Cité) մտաւ, մութ, նեղ և ծուռ ու մուր փողոցներու բաւիղ մը՝ որ Արդարութեան պաշտօնատունէն կը տարածուի մինչև Նօդր-Տամ։

9390
39

Այս թաղը՝ թէև սահմանափակ է ու հսկողութեան ներքև՝ Բարիզի շատ մը չարագործներու իբր ապաւէն ու կայան կը ծառայէ, երբ անոնք կապլիոններու մէջ կը հաւաքուին։ Կապլիոն մը (tapis franc) աբլոթեան գողի ու մարդասպանի ոճով ամենատարին տեսակի դինետուն մը կը նշանակէ։ Հին դատապարտ մը (repris de justice) որ այս վատթար լեզուաւ ժրը (պայ) կը կոչուի կամ ժիրոֆլէ, եթէ նոյն տեսակի ցած կին մ'է, այս դինետունները ստէպ կը պահեն, ուր Բարիզի բնակիչներու թափթփուքը կը յաճախեն և աղտաղիր թիապարտներ, գողեր, մարդասպաններ կը վխտան...։ Երբոր ոճիր մը գործուի, ոստիկանութիւնը, եթէ նեբելի է ըսել, իր ուռկանը կը նետէ սոյն կայնոցներու մէջ և գրեթէ միշտ յանցաւորները կ'որսայ։

Արդ՝ այն իրկուն Միջնաքաղքին սղալի գուիշներուն մէջ (ruelle) քամին կը փչէր ուժգին և հովաշարժ լամպար-

[illegible]

ներու (réverbère) ժայռոյն ու երկրուն նշոյլը տղմուտ սալատակներէ հոսող սեւապղտոր առուակի մը երեսը կը ցոլանար։

Գորշ տուներ՝ որ տեղ տեղ ցեցակեր շրջանակէ պատուհաններ ունէին, վերէն դրեթէ իրարու կը դպէին, այնչափ նեղ էին դռիհները։ Մթին ու ժահահոտ ուղիներ՝ աւելի մութ ու ժահահոտ սանդուղներու կը տանէին և այնքան ուղղաձիգ էին՝ որմէ ակիշով տամուկ պատերու կպած չուանի մը միջոցաւ հաղիւ թէ մարդս կարող էր վեր ելնել։

Այս բնակարաններուն մէկ քանիին դեռնայարկը ածխի, պղի ու հոտած մսի վաճառողներ բռներ էին, ու թէև ոչինչ դնով էին իրենց ապրանքը, սակայն թաղին յանդուգնը դողերէն այնչափ կը վախնային որ դրեթէ բոլոր կրպակներուն առջևի կողմը երկաթէ վանդակներ շիներ էին։

Երբ մեր յիշած մարդը գէվ դռիհը մտաւ, որ Միջնաքաղքին կեդրոնը կը դտնուի, աւելի ծանր սկսաւ քալել և կ'զդար որ իր քնիկ հողէն վրայ է։

Խիստ խաւարին էր դիշերը, մրրկալի հովը ու անձրևը մը պատերուն դէմ կը կոծէր։

Հեռուէն Արդարութեան պաշտօնատան մեծ ժամացոյցը ճիշտ տաս զարկաւ։

Քարայրի նման մութ, խորունկ կամարակապ դաւիթներու մէջ շատ մը կիներ սմքեր նստեր էին. այս դռեհիկ հաղներդ մը կ'երդէր մեղմիկ, այն ուրիշի հետ կը խօսէր, մէկ քանին արձանի պէս յորդ անձրևը կը դիտէին լռին ու անշարժ։ Բաղէնէ մարդը կայ առաւ յանկարծ՝ լռիկ ու տրտում աղջիկի մը մ'առջև, անոր թևէն բռնեց ու ըսաւ։

— Բար՝ իրկուն, լա Կուալէօզ (արկոռի ԷՔՈՎ ԷՐԷՈՒՀ)։

Աղջիկը ետ քաշուեցաւ ու երկչոտ ձայնով մ'ըսաւ։

— Աստծու բարին, Շուրինէօր. (դանակ էօՆոՂ) խնդրեմ ինձ մի՛ դպիր...։

Այս մարդը, որ ազատագիր թիապարտ մ'էր, սոյն մանդիրը թիարանը սատացեր էր։

— Քանի որ ներկայ ես— ըսաւ նոյն մարդը— հարկ է որ ծերմակ ջրէս ստակը տաս, եթէ ոչ ծեծը կ'ուտես— յանդիմանեց նա կոպտաբար խնտալով։

— Տէր Աստուած, ստակ չունիմ— պատասխանեց լա Կուալէօզ դողդոջուն; վասն զի այս մարդը բոլոր թաղին սարսափ կ'ազդէր։

— Եթէ կ՝ունիս, ինչ փոյթ. կապլիոնի օրէնքէն քեզի ապառիկ կ'տայ աղուոր դէմքիդ համար։

— Զեմ յուսար... դեռ հաղած հաղուստիս վարձն անկամ անվճար կը մնայ...։

— Ի՛հ դեռ կը տնտնաս, — գոչեց Շուրինէօր լա Կուալէօզին վրայ վազելով՝ որ մթամսատ դաւթի մը մէջ փախաւ։

— Ահա հիմա ձեռքս ես— յարեց հէնց երբ պահ մ'ետքը իր ահարկու ձեռնովը պրկեց նուրբ ու վտիտ դաստակ մը.— հիմա ծեծը պիտի ուտես...։

— Զե թէ այն... դու պիտի ուտես թակը— ըսաւ առնայի ու հզօր ձայն մը։

— Հօ, մարդ մը, դու ես, Պրա-Ռուժ (կարմրաբազուկ)։ Շուտ պատասխան տուր... և դիս այդչափ մի՛ սեղմեր...։ Տանդ ճամբուն մէջն եմ... շատ հաւանական է որ դու ես...։

— Պրա-Ռուժը չեմ ես— ըսաւ ձայնը։

— Շատ աղէկ, քանի որ մեղնէ չես... ուրեմն արիւն պիտի թափի, գոչեց Շուրինէօր։ — Սակայն այս բռնած թաթիկս որուն է, կարծես թէ կնիկի մը թաթն է.

— Այս թաթին տեսակն ահա այս է— պատասխանեց ձայնը։

Եւ երբ յանկարծ անոր կոկորդէն բռնեց, Շուրինէօր դգաց իսկոյն փափուկ մորթի մը տակ դտնուած պողպատի պէս չիներու ոյժը։

Լա Կուալէօզ, որ ուղիին խորը ապաստանելով՝ սանդուղէն թեթև մը քանի մը ոտք վեր ելեր էր՝ պահ մը կանգ առաւ և իր անծանօթ պաշտպանին դառնալով՝ գոչեց.

— Ո՛հ, շնորհակալ եմ, պարոն, որ իմ կողմս բռնեցիր։ Հու, բինէօր կ՚ըսէր թէ պիտի ծեծէ զիս, ինչու որ չեմ կարող անոր օղին վճարել, թերևս կատակ կընէր։ Բայց հիմա որ վախ չունիմ, թոյլ տուր և դու զղջալ կեցիր... վասն զի Հու-բինէօր է անոր անունը։

— Եթէ ինքը Հուրինէօր է, ես ալ անճաշակ եղուզակ մը չեմ, ըսաւ անծանօթը։

Ապա խորին լռութիւն մը տիրեց։

Քանի մը վայրկեան մութին մէջ կռուի շշնկոց մը լսուեցաւ։

— Բայց ուսկից եկաւ այս կատաղին— գոչեց չարագործը, որ իր ոսոխին ձեռքէն ազատելու համար կը ճգնէր, և անոր ամուրէն ուժին վրայ կը զարմանար։ — Կեցիր... կեցիր դու— յարեց նա ակռաները կրճատելով՝ հիմա դու՝ թէ լա Կուալէօղին և թէ քեզի համար պիտի հատուցանեմ։

— Պիտի հատուցանեմ, այո՛, բռնցի սակով... դեռ բաւական ունիմ տալու...— պատասխանեց անծանօթը։

— Սա վզնոցս ձգէ, թէ ոչ քիթդ պիտի խածնեմ— մրմռաց Հուրինէօր խեղդուկ ձայնով մը։

— Քիթս շատ պզտիկ է, անպիտան, և լոյս ալ չկայ որ տեսնես։

— Ուրեմն ճքաքէն մօտ եկուր։

— Եկուր, յարեց անծանօթը, եկուր որ իրարու աչք հանենք։

Եւ Հուրինէօրին վրայ սրանալով՝ որուն կոկորդը դեռ բռներ էր, մինչև դաւթին դուռն ընդդրկեց, վերջը ղանի ուժին հրելով՝ դուռը փողոցը քշեց, որ հազիւ լուսաւոր էր լամպարին շողէն։

Չարագործը դեռեց, այլ շուտ մը ինքզինքը բռնելով՝ ընկաւ կատաղօրէն անծանօթին վրայ, որուն քնքուշ ու բարակ հասակէն չէր երևեր բնաւ որ անանկ սարսափելի ոյժ մ՚ունենայ։ Քանի մը բոպէ ոդորելէն ետև՝ Հուրինէօր, թէև ըմբշի մարմին մ՚ունէր և շատ ճարտար էր տեսակ մը կուիմարտի մէջ՝ որ ռամիկներէն սովոր կը կոչուի, իր Լոդե-

պը դատաւ...։ Անծանօթը հիանալի ճարպիկութեամբ ոտքը անոր ոտքէն անցուց, (թաթեալու ձև մը) և երկու անգամ գանի գետինը փռեց։

Հուրինէօր իր գիմակալին զօրութիւնը ճանչել չուզեց, նորէն մենչեց զայրագին և կռուի սկսաւ։ Այն ատեն լա Կուալէօղին պաշտպանը շուտ մը կռուելու կերպը փոխելով՝ աւազակին գլխին ու երեսին անհամար կռուփներ տեղացուց, այնպէս ուժգին որ կարծես թէ երկաթէ թաթպանով կը զարնէր։

Այս կռուփներն, որ նոյն իսկ Լոնտօնի երևելի ճոփամարտ՝ ժաք Թրբնրի նախանձն ու զարմանքը կընային գրգռել, սովորի խաղին կանոնէն այնքան հեռու էին, որ Հուրինէօր բալորովին ապշած՝ կովի պէս սալատակին վրայ ընկաւ մրմռալով,

— Իմ քանա քոռաա, ա՛լ բաւական է։

— Ի՛՝աղաչեմ, մեղքցիր անոր, ըսաւ լա Կուալէօղ, որ կռուին ժամանակ մինչև ուղեին սեմը գալու սիրտ ըրեր էր։ Ապա յարեց նա զարմանքով։ — Բայց դու ո՞վ ես։ Մէդը ա՞էքօլէն (վարժպետ) կամ Սքըլէդէն (կմախ) զատ մէկը չկայ՝ Ս. Էլուա փողոցէն բռնէ մինչև Նօղը-Ցամ՝ որ Հուրինէօրին հետ գօտեմարտելու զօրէ։ Բայց շնորհապարտ եմ քեզի, պարոն, եղուկ ինձ... թէ որ չհասնէիր կարելի է որ զիս ծեծէր։

Անծանօթը պատասխանելու տեղ մտիկ կընէր ուշադիր աղջկին ձայնին։

Այսպիսի անուշ, կայտառ և յստակ ձայնի հնչիւնը բնաւ լսած չունէր։ ուզեց լա Կուալէօղին դէմքը նշմարել, սակայն գիշերը շատ մութ և լամպարին լոյսը շատ աղօտ էր։

Հուրինէօր քանի մը բոպէ անշարժ մնալէն ետև՝ սրունքն ու բազուկները շարժեց և վերջապէս ոտք ելաւ։

— Աչքդ բա՛ց— գոչեց լա Կուալէօղ ու նորէն ներս վազեց իր պաշտպանին թևէն քաշելով — արիաձն կեցիր կա-

թելի է նորէն վրէժ առնէ։

— Հանդարտէ, աղջիկս, եթէ նորէն ձեռ ուտելու խորժակ ունի, պատրաստ եմ տալու։

Աւազակը այս խօսքը լսեց։

— Շնորհակալ եմ... ոսկրներս ջարդ ու բուրդ եղան ու աչքերս դարձան, ըսաւ անծանօթին։ — Այս օրուան համար հերիք է կերածս, բայց թէ որ ուրիշ անգամ ձեռքս անցնիս...։

— Նորէն տրտունջ կը լսեմ, միթէ գոհ չէս— գոչեց անծանօթը սպառնալից ձայնով մը։

— Չէ, դանդատ չունիմ, չափս ճանչցայ... դու կրնաս վարպետորդի մ'ես— ըսաւ Շուրինէօր սրտնեղութեամբ՝ բայց այնպիսի ակնածու կերպով մը՝ զոր մարմնի ոյժը կ'ազդէ այս կարգի մարդերու։

— Աղէկ թմբեցիր զիս, ասոր խօսք չկայ։ Մինակ գիտցիր որ՝ Սքըլէդէն զատ՝ որ անշուշտ երկաթի ոսկրներ ունի, Մէգը տ'էքօլէն զատ՝ որ իր ճաշին երեք հատ Հերակլէս կրնայ կլլել, մարդ մը կարող չէր ըսելու մինչև այս ժամն որ զըլուխս իր ոտքին տակն առաւ։

— Լաւ, ինչ ըսել կուզես։

— Ըսել կուզեմ... որ վարպետս գտայ։ Դու ալ օրին մէկը, այսօր կամ վաղը, քունդ պիտի գտնես... ամէն մարդ իրն ունի։ Հարկաւ հիմա որ Շուրինէօրը ոտքիդ տակն առիր կրնաս Միլնաքաղքիս չորս կողմը խրոխտալ ու թմբուկ զարնել... բոլոր կիները գերիներդ պիտի ըլլան։ Օրն ու օրը-հինգ փառք ու պատիւ պիտի տան քեզի... որպէս զի փորի ցաւի չճանգիսին, ճշմարիտ թագաւոր մը պիտի դառնաս, ինչ կուզես աւելի։ Կը նայիս։ բայց ըսէ, դու ո՞վ ես... մեր լեզուն (արկոսի) մամիս պէս կը խօսիս։ Եթէ դու ֆոլ ես, ես քու դիտցածդ մարդդ չեմ։ Իրաւ է որ ես ալ դանակ խօշնէր եմ, ինչու որ երբ արիւնս գլխիս զարնէ, ամէն բան կարմիր կը տեսնեմ, և ձեռքս չէ, պէտք է որ մէկը զարնեմ։ սակայն ես իմ մորթածներս քաւեցի տառնչինգ

տարի թի քաշելով։ Ժամանակս լրացաւ, ազատ եմ հսկողութենէ, կարող եմ մեծ քաղաքը բնակիլ և դատաւորներուն պարտք մը չունիմ։ և զղջութիւն երբէք ըրած չեմ, թէ որ չես հաւատար, լա Կուալէօզին հարցուր։

— Ճիշդ է, գող չէ անի— ըսաւ աղջիկը։

— Ուրեմն եկուր օղի մը քաշէ և իմ ոտվ ըլլաս կ'իմանաս— ըսաւ անծանօթը — եկուր և քէն մի պահեր։

— Իրաւ, քէնը մէկդի, ինչու որ դուն իմ վարպետս ես, լաւ հասկրցայ որ կոփի խաղին քաջ վարժ ես.... մանաւանդ, վերջին կոուփներու կարկուտը... էյ նզովից արմատ, ինչ տարափ էր այն, ինչպէս կը տեղար կնտիս վրայ։ Երբէք ասանկ փոթորկի մը չհանդիպեր էի... նոր խաղ մ'է այդ... կուզեմ որ ինձի սորվեցնես։

— Երբոր ուզես կ'սկսիմ։

— Չէ թէ իմ վրայ, էյ հոս նայէ, չէ թէ միշտ իմ վրայ— գոչեց Շուրինէօր խնտալով. — դարբնի կռանին պէս կը կոփէիր զիս... դեռ գլխիս պտոյտը չանցաւ։ Բայց Պրա-Ռուժը ճանչես պիտի, քանի որ իր բնակած տան գաւիթն էիր։

— Պրա-Ռուժ, — ըսաւ անծանօթը, որուն այս հարցումն անախորժ տպաւորութիւն մ'ըրաւ. իսկ ետքը անտարբեր յարեց։ — Զգիտեմ թէ Պրա-Ռուժ ըսածդ ոտվ է, թէև իրօք այս տունը մինակ ինքը կը բնակի։ Անձրև գալուն պահ մը այս ուղիս մտայ որ պատսպարուիմ, սա խեղճ աղջիկը ձեծել կուզէիր, ես քեզի ձեծեցի... ահա այս է բոլոր եղելութիւնը։

— Ճշմարիտ ըսիր. ինչ պէտք ունիմ գործերուդ խառնուելու. Պրա-Ռուժ այս տեղ խուց մ'ունի, բայց ստէպ չգար. միշտ իր Եղիսեան դաշտին ըմպարանը (estaminet) կը գտնուի։ Եկու սա խօսքը զոցենք—։ Վերջը լա Կուալէօզին դառնալով — Մա՛ս վկայ, դու լաւ աղջիկ մ'ես. միտքս քեզ ձեծել չէր, շատ աղէկ գիտես որ տղայի հետ գործ չունիմ,

ես... սիրտս կատակ կուղէր, ինչ և է, գիտնաս որչափ աչքս մտար սա կատաղին ինձի գէմ չզրգռելուդ համար... երբ իր ձանկին տակն էի և հոգիս բերանս եկեր էր...։ Դու ալ եկու մեզի հետ բան մը խմելու, այս պարոնէն պիտի ելնէ ստակը։ Ի՞նչ կըսես, քաջդ իմ, միթէ աւելի աղէկ չըլլար ճերմակ ձուք դնելս տեղ ֆոր լեցնել Լաբէն Պլանի օկրուհիին կապլիոնը։

— Շատ աղէկ... կերակուրն իրմէ։ Դու ալ կուգե՞ս մեզի հետ գալ լա Կուալէօղ— ըսաւ անծանօթը։

— Շնորհակալ եմ, պարոն, պատասխանեց նա, — քանի ձեր կռիւը տեսայ, սխորժակս գնայ, անօթի չեմ։

— Գա՛, գա՛, ուտելով սխորժակդ կը բացուի— ըսաւ Շուրինէօր, Լաբէն Պլանի կերակուրներն անուշանի են։

Եւ այս մեր երեք անձերը՝ բոլորովին հաշտ ու միաբան՝ կապլիոնը դիմեցին։

Շուրինէօրի և անծանօթին գուպարին ատենը՝ ուղիի մը մէջ գարանամուտ հսկայ ածխավաճառ մը՝ կուրին ելքը դիտեր էր անձկութեամբ, թէև, ինչպէս որ գիտենք, ոչ այս և ոչ այն կողմը բոներ էր։

Երբ անծանօթը, Շուրինէօր և լա Կուալէօղ դինետան ճամբան զարկին, ածխագործը անոնց ետևէն գնաց։

Նախ չարագործը ու լա Կուալէօղ կապլիոնը մոտան, անծանօթն ալ մոնելու վրայ էր՝ երբ ածխագործն անոր մոտենալով կամացուկ մ'ըսաւ գերմաներէն և ակնածելի յանդիմանութեան ձայնով մը։

— Խնդրեմ, վերմոֆայլ Տէր, ձեր աչքը չորս բանաք։

Անծանօթն ուսերը թոթուեց և գնաց ընկերներուն միացաւ։

Սակայն ածխագործը դինետան դռնէն չհեռացաւ, այլ ականջ դնելով՝ ատեն ատեն ուշադիր կը նայէր պզտիկ ծակէ մը՝ որ դիպուածով բացուեր էր սպիտականերկ խիտ խաւի մը վրայ, որով այս որջերուն ապակիները ներքուստ միշտ ծեփուած են։

ԳԼՈՒԽ Բ.

ՕԿՐՈՒՀԻ

Լաբէն-Պլան օթևանը, գեվ գո ի՛հին մէջ տեղը, բարձրատան մը գեռնայարկը կը գտնուի, որուն ճակատը երկու պատուհան ունի կարմիր ձևով։

Կամարակերպ մութ ուղիի մը դուռին վերևը՝ երկայն լապտեր մը կ'օրորի, որուն ճղքած ապակիին վրայ սա կարմրատառ բառերը գրուած են. Այս դեղ գինեբաք կ'ըլլանին։

Շուրինէօր, անծանօթն ու լա Կուալէօղ օթևանը մտան։

Երևակայէ լայն ու ցած սրահ մը՝ մարդակաշէն մրոտ ձեղունով, որ անպիտան ճրագի մ'անորոշ շողէն կը լուսաւորի. բաածեփ, հին ու խարխուլ պատեր՝ որ տեղ տեղ կոշտ պատկերներ և արկտաի ոճ առածներ կը ներկայեն։

Յարակոխ ու բորակալի գեսինը ցեխով լեցուն է, դեղ մը յարդ՝ երբ օթոյ, դուռին ձախ դին՝ ճրագին տակը՝ օկրուհիին տրապեզին (comptoir) մոտ գրուած է։

Այս սրահին մէն մի կողմը վեց սեղան կայ, որոց ծայրերը, նոյնպէս և մոտակից նստարանները պատին կպած են։ Ներսէն դուռ մը դէպ 'ի խոհանոցը կը տանի, աջ դին՝ տըբապզին մոտ՝ ելք մը կայ ուղիին վրայ որ կը տանի հղկիները (taudis), ուր՝ մէկ գիշերուան համար երեք սու տալով՝ մարդիկ կը պառկին։

Քանի մը խօսք ալ օկրուհիին ու իր հիւրերուն վրայ ըսենք։

Օկրուհին՝ մայր Պոնֆ կը կոչուի. իր եռակի արհեստն է կաղմ օթևան տալ, գինետուն մը պահել և այն աղտոտ գոիհներու մէջ ճաշող թշուառ արարածներուն գլեստներ վարձել։

Օկրուհին շուրջ քառասուն տարու՝ մեծահասակ, հուժկու և մարմնեղ, սևուկ և փոքր ինչ մօրուանի կին մ'է։ Իր հասատ

առնայի ձայնը, լայն ձեռները կը հաստատեն որ անսովոր ոյժ մ'ունի. իր գտակին մէտաքսէ շէկ թաշկինակ մը կը փաթթէ, Ճազարի մազէ շալ մը կուրծքէն խաչաձև օլորելով՝ կռնակը կը կապէ. իր ասուի շրջազգեստը՝ որ շատ անգամ թոնիրին կրակէն կը խանձի, փայտեայ սև առնտալներուն կը քսուին։ Վերջապէս, այս կնկան դէմքը պղնձի ու կրակի գոյն մ'առեր է՝ ոգելից ըմպելիներ չափէն աւելի գործածելուն։

Տրապիզը կապարապատ է. վրան երկաթէ շրջաններով կուժեր ու անագէ պէս պէս չափեր կան. որմին կից դարակի մը վրայ շատ մը սրուակներ կը տեսնուին այնպէս շարուած՝ որ Կայսեր պատկերը կը ներկայեն կանգուն։ Այս շիշերը կարմիր ու կանաչ գոյն կոտրած ըմպելիներ կը պարունակեն և կը կոչուին, ֆոլբոռ-ոֆէ, ֆոլբնէ մրգօղի եաւ։

Դեղնաբիբ խոշոր սև կատու մը՝ օկրուհիին մօտ կծկած՝ կարծես թէ սոյն վայրին ընտանի սատանն է. իսկ անոր ներքակ՝ կոնքոյն (à concou) ժամացոյցի մը տփին ետևը օրհնաբեր Ճիւղ մը կար, զոր օկրուհին գներ էր Զատկին։

Երկու գուժագէմ մարդիկ՝ ձիգ մօրուսով ու բզիկ բզիկ լաթեր հագած՝ կամացուկ և վրդովալի իրարու հետ կը խօսակցէին այն ինչ սեղանին վրայի գինիին կուժին ձեռք կարկառելով։

Այս երկուսէն յատկապէս մէկը, որ պինդ գունատ էր ու կապտագոյն՝ իր յոյն գծուած գտակը մինչև յօնքը կը կոխէր։ իսկ ձախ ձեռքը գրեթէ միշտ կը պահէր և միշտ կը ջանար զայն քօղարկել երբ գործածելու հարկը տեսնէր։

Քիչ մը հեռու հաղիւ տասնվեց տարեկան անթաւ, վատուժ, խորշ ու կապարի դէմքով, մարմրած աչք երիտասարդ մը նստեր էր. սև ու երկայն մազերն ուսին վրայ կը ծածանէին։ Այս պատանին, վաղահաս մոլութեան տիպար մը, կարճ ու սպիտակ ծխափայտ մը կը քաշէր։ Կռնակը պատին, երկու ձեռները բազէնին դրպաններուն մէջ՝ ոտքերը նստած

բանին վրայ գրած՝ ատեն ատեն ծխափայտը կը թողուր որ իր առջին կեցած թասէն (canette) օղի խմէ։

Այս Լարէն-Պլանի միւս դեղորդներն, այր ու կին, նշանակելի բան մը չունէին. ասդիս վայրաց կամ անբան երեսներ, անդին կոշտ կամ լպիրշ գուարթութիւն մը, սյլուր ոգալի կամ ապուշ լռութիւն մը կը տիրեր։

Ասոնք էին ահա կապլիոնին հիւրերն՝ երբ անծանօթը, Շուրինէօրն ու լա Կուալէօզ ներս մտան։

Քանի որ այս երեք անձերը մեծ դեր մը կը խաղան այս վէպիս մէջ հարկ է անոնց նկարագիրն ընել։

Շուրինէօր՝ բարձրագիր և ըմբշի կազմուածքի մարդ մ'է ու Ճերմակի զարնող գեղձանիկ մազեր, խիտ ունքեր և աջդին թերմօրուս (forori) ունի հրաներկ։ Թշուառութենէ, թիարանի տաժանելի աշխատանքէ՝ իր խորշակահար երեսը, արուրի, ձէթի գոյն գարձեր էր, որ թիապարտներու յատուկ է։

Թէև մականունը սոսկալի է, իր երեսը չէ թէ վայրենութիւն, այլ տեսակ մը կոշտ համարձակութիւն և անզուսպ յանդգնութիւն մը կը յայտնէ։

Արդէն ըսինք, Շուրինէօր չնչին կապուտ կտաւի սառնապան ու բաղէն մը՝ և յարգէ այնպիսի լայն խոյր մը հագեր է, զոր առ հասարակ նաւարանի գործաւորներն ու փայտահանները կը հագնին։

Լա Կուալէօզ հաղիւ տասնհինգ ու կէս տարեկան է։

Սպիտակ ու զուտ Ճակատ մ'ունի որ կը փայլի իր ընտիր ձուաձև և հրաշատիպ դէմքին վրայ, արտեւանի երկայն շարքը՝ որ փոքր ինչ կը զանգրի ու կիսովին կը սքողէ տրտմալի մեծ կապուտ աչունները։ Նորաբոյս պատանեկութեան սքանչելիկը կը գեղազարդեն իր նորանշոյլ վարդ այտերը։ Իր փոքրիկ ծիրանեգոյն բերանը գրեթէ բնաւ չժպտիր, իր նուրբ ու շիտակ քիթը, իր կլորիկ թուշը ոսֆայէլեան աղնուագիծ անուշութիւն ունին։ Սնդուսի նման քունքին մէն մի կողմէն՝ ոլորուն ու գեղձան մազերու փառաւոր հիւսակ մը

կ'իջնէ մինչև այտերը, վեր կը սողսկի նորէն դէպ 'ի ականջը, որուն կարմիր փղոսկրէ բլթակը կը տեսնուի, և ապա քառագիծ կապուտ բամպակէ մեծ թաշկինակի մը պինդ ծալքին ներքև կ'անհետի, կապուելով՝ ինչպէս որ կըսեն ռամկօրէն, դատկի ձևով (en marmotte)։

Բուստէզարդ փոքրիկ մանեակ մ'իր հիանալի ու ձիւնի պէս վիզը կը պատէ։ Իր մթագոյն քեբէական (alepine) լայնկեկ շրջազգեստէն դիւրին է երևակայել որ կնոջի պէս նօսր, դիւրաշարժ ու կլոր հասակ մ'ունի. նաբնջի պզտիկ հին շալ մը՝ կանաչ ծոպերով՝ կուրծքին վրայ գրած է խաչաձև։

Նոյն իսկ լա Կուալէօղլին ձայնի անուշութիւնն էր որ իր պաշտպանին սիրտը գրաւեր էր։ Եւ իրօք, այս քաղցր, թըրթռուն, ներդաշնակ ձայնն այնպիսի անդիմադրելի հրապոյր մ'ունէր որ այն անօրէն և վատանուն խուժանն անգամ՝ որոյ մէջ կ'ապրէր ողորմելի աղջիկը, սաէպ կ'աղաչէին զինքը որ երգէ, և զմայլելով անոր մտիկ կընէին։

Լա Կուալէօղ... ուրիշ մականուն մ'ալ ունէր, որ անշուշտ իր դէմքին կուսական անմեղութեան պարտաւոր էր...

Այս մականունն էր Գլէօր–դը–Մարի, անուն մը՝ որ արկոտի լեզուով կը նշանակէ կոյս։

Միթէ կարելի է բացատրել մեր զարմանքն, երբ այս կեղտոտ բարբառին մէջ, որով գողութիւն, արիւն և սպանդ նշանակող բառերն աւելի նոզկալի և ահռելի են՝ քան իրենց յայտարար նոզկալի և ահռելի բառերը, երբ կըսենք, գըտանք այս այլաբանութիւնը, Գլէօր դը Մարի, որ անուշ և գողտրիկ բանաստեղծութեան հով մը կը բուրէ։

Միթէ այս չնմանիր գեղեցիկ շուշանի մը՝ որուն անարատ և հոտաբոյր կոկոնը արիւնլուայ դաշտի մը երեսը կը փայլի ձիւնի պէս։

Ի՛նչ արտօրէն հակասութիւն և հրաշաւոր դիպուած. այս զարհուրելի լեզուն գողոներն՝ այսպէս մինչև սրբանուէր քանահիւս եղեր՝ և պժգալի լեզուով մը իրենց մտքին նոր

հրապոյր մը տուեր են։ Վասն զի ամէն խոհական անձի ուշադրութեան արժանի և ասկալի կէտն այն է, որ այս մարդիկ բաւական շատուր են, բաւական միաբան են իրենց յատուկ բարբառ մ'ունենալու, ինչպէս որ յատուկ սովորութիւններ և յատուկ թաղ մ'ունին։

Լա Կուալէօղլին պաշտպանը (այս անծանօթ մարդը Ռոտոլֆ պիտի անուանենք) գրեթէ երսուն վեց տարու կ'երևէր. իր միջին, նուրբ ու համակշիռ հասակը տեսնողը չէր յուսար բնաւ որ ըմբշամարտ Շուրինէօրին հետ ունեցած կռուին մէջ անանկ կորով մը ցուցնէ։

Շատ դժուարին է Ռոտոլֆին դէմքը ճշտիւ նկարագրել... իր ճակատին մէկ քանի խորշերէն կը կարծես թէ խոհուն մարդ մ'է... և սակայն բերնին ամրապինդ գծերը, գլխին վէս ու ժպիրհ դիրքը կը ցուցնեն որ զորձօն մարդ մ'է, որուն մարմնի ոյժն ու յանդգնութիւնը միշտ անդիմադրելի ներգործութիւն մ'ունին դրսին վրայ։

Ռոտոլֆ Շուրինէօրի հետ պայքարելու ատեն՝ ոչ բարկութեան և ոչ ատելութեան նշան մը ցոյց տուեր էր։ Իր ուժին, հնարագիտութեան և շոյտութեան վրայ վստահ՝ հեգնալի արհամարհանք մը զգացեր էր այն իր ոտքին տակն առած անբանի պէս մարդուն համար։

Ռոտոլֆին այս պատկերն աւարտելու համար բաւական է ըսել թէ՝ իր դէմքին գծերը կանոնաւոր ու գեղեցիկ, շատ գեղեցիկ կ'երևէին մարդու համար. իր խայտակն թաւշենի աչունները մեծ, քիթը՝ արծուի, թուշը՝ քիչ մը սեպ, մազերը բաց խարտեշ էին, նոյնպէս և վեսօրէն կորագիծ ունքերն ու բարակ թաւարծի փոքրիկ պեխերը։

Սակայն Ռոտոլֆ այնպէս վարժ էր օկրուհին հիւրերուն կերպերն ու լեզուն կեղծելու որ բոլորովին անոնց կը նմանէր։ Իր բարակ վզէն, հնգիկ Պաքոսի վզին պէս վայելուչ ու նրբակերտ, սև փողպատ մը անցուցեր՝ թոյլօրէն կապեր ու ծայրերը կապուտ բաղէնին վրայ ձգեր էր։ Կրկնաշար

կամեր իր կոշտ մոյկերուն տակը դամուած էին։ Վերջապէս, իր ընտիր և աղնիւ ձեռներէն զատ՝ չունէր բան մ'իր վրայ որ զինքը նիւթապէս կապլիոնի յաճախորդներէն դանազանէր, թէև բարոյապէս, իր արիական կերպարանն, կամ լաւ ևս, անվեհեր հանդարտութիւնն, իր և անոնց մէջ մեծ խորք մը կը ձգէր։

Կապլիոն մտնելով՝ Շուրինէօր իր լայն ձեռքին մէկը Ռոտոլֆին ուսին վրայ դրաւ ու պոռաց,

— Բարև տուէք Շուրինէօրի վարպետին...։ Հա, բարեկամներ, այս համբակը քիչ մ'առաջ զիս ալէկ մը կոփեց...։ Այժմն իմաց կտամ, ով որ փափաք ունի քամակը շոկել տալ, կամ կոխոտը ջախջախել, նոյն իսկ Մէդր տ'էքօլն ու Սքըլէդն ալ դուրս չհանելով՝ թող գայ և ասոր հետ չափուի, այս անգամ իր վարպետը կը գտնէ...։ Կը պնդեմ ու դրաւ կը դնեմ որ այս այսպէս է։

Այս խօսքիս վրայ օկրուհիէն բռնէ մինչև կապլիոնի յետին գնորդն երկիւղալի յարգանօք Շուրինէօրի յաղթողին նայեցան։

Ոմանք իրենց բաժակներն ու կուժերն անդին հրելով՝ նստարանին վրայ տեղ բացին շտապաւ՝ որպէս զի, եթէ կամի, Ռոտոլֆ իրենց մօտ նստի; ոմանք Շուրինէօրի քովը դացին և կամացուկ մը տեղեկութիւններ խնդրեցին անծանօթին վրայ, որ առաջին յաղթական քայլը կ'առնուր ալեաբերդ մէջ։

Վերջապէս օկրուհին իր տրապզին առջևէն ելաւ և իր ամենէն շնորհալի ժպիտներէն մէկը Ռոտոլֆին ուղղելով՝ և այս ալ անլուր, անհնարին և Լաբէն-Պլանի տարեգիրներու մէջ առասպելական դէպք մ'էր, եկաւ իր նորընծայ հիւրին հարց ու փորձ ընելու թէ ինչ կը հրամէ, և իր ընկերներուն ինչ պիտի մեծարէ. երբէք օկրուհին ասանկ հոգատարած չէր նոյն իսկ Մէդր տ'էքօլին կամ Սքըլէդին համար, երկու սոսկալի ոճրագործներ, որոց առջև Շուրինէօրն անդամ կը դողար։

Այն երկու գուժագէմ մարդերէն մին՝ որուն արդէն ակնարկեր ենք (այն տժգոյն մարդն որ ձախ ձեռնը կը պահէր և իր յոյն գտակն ճակտին վրայ կ'իջեցնէր անդուլ) ծռեցաւ դէպ 'ի օկրուհին՝ որ Ռոտոլֆին սեղանը կը սրբէր ուշիուշով՝ և կերկերուկ ձայնով մ'անոր ըսաւ։

— Այսօր Կրօ-Պուաթէն (զէր կաղը) չկա՞։

— Չէ, ըսաւ մայր Պոնիս։

— Հապա երթիկ։

— Եկա՞։

— Մի թէ զլխատեալ Մարսիալենց աղջիկը՝ Գալցան հե՞տն էր։ Անշուշտ կը ճանչնայ զայն...։ Ռամաժէօր կղզիին Մարսիլեանները։

— Հոս նայէ, մի թէ զիս լրտե՞ւ տեղ կ'առնես որ ատանկ հարցումներ կընես։ Մի թէ կարծե՞ս թէ իմ ծուխերս բերան կտամ, ըսաւ օկրուհին կոշտ ձայնով մը։

— Այս իրկուն ժամագիր եմ Կրօ-Պուաթէօին և Մէդր տ'էքօլին հետ— կրկնեց աւազակը — մեկտեղ գործ ունինք։

— Տարակոյս չկայ որ աղտոր գործերունիք, գուք. մարդասպանք։

— Մարդու զլուխ ուտող մի— կրկնեց հէնը զայրագին, — բայց փոքր տուր որ մարդու զլուխ ուտողներուն կռնակէն կ'ապրիս։

— Ծօ, քեզի կրսեմ, զլուխս շատ մ'ուտեր, կորիր— գոչեց օկրուհին սպառնալից, և ձեռքի կուժը հարցուկին վրայ վերցնելով։

Մարդը տեղը նստաւ կմկմալով։

— Կարելի է որ Կրօ-Պուաթէօն Դամբլ փողոցի ընկի՛ ծէրմէն անուն երիտասարդին հետ իր հաշիւը տեսնելու համար մնաց... ըսաւ իր ընկերին։

— Արդեօք զանի սպանելու միտք ունին։

— Չէ, մինակ անորմէ քիչ մ'արիւն պիտի առնուն. կ'երևի թէ մեր նանթի բարեկամները ձեռք առաւ, ինչպէս որ Պրա-Ռուժէն իմացանք։

— Այդ գործը Կրօ-Պուաթէօին կը վերաբերի. մեզի ինչ

գեռ նոր ելաւ բանտէն և բաւական զբաղմունք ունի։

Ֆլէօր-աը-Մարի Շուրինէօրին նանէն օկրուհիին գինեւունը մաեր էր. իսկ սա՝ խորշագէմ պատանիին բարեն առաւ գլխի նշանով մ'ու անոր ըսաւ։

— Է՛հ, գուա՛լ այս տեղ, Պարպիյօն, միշտ օղի կը տնկես։

— Միշտ. աւելի լաւ կը սեպեմ ծոմ պահել ու հինմուճակներ հագնիլ, քան կոկորդս առանց օղիի ու ծխախոտի առանց ծխի թողուլ, ըսաւ երիտասարդը խորին, բիրտ ունկուն ձայնով մը, առանց գիրքը փոխելու և ծխալի ամպեր բերնէն հանելով։

— Բար՛ իրկուն, Ֆլէօր-աը-Մարի— ըսաւ օկրուհին լա Կուալէօզին մօտենալով՝ և անոր վարձու տուած լաթերը հեռացնելով։ Այս քննութենէն ետքը, խրոխտաբար ըսաւ։

— Ի՞նչ զուարճութիւն է քեզի լաթ վարձելը.... քեզի... որ փոքրիկ կատուի պէս մաքրասէր ես... ուսանի այդ նարնջի սիրուն շալդ Գոռ-ինէօզի և Գոռ-ինէօզի պէս սնլիքոր կիներու չեմ վարձեր բնաւ։ Իրաւ է որ վեց շաբաթէ 'ի վեր որ տունս առի քեզ, կրթեցի... և ճշմարիտն ըսելով՝ Միջնաքաղքիս մէջ քեզնէ աւելի ընտիր աղջիկ մը չկայ, թէև շատ տրտում, շատ կախ երես. շատ ամչկոտ ես, օրիորդ Պաղուկ...։ Բայց հոգ չէ, դեռ շատ տհաս ես... թող չորս, հինգ տարի անցնի... թող հասակդ ալ քիչ մը նեռէ, այն ատեն Գէվ գոնիին մէջ քեզնէ աւելի փայլուն աղջիկ մը չը պիտի գտնուի։

Լա Կուալէօզ հառաչեց ու գլուխը ծռեց լուռ ու մունջ։

— Սքանչելի՛ է, ըսաւ Ռոտոլֆ օկրուհիին, ժամացուցիչ վրայի օրհնած փայտը, մանիկ— և զայն մատովը ցցուց։

— Ինչո՞ւ կը զարմանաս, անհաւատ, կուզե՞ս որ շունի պէս ապրինք— պատասխանեց ահարկու կինն անմեղօրէն։

Վերջը Ֆլէօր-աը-Մարիին դառնալով՝ ըսաւ.

— Ինձի նայէ, լա Կուալէօզ, գիտցած երդերէդ հատ մը չպիտի երգես։

— Առաջ կերակուրն ուտենք, մայր Պոնիս— ըսաւ Շուրինէօր։

— Ի՞նչ պիտի ուտեք, բարեկամ, ըսաւ օկրուհին Ռոտոլֆին, որուն յարգն ու թերևս պաշտպանութիւնը կուզէր շահիլ։

— Շուրինէօրին հարցուր, կոչունքն անոր, ստակն իմ կողմս է։

— Հասկրցայ— ըսաւ օկրուհին դէպ յերկուզակը դառնալով՝ — հրամէ ուրեմն անպիտան, ինչ պիտի ապսպրես։

— Երկու լիտր գինի՝ տասներկու ռոնոց, երեք պատատպինդ կակուղ հաց և ռուլէթէն մը, (սպասաւորներու սեղանին աւելցուք մի, ձկի եռ կտորներ) ըսաւ Շուրինէօր այս համադամին ընտրութեան վրայ պահ մը մտածելով։

— Կը նայիմ որ միշտ մի և նոյն շատկերն ես և ռուլէթէնի խենդը։

— Հիմա ըսէ նայիմ, լա Կուալէօզ, անօթի՞ ես։

— Զէ՛, Շուրինէօր։

— Ուրեմն զատ բան մը կուզես, աղջիկս, ըսաւ Ռոտոլֆ։

— Ո՛հ, շնորհակալ եմ... ախորժակ չունիմ...։

— Տես, անդամ մը տես սա ֆ՛ Լ-ըպեռռ... աղջիկ— ըսաւ Շուրինէօր բրտօրէն խնդալով. կը վախնաս երեսը նայելու։

Լա Կուալէօզ կարմրեցաւ և առանց Ռոտոլֆին նայելու ակնկոր մնաց։

Պահ մ'եռքը նոյն ինքն օկրուհին եկաւ և սեղանին վրայ դրաւ կուժ մը գինի, հաց և ռուլէթէնը՝ որուն նկարագիրը չենք իշխեր ընթերցողին ընել, թէև Շուրինէօր բոլորովին իր ճաշակին յարմար գտաւ, վասն զի գոչեց.

— Այս ինչ պնակ է, սուրբդ Փրկիչ... ինչ պնակ... համաշխարհային ուսելիք մ'է այս, այո՛, ամէն տեսակ ակռայի համար կրծոն կայ այս պնակիս մէջ, թէ ուսիք ուսող

և թէ պահք բռնողներուն համար, թէ շաբաթ և թէ պղպեղ սիրողներուն համար... դեղ դեղ հաւեր, բլիթ, ձկի պոչեր, կողկի (cotelette) ոսկրներ, քաքարի կեղևներ, տապ-կած միս, ընդեղէն, կացարի գլուխներ, պանիր, աղցան: Կեր, կեր, կ'աղաչեմ, լա Կուալէօզ... ինչ համով է...: Արդեօք դիպուածով այսօր կոչունքի էիր:

— Ինչպէս ամէն օր, նոյնպէս և այս առաւ, ըստ սովորականին իմ մէկ սո՜է կոթես և մէկ սո՜է հացիկս կերայ...:

Նոր անձ մը գինետունը մտնելով՝ ամէնքը լռեցին և անոր նայեցան:

— Միջին տարուք, արթուն ու կորովի մարդ մ'էր, բաճկոնակ (veste) և խոյրիկ մը հագեր էր ու կապլիոնի սովորութիւններու հմուտ՝ բնիկներուն ընտանի լեզուով ընթրիքն ուզեց:

Այս նորեկ հիւրն այնպէս մը նստաւ որ կարող էր երկու գուժադէմ մարդիկը դիտել, որոց մին Կը-Պո՜-ռիէօն և Մէդը ա՜է-օլին վրայ հարց ու փորձ ըրեր էր: Աչքն անոնց վրայ տնկեր կը նայէր, բայց անոնք իրենց դիրքովը չէին կրնար տեսնել որ գիտող մ'ունին:

Խօսակցութիւններն, որ պահ մը դադրեր էին, նորէն սկսան: Թէև յանդուգն՝ Շուրինէօր տեսակ մը ակնածութիւն կը ցուցնէր Ռօտոլֆին և կը քաշուէր անոր հետ դո՜-դելով (tutoyer) խօսիլ:

— Հաւատա՛, ըսաւ Ռօտոլֆին, թէև ծեծդ կերայ, շատ գոհ եմ քեզի հանդիպելուս:

— Հարկաւ, քանի որ արլէքէնը համով կը գտնես...:

— Առաջին պատճառ... երկրորդ անոր համար որ կեփիմ կը մրկիմ տեսնելու Մէդը ա՜էքօլին հետ ճակատ ճակատի գալդ... անօրէնը միշտ կը կոփէ զիս... հացիս եղ պիտի քսես թէ որ դու ալ զինքն աղէկ մը կոփես...:

— Խե՛ւ ես, միթէ կը կարծես թէ քու զուարճութեանդ համար գամիոի պէս Մէդը ա՜էքօլին վրայ պիտի ցատկեմ:

— Այդ չեմ ըսեր... բայց ինքը պիտի ցատկի վրադ եթէ ըսեն թէ դու իրմէ քաջ ես— պատասխանեց Շուրինէօր ձեռները շփշփելով:

— Դեռ բաւական դրամ ունիմ անոր վարձն ալ վճարելու— ըսաւ Ռօտոլֆ անհոգ կերպով մը, և ապա յարեց:

— Մտիկ ըրէ, ահռելի օդ մը կայ... գէշ չըլլար կարծեմ թէ որ գաւաթ մը շաքարախառն օղի տնկենք:

— Իմ ալ ուզածս ըսիր— պատասխանեց Շուրինէօր:

— Եւ մեր մէջ բարեկամութիւն հաստատելու համար եկուր իրարու յայտնենք թէ ով ենք— յարեց Ռօտոլֆ:

— Ես, Ալպինօս մը, հին գատապարտ մը, Սէն-Բօլ ֆո՜-բուրկն (quai) մօտ՝ լաստի վրայ փայտ կրող մ'եմ. ձմեռը կը սառիմ, ամառը կը տաքնամ, օրը տասներկու, տասնհինգ ժամ ջրին մէջ կը կենամ, կէս մը մարդու, կէս մը գոգոշի պէս կ'ապրիմ, ըսաւ Ռօտոլֆին հիւրը ձախ ձեռքով զինուորական բարևը տալով: — Գանք քեզի, յարեց նա, — քեզի իմ վարպետս, առջի անգամն է որ Միջնաքաղքին մէջ կ'երևիս...: Միտքս պարսաւել չէ քեզ, այլ կուզեմ լսել թէ առօք փառօք գլխիս իջար և թմրուկ զարնելով զիս դետին զարկիր... էյ անէծք, այն ի՞նչ թնդիւն էր... մանաւանդ վերջին կոուփնները...: Միշտ նոյն կէտին կը դառնամ, ինչպէս աղւոր կը տեղաւորէիր... ի՞նչ կոփոց էր այն: Բայց կարծեմ թէ Շուրինէօրը կոփելէն զատ արհեստ մ'ալ ունիս:

— Հովահարի նկարիչ եմ, ու անունս Ռօտոլֆ է:

— Հովահարի նկարի՞չ. ուրեմն ասոր համար ձեռներդ այդչափ ճերմակ են— ըսաւ Շուրինէօր: — Հոգ չէ եթէ բոլոր քու ընկերներդ քեզի պէս են. կ'երևի թէ շատ ոյժ պէտք է այդ արհեստը բանելու համար...: Բայց քանի որ գործաւոր ես, ինչ բան ունիս Միջնաքաղքիս այս կապլիոնին մէջ, ուր ինձի պէս մինակ գող, աւազակ ու դատապարտ կը գտնուին, վասն զի ուրիշ տեղ չեն կրնար երթալ: Այս

քեզի յարմար տեղ չէ. պարիզեցի գործաւորներն իրենց յատուկ գինեշինիքն (guinguette) ունին և արկոսի լեղուն չեն խօսիր։

— Այս տեղ գալուս պատճառն այն է որ ասանկ աղուոր ընկերութիւն մը կը սիրեմ։

— Հըմ... հըմ...— ըսաւ Շուրինէօր կասկածոտ դէմքով մը գլուխն օրեալով։ — Ես քեզի Պրա-Ռուժին գաւթին մէջ գտայ. վերջապէս... բաւական է...։ Եւ կրսես թէ զանի չես ճանչեր։

— Դեռ գլուխս պիտի ցաւցնեմ այդ քու կրողը տանելիք Պրա-Ռուժիդ խօսքովը...։

— Բան մ'ըսեմ, վարպետս, կարելի է որ իրմէ կը կասկածիս, և իրաւունք չունիս, եթէ կուզես իմ պատմութիւնս քեզի պատմեմ, այն պայմանաւ որ դու ալ ինձի կուփներ տալ սորվեցնես, որոնք իմ կրնակիս պարզելը պիտի ըլլան... և ասոր համար կը պնդեմ...

— Կը հաւանիմ, Շուրինէօր, դու պատմութիւնդ պատմէ... և լա Կուալէօզն ալ թող իրենն ըսէ։

— Ահա հիմա բանը կարգի մտաւ, յարեց Շուրինէօր. — օգն այնչափ դէշ է որ պահակ մ'անդամ կարող չէ դուրս ելնել... զբօսնելու ատեն է... ինչ կրսես, լա Կուալէօզ։

— Խօսք չունիմ. բայց իմ պատմութիւնս շատ կարճ է— ըսաւ Գլէօր-սը-Մարի...։

— Անշուշտ, դու ալ քուկդ պիտի պատմես, բարեկամ, վրայ բերաւ Շուրինէօր։

— Այո՛, պիտի սկսիմ։

— Հովահարի նկարի՛չ,— ըսաւ լա Կուալէօզ — այդ ինչ սիրուն արհեստ է։

— Եւ ինչ կը վաստակիս այդ գործէն, ըսաւ Շուրինէօր։

— Երբ աշխատիմ— պատասխանեց Ռոտոլֆ— բանուկ օրերն երեք, երբեմն հինգ ֆրանկ կը շահիմ, մանաւանդ ամառն որ ցորեկներն երկայն են։

— Եւ պարապ ատենդ կը թափառիս եա՛, անօրէն։

— Անշուշտ, մինչև որ դրամս հատնի. քիչ ալ չեմ վատներ գիտես. նախ՝ տաս սու կտամ գիշերի գիշեր օթեկիս համար (garni)։

— Ներեցէք, տէր իմ... տաս սու կտաք, գո՞ւք— ըսաւ Շուրինէօր ձեռքը խոյրին տանելով։

Այս տէր իմ բառը՝ Շուրինէօր հեղնօրէն ըսելուն՝ Ռոտոլֆ թեթև ժպիտ մ'բրաւ և շարունակեց.

— Է՛հ, հանգստութիւնս ու մաքրութիւնը կը սիրեմ։

— Զըսեն որ Գրանոայի նախարար մ'ես, այ թշուառական, ճշմարիտ մեծատուն մը— գոչեց Շուրինէօր — տասը սուի կը նստի քեզ գիշեր մը։

— Այս բաւական չէ— շարունակեց Ռոտոլֆ— ծխիս համար չորս սու կտամ, որով կընէ տասն չորս, չորս սու նախաճաշիս համար, տասն ութ, տասն հինգ սու ճաշիս. մէկ երկու սու ալ օգնիս, ասով օրն երսուն չորս, երսուն հինգ սուս կ'երթայ։ Բոլոր շաբաթ աշխատելու պէտք չունիմ, պարապդ ժամերս կը զուարճանամ։

— Հապա ընտանիքդ— ըսաւ լա Կուալէօզ։

— Քօլէրան տուաւ տարաւ— պատասխանեց Ռոտոլֆ։

— Որմ՞ն էին ծնողքդ— հարցուց լա Կուալէօզ։

— Հալի (վանատանոց) մոյթերուն տակ հնակարկատ, հին քրջերու վաճառական էին։

— Որչափ բռնեց անոնց ստացուածքը— հարցուց Շուրինէօր։

— Ես այն ատեն փոքր էի, խնամակալս զանոնք ծախեց ու երբոր չափահաս եղայ երսուն ֆրանք ալ իբր պարտք վրայ տուի...։ Ահա այս է իմ ժառանգութիւնս։

— Իսկ այժմեան մեծաւորդ ո՞վ է— հարցուց Շուրինէօր։

— Անունը կոտիէ է, Պուրտօնէ փողոցը կը նստի, աւանակ մ'է... բայց կոշտ... գող... բայց կծծի. արիւն կը փսխէ մինչև որ իր բանուորներուն օրողչէքը կը վճարէ։ Ահա այս է իր նկարագիրը. եթէ մոլորի, մ'աղատեր։

թող կրողին երթայ։ Տասն հինգ տարիէ վեր արհեստս անոր մոտ սորվեցայ. զէն-սբէբ-ընէան (conscription) ժամանակ վիճակը ինձի չընկաւ. անունս Ռօտոլֆ Տիւրան է...։ Ահա իմ բոլոր պատմութիւնս։

— Հիմա կարդը քուկդ է լա Կուալէօզ— ըսաւ Շուրինէօր

— Ես իմ պատմութիւնս իրը աղուոր պատառ մը վերջին կը պահեմ։

ԳԼՈՒԽ Գ.

ԼԱ ՊՈՒԱԼԻՕԶԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

— ԵԱԽ՝ չմոռնաս բանին ծայրէն սկսելու— ըսաւ Շուրինէօր։

— Այո... առաջ ծնողքդ— վրայ բերաւ Ռօտոլֆ։

— Ծնողքս չճանչցայ— ըսաւ Ֆլէօր-տը-Մարի։

— Ա՛հ, պա՛, ըրաւ Շուրինէօր— զարմանալի բան չըսես, լա Կուալէօզ, որ նոյն ընտանիքէն ենք...։

— Դո՛ւ ալ այդպէս, Շուրինէօր։

— Բարիզի փողոցներուն որբն էի... Ճիշտ քեզի պէս, աղջիկս։

— Եւ ո՞վ մեծցուց քեզ, լա Կուալէօզ—հարցուց Ռօտոլֆ։

— Զգիտեմ, պարոն... Որչափ որ խելքս կը հասնի կը յիշեմ միայն որ վեց կամ եօթ տարեկան էի, երբ պառաւ միակնուհի (borgnesse)մը քովս կը պտնուէի, որուն անունն էր լա Շո-էթ (բու)... ինչու որ կոր քիթ, կանաչ դոյն կիսկլոր աչք մ'ունէր և աչքը փորած բուի մը կընմանէր։

— Հէ... հէ... հէ...։ Աչքիս առջևն է լա Շո-էթ— պոռաց Շուրինէօր խնտալով։

— Միակնուհին— վերայ բերաւ Ֆլէօր-տը-Մարի—իրիկունները Բօն-Նէօվի վրայ դարեշաքար ծախել կտար, որ տեսակ մը մուրացկանութիւն էր... Եթէ դարձիս գոնէ

տաս սու հետս չբերէի՝ լա Շուէդ կերակուր տալու տեղ զիս կը ծեծէր։

— Աղէկ գիտես որ այն կինը մայրդ չէր— հարցուց Ռօտոլֆ։

— Քաջ գիտեմ, լա Շուէդ միշտ երեսիս կը զարնէր որ անհայր ու անմայր զաւակ մ'եմ, միշտ կըսէր որ զիս գետնէն ցաեր է։

— Այսպէս— յարեց Շուրինէօր— ապուրդ (fricot) ծեծ էր երբոր տաս սու չէիր վաստըկեր։

— Վերջը կերթայի գետնի վրայ փռած յարդէ անկողնի մը մէջ կը պառկէի, և շատ անգամ ցրաէն փայտ, փայտ կը կտրէի։

— Տարակոյս չկայ, յարգն իրօք սառոյց մ'է— պոռաց Շուրինէօր— կուն անկից հազարապատիկ աղէկ է. բայց ինչ օգուտ, զգուանք կը յայտնեն ու կըսեն. սնլիքսրի բան է... և այսպէս կը կտրեն կը թափեն։

— Այս կատակը Ռօտոլֆին ծիծաղը շարժեց։ Ֆլէօր-տը-Մարին շարունակեց։

— Միւս առաւ միակնուհին թէ նախատաշի և թէ ընթրիքի համար մի և նոյն հացի կտորս տալով՝ Մոնֆոքոն կը զրկէր զիս ձկի խայծի համար որդեր փնտռելու. ինչու որ ցորեկը Նօգր-Ցամի մոտ՝ լա Շուէդն իր ձկնորսի դրպակը կը նստէր...։ Նօթի և ցրտահար փոքրիկ աղջկի մը համար՝ ինչ տաժանելի գործ էր Մօրթէլլերի փողոցէն Մոնֆոքոն երթալը։

— Մարդը կնուի պէս քեզ չիտակ բուսցուց, աղջիկս, ուստի մի զանդատիր— ըսաւ Շուրինէօր, իր ծխափայտը վառելու համար հրահանը զարնելով։

— Վերջապէս— յարեց լա Կուալէօզ — յոգնած դադրած կը դառնայի։ Այն ատեն, կէս օրի մոտ, լա Շուէդ ինձի կտորիկ մը հաց կտար։

— Կերակուր չուտելէն հասակդ նոճիի պէս բարակցեր է,

աղջիկս, մի դանդաղիր ըսաւ Շուրինէօր ծխափայտը սատ-տիկ քաշելով։ — Բայց դուն ինչ ունիս, բարեկամ, ոչ, սը-խալեցայ, վարպետ Ռոտոլֆ, ինչո՞ւ երեսդ կախեր ես... Կը ցաւիս արդեօք որ այս մատղաշ աղջիկը թշուառութիւն կրեր է...։ Է՛հ... մեղնէ ոմ չէ կրեր այդ թշուա-ռութիւնը։

— Ո՛հ, գրաւ կը դնեմ որ ինձի չափ թշուառութիւն քա-շած չես, Շուրինէօր— ըսաւ Ֆլէօր-տը-Մարի։

— Ի՞նչ, ե՛ս, լա Կուալէօզ...։ Բայց մոռացէ անդամ մը աղջիկս, որ դու իմ քովս թագուհի մ'էիր. գոնէ դու յար-գի վրայ կը պահէիր և հայ կուտէիր պղտիկութեանդ ա-տեն... իսկ ես, բոլոր գիշերները Քլիշիի հնոցներուն մէջ կ'անցնէի, իբր ճշմարիտ դատարկաշրջիկ, և կաղամբի փորա-տիներ և փտուն ընդեղէն փողոցներու անկիւններէն հաւբ-լով փորս կը լեցնէի, թէև շատ անդամ, սաստիկ անօթու-թեանէս մինչև Քլիշիի հնոցներն, որ հեռու էին, դողդոջուն ոտներս երթալու անկարող՝ Լուվրի խոշոր քարերուն տակ կը պառկէի... և ձմեռը՝ ճերմակ վերմակ կ'առնէի վրաս... երբ ձիւն վաղէր։

— Անշուշտ տաժանելի է այդ կեանքը մարդու մը համար, բայց աղջկի մը համար— ըսաւ Ֆլէօր-տը-Մարի. և այս պատճառաւ արտուտի պէս դեր էի։

— Ուրեմն կը յիշես այն օրերը։

— Ինչպէս չյիշեմ. երբ լա Շուէդ դիս կը ծեծէր, իսկոյն երեսի վրայի կ'էյնայի, այն տեղն կոնակս կը թմբէր պո-ռալով. « Այս փոքրիկ ճճին տարկի մը ոյժ չունի և երկու կոուփ անդամ չկրնար տանիլ։ Ցեռոյ լա Բէկրէօ՝ կ'անուանէր զիս. ուրիշ անուն չունէի, այս էր իմ աւազանի անունս։

— Ճիշդ ինձի պէս. փողոցի շուներու չափ չկայի, իմ անունս Ժա՛ քան... չէ՛+... կամ Ալլէ՛ն՝ էր։ Զարմանա-լի է որ այսչափ իրարու կը նմանինք, աղջիկս— ըսաւ Շուրինէօր։

— Իրաւ է... թշուառութեան մասին..— ըսաւ Ֆլէօր-տը-Մարի, որ գրեթէ միշտ խօսքը այս մարդուն կ'ուղ-ղէր, վասն զի ակամայ կ'ամչնար Ռոտոլֆէն, հաղիւ անոր կը նայէր, թէև այն կարգի մարդերու կը նմանէր նա, որոց հետ սովորաբար կ'ապրէր։

— Բայց լա Շուէդին համար փնտռած որդերդ բերելէն ետև՝ ինչ կընէիր— հարցուց Շուրինէօր։

— Միակնուհին զիս ասդիս անդին մուրալու կը զրկէր, մինչև կէս գիշեր, ինչու որ իրիկունը Բօն-Նէօվի վրայ միս տապկելու կերթար։ Իրաւ որ այն միջոցին իմ հայի կտորիս ժամը չէր. բայց թէ որ չդիմանալով լա Շուէդէն կերա-կուր ուզէի, զիս կը ծեծէր ու կրսէր. « Բէկրիօզ, տաս սու մուրայ բեր, և այն տեղն ընթրիք կընես։— Ես ալ ա-նօթի ծարաւ կը մաշէի և առատ արտասուք կը թափէի։ Միակ-նուհին դարեշաքարի փոքրիկ սապատ մը (eventaire) վզէս կախած՝ Բօն-Նէօվի վրայ կը կեցնէր, ուր՝ ցրտէն կը սը-սրփայի։ Սապոյ է որ երբեմն ոտքի վրայ քունս կը տանէր, թէև շատ քիչ, որովհետև լա Շուէդ ոտքովը զարնելով՝ զիս կ'արթնցնէր։ Վերջապէս, նոյն կամրջէն վրայ մինչև ժամը տասն մէկ կը մնայի, իմ դարեշաքարիս կրպակը վզէս կախուած և ոտէպ դառնապէս կլայի։ Իմ լացս տեսնելով... անցորդ-ները կը գթային վրաս և այն տեղն մինչև տաս տասնհինգ սու ողորմութիւն կտային ինձի և կը բերէի լա Շուէդին կը յանձնէի. այս ալ վրաս գլուխս կը պրպտէր, մինչև բեր-նիս մէջ կը նայէր որ սուակ մը չպահեմ։

— Այս իրաւ է որ քեզի պէս արտուտի մը համար տասն հինգ սու մեծ ապուռ մ'է։

— Հարկաւ. և միակնուհին երբ այս բանս կը տեսնէր..։

— Անշուշտ մէկ աչքով— ըսաւ Շուրինէօր խնտալով։

— Ճիշդ է. քանի որ լոկ աչք մ'ունէր։ Միակնուհին բանին կ'գար իմ լացս, և Բօն-Նէօվ տանելէն առաջ սո-վորութիւն ունէր զիս աղէկ մը զարնել, որպէս զի լամ ան-ցորդներուն առջև և աւելի նպատակ ժողվեմ։

— Թէև քարսիրա, բայց սատանայ կին մ'է եղեր։

— Ի՞նչ օգուտ, քիչ քիչ ձեծի վարժեցայ, և որովհետև Լա Շուէդ կը կառղեր, երբ լայս բռնէի, վրէժս հանելու համար որչափ ծեծէր այնչափ կը ջանայի խնտալ, թէև աչքերս արտասուքով լեցուն էին։

— Հապա չե՞ս ըսեր... գարեշաքարներդ... անշուշտ բերնիդ ջրերը կը վազէր քանի անոնց վրայ նայէիր, խեղճ Լա Կուալէօզ։

— Ո՛հ, շատ իրաւ է, Շուրինէօր, բայց մատ չէի դպեր անոնց, այս էր իմ փառասիրութիւնս... և այս փառասիրութիւնս մեծ մեծ ձուներ բերաւ գլխիս։ Օր մը, Մօնֆրօնէն դառնալու ատենս, քանի մը պղտի աղաներ գլխս ծեծէր և սատանս կողոպտեր էին։ Տուն կը մտնեմ, արդէն դուշակեր էի գալիք փոթորիկը, անինայ ծեծ կուտեմ և ոչ հայր Իրկունը, կամուրջը չկացած՝ Լա Շուէդ, առջի օրը պարապ դառնալէս զայրանալով՝ ըստ սովորականին ծեծով լայս կրկրդառնալու տեղ, արիւնս խմելու չափ գլխս կը տանջէ քունքիս կողմէն մազերս փետելով, որ մարդուս ամենէն փափուկ տեղն է։

— Վա՛յ նղովից արմատ, չափը անցուցեր է— գոչեց Չարլզործը, բռնովը սեղանը գարկաւ ու ընքուիները պոսակեց։ — Արդէն աղայ մը ծեծել խելքիս դէմ է... բայց տանջել... վա՛յ նղովից արմատ...։

Ռօտոլֆ, որ ուշադիր մտիկ ըներ էր Գլէօր-սը-Մարիին պատմութեան, զարմանալով Շուրինէօրը դիտեց։ Անոր այս գթասրտութեան կայծը չէր կարող ըմբռնել։

— Ի՞նչ եղար Շուրինէօր— ըսաւ անոր։

— Ի՞նչ եղայ, ինչ եղայ մի. արդեօք քու սիրադ բան մը չը՞ըլար։ Այս հրէշ կինը կը չարչարէ խեղճ աղջիկը և դու բան մը չե՞ս զղար։ Ուրեմն դու ալ կռուփներուդ պէս քա՛ր ես։

— Շարունակէ, աղջիկս— ըսաւ Ռօտոլֆ Գլէօր-սը-Մարիին, առանց Շուրինէօրի հարցումին պատասխան տալու։

— Կըսէի թէ լա Շուէդ գլխս լացնելու համար կը չարչարէր. կամուրջը գացի շաքարի ափսէս վիզս։ Միակնուհին իր կրակարանին մօտ էր...։ Ատենատեն ինձի կռուփը կը ցուցընէր։ Բայց առջի օրէն 'ի վեր անօթի կը մռնէի և լա Շուէդին բարկութիւնը սչքս առնելով՝ շաքարի կտոր մը քերանս նետեցի։

— Ապրիս, աղջիկս։

— Ուրիշ կտոր մ'ալ տո՛ւ։

— Ապրիս. կեցցէ՛ Սահմանադրութիւնն։

— Ճշտիւ, շատ համով կը գտնէի շաքարը, չէ թէ շատկեր ըլլալուս՝ այլ սատանիկ անօթի էի։ Անդիէն նարնջի վաճառուհի մը միակնուհիին ի՛սկսի պոռալ։ «Լա Շուէդ, չմտնայիր... Բէկրիօզ ապրանքդ կուտէ»։

— Ո՛հ նղովից արմատ, բանը բօթ պիտի գայ... անշուշտ բօթ պետի գայ— ըսաւ Շուրինէօր յեսին հետաքրքրութեամբ. — Թշուառ արատուիկ, արդեօք ինչպէս գողդ բռնեց երբ լա Շուէդ տեսաւ շաքարն ուտելդ, հէ՞։

— Ինչպէ՞ս պրծար ձեռքէն, խեղճ լա Կուալէօզ— ըսաւ Ռօտոլֆ, որ Շուրինէօրին պէս հետաքրքիր էր։

— Ա՛հ, այս բանս շատ տուղի նստաւ ինձ, բայց ետքէն, վասն զի միակնուհին որչափ որ կառղութենէն կը փրփրէր տեսնելով որ իր շաքարը կուտեմ, չէր կրնար կրակարանէն հեռանալ. վասն զի մնին եղը եփ ելեր կ'եռար։

— Հա՛... հա՛... հա՛... ճիշտ է։ Ահա ասոր կըսեն... դժուարին վիճակ մը,— գոչեց Շուրինէօր քահ քահ խընտալով։

— Լա Շուէդ հեռուէն իր երկաթէ մեծ պատառաքաղով ինձ կ'սպառնար...։ Երբ իր տապկածը կը լմննայ, քովս կգայ...։ Արդէն երեք սու ողորմութիւն առեր էի, և վեց սուի շաքար կերեր էի... լա Շուէդ առանց խօսք մ'ըսելու ձեռքէս կը բռնէ որ տանի։ Ձեմ դիտեր ինչպէս նոյն պահուն վախէս չմեռայ։ Կարծես թէ երկիւան պէս միաքս է

այս բանը... ինչու որ կաղանդի օրեր էին։ Բօն-Նէօվի վրայ շատ մը խաղալիքի գրպակներ կային, բոլոր իրկուն խելքս միաքս անոնց հետ էր... կրնաք մտածել, թէ ինչ զուարճութիւն կզգայ տղայ մը, երբ բոլոր այն սիրուն պէ-պէնները, փոքրիկ կահ ու կարասին տեսնէ...։

— Եւ դու բնաւ խաղալիք ունեցած չէս, դու լա Կուալէօզ,— ըսաւ Շուրինէօր։

— Ե՞ս, խաչ հանէ երեսդ, ո՞վ պիտի տար ինձ ատանկ բաներ, ըսաւ աղջիկը տրտմալի։ — Վերջապէս մութը կոխեց. թէև սառն ու սուր էր ձմեռը, միևնակ թերմաշ կըտաւէ շրջազգեստ մը ու ոտքս սանտալ հագեր էի, ոչ գուլպայ, ոչ շալիկ ունէի։ Պէտք էի փոյտ կարիլ, այնպէս չէ՞, ընդ հակառակն, երբ միակնուհին ձեռքս բռնեց, արիւն քրտինք մտայ։ Շատն անոր համար կը վախնայի որ լա Շուէդ, սովորականին պէս, հայհոյելու և փրփրելու տեղ քթին տակէն բոլոր ճամբան շարունակ կը մրմռար... բայց ձեռքս չէր թողուր, և անանկ շուտ, շուտ կը քալէր որ անոր հասնելու համար կը վազվզէի։ Վազելու տեղն սանտալիս մէկը կորուսեր էի, ճիկ չէի հաներ և անդադար կը քալէի մէկ ոտքս քարին վրայ... երբ հասանք արիւնլուայ եղեր էր։

— Շան երես միակնուհի, — գոչեց Շուրինէօր բարկութեամբ սեղանը զարնելով. — սիրաս կը խշխշայ քանի աչքիս առջև բերեմ այս աղջկին պառաւ գողին ետևէն վազ'ի վազ գալը իր արիւնոտ ոտիկովը...։

— Մօրթէլլօրի փողոցին մէկ վերնայարկը կը նստէինք, օղետուն մը (rogomiste) կար ուղիղ դրան մօտ. լա Շուէդ ներս մտաւ և կէս թաս օղի խմեց։

— Շուտիկ խմէ, այդ իմ բանս չէ, քաղքին դռները կը՞տամ թէ որ այնչափ օղի խմեմ։

— Այս էր անոր սովորական բաժինը։ Կարելի է այս պատճառաւ իրկունը այնչափ կը ծեծէր զիս։ Զերկարեմ մը վերնայարկը կ'ելնենք, լա Շուէդ դուռը կրկին կղպակով կը գոցէ. ես ոտքը կիյնամ որ ներսէ ինձ զարեշաքարը ուտելուս համար։ Լա Շուէդ ձայն չհաներ, և խցին մէջ քալելով կը մրմնջէ։ «Հիմա ինչ ընեմ ես այս Բէկրիօգին, այս շաքարի գզաթիկ գողին... ինչ, ինչ պատիժ տամ։ Եւ պահ մը կայ կառներ ինձի նայելու իր կանաչ աչքը բոլորելով...։ Իսկ ես միշտ ծնկի վրայ էի։ Յանկարծ միակնուհին դէպ'ի գարակ մը կը վազէ ու զոյգ մը աքծան կ'առնու։

— Աքծան,— գոչեց Շուրինէօր։

— Այո՛, աքծան։

— Է՛հ, ինչո՞ւ համար։

— Անշուշտ անով քեզ ծեծելու համար, ըսաւ Ռոտոլֆ։

— Քսմտելու համար,— ըսաւ Շուրինէօր։

— Չէ՛, չէ՛— ըսաւ լա Կուալէօզ դեռ ևս գողդողալով այս յիշատակէն։

— Մաղերդ քաշելու համար։

— Չէ... այլ իզմէ ակռայ մը քաշելու համար։

Շուրինէօր անանկ յիշոց մը բերնէն հանեց և սոսկալի ա-նէծք մը կարդաց որ կապլիոնին բոլոր հիւրերը զարմանք անոր նայեցան։

— Լաւ, ինչ ունիս— ըսաւ Ռոտոլֆ։

— Ի՞նչ ունիմ... բայց գանակս փորը կը խօթէի թէ որ միակնուհին ձեռքս տային...։ Ո՞ւր է հիմա, ըսէ ինձ, ո՞ւր է։ Թող մէյ մը ձեռքս իյնայ և ոսկին քթէն պիտի հանեմ։

— Խեղճ աղջիկ, իրաւ ակռադ քաշեց հանեց, այն զարշելի պառաւը— հարցուց Ռոտոլֆ մինչդեռ Շուրինէօր բարկութենէն կրակ ու բոց կ'արձակէր։

— Հա՛, հանեց, պարոն, բայց չէ թէ շուտ մը։ Տէր Աստուած, ինչ ցաւ քաշեցի. մանկի պէս իր ծունկերուն մէջ գլուխս բռնեց և կէս մը աքծանով, կէս մը մատերովը՝ ահա սա ակռաս խլեց, և ապա ըսաւ. «Ասկից ետքը ամէն օր ասոր պէս մէկ հատ պիտի հանեմ, Բէկրիօգ, և ակռաներդ

հատնելէն ետև՝ քեզի ջուրը պիտի նետեմ որ ձկներն ուտեն»։

— Ա՛յ անզգամ, ինչպէս կարեր, կորզեր է այս փոքրիկ աղջկին ակռան— զոչեց Շուրինէօր անզուսպ կատղութեամբ։

— Հապա ինչպէս լա Շուէդին ձեռքէն պրծար— հարցուց Ռօտոլֆ լա Կուալէօզին։

— Միւս օրը, Մօնֆօրոն երթալու տեղ՝ Էլիզեան դաշտին կողմերը փախայ, այնչափ սաստիկ էր վախս որ լա Շուէդ զիս չկեղդէ։ Գլուխս առնելով լեռէ լեռ պիտի երթայի որ անոր ձանկին տակ չիյնամ։ Քալելով... քալելով անձանձրաչ թաղերը հասայ, մարդ մը չեմ տեսնար դիմացս որ ողորմութիւն ուզեմ, թէև ամէն բան մոռցեր էի սաստիկ ահ ու դողէս։ Գիշերը փայտարանի մը մէջ պառկեցայ, փայտի կոյտի տակ։ Փոքրիկ ըլլալուս կարող եղայ հին դրան մը տակէն սահիլ և դէզ մը կեղևներու մէջ պահուիլ։ Այնչափ անօթի էի որ ջանացի քիչ մը փայտի փեճիկ ծամել։ չկրցայ, շատ կարծր էր, վերջապէս քունս տարաւ։ Այգուն՝ շշուկ լսելով՝ աւելի ներս մտայ փայտի կոյտին տակ։ Սաստիկ տաք կընէր։ Թէ որ քիչ մը ուտելիք ունենայի ձմեռն այն տեղ շատ աղէկ կրնայի անցնել։

— Ինչպէս ես հնոցիս մէջ։

— Փայտարանէն դուրս ելնել չէի համարձակեր, կարծելով թէ լա Շուէդ ամէն տեղ զիս կը փնտռէր, որպէս զի ակռաներս խլէ և խեղդէ, և թէ կարող էր բռնել զիս եթէ տեղէս շարժէի։

— Ա՛լ մի խօսիր ինձ այն անզգամ պառաւին վրայ, աբիւնս գլխիս կը զարնէ... կը հաւատամ հիմա որ շատ տառապեր ես, շատ... խեղճ փոքրիկ մկլէս, անոր համար կը ցաւիմ որ քիչ մ՚առաջ ծեծելու սպառնալով՝ վախցուցի քեզ... թէև միաքս ծեծել չէր, մաս վկայ։

— Ինչու համար չծեծես զիս, քանի որ պաշտպանող մը չունիմ...։

— Ահա քուն իսկ անոր համար չէի ծեծեր քեզ որ դու ուրիշներուն պէս չես և ոչ մարդ մ՚ունիս քեզ պաշտպան։ Միտքս հասկրցիր, ոչ մարդ մ՚ըսելով... մեր Ռօտոլֆ բարեկամը դուրս կը հանեմ, և այս ալ դիպուած մ՚է... հետևապէս դիպուածով թմրեց զիս։

— Շարունակէ, աղջիկս... ըսաւ Ռօտոլֆ։— Ինչպէս ելար փայտարակէն։

— Միւս օր, միջօրէի մօտ, փայտի կոյտին տակ խոշոր շունի մը հաչելը կը լսեմ։ Ականջ կը դնեմ... կը նայիմ որ շունը կը հաչէր միշտ մօտենալով։ Ցանկարծ մէկը հաստ ձայնով կը պոռայ։ «Շունը կը հաչէ, փայտարանին մէջ պահուած մարդ պիտի ըլլայ։— «Անշուշտ դող է, կը յարէ ուրիշ ձայն մը...։ Եւ այս երկու մարդիկը կ՚սկսին իրենց շունը գրգռել անոր պոռալով՝ «Բռնէ, բռնէ»։

Շունը վրաս կը վազէ. ես ալ վախէս որ կը խածնէ՝ կըսկսիմ օդնութեան կանչել բոլոր ուժովս։ — Վա՛յ,— կըսէ ձայնը — մանկիկ մը աղաղակը կը թուի...։» Շունը կը կանչէն, փայտերուն տակէն կ՚ելնեմ, պարոն մը և բազէնով մանչ մը դիմացս կը աեսնեմ, — Ի՞նչ բան ունիս դու փոքրիկ դող, իմ փայտարանիս մէջ, կըսէ ինձ պարոնը չարամիտ դէմքով մը—։ Ես ձեռներս միացնելով կը պատասխանեմ. — Կ՚աղաչեմ քեզ, զիս մի նեղեր՝ երկու օր է որ բան մը կերած չեմ, լա Շուէդին տունէն փախայ, որ ակռայիս մէկը քաշեց և զիս ծովը պիտի նետէր. պառկելու տեղ մը չգտնելով՝ ձեր դրան տակէն անդայ, փայտի կոյտերուդ ներքև՝ կեղևներու մէջ քնացայ, կարծելով որ մէկու մը ճնաս չունիմ»։

— «Ես աւանակ չեմ, պզտիկ դող մ՚է այս, կոնձղերս դողնալու եկած է, շուտով ոստիկան մը կանչելու է...— ըսաւ փայտեվաճառն իր մանչին։

— Ա՛յ, կորած, մոլորած ծերուկ, ոստիկան մը կանչել. թո՛ղ թնդանօթ ալ բերել տար— զոչեց Շուրինէօր։

— Եւ ինչպէս կարելի էր կոճղերը գողնալ, դու որ դեռ ութ տարեկան էիր... ինչ, կով ականջ մարդ...»

— Իրաւ է, և անոր համար իր մանչը պատասխանեց։ — «կոճղերդ պիտի գողնայ մի, և ինչպէս պիտի ընէ, տէր իմ, փոքրիկ կոճղերէդ աւելի փոքր է նա։ — ճիշտ է ըսածդ, կը պատասխանէ փայտեվաճառը. եթէ ոչ իրեն համար, ուրիշներու կողմէն եկած պիտի ըլլայ։ Գողերն ասանկ մարդիկներ ունին որ լրտեսելու և թաղչելու կը զրկեն, որպէս զի տուներուն դռները բանան։ Պէտք է շուտ ոստիկանին դուռը տանիլ զանի. նայէ որ չփախի...»

— Ճշմարի՛տը. այս փայտեվաճառը իր կոճղերէն (bûche) աւելի կունտ գլուխ (bûche) է ըսաւ Շուրինէօր։

— Զիս ոստիկանին կը տանին— յարեց լա Կուալէօզ. կը խոստովանիմ որ դատարկաշրջիկ մ'եմ. բանտ կը զրկեն զիս, և դատարան ելնելէն ետև՝ կը դատապարտեն, միշտ իբր դատարկաշրջիկ, ութ տարի վերապրման մը (maison de correction) մնալու։ Ընորհակալ կըլլամ դատաւորիս բարեսրտութեան... գոնէ բանտիս մէջ ուտելիք ունէի, ծեծ չկար, և լա Շուէդին տնակին քով՝ այն ինձի համար արքայութիւն մ'էր։ Ասկէ զատ՝ բանտին մէջ կար սորվեցայ։ Գէշն այն էր որ ծոյլ էի, աւելի կը սիրէի երգել քան բանիլ, մանաւանդ երբոր արևը կը տեսնէի... ո՛հ, երբ բանտիս բակէն օդին զեղեցկութիւնը նշմարէի՝ ներսէս կը գրգռէին որ երգեմ... և այն ատեն... երգելով անդուլ, կարծէի թէ բանաը չեմ։ Իմ յարատև երգս լսելով՝ Բէկրիօդ անունս փոխեցին և լա Կուալէօզ դրին։ Վերջապէս տասն և վեց տարեկան բանտէն ելայ... դուռը կեցեր էին այս տեղի օկրուհին և երկու երեք պառաւներ որ երբեմն բանտակից ընկերուհիներս տեսնելու եկեր՝ և ամէն անգամուն ըսեր էին թէ՝ բանտէն ելնելուս ինձ տալիք գործ ունին։

— Ա՛հ, լաւ, լաւ, կ'իմանամ— ըսաւ Շուրինէօր։

— «Մեր սիրուն աղջիկն, ըսին օկրուհին և պառաւները. կուզէ՞ս մեզի գալ մնալ, գեղեցիկ շրջազգեստներ պիտի տանք քեզի և դու միայն պիտի զուարճանաս։» Իսկ ես որ համարում չունէի անոնց վրայ, մերժեցի ու ըսի իւրովի։ «Կար կարել գիտեմ, երկու հարիւր ֆրանք պատրաստ գրամ ունիմ...։ Արդէն ութ տարի եղաւ որ բանտն էի, քիչ մը երջանիկ ըլլալ կուզեմ, ուրիշի զէն չունիմ, գործ կրնամ գտնել երբոր ոտակս հատնի...։» Եւ կսկսիմ իմ երկու հարիւր ֆրանքս վատնել։ Գիտեմ որ շատ գէշ ըրի— յարեց Գլէօր-տը-Մարի հառաչ մը հանելով՝ — նախ պարտաւոր էի գործ գտնել... ի՞նչ օգուտ, խորհրդատու մը չունէի։ Է՛հ, տասն վեց տարու... այսպէս Բարիզի մէջ ընկեցիկ... միս միայնակ մնայի...։ Վերջապէս, անցածը գացած է...։ Գէշ ըրի և պատիժս գտայ։ Ուստի ունեցածս կը վատնեմ։ Նախ՝ ծաղիկներ կը գնեմ որ սենեակս լեցնեմ, որչափ կը սիրեմ ծաղիկները. ապա շրջազգեստ մը, շալ մը կառնեմ և Պուա-տը-Պուլօնի անտառը, Սէն-ժէրմէն, Վէնսէն, գիւղ կերթամ պտըտելու համար...։ Ո՛հ, որչափ կը սիրեմ գիւղը։

— Թերևս սիրահարի մը հետ, աղջիկս, հէ՞. — հարցուց Շուրինէօր։

— Ո՛հ, տէր Աստուած, ո՛չ, ես իմ անձիս տիրուհին կուզէի ըլլալ։ Բանտակից ընկերուհիի մը հետ կ'զբօսնուի, փոքրիկ բարի աղջիկ մը, որ Ռիկոլէթ կ'անուանէր, ինչու որ միշտ կը խնտար։

— Ռիկոլէդ, Ռիկոլէդ, այս անունը լսած չեմ— ըսաւ Շուրինէօր հին յիշատակները քրքրելու կերպով մը։

— Հարկաւ չես լսած, վստահ եմ որ պարկեշտ աղջիկ մ'է Ռիկոլէդ. բանտին մէջ... թէև շատ զուարթ, նաև շատ աշխատասէր էր և չորս հարիւր ֆրանք վաստակեր էր երբոր անկից ելաւ...։ Հապա ինչպէս կարգ կանոն պահել գիտէր... տեսնելու բան մ'էր։ Երբ կըսեմ թէ խրատատու

մը չունէի . . . կը ստեմ . . . աղէկ կը լսար թէ որ անոր, անոր խրատին միտ դնէի . . . : Ո՛չ օր միասին զուարճանալէն ետև՝ Ռիկօլէդ ինձ ըսաւ : « Բաւական հանդիստ ըրինք, գործի ատեն է, եկուր մեր ստակը պարապ տեղ չվատնենք . . . : » Ես որ ուրախ զուարթ էի դաշտ ու անտառ պըտըտելով, այն միջոցին որ դարունի վերջերն էր, անոր պատասխան տուի : « Ես քիչ մ'ևս պիտի զուարճանամ, ետքէն կ'աշխատիմ : » Անկից 'ի վեր Ռիկօլէդը նորէն չտեսայ : Բայց քանի մ'օր կայ իմանալս թէ Դամբլը թաղը կը բնակի, քաջ գործուհի մ'եղեր է, օրը քսան հինգ սու կը շահի և իրեն գլխին փոքրիկ տուն տեղ ալ շիներ է . . . : Սակայն երեսս չբռներ երթալ զինքը տեսնելու, կարծեմ թէ գետնին տակը պիտի անցնիմ եթէ անոր հանդիպիմ :

— Այսպէս, թշուառ աղջիկ— ըսաւ անոր Ռոտոլֆ — բոլոր ստակդ կերար որ գիւղը թափառիս . . . : Ո՞րչափ կը սիրես գիւղը :

— Ո՛հ, իրաւ է . . . գիւղ նստիլ իմ մէկ հատիկ փափաքս էր . . . Ռիկօլէդ, ընդ հակառակն, Բարիզի մէջ, պուլվարները շրջիլ կը սիրէր . . . : Բայց սիրաս չկոտրելու համար ինձի հետ դաշտերը կ'գար, այնչափ աղէկ հոգի և ընտիր բնաւորութիւն ունէր .

— Քանի մը սոու ալ չպահեցիր, որ գոնէ մինչև գործ ճարելդ ուտէիր— հարցուց Շուրինէօր :

— Այո՛, յիսուն ֆրանքի մօտ պահեր էի . . . բայց իմ սեբաղդիս Լօրէն անուն լաթ լուացող կին մ'ունէի, գառնկի պէս անմեղ կին մը, որ այն ատեն ծանր յղի էր և ամէն օր ոտքն ու ձեռքը ջրերուն մէջ, իր նաւակին մօտ : Այս կինը կը հիւանդանայ և աշխատիլ չկրնալով՝ Պուրպը (աղքատանոցը) մտնել կուզէ, բայց իրեն համար տեղ չկար և տուր հացի կարօտ մնացեր էր : Բերելու մօտ էր, և օթեկի մը մէջ՝ ուսկից կը վռնտուի, անկողին մը վարձելու անգամ ստակ չունէր : Աստուծմէ պիտի ըլլայ, իրկուն մը

Ենդրը—Տամի կամրջին մէկ անկիւնը Կուպէն կնոջ կը հանդիպի, որ պահուեր էր չորս օրէ վեր տան մը վերնայարկին մէջ զոր կը փլէին Օդէլ—Տիէօին ետևէն . . .

— Է՛հ, բայց ինչո՞ւ համար Կուպէն կինը ցորեկը ինքզինքը կը պահէր :

— Իր մարդուն ձեռքէն ազատելու համար, ինչու որ զանի ծպանել կուզէր : Մինակ գիշերը դուրս կ'ելնէր հաց գտնելու համար : Եւ ահա այն միջոցին խեղճ Լօրէնին կը հանդիպի նա, անանկ ծանր և հիւանդ, որ հազիւ կարող էր քալելու, ժամ առ ժամ ցաւը բռնելուն . . . և անոր վրայ գթալով իր ծածուկ օթևանը կը տանի : Այս ալ ապաւէն մ'էր։ Նոյն տեղ Կուպէն իր խշտեկին և հացին կէսը թշուառ Լօրէնին կտայ, որ այն տեղը զաւակ մը կը ծնի. ծածկոց մ'անգամ չունէր, մինակ յարդ կար . . . : Այս տեսնելով Կուպէն չդիմանար, իր մարդուն ձեռքով մոռնելն աչքը կ'առնէ, որ անդուլ զանի կ'որոնէր, ցորեկը դուրս կ'ելնէ և կգայ զիս գտնելու : Գիտէր նա որ դեռ քիչ մը ստակ ունիմ և ձեռքէս եկածին չափ բարիք ընել կը սիրեմ. ուստի երբ Լօրէնի թշուառութիւնը ինձ պատմեց և ըսաւ թէ իր զաւկին հետ յարդի վրայ գետնայարկի մը մէջ մնալու ստիպուած է . . . : Ենդրեցի որ իսկոյն երթայ զանի բերէ իմ օթեակս, խոստանալով խցիկ մը վարձել անոր իմինիս քով : Եւ իրօք խօսքս բռնեցի, և որչափ դոհ եղաւ խեղճ Լօրէնը, երբոր ինքզինքը անկողնի և զաւակն ալ իմ գնած ուռիի օրօրոցին մէջ իր քովը պառկած գտաւ . . . : Ես և Կուպէն միասին հսկեցինք անոր վրայ. երբոր անկողնէն ելաւ, իմ մնացած ստակովս անոր ապրուստը հոգացի մինչև որ լաթ լուալու սկսաւ :

— Հապա այս խեղճ Լօրէնին և զաւկին համար ունեցածդ վատնելէն ետև՝ ինչ ըրիր, աղջիկս— հարցուց Ռոտոլֆ :

— Այն ատեն գործ փնտռեցի, բայց ուշ արթնցայ : Կար կարել շատ աղէկ գիտէի, սրտոտ էի և կարծէի թէ գործ

չոլակսիը ինձ քանի որ աշխատելու կամք ունէի... : Բարի՜, որչափ կը սխալէի... : Կտաւագործի մը կրպակը կը մտնեմ գործ խնդրելու, և սուտ չըսելու համար, բացէ՛ի բաց բանտէն ելնելս կը յայտնեմ. առանց պատասխան տալու ինձ կրպակին դուռը կը ցուցնեն... : Կ'աղաչեմ որ փորձի համար քիչ մը կար տան, իբր գող գլխս դուրս կը քշեն... : Ահա այն ատեն միտքս եկաւ Ռիկոլէդին ըսածը, բայց շատ ուշ արթնցայ... : Մաս մաս ծախեցի... ունեցած մէկ քանի Ճերմակեղէն լաթերս և հագուստներս որ ապրիմ... և՛ի վերջէ... երբ ամէն բաներս հատան գլխս օթեկէս դուրս վըռընտեցին... : Արդէն երկու օր բերանս փշրունք չէի դըրած... և ո՞ւր պառկիլը չգիտէի... : Ահա այն միջոցին օկրուհին և պառաւներէն մին դիմացս ելան, վասն զի բնակարանս գիտէին և բանտէն ելնելէս՝ի վեր իրենց աչքը վրաս տնկեր կը դիտէին: Ըսին ինձի որ գործ կրնան գըտնել... ես ալ հաւատացի... : Ուստի առին տարին գլխս... անօթի ծարաւ կը մնէի... գլուխս իմս չէր... օղի խըմցուցին ինձ... և... և... ահա...— ըսաւ Թշուառ աղջիկը գլուխը ձեռքին մէջ պահելով:

— Միթէ շատ ատեն կա՞յ... որ օկրուհիին քով կը բնակիս, խեղճ աղջիկս— հարցուց անոր Ռոտոլֆ ցաւագին հետաքրքրութեամբ մը:

— Վեց շաբաթ է, պարոն— պատասխանեց լա Կուալէօզ դողահար:

— Կը հասկընամ— ըսաւ Շուրինէօր — հիմա քու իլիկդ ծլնկդ իմացայ այնպէս որ ընտանիքդ ըլլայի: Լա՛, կը յուսամ որ ուրիշ խոստովանութիւն մ'ալ պիտի ընես:

— Կ'երևի թէ գլխիդ եկածները պատմելուդ գղջացիր, աղջիկս— ըսաւ Ռոտոլֆ:

— Աւա՜ղ, պարոն— ըսաւ Գլէօր-տը-Մարի վշտագին — տղայութենէս՝ի վեր առաջին անգամն է որ այս բաներս միտքս կը բերեմ... և կը տեսնես որ ախորժելի բաներ չեն...:

— Զարմանք— ըսաւ Շուրինէօր հեգնօրէն— թերևս կը ցաւիս որ Ճաշարանի մը (gargotte) մէջ խոհանոցի ծառայ կամ անբան պառաւներու քով սպասուհի չեղար իրենց ամուսինները խնամելու համար:

— Ի՞նչ փոյթս է... մարդս միշտ երջանիկ է երբ պարկեշտ է...—ըսաւ Գլէօր-տը-Մարի խորին հառաչ մը հանելով:

— Ո՛հ... ինչ խելք...— գոչեց Շուրինէօր քահ քահ խնամալով— եւ ինչո՞ւ համար Լորոֆէր (rosière) չես, ըլլար շուտ մը՝ի պատիւ հօրդ և մորդ գոր չես Ճանչեր:

— Հայրս կամ մայրս անպիտան շունի մը պէս գլխս փողոցը նետեցին... ո՞ գիտէ, կարելի է ապրելու միջոց չունէին...— ըսաւ լա Կուալէօզ դառնապէս.— յանցանք չեմ գտներ անոնց, չեմ դանդատիր: Բայց իզմէ աւելի բաղդաւոր անձեր կը գտնուին:

— Քեզմէ՞, բայց ինչ կը պակսի քեզի: Աստղիին պէս փայլուն ես, հազիւ տասն վեց տարու ես. սոխակի պէս կ'երգես, կոյսի դէմք ունիս, անունդ Գլէօր-տը-Մարի է, և դեռ կը դանդատիս: Հապա ինչ պիտի ըսես երբոր ատներուդ տակ թոնիր մը, և գլխիդ վրայ կեղծամ մ'ունենաս, սա օկրուհիին պէս:

— Ո՛հ, երբէք այն տարիքը չպիտի ունենամ:

— Կարելի է արտօնագիր մը կ'ստանաս չպատանալու համար:

— Ո՛չ, ես անանկ հաստատուն կազմուածք չունիմ. արդէն գէշ հազով մը կը տառապիմ:

— Է՛հ, շատ չքաշես. գնա գերեզմանդ փորէ ու մէջը մտիր. խե՜ւ ես... ուրիշ խօսք չունիս:

— Միթէ այս տխուր գաղափարները ստէպ միտքդ կը պաշարե՞ն, Կուալէօզ— ըսաւ Ռոտոլֆ:

— Երբեմն... օրինակի համար, պարոն Ռոտոլֆ, դու կարելի է աւելի աղէկ հասկընաս ըսածս. առտու, երբ օկրուհիին տուած սուով՝ Վիէյլ-Տրաբրի փողոցին անկիւնը կերթամ քիչ մը կաթ դնելու, և կը տեսնեմ կաթնա-

վաճառ կինը որ իր փոքրիկ սայլակը հեծած էշին հետ կը վերադառնայ, ստէպ նախանձս կը շարժէ, ստուգիւ... և կըսեմ առանձին։ Նա գիւղը կը դառնայ՝ անուշ օդ ծծելու կերթայ, իր տունը, իր ընտանիքին մէջ... և ես միայնակ օկրուհիին հղիկը կ'ելնեմ, ուր մարդս կէս օրին անդամ լոյս չտեսներ։

— Շատ աղէկ, պարկեշտ եղիր, աղջիկս, այդ դիմակը հագիր... պարկեշտ եղիր— ըսաւ Շուրինէօր։

— Պարկեշտ. ա՜հ, Աստուած իմ, և որո՞ւ հետ կուզես որ պարկեշտ ըլլամ։ Հազած զգեստներս օկրուհիին են, իմ օթեկիս և կերակրիս համար պարտք ունիմ անոր... չեմ կարող ասկից հեռանալ... շատ հաւանական է որ զիս իրբև գող բռնել կտայ... ահա անոր գերին եմ... պէտք է որ պարտքս վճարեմ...։

Այս վերջին սոսկալի խօսքերն արտասանելով՝ թշուառ աղջիկը դող եկաւ և իր երկայն արտեւանունքին ծայրը արտասր մը թրթռաց։

— Ուրեմն տեղդ նստիր և ինքզինքդ գեղացուհիի մը հետ մի՛ բաղդատեր— ըսաւ Շուրինէօր։ — Միթէ յիմար ես, չե՞ս մտածեր որ մայրաքաղքիս մէջ կը փայլիս, մինչդեռ կաթնավաճառ կինը գիւղ կ'երթայ որ իր աղոց համար թան եփէ, իր կովերը կթէ, նաղաստակներուն համար խոտ փնտռէ և էրիկէն աղէկ ծեծ մ'ուտէ՝ երբ գինետունէն դառնայ։ Միթէ այս ալ փափաքելի կեանք մ'է։

Լա Կուալէօզ չպատասխանեց, իր ակնարկը անթարթ էր, սիրտը ճնշուած. դէմքին վրայ յետին տրտմութիւն մը կը սիրէր...։

Ռոտոլֆ մեծ հետաքրքրութեամբ մոտ դրաւ այս պատմութեան, զոր խեղճ աղջիկը ահռելի միամտութեամբ պատմեց։ Թշուառ, անօգնական և տգէտ մնալով՝ ողորմելի աղջիկը 'ի կորուստ մատնուեր էր, և Բարիզի անհունութեան մէջ միայնակ... միս միայնակ տառնուվեց տարեկան ընկեր մոլորեր էր։

Ռոտոլֆ ակամայ սկսաւ մտածել պաշտելի զաւկի մը, զոր կորուսեր էր... փոքրիկ աղջկի մը՝ որ վեց տարեկան մնացեր էր... և թէ որ ապրեր Փլէօր-տը-Մարիին պէս տասներ էր... և թէ որ ապրեր Փլէօր-տը-Մարիին պէս տասնը վեց ու՞կէս տարու պիտի ըլլար...։ Այս յիշատակը ա՛ւելի ևս կաւելցնէր իր հոգն այս տարաբաղդ արարածին համար, որուն ցաւալի պատմութիւնը լսեր էր։

ԳԼՈՒԽ Դ.

ՇՈՒՐԻՆԷՕՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԸՆԹԵՐՑՈՂՆ անշուշտ կը յիշէ որ գինետունը նոր մտնող անձ մը ուշադրութեամբ կը դիտէր այն տեղի երկու դնորդները։

Ինչպէս ըսինք, այս երկու մարդէն մին՝ յունական գտակ մը դրեր միշտ իր ձախ ձեռքը կը պահէր և օկրուհիին հարցուցեր էր արտորնօք եթէ Մէդրը-տ'էքօլն ու Կրօ-Պուաթէօն դեռ եկած չեն։

Լա Կուալէօզ իր պատմութիւնը, որ անլսելի էր անոնց, շարունակելու առեն, այս երկու մարդիկ իրարու հետ ցած ձայնով խօսեր էին, դուռին կողմը անհանգստութեամբ նայելով։ Յունական գտակ կրողն իր ընկերին ըսաւ։

— Կրօ-Պուաթէօն դեռ չերևցաւ. և ոչ խակ Մէդրը-տ'էքօլը։

— Կարելի է որ Սքըլէդ անոր գլուխը կերաւ, որպէս զի կողոպուտն ամբողջ ինքն ուտէ։

— Ո՞ւր էր թէ այնպէս բան մ'ընէր, քանի որ աւարը մենք պատրաստեցինք և հարկ է որ անկից մաս մ'առնենք— յարեց միւսը։

Նորեկն՝ որ այս երկու մարդիկը կը դիտէր՝ շատ հեռու նստած ըլլալով՝ չէր կարող անոնց խօսքը լսել. քանի մ'անգամ խոյրիկին մէջ պահած թղթի կտոր մը ծածուկ մը քը-

նելէն եաւ՝ գոհ երևցաւ իր դիտողութիւններէն, սեղանէն ելաւ և օկրուհիին ըսաւ, որ տրապղին առջևը կը մրափէր, ոտներն թոնիրին, ու հասատ և սև շալը ծնկերուն վրայ դրած։

— Էյ Պօնիս խաթուն, ինձ նայէ, պահակէ մը պիտի դառնամ, աչքդ կուժիս և պնակիս վրայ դիր... ինչու որ անները գողեր պակաս չեն։

— Անհոգ եղիր, աղաս— ըսաւ Պօնիս խաթունը — թէ որ պնակդ, նոյնպէս կուժդ պարապ են, մէկը չդպիր անոնց։

Նորեկը օկրուհիին այս կատակին վրայ շատ մը խնտաց, և ապա ձգեց գնաց, թէև ոչ ոք պիտեց անոր երթալը։

Այս մարդը դուրս ելնելու միջոցին և դուռը գոցուելէն առաջ, Ռոտոլֆ փողոցին մէջ տեսաւ այն հսկայաձև ուսեադէմ ածխավաճառն՝ որուն վրայ արդէն խօսեցանք. ժամանակ ունեցաւ սրտնեղութեամբ շարժում մ'ընելով՝ յայտնել անոր որ իր հսկողութիւնը անպատեհ է, բայց ածխավաճառը Ռոտոլֆին դժգոհութիւնը չտեսնելու զարնելով՝ կապլիոնին սահմանէն չհեռացաւ։

Ցրտմութեան ամպ մ'երթալով կը պատէր լա Կուալէոզին դէմքը. կոնակը պատին տուեր, գլուխը կուրծքին վրայ ծռեր, իր մեծ կապոյտ աչուները չորս կողմը մաքենայապէս կը շրջէր թշուառ աղջիկը, և կարծես թէ սև սև խորհուրդներու մէջ կը ծփար։

Երկու երեք անգամ Ռոտոլֆին անքթիթ ակնարկին հանդիպելով՝ աչքը մէկդի դարձուցեր և չէր կրցեր մեկնել այս անծանօթ մարդուն իր վրայ ըրած զարմանալի ներգործութիւնը։ Անոր ներկայութենէ նեղութիւն և ցաւ կզդար և կը զղջար իր թշուառ կենաց պատմութիւնը անկեղծօրէն անոր առջևը պարզելուն։

Իսկ ընդ հակառակն Շուրինէօր շատ զուարթ էր. ինք, մինակը բոլոր «բլբէնը կլլեր՝ գինին և օղին բերնին դրոնները բացեր էին և Ռոտոլֆին առատաշնորհ ընթացքը տես-

նելով՝ իր վարպետը, ինչպէս որ կրսէր, գտնելուն ալ չէ՞ ամչնար. նա մանաւանդ անոր մարմնական ուժին առաւելութիւնը ճանչնալով՝ իր պարտութեան յիշատակը մոռցեր և տեսակ մը հիացում, երկիւղ և յարգանք անոր յաջորդեր էր։

Այս անոխակալ ոգին, և վայրենական հպարտութիւնը, որով կը շփանար թէ բնաւ գողութիւն ըրած չէ, կը ցուցընէին որ գէթ Շուրինէօր բոլորովին քարսիրտ մարդ մը չէ։

Ռոտոլֆ իր սրամտութեամբը Շուրինէօրին այս բնաւորութիւնն ըմբռներ էր, և անհամբեր կ'սպասէր լսելու անոր պատմութիւնը։

— Հուտ ըրէ նայինք...— ըսաւ անոր— ականջնիս բացեր ենք։

Շուրինէօր բաժակը պարպեց և այսպէս սկսաւ։

— Դու, խեղճ լա Կուալէոզ, գէթ լա Շուէդ մ'ունէիր որ քեզ պատսպարեց, թէև կայծակի գայ. դու խշի մը գըտեր էիր՝ մինչև որ իբր դատարկաշրջիկ բանտարկուեցար... իսկ ես, չեմ յիշեր բնաւ որ անկողին ըսուած բանին մէջ պառկած ըլլամ, մինչև տասնինը տարիքը մտնելս... և այս գեղեցիկ տարիքիս մէջ զինուոր գրուեցայ։

— Ուրեմն բանակը ծառայեցիր, Շուրինէօր— ըսաւ Ռոտոլֆ։

— Երեք տարի. բայց ատոր կարգը պիտի գայ հիմա։ Լուվրի քարերը, Քլիշիի հնոցներն և Մոնրուժի քարահանները, ահա ասոնք եղան իմ երիտասարդութեանս պանդոկները։ Կը տեսնէք որ թէ Բարիզ և թէ գիւղը բնակարան ունէի, մինակ բնակարան։

— Բայց ի՞նչ գործ կընէիր։

— Իրաւ որ կըսեմ, վարպետս... ամպոտ յիշատակ մ'ունիմ թէ դատարկապորտ կը շրջէի քրջավաճառի մը (chiffonier) հետ՝ որ իր ճանկովը անդադար զիս կը հարուածէր։ Եւ ասի ստոյգ է, որովհետև քանի ուրիշ կոպիտ ունեցող այս

ահեսակ Կուպիտոններու հանդիպիմ՝ զանոնք խզելը կ'զայ, նոր ապացոյց մը որ իմ տղայութեանս ատեն զիս անխնայ ծեծեր էին։ Իմ առաջին արհեստս եղաւ Մօնֆրքօնի սպանդագործներուն օգնել ձիերը մորթելու...։ Այն ատեն տաս կամ տասներկու տարեկան էի։ Երբ այս խեղճ ու զառամած կենդանիները մորթելու սկսայ՝ դեղութիւն մը կ'զգայի. ամսէ մը վարժեցայ, մանաւանդ, արհեստս ալ սիրեցի։ Իմ բանուկ ու սրած դանակներուս պէս ոչ ոք ունէր.. քանի զործածէի սիրտս կը բացուէր, և ապա... անասունները մորթելէն ետև՝ հիւանդութենէ մեռած ձիի մը կտորն առջևս կը նետէին, ինչու որ ողջ ողջ մորթուած ձիերը Լքօլ-սը-Մէտսին թաղին խոհարարներուն կը ծախէին, որոնք զընորդներուն Ճաշակին համեմատ՝ իբր կովի, ոչխարի, որթի կամ երէի միս կը քշէին...։ Ա՛հ, այս մեկդի մնայ, երբ ձիու մսի պատառս ձեռք ձգէի, աշխարհ կը մոռնայի։ Խ. կոյն, ինչպէս զայլն իր որջը. ես ալ հնոյս կը քաշուէի, և հոն, կիրեփներուն հրամանով՝ միս ածխով կասկարայի վրայ կ'եփէի։ Իսկ երբ կիրեփները չէին աշխատեր, Ռոմենվիլ կերթայի փայտ ժողվելու, կայծքարս կը զարնէի և սպանդարանին պատին մէկ անկիւնը խորոված կընէի։ Կը հատամ, այս կերպով... միս հում և արիւնոտ կը մնար, թէև այս աղէկութիւնը կար որ զոնէ միշտ մի և նոյն բանը չէի ուտեր։

— Անուանդ ինչ էր այն ատեն, — ըսաւ Ռոտոլֆ։

— Վշի զոյն մազեր ունէի, աչքերս միշտ արիւնով լի էր և այս պատճառաւ, զիս Ալպինոս կը կոչէին։ Ալպինոսները մարդու տեսակ ճերմակ նապաստակներ են և կարմիր աչքեր ունին— յարեց ծանր կերպով Շուրինէօր, իբր մարմնաղընական ակնարկութիւն մ'ընելով։

— Հապա քու ծնողքդ, ընտանիքդ։

— Իմ ծնողքս, էհ, լա Կուալէօզին ծնողքին պէս միևնոյն թիւ տունը կը բնակին.., բնիկ երկիրս կուզես. դիմացդ ելած որ և է փողոցին մէկ խորշը, աջ կամ ձախ դին,

զեռակին վերի կամ վարի կողմը, ուր որ կուզես։

— Անշուշտ հայրդ ու մայրդ անիծեցիր որ քեզ այսպէս երեսի վրայ ձգեցին։

— Գէթք չունիմ... հոգս ալ չէ... Ճշմարիտը զեղեցիկ խաղ մը խաղացին զիս աշխարհ բերելով... չէի պատեր թէ որ զոնէ ընէին ինչ որ Աստուած պէտք էր ընել մուրացկաններուն համար, այսինքն, ցրտէ, անօթութենէ և ծարաւէ մեղ աղատ պահէին, այս ալ շատ դիւրին էր իրեն համար, և զողութիւն ընել չսիրող մուրացկաններ աւելի հանգիստ կըլլային։

— Ուրեմն, Շուրինէօր, անօթի ծարաւ մնայիր, այլ զողութիւն չըրիր։

— Չէ, չըրի, թէև, հատա, թշուառութեան մէջ թաղուեր էի. ատեն եղեր է որ երկու օր ծոմ պահեր եմ... և... ուրիշ մը իմ տեղս... կարճ կապեմ, զողութիւն չըրի։

— Բանտէն վախնալուդ՝ անշուշտ։

— Ո՛հ, կատակ կընես— ըսաւ Շուրինէօր ուսերը բարձրացնելով և քահ քահ խնդալով — կարելի բան է հայ չը զողնալ հայ ոստիկանէ վախով... պարկեշտ էի և անօթի կը մեռնէի, եթէ զող ըլլայի, բանտին մէջ զիս կը կերակրէին... և շատ աղէկ ալ կը կերակրէին... բայց չէ, զող ըլլալ չուզեցի... ինչու որ... վերջապէս բնութենէս դուրս էր զողութիւնը, ինչ ընեմ...։

Այս պատասխանը՝ որ ինքնին շատ զեղեցիկ էր, և որուն իմաստը նոյն իսկ Շուրինէօր կարող չէր ըմբռնել, չափազանց զարմացուց Ռոտոլֆը։

Զկայ նա որ անհնարին զրկանաց մէջ պարկեշտ մնայող աղքատը կրկնապատիկ յարգելի է, ըստ որում յանցանքի պատիժը իրեն համար ապրուստի միջոց մը կրնար ըլլալ։

Ռոտոլֆ ձեռքն երկնցուց քաղաքակրթութեան այս ողորմելի վայրենիին, որ թշուառութենէ բոլորովին չէր ապականեր։

Շուրինէօր զարմանօք և զրեթէ յարգանօք դիտեց իր կոչնատէրը. այն ինչ անոր ձեռքը բռնեց, քանզի կ'զգար որ իր և անոր մէջ վիհ մը կար։

— Քա՛ջ է— ըսաւ անոր Ռոտոլֆ — դու, սրտի և պատուի տէր մարդ մ'ես...։

— Սիրտ... պատիւ... ե՞ս ունիմ... էհ, դու ալ քըթէ՞ս կը բռնես— պատասխանեց նա հիանալով։

— Զքաւորութիւն և անօթութիւն կրել քան զողնալ... սիրտ ու պատիւ ունենալ է, ըսաւ ծանրութեամբ Ռոտոլֆ։

— Հիմա ոտքս ջուրը հասաւ...— վրայ բերաւ Շուրինէօր մտածելով— ըսածդ շատ հաւանական է...։

— Եւ ինչո՞ւ կը զարմանաս...։

— Եւ որչա՜փ... ասանկ բաներ բնաւ լսած չունէի, քանի որ միշտ քոսոտ շունի պէս կը վարուին մարդիկ հետս..։ Բայց իրաւ որ զարմանք է, ըսածդ մտքէս չելներ... սիրտ... պատիւ...— կրկնեց Շուրինէօր խոհուն դէմքով մը։

— Լա՜ւ ուրեմն... ինչ ունիս։

— Իրաւ որ չդիտեմ— յարեց Շուրինէօր այլայլութեամբ — բայց այդ բառերը, կը նայիս... զիս կը յուզեն... և աւելի կը զգուեն, քան Սքըլէդէն ու Մէդրը-ա'էքօլէն ուժով ես խօսքը... երբէք այդպիսի բան մը զգացած չունէի...։ Այս իրաւ է որ, սոյն խօսքերն... և մեր կռուին մէջ վերջին կռուփներդ... որ այնչափ ուժգին էին... թէև ընթրիքս ալ կը վճարես... և անանկ բաներ կըսես...։ Վերջապէս հերիք է— զոչեց նա յանկարծակի, և այնպէս որ կարծես թէ չէր կրնար իր միտքը բացատրելու, — այս իրաւ է որ մինչև յետին շունչը Շուրինէօր սրտով մարմնով քեզի կապուած պիտի մնայ։

Ռոտոլֆ իր այլայլութիւնը ծածկելու համար, պաղ կերպով մը շարունակեց։

— Միթէ երկմտն ատեն սպանդաղործի օդնական եղար։

— Կը հարցնի՞ս...։ Առաջ սիրաս չէր դիմանար այն

խեղճ դրաստները մորթելու, որ ինձի կիր մը տալու ան՝դամ կարող չէին, բայց երբոր տարիքս տասնվեց եղաւ և ձայնս հաստցաւ, ինձի համար կիրք մը, պէտք մը, կատղութիւն մը... դարձաւ մորթելը։ Հայ ու ջուր կը մոռնայի... և մինակ մորթելու կը մտածէի...։ Տեսնել պէտք էր զիս իմ գոբֆլօ մէջ. բայց 'ի հին տարատէ մը՝ բոլորովին մերկ էի։ Երբոր իմ մեծ սրած դանակս ձեռքս առնելով՝ չորս կողմս մինչև տասնհինգ քսան ձի ետևէ ետև կեցած կը տեսնէի՝ որ կարդաւ դանակէս պիտի անցնէին, ո՜հ, անիծեց արմատ, երբոր մորթելու կ'սկսէի, չդիտեմ... բայց անշուշտ սատանան փորս կը մտնէր, ականջներս կը վիժային, արիւն, արիւն կը տեսնէի, և կը մորթէի... և կը մորթէի... կը մորթէի մինչև որ դանակս ձեռքէս կ'իյնար։ Նզովեց արմատ, ինչ զուարճութիւն էր այն։ Միլիոնի տէր ըլլայի դարձեալ այս արհեստս ուրիշի հետ չէի փոխեր։

— Կ'երևի թէ մորթելու սովորութիւնն անկից մնացեր է քեզի— ըսաւ Ռոտոլֆ։

— Կարելի է, բայց երբ տասնվեց տարիս առի, սպանելու կատղութիւնս այնչափ զօրացաւ, որ եթէ մի անդամ մորթելու սկսէի, խենդ կը դառնայի և զործս կ'աւրէի..։ Հա՛, աչ ու ահեակ հարուածներ տալով՝ դրաստներուն մորթերը կը պատառէի, ինչու որ կատղութենէս աչքերս կը սևնար և բան մը չէի տեսներ։ Ի վերջէ, սպանդարանէն դուրս վռնտեցին զիս։ Մսագործներու մեծ տեղ փնտռեցի, այս արհեստը շատ սիրելուս, բայց ինչ կըսես, այս պարոններն ալ ծանրէն քաշեցին և զիս արհամարհեցին, ինչպէս կոշկակարները կ'արհամարեն կարուակները։ Այն ատեն հայս ուրիշ տեղ դտնելու ելայ.. և շուտով ալ չգտայ. ուստի շատ անդամ ծոմ պահեցի։ Վերջապէս Մօնրուժի քարահատներուն մէջ մտայ, բայց երկու տարիէն մաշեցայ, տեսնելով որ սկիւրի պէս կ'աշխատիմ որ անիւներով քար քաշեմ մինակ քսան սու օրողէք առնելու համար։ Մեծ և ուժով

էի, զօրաց դունդ մը մտայ։ Անունս, տարիքս և թղթերս հարցուցին։ Անո՞ւնս, Ալֆոնս է, ըսի, տարիքս, մօրուքս նայեցէք, թղթե՛ր, տհաւասիկ քարտեզ վարպետիս վկայագիրը։ Ցեսան որ աղէկ հեծելազօր մը կրնամ ըլլալ և զիս գրեցին։

— Քանի որ այդ դժը, քաջութիւնն և մոթելու ախանունիս, եթէ այն ատեն պատերազմ բացուիր, թերևս հարիւրապետ մ'ըլլայիր։

— Նղովեց արմատ, դեռ կը կասկածիս. անպղծայիներ կամ բրուսիացիներ մարթելն աւելի մեծ պարծանք է քանտուտակներ...։ Բայց դու սա իմ բաղդս նայէ, որ պատերազմ չկար, այլ մինակ կրթութիւն կար...։ Դիցուք թէ սան մը (apprenti) փորձ մ'ընէ իր վարպետին դլխին քանի մը հատ իջեցնելու. ասոր ո՞վ ինչ կրսէ, եթէ տկար է, ծեծն ինքը կուտէ. եթէ զօրեղ, ինքը կտայ. վերջը դոնէն դուրս կը հանեն, երբեմն ալ բանտը կը դնեն և ամէն բան կը լմննայ։ Սակայն զինուորական կարգին մէջ բոլորովին տարբեր է։ Օր մը յիսնապետս զիս կը հրմշակէ որ շուտ մ'ըսածն ընեմ. իրաւունք ունէր. ինչու որ եան կը մնայի, ես ալ կը բարկանամ և կից մը կտամ. ան կը հրէ զիս, ես ալ զինքը կը հրեմ, օդիքս կը բռնէ, կոուփ մը կ'արձակեմ։ Իսկոյն վրաս կ'իյնան. կատղութիւնս կը բռնէ, արիւնս գըլխիս կը դարնէ, ամէն բան կարմիր կը տեսնեմ... դանակս ձեռքս էր, խոհարարի պաշտօն ունէի, և ալ մտածէ... կսկսիմ մարթել... մարթել... ինչպէս ատեն մը սպանդարանը... յիսնապետս «պէերը» կը դնէ, երկու զինուոր կը վիրաւորեմ... անհնարին ջարդ մը... տասնմէկ դանակի հարուած կ'իջեցնեմ երեք հոգիի... հա՛, տասնմէկ... չորս կողմս արիւն... արիւն կը վազէր... ինքզինքս սպանդարանը կը կարծէի... արիւնլուայ էի...։

Զարաղործը տխուր ու դաժան դէմքով մը՝ դլուխը վար ծռեց և լուռ կեցաւ։

— Ի՞նչ կը մտածես, Շուրինէօր— ըսաւ Ռօտոլֆ, հետաքրքրութեամբ անոր երեսը նայելով։

— Ո՛չ ինչ... պատասխանեց նա շտապաւ, վերջը շարունակեց խօսքը՝ իր վայրենական անհոգութեամբը։

— Վերջապէս զիս կը կապեն, կը դատեն և անդին զրկելու կը պատրաստուին։

— Ուրեմն ինչպէս պրծար։

— Գլուխս «ուխս վրայ ճաց, մինակ տասն հինդ տարի ընթացի։ Մոռցայ ըսելու որ երկու զինուոր, որ Մարնի գետին մէջ խղդուելու վրայ էին, ջրէն ոստացի, մինչև Մրլին կը դտնուէր մեր գունդը։ Ուրիշ անդամ մ'ալ... հիմա պիտի խնտաս և ըսես թէ կրակի ու ջրի երկակենցաղ մ'եմ, (amphibie) մարդերու և կիներու աղատարար մ'եմ, ուրիշ անդամ մը մեր պահնորդ վաշտը Ռուան քաղաքը դտնուելով՝ որուն բոլոր անակները փայտէ են, թաղէ մը կրակ կը փրթի, և ամէն բան վառիկի պէս (allumette) բռնկելու կսկսի. հրդեհը մարելու դացող դնդէն էի, կրակին տեղը որ կը հասնինք, կը պոռան ինձի որ պատաւ կնկան մը սենեակը տաքնալուն չկրնար վար իջնել. խսկոյն կը վազեմ, նղովեց արմատ, իրօք շատ տաք էր... և կը յիշէի իմ Եբրանելի հին հնոցներս։ Կարճ կապեմ, պատաւը կ'ազատեմ, թէև ներբաններս խորովեր էին։ Վերջապէս այս դործերս մէջ բերելով՝ շաշկրտոս (փաստաբանս) իր չորս թաթերն ու լեզուն այնքան գալարեց որ պատիժս փոխել տուաւ, կառափնարան երթալու տեղ՝ տասնհինդ տարի թի մնացի...։ Երբ տեսայ որ թիարան պիտի զրկեն զիս և չպիտի սպաննեն, շաշկրտոս կոկորդը բռնելով՝ զանի խղդել ուզեցի... այն միջոցին որ ուրախ զուարթ իմ կեանքս աղատելուն լուրը պիտի աւետէր ինձի... նղովեց արմատ... թէ որ ձեռքս չբռնէին...։

— Ուրեմն, չէիր ուզեր որ պատիժդ թեթևնայ։

— Անշուշտ... դանակով խաղացողը... արդար է որ դահճին

դանակով մեռնի, զողը շղթայակապ բանտարկուի, ամէն մէկը պէտք է որ իր բաժինը առնու... բայց երբոր իրաւունք է որ մարդ սատակի, նախատինք մ'է անոր թիապարտներու հետ ապրիլը, թող թէ՝ թիարանին մէջ վարած կեանքս առաջնեռը շատ զարմանալի էր... գիտե՞ս... որ մարդ սպաննելէն ետև՝ անոր յիշատակը գիւրաւ մտքէ չելներ...:

— Ուրեմն խիղճդ կը տանջէր քեզ... Շուրինէօր:

— Խիղճս. էհ, ո՛չ, որովհետև ժամանակ անցաւ— պատասխանեց վայրենին. — բայց առջի օրերը գիշեր չէր անցներ որ սպաննած յիսնապետս և զինուորներս երազս չգային... և մինակ ալ չէին— յարեց չարագործը սոսկումով մը.— կարծես թէ հարիւրաւոր, հազարաւոր, բիւրաւոր մարդիկ սեսակ մը սպանդարանի մէջ իրենց կարգը կ'սպասէին... ինչպէս որ Մօնրուժ մորթած ձիերս ալ իրենց կարգը կ'ըսպասէին...: Այն ատեն ամէն բան կարմիր կ'երևէր աչքիս և կ'սկսէի մորթել... մորթել այն մարդիկը, ինչպէս երբեմն այն կենդանիները... բայց քանի մորթէի, այնքան կ'աւելնային... և մեռնելու ատեն անանկ անուշ... անանկ անուշ կը նայէին ինձի... որ սպանդս կ'անիծէի... թէև չէի կարող դադրիլ...: Այս բաւական չէր... բնաւ եղբայր ունեցած չեմ... սակայն անանկ կը թուէր որ բոլոր սպաննած մարդիկս եղբայրներս էին... և զանոնք կը սիրէի...: Ի վերջէ, սաստիկ յոգնած կ'արթննայի և բոլոր մարմինս հալած ձիւնի պէս պաղ քրտինքի մէջ կը զտնէի...:

— Այդ ի՞նչ ահռելի երազ է, Շուրինէօր:

— Ո՛հ, ստոյգ է, այս երազը... հաւատա՛... խենդենալ կամ կատղիլը բան մ'ըսել չէր...: Անոր համար երկու անգամ՝ ինքզինքս սպաննելու փորձ ըրի, հեղ մը՝ ժանդ կըլլելով՝ հեղ մ'ալ՝ վզէս շղթայ մ'անցնելով, բայց նղովեց արմա՛ս, ցլի պէս ուժեղ եմ: Ժանդը ծարաւս զրդռեց միայն, շղթան բնական կապուտ վզնոց մը դրոշմեց: Քիչ քիչ կեանքը սովորութիւն մը դարձաւ, երազներս սակայն չէին

պաշարեր միտքս և ես ալ ուրիշներուն պէս ամէն բան մոռցայ:

— Բայց թիարանը զողութեան դպրոց մ'էիր:

— Ճիշտ է, մինակ այդ բանին ճաշակը չունէի...: Միւս «ոճրագործները» հետս կ'խնային, բայց ես շղթայովս անոնց բերնին չափը կտայի: Ահա այս առթիւ Մէդր տ'էքօլը ճանչցայ....: Բայց ուրիշ մարդ է այն... անոր կռուփներուն գլուխ կը ծռեմ, ինչպէս դու քիչ մ'առաջ՝ այն ալ գիս աղէկ մը լուայ:

— Ուրեմն ազատագիր ոճրագործ մ'է:

— Այսինքն հո՞ւրֆ յո՞ֆրենից բանտի դատապարտուած էր, բայց ինք զինքին ազատութիւն տուաւ:

— Հասկըցայ, փախած է: Եւ ի՞նչպէս զանի ձեռք չենտար:

— Իմ մասիս, այդպիսի բան մը չեմ ըներ. պիտի կարծուի թէ կը վախնամ իրմէ:

— Ինչպէ՞ս ոստիկանութիւնը չգտներ զանի. արդեօք անոր արտաքին նկարագիրը չունի՞:

— Իր նկարագի՞րը... դուն ալ բան գործ չունի՞ս: Արդէն շատ ատենէ 'ի վեր երկնաւոր ֆոֆոորին տուած դէմքն աւրած է: Հիմայ մինակ կրողը կրնայ ճանչել Մէդր տ'էքօլը:

— Իր կերպարանքն ինչպէ՞ս փոխեց:

— Առաջ իր քիթը, որ կանգուն մ'երկայն էր, քերթեց, ապա արջասպով երեսը լուայ:

— Կատա՞ղ կընես:

— Եթէ այս իրկուն դայ, պիտի տեսնես. թուխակի քիթ մ'ունէր երկար, հիմա հափշկի քթին պէս տափակ է... թող թէ բուռիս պէս հաստ շրթեր ունի, և քրջահաւաքի մը բաճկոնին պէս կարկտած երես մը:

— Միթէ այդ ստիճան անճանաչելի՞ է:

— Վեց ամիս կայ որ Ռոշֆորէն փախած է, և լրտեսնե-

ը հաղար անդամ անոր հանդիպեցան առանց ճանչելու։

— Ինչո՞ւ համար թիարանն էր։

— Որովհետև դրամանենդ, գող և մարդասպան էր։ Անունն ալ Մէդը տ'էքօլ է (վարժպետ), վասն զի ընտիր գիրուն է և շատ գիտուն է։

— Եւ կըսես թէ ամենուն սարսափ կ'ազդէ։

— Ա՛լ չպիտի ազդէ, եթէ զինքը աղէկ մը կոփես, ինչպէս որ զիս կոփեցիր...։ Է՛հ, նզովից արմատ, որչափ հետաքրքիր եմ այս կոփոցը տեսնելու։

— Եւ ինչպէս կ'ապրի այդ մարդը։

— Իրեն պէս չար, սաթի պէս բարակ պառաւի մ'ընկերացաւ, որ անտեսանելի է. թէև օկրուհիին ըսեր է որ օրին մէկը իր կին արմաղը հոս պիտի բերէ։

— Միթէ այս կինն ալ անոր գողութիւններուն գործակից է։

— Նոյն իսկ սպաննութիւններուն։ Կըսեն թէ կը պարծի որ իր կնկան հետ արդէն երկու երեք հոգի անգին ղրկեր է, և դեռ երեք շաբաթ չկայ՝ կովի վաճառական մը՝ Բուասիի ճամբուն վրայ կողոպտեր և մեռուցեր են։

— Անշուշտ այսօր վաղը կը բռնեն զանի։

— Բաւական խելք և սիրտ պէտք է այդ բանին համար. վասն զի միշտ իր բաղէնին տակն երկու հատ լեցուն հրացան և դաշոյն մը կը կրէ. անդադար կըսէ թէ՝ գլուխ տ'ուանի պիտի տայ այսօր վաղը, և այս պատճառաւ իր առջևն ելնողը սպաննելու պատրաստ է պրծելու համար։ Ո՛հ, արձակ համարձակ կը գործէ, և որովհետև քեզնէ և ինէ կրկնապատիկ ոյժ ունի, զանի ձեռք ձգելու համար բաւական դժուարութիւն պիտի կրեն։

— Իսկ դու Շուրինէօր, երբ թիարանէն ելար, ինչ ըրիր։

— Շատ մը դացի Սէն–Բօլի քարափը գտնուող փայտահանին քովը մտայ և այժմ իմ պարէնս կը ճարեմ։

— Բայց քանի որ գող չես, ինչո՞ւ համար Միջնաքաղքին մէջ կը բնակիս։

— Եւ ո՞ւր կուզես որ բնակիմ. ո՞վ կը տեսնուի հին դատապարտեալի մը հետ։ Միս մինակ ալ կը ճանճրանամ, ես ընկերութիւնը կը սիրեմ և ահա այս տեղ իմ նմաններուս հետ կ'ապրիմ։ Երբեմն կը ծեծկուիմ... Միջնաքաղքիս մէջ կրողին չափ ինէ կը վախնան, ոստիկանները գործիս չեն խառնուիր, մինակ երբոր ծեծը տաքնայ քսան չորս ժամի չափ բանտ կը մնամ։

— Հապա օրողէբդ ինչ է։

— Երսուն հինգ սու. և ասոր համար օրը տասներկու կամ տասնհինգ ժամ, թէ ամառ և թէ ձմեռ, գետին մէջ կը մնամ, ոտքէս մինչև փորս...։ Բայց կը խոստովանիմ որ եթէ թաթերս ջրին մէջ մնալէն մորթի հիւանդութիւն առնեմ, այն ատեն միայն հրաման կտան ինձ բաղուկներս շարժելու, որպէս զի հին նաւակներ խորտակեմ և ահագին բեռներ շալկեմ տանիմ...։ Հիմա աւանակի պէս կ'աշխատիմ, վերջը ձկի պէս պիտի լողամ... երբ այժմ կտրի, ճանկ մը պիտի առնեմ և փայտէ կապիճ մը, այն քրջահաւաքին պէս զոր տղայութեանս մշուշին մէջ կը տեսնեմ։

— Բայց ի՞նչ և է, թշուառ չես։

— Հարկաւ ինէ աւելի թշուառներ կան. գոնէ իմ մորթած յիսնապետիս և զինուորներուս երաղը, երաղ մ'որ ատեն ատեն կը տեսնեմ, միտքս չպաշարեր. հանդարտ պիտի սպասեմ որ մեռնիմ փողոցի մ'անկիւնը, ինչպէս որ ծնայ, բայց այն երաղը... կը հատամ... նզովից արմատ... այս բանիս վրայ մտածել չեմ ախորժիր— ըսաւ Շուրինէօր։

Եւ սեղանին մէկ անկիւնը թոթուեց ծխափայտին վառարանը։

Լա Կուալէօզ Շուրինէօրին պատմածը ուշադրութեամբ մը տիկ չէր ըրած և կարծես թէ տրտմալի մտմտուքի մը մէջ ընկեր էր։

Նոյն իսկ Ռոտոլֆ կը մտածէր։

Ողբալի դէպք մը պատահելով այս երեք անձերը սթափեցան և իրենց ուր տեղ գտնուիլն իմացան։

ԳԼՈՒԽ Ե.

ՉԵՌԻԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Այն մարդն որ պահ մը դուրս ելեր և օկրուհիին ապսպրեր էր որ իր կուժն ու պնակը պահպանէ, նորէն դարձաւ լայնուս և հիւգէմ անձի մը հետ և անոր ըսաւ. — բարեբաղդ եմ այսպէս քեզի հանդիպելուս, իմ քաջս. ներս մտիր, բաժակ մը գինի առ։

Շուրինէօր ցած ձայնով մը Ռոտոլֆին ու լա Կուալէոզին ըսաւ, նորեկ մարդը ցոյց տալով։

— Եկողն ոստիկանութեան գործակալ մ'է... կարծեմ փոթորիկ մը պիտի փրթի, զգուշութիւն։

Երկու աւազակներն, որոյմէ մին մինչև յօնքն իջած յունական գտակ մը հագեր՝ և ստէպ Մէդրատ'էքօլն ու Կրոպուաթէօն հարցուցեր էր, շուտ մ'իրարու աչք ըրին, միասին սեղանէն ելան և դէպ 'ի դուռը գացին. բայց երկու գործակալներն անոնց վրայ ընկան մասնաւոր աղաղակ մը հանելով։ Նոյն միջոցին սոսկալի կռիւ մը սկսաւ։ Կապլիոնին դուռը բացուեցաւ, սրահին մէջ ուրիշ գործակալներ թափեցան և դուրսը շատ մը հրազէններ սկսան շողալ։

Այս խառնակութեան մէջ ածխավաճառը, որուն վրայ խօսեցանք, ատեն գտաւ գինետունին սեմը գալ և դիպուածով Ռոտոլֆին ակնարկին հանդիպելով՝ աջ ձեռքին ցցամատը շրթերուն վրայ դրաւ։

Ռոտոլֆ շուտ ու վէս շարժումով մ'անոր հրամայեց որ հեռանայ, և ապա սկսաւ դիտել կապլիոնին մէջ անցած դարձածը։

Յունական գտակով մարդը կատաղօրէն կ'ոռնար և կէս մը սեղանին վրայ պառկած՝ այնպէս յուսահատութեամբ կը պոռկտար որ հազիւ թէ երեք հոգի կարող էին զանի գսպել։

Իսկ իր ընկերն՝ որ ահաբեկ, տխուր, մահաղէմ էր, շրթերը ճերմակ, ստորին ծնօտը կախ և ջղաձիգ շարժուն, բնաւ դէմ չկեցաւ և ինքն իրմէ իր ձեռներն երկնցուց շըրուշակին (menottes)։

Օկրուհին՝ որ տրապղին առջև նստած՝ վարժ էր ասանկ տեսարաններու՝ ձեռները գենջակին գրպաններուն մէջ՝ լուռ ու մունջ կը նայէր։

— Այս երկու մարդերու յանցանքն ինչ է, բարեսիրտ պարոն Նարսիս Պօրէլ— հարցուց նա իրեն ծանօթ գործակալին։

— Երէկ Սէն-Քրիստոֆ փողոցը պառաւ կին մը սպաննելով՝ անոր սենեակը մտեր թալէր են։ Ողորմելի կինը մոնելէն առաջ՝ ըսեր է թէ մարդասպանին մէկուն ձեռքը խածեր է։ Մեր աչքն այս երկու ելուզակներուն վրայ էր. պահ մ'առաջ իմ ընկերս ստուգեց ասոնց ոտքը ըլլալը և ահա մեր ճանկին տակն ընկան։

— Աղէկն այն է որ իրենց կերուխումն առաջուց վճարեցին— ըսաւ օկրուհին։

— Պարոն Նարսիս բան մը չէք առներ. խնդրեմ քօլօնել մրգոզի մը հրամցէք։

— Շնորհակալ եմ, Պօնիս խաթուն, երթամ սա աւազակները ծակը խոթեմ։ Կը նայիս, դեռ մէկը կից կարձակէ...։

— Եւ իրօք, յունական գտակով մարդասպանը կատղութեամբ կը տատանէր։ Իսկ երբոր ելան որ դուրսը սպասող կառքին մէջ դնեն՝ բոլոր ուժովը գիմացաւ և 'ի վերջէ հարկ եղաւ զանի վերցնելով տանիլ։

Իր դաւակիցը, ջղային դողով մը բռնուած՝ հազիւ կարող էր ոտքի վրայ կենալ. իր մանիշակի շրթերը կը թնտային այնպէս որ կարծես թէ բան մը պիտի ըսէ....։ Այս կոշտ

ու անկենդան կոյտը կառքին մէջ տարին նետեցին։

Կապլիոնէն դուրս ելնելէն առաջ՝ գործակալը միւս գինարբուներն աչքէ անցուց և գրեթէ սիրալիր ձայնով մը Շուրինէօրին ըսաւ։

— Դո՞ւ ալ հոս ես ստահակ. բաւական ատեն է որ ձայնդ ձունդ չկայ, կաղ ու կռիւ ըրած չունիս, կ'երևի թէ խելքդ գլուխդ եկեր է։

— Հա՛, հրեշտակի պէս խելօք եմ. գիտես որ մինակ զիս գրգռողներուն գլուխը կը պատռեմ։

—Ի՞նչ աղէտոր պատրուակ, ուժեղ ես, դու ուրիշը կը գրգռես։

— Բայց հիմա այս է իմ վարպետս— ըսաւ Շուրինէօր ձեռքը Ռոտոլֆին ուսին վրայ դնելով։

— Ո՞վ է այն. այս նոր գէմքը չեմ ճանչեր— ըսաւ գործակալը Ռոտոլֆին նայելով։

— Ես ալ չեմ կարծեր որ իրարու հետ ծանօթանալու պէտք ունենանք, ըսաւ նա։

— Քու օգտիդ համար կը սեմ, տղաս— պատասխանեց գործակալը։ Ապա օկրուհիին դառնալով։

— Գիշեր բարի, Պօնիս խաթուն, ստուգիւ քու կապլիոնդ ականատ մ'է, այս երրորդ մարդասպանն է որ ասկից կը բռնեմ։

— Եւ յուսամ որ այս վերջինը չըլլար, պարոն Նարսիս, կապլիոնս քուկդ է... ըսաւ օկրուհին շնորհալի և յարգանք ծռելով։

Երբ ոստիկանութեան գործակալը գնաց՝ կապարի գոյն երիտասարդը, որ կը ծխէր օդի խմելով՝ ծխափայտը լեցուց և խեղդուկ ձայնով մը Շուրինէօրին ըսաւ։

— Միթէ յունական դտակը չճանչցար. Պուլոդ անուն մարդն է։ Երբ գործակալները ներս մտան, ըսի. — Անշուշտ բան մը կայ, և իրաւի կասկածելի էր միւսը՝ որ միշտ իր աջ ձեռքը սեղանին տակը կը պահէր։

— Մէդը տ'էքօլ ու Կրօ-Պուաթէօն բաղդաւոր են որ հոս չդտնուեցան— վրայ բերաւ օկրուհին— յունական դըտակն երկու անդամ անոնց վրայ լուր հարցուց մասնաւոր գործի համար... Բայց հոգս էր հատեր մատնելու եմ ծուխերս։ Թոզ բռնեն, ըսելիք մը չունիմ... ամէն մարդ իր արհեստը կը բանի... բայց ես զանոնք ձեռք չեմ տար...։ Զարմանք, գայլին վրայ խօսելու ատեն մարդ անոր պոչը կը տեսնէ— յարեց օկրուհին՝ այն միջոցին որ մարդու մը հետ կին մը գինետունը կը մտնէր. — ահա նոյն ինքն Մէդը տ'էքօլն ու իր սիրական կնիկը։ Ճշմարիտը... իրաւունք ունի եղեր պահելու... ինչ խոժոռ դէմք ունի... կ'երևի թէ սրառով սիրելուն առեր է։

Մէդը տ'էքօլին անունը լսուելուն՝ կապլիոնին հիւրերը դողալ եկան։

Նոյն ինքն Ռոտոլֆ, թէև 'ի բնէ անվեհեր, այս ահարկու աւազակը տեսնելով՝ թեթև այլայլութիւն մը ակամայ զգաց և ահարեկ հետաքրքրութեամբ անոր երեսը նայեցաւ։

Շուրինէօր ճիշտ նկարագրեր էր. Մէդը տ'էքօլ իր ամէն կողմերը սոսկալի կերպով կիսկոտուր ըրեր էր։

Զտեսնուած բան էր այս մարդուն դէմքին պէս ահաւոր դէմք մը։ Խոր ու կապուտ սպիներ երեսին վրայ ակոսներ բացեր՝ շրթերն ուռեր էին արջասպին մաշիչ զօրութենէն. քթին կոճիկները կարած ըլլալով՝ ռունգերուն տեղ երկու ծակեր կային։ Իր մոխրի գոյն աչքերն, որ շատ վճիտ, շատ մանր, շատ կլոր էին՝ գաղանային կրակ մը կ'արձակէին. իր ճակատը, վարդի ճակտին պէս տափակ՝ կիսովին ծածկուեր էր երկար շէկ մազէ մաշկեայ խոյրեկի մը տակ... կարծէիր թէ հրեշի մը բաշն է։

Մէդը տ'էքօլը հինգ ոտք և քանի մը բթամատէ երկայն չէր. իր գլուխը, չափէն աւելի խոշոր, երկու լայն, հուժկու և մսոտ ուսերու մէջ մտուեր էր, և որոց ձևը անթափ կտաւէ բաղէնին ծածանող ծալքերուն տակէն կ'երևէր. բա-

ղուկներն երկայն էին և ջղոտ, ձեռները կարճ, խոշոր և մինչև մատերուն ծայրը մաղոտ, սրունքները փոքր ինչ կոր էին, և ահագին թամբերն իր հսկայի ոյժը կը ցուցնէին։ Վերջապէս այս մարդը Ֆէրնէսեան Հերակլէսի տիպարն էր՝ այս տարբերութեամբ որ խիստ կարճ, յոյր ու կլոր էր։ Իսկ այս ահռելի դիմակին վայրենական տիպն, իսկ անոր անկայուն, շարժուն և հրացայտ ակնարկը, վայրի գազանի նման, կարելի բան չէ նկարագրել։

Մէդը տ'էքօլին հետ եկող կինը պառաւ էր, մութ շրջազգեստ մը՝ ճերմակ դտակ մը մաքուր հագեր՝ և սև երեսի վրայ կարմիր քառակուսի գիծերով սանոյ մը (tartan) գրեր էր։

Ռօտոլֆ քովընտի կը նայէր այս պառաւին երեսը՝ անոր կանաչ աչքը, կոր քիթը, բարակ շրթերը, ցից թուշը, չար ու նենգաւոր կերպարանը քանի դիտէր՝ ակամայ լա Շուէդը կը յիշէր, այն սոսկալի կինը՝ որուն ձեռքը Ֆլէօր-տը-Մարին զոհ ընկեր էր։

Այս իր տպաւորութիւնը նորատի օրիորդին պիտի յայտնէր, երբ յանկարծ տեսաւ որ աղջիկը գոյն կ'առնու կայ քանի Մէդը տ'էքօլին նողկալի ընկերուհիին դէմքը կը նայի ըին սոսկումով մը. վերջապէս Ռօտոլֆին թեը բռնելով դողդոջուն՝ անոր կամացուկ մ'ըսաւ։

— Ո՛հ, լա Շուէ՛դն է... լա Շուէ՛դը... միակնուհին։

Նոյն պահուն Մէդը տ'էքօլ Պարպիյօնի հետ քանի մը խօսք մէղմիկ ըսելէն ետև՝ ծանր ծանր մօտեցաւ դէպ 'ի այն սեղանն՝ որուն բոլորը նստեր էին Ռօտոլֆ, լա Կուալէօզ և Շուրինէօր։ Այն ատեն աւազակը Ֆլէօր-տը-Մարիին դարձաւ և կոշտ ձայնով մ'անոր ըսաւ։

— Է՛յ, քեզի կըսեմ, ոսկեհեր աղջիկ, ելէր նայիմ սա երկու շան էլէոնէրուն (mufle) քովէն և մեզի հետ եկուր...։

Լա Կուալէօզ ձայն չհանեց, Ռօտոլֆին քովը մօտեցաւ. վախէն ակռաներն իրարու կը զարնէին։

— Իսկ ես... բնաւ չեմ նախանձիր իմ մարդէս, իմ փոքրիկ սրտի հատորէս— ըսաւ լա Շուէդ քահ քահ խընտալով։

Միակնուհին լա Կուալէօզը տեսնելով՝ դեռ չէր ճանչեր որ նոյն ինքն Բէկրիօդ... իր վաղեմի որսն էր նա։

— Ի՛նձ նայէ, պզտիկ խարտեշ աղջիկ, խօսք կը հասկընամ.— ըսաւ հրէշն աւելի մօտ դալով, թէ որ չելնես, աչքդ պիտի հանեմ որ լա Շուէդին հետ զոյգ ըլլաս։ Եւ դու... (Ռօտոլֆին կըսէր) դու պեխաւոր պարոն, թէ որ սա սիրուն աղջիկը սեղանին վրայէն ինձի չնետես... գլուխդ կը խորտակեմ...

— Տէր Աստուած, պաշտպանէ զիս— գոչեց լա Կուալէօզ Ռօտոլֆին, ձեռներն աղերսագին միացնելով։ Վերջը մտածելով որ իր պատճառաւ թերևս երիտասարդը փորձանքի մը հանդիպի, կամացուկ մ'ըսաւ։ —Մի՛, տեղէդ մի՛ շարժիր, պարոն Ռօտոլֆ. թէ որ մօտենայ՝ օդնութիւն պիտի պոռամ. այն ատեն օկրուհին իմ կողմս պիտի բռնէ, որպէս զի ոստիկաններ չհասնին և արկած մը չպատահի։

— Հանդարտ կեցիր, աղջիկս— ըսաւ Ռօտոլֆ աչքը պաղ կերպով մը Մէդը տ'էքօլին վրայ դարձած. —հանդարտէ, դու քովս ես, տեղէդ պիտի չթնտաս, և որովհետև այս դաժան հէնը ինչպէս քեզի, ինձի ալ զզուանք կը պատճառէ պիտի բռնեմ զանի դուրս նետեմ...։

— Դո՛ւ... ըսաւ Մէդը տ'էքօլ։

— Ե՛ս... պատասխանեց Ռօտոլֆ։

Եւ լա Կուալէօզին աղաչանքը մտիկ չընելով՝ սեղանէն ելաւ։

Թէև յանդուգն՝ Մէդը տ'էքօլ քայլ մ'ետ առաւ, այնչափ սպառնական էր Ռօտոլֆին դէմքը, և ակնարկը մանաւանդ ահարկու...։ Վասն զի կան նայուածքներ որ մագնիսական հանդիմադրելի զօրութիւն մ'ունին. կըսեն թէ քանի մ'երևելի մենամարտիկներ իրենց արիւնալի յաղթանակներն այս

գիւթիչ ազդեցութեան կը պարտաւորին, որով իրենց հա-
կառակորդ կողմը կը ջլատեն, կ'ընկճեն և կը շփոթեն։

Մէդը տ'էքօլ դողդողայ, քայլ մ'ալ ետ առաւ և իր
կարգէ դուրս ուժին վրայ չվստահելով՝ բազէնին տակէն դա-
շոյն մը հանեց։

Անտարակոյս կապլիոնին մէջ արիւն պիտի թափէր, եթէ
լա Շուէդ Մէդրը տ'էքօլին թևը բռնելով՝ չպոռար։

— Համբերէ... քիչ մը համբերէ... հոգի, խօսք մ'
ունիմ ըսելիք... երբոր ըլլայ այս երկու շան երեսոնէրոնդը-
լուխը պիտի ուտես, ճանկիդ տակն են...։

Մէդը տ'էքօլ միակնուհիին նայեցաւ զարմանքով։

Իսկ միակնուհին սկսեր էր ուշի ուշով դիտել Ֆլէօր-տը-
Մարին և իր յիշատակները զրգռել։ Վերջապէս բոլորովին
կասկածը փարատեց և լա Կուալէօզը ճանչեց։

— Եւ ինչպէս կարելի է,— ղոչեց միակնուհին և ձեռնե-
րը իրարու միացուց զարմանքով, — նոյն ինքն Բէկրիօդն է,
շաբարի դողս։ Բայց ո՞ր ծակէն ելար, սատանա՞ն ղրկեց քե-
զի,— յարեց նա դեռահաս աղջկին իր կռուփը ցոյց տալով։
— Ուրեմն միշտ իմ ճիրանիս տակ պիտի իյնաս դուն։ Ան-
հոգ եղիր, այսուհետև ակռաներդ չպիտի խորտակեմ, այլ
արիւնդ պիտի խմեմ։ Ա՛հ, կատղիս պիտի շան պէս։ Գիտե՞ս
արդեօք որ քեզ իմ խնամոց յանձնողները կը ճանչեմ։ Մէդ-
ը տ'էքօլ թիարանը տեսեր է այն մարդը որ, երբ դեռ
փոքր էիր, քեզ իմ դուրս բերաւ։ Թղթեր ունի ձեռքն որ
քու ծնողքդ ոսկեշարք մարդիկ են, այո՛ հարուստ։

— Ի՞նչ, իմ ծնողքս կը ճանչե՞ս... ղոչեց Ֆլէօր-տը-
Մարի։

— Ես կը ճանչեմ կամ ոչ, քեզի ինչ փոյթ, դու չպի-
տի ճանչես, այս գաղտնիքը միայն ես և ան գիտէ, անոր
լեզուն կը կտրեմ թէ որ քեզի ըսէ...։ Հը՛մ, հիմա լաց,
Բէկրիօդ, լա՛ց նայիմ...։

— Աստուա՛ծ իմ, ո՛չ— ըսաւ լա Կուալէօզ դառնապէս—

հիմա... աւելի աղէկ կը սեպեմ ծնողքս չճանչել...։

Երբոր լա Շուէդ կը խօսէր, Մէդը տ'էքօլ ծածուկ Ռօ-
տոլֆին նայելով՝ սիրտ առեր էր։ Չէր կրնար երևակայել որ
այս միջահասակ և վտիտ պատանին իրեն դէմ ելնելու յան-
դգնի։ ուստի իր հերակլեան ուժին վրայ վստահ՝ լա Կուա-
լէօզին պաշտպանին մօտեցաւ և հրամայելով լա Շուէդին
ըսաւ։

— Հէ՛ր ի՛ք խօսեցար։ Սա գեղեցիկ հասոյ ականջը բզկտել
կուզեմ... որպէս զի խարտեշ օրիորդը զիս անորմէ սիրուն
գտնէ։

Ռօտոլֆ սէղանին վրայէն կայծակի պէս անդին ցատկեց։

— Պնակներս պիտի կտրէք— պոռաց օկրուհին։

Մէդը տ'էքօլ մարտի կազմ ու պատրաստ՝ երկու ձեռներն
ընդ առաջ՝ լանջը դէպ ետև՝ հաստ երիկամունքին վրայ ամ-
բապինդ, կամ լաւ ևս ըսեմ, իր մէկ ահագին սրունքին վը-
րայ կամարաձև կեցած՝ քարէ ոլունակի մը կը նմանէր։

Ճիշտ այն միջոցին որ Ռօտոլֆ անոր վրայ կը յարձակէր,
կապլիոնին դուռը բռնապէս բացին. ածխավաճառը՝ որուն
վրայ արդէն խօսեցանք, և որ գրեթէ վեց ոտք երկայն էր,
սրահը արտորնօք մտաւ, Մէդը տ'էքօլն անդին հրեց, Ռօ-
տոլֆին մօտ գնաց և ականջէն վար գերմաներէն ըսաւ։

— Տէր իմ, կոմսուհին և իր եղբայրը... փողոցին ծայրն
են։ Այս խօսքիս, Ռօտոլֆ սաստիկ նեղացաւ ու անհամբեր
օկրուհիին տրապղին վրայ ոսկի մը նետելով՝ դէպ 'ի դուռը
վազեց։

Մէդը տ'էքօլ Ռօտոլֆին ճամբան կտրել ուզեց, բայց
սա դարձաւ և անոր քթին բերնին անանկ ուժգին հարուած-
ներ տուաւ, որ ցուլը շլոր մլոր դալով՝ երերայ ու սեղանի
մը վրայ կէս մը տապալ ընկաւ։

— Կեցցէ՛ սահմանադրութիւն... Ճիշտ վերջին կերած
հարուածներս այդպէս էին— ղոչեց Շուրինէօր։ — Թէ որ
մէկ քանի դաս ալ առնում, պիտի սորվիմ...։

Մէդը տ'էքօլ քանի մը բոպէէն եաքը՝ ինքզինքին գալով Ռօտոլֆին եաւէն վազեց, բայց Ռօտոլֆ ածխավաճառին հետ՝ Միջնաքաղքին մութ փողոցներու լաբիւրինթոսին մէջ անհետացեր՝ և աւաղակը անկարող եղաւ անոնց հասնելու։

Մինչդեռ Մէդը տ'էքօլ կատղութենէն փրփրած կը գառնար՝ երկու հոգի՝ Ռօտոլֆին դացած փողոցին հակառակ կողմէն փրթելով՝ կապլիոն մտան շնչասպառ, որպէս թէ արտորնօք հեռաւոր տեղէ մը կը հասնէին։

Ասոնց առաջին շարժումն եղաւ գինետան չորս կողմը աչք նետել նայիլ։

— Վա՛յ,— ըսաւ մին, —ձգեր դացեր է... այս անգամ ալ մեր ձեռքէն փախաւ։

Այս նորեկ անձերն անդղիարէն կը խօսէին։

Մէկ կողմէն լա Շուէդին տեսքը, միւս կողմէն Մէդը-տ'էքօլին սպառնալիքն ահ ու դողի մէջ ձգեր էին լա Կուալէօզը՝ որ նորհաս հիւրերուն պատճառած աղմկէն ու շփոթութենէն օգուտ քաղելով՝ կիսբայ դռնէն սահեցաւ և գինետունէն դուրս ելաւ։

ԳԼՈՒԽ Զ.

ԹՈՄԱՍ ՍԷՅԴՕՆ ԵՒ ՍԱՌԱ ԿՈՄՈՒՀԻՆ

ՆՈՐ կապլիոն մտնող երկու մարդիկ՝ գինետունը երթևեկող մարդերու դասէն չեն բնաւ։ Մին՝ մեծ ու երկայն էր, դրեթէ ճերմակ մազեր, սև ընքուի և թերմօրուս, (favori) ոսկրուտ ու թուխ երես, խիստ ու դաժան կերպարան մ'ունէր, և իր երկար լոգիկը զինուորականի պէս մինչև վիզը կոճկեր էր։ Այս անձը Թոմաս Սէյդօն պիտի անուանենք։ Իր ընկերը գեռահաս, գունատ և գեղանի էր. երսուն երեք կամ երսունը չորս տարեկան կ'երևէր։ Իր մազերն, ընքուին և աչքը, որ մութ սև էին, իր դէմքին անփայլ ճերմակու-

թիւնը աւելի երևան կը հանէին։ Իր քալուածքէն, փոքր հասակէն, գողտրիկ երեսէն գիւրին էր հասկընալ որ այս անձը ծպտեալ կին մ'էր։

Այս կինը Սառա Մակ-Կրէկօր կոմսուհին էր։ Վերջէն պիտի ըսենք ընթերցողին թէ ինչ պատճառաւ կոմսուհին և իր եղբայրն Միջնաքաղքին գինետան մէջ կը գտնուէին։

— Թոմաս, ըսէ որ գինի բերեն և այս մարդիկը հարց ու փորձ ըրէ անոր վրայ, կարելի է բան մ'իմանանք— ըսաւ Սառա, անդղիարէն խօսելով։

Սպիտակահեր և սեւյօնք մարդը սեղանի մ'առջևը նստաւ՝ մինչդեռ Սառա ճակատը կը սրբէր, և մաքուր դաղղիարէն և դրեթէ առանց շեշտի՝ օկրուհիին ըսաւ։

— Տիկին, խնդրեմ ըմպելիք մը ղրկէ մեզի։

Այս երկու անձերուն մուտքը կապլիոնին մէջ ամենուն ուշադրութիւնը սաստիկ դրաւեր էր. իրենց հագուստէն ու կերպերէն կ'երևար որ երբէք ասանկ անարդ գինետուններ չեն յաճախեր, իրենց այլայլած և հոգալի դէմքէն ամէն մարդ կարող էր դուշակել որ կարևոր շարժառիթ մ'ունին այս թաղը դալու։

Շուրինէօր, Մէդը տ'էքօլ և լա Շուէդ անյաղ հետաքրքրութեամբ անոր կը նայէին։

Իսկ օկրուհին այսպիսի նոր հիւրերու երևոյթէն շուարած՝ ուրիշներուն պէս ապուշ կրթեր էր։

— Ըմպելիք մ'ապսպրեցինք, տիկին, ուստի շնորհ ըրէ մեծարելու։

Մայր Պօնիս այս մարդավար լեզուէն ախորժելով՝ տեղէն ելաւ, եկաւ նոր ֆոֆերոն սեղանին կոթնելու շնորհալի՝ ու ըսաւ։

— Արդեօք քաշ մը գինի թէ ոչ շիշ մը կուզէք։

— Շիշ մը, բաժակներ և ջուր տուէք։

Օկրուհին մեծարեց. Թոմաս Սէյդօն հարիւր սու նետեց անոր՝ մեծցորդ ստակը մերժելով։

— Մնայորդը քեզի պահէ, կապելուհիս, և մեզի հետ բաժակ մը գինի ճաշակէ։

— Որչափ մարդասէր էք, պարոն— ըսաւ Պօնիս խաթունը, և կոմսուհիին եղբայրը դիտեց շնորհապարտ և զարմանօք լի դէմքով մը։

— Բայց խնդրեմ— ըսաւ կոմսը — մեր ընկերներէն մէկուն հետ ժամադիր եղեր էինք այս փողոցին մէկ գինետան մէջ, արդեօք սխա՞լ եկանք։

— Այս է Լաբէն-Պլան, պարոն, և ձեր հրամանին պատրաստ։

— Ճիշտ այս պիտի ըլլայ— ըսաւ Թոմաս Սառային նըշանացի խօսելով։

— Այո՛, մեր ընկերը Լաբէն-Պլան պիտի սպասէր մեզի...։

— Եւ այս փողոցը երկու Լաբէն-Պլան չկայ— ըսաւ հըպարտութեամբ օկրուհին։ — Բայց ո՞վ է ձեր ընկերը։

— Մեծահասակ և նիհար մարդ մը, մազերն ու պեխերը աշխէտ— ըսաւ Սէյդօն։

— Հիմա ոտքս ջուրը հասաւ, կեցէք, ճիշտ քիչ մ'առաջ այս տեղ էր այդ մարդը... լեռի պէս բարձր ածխավաճառ մ'եկաւ, անոր բան մ'ըսաւ և մեկտեղ դացին։

— Մեր փնտռածն ալ այդ մարդիկն են— ըսաւ Թոմաս։

— Արդեօք մինա՞կ էին այս տեղ— հարցուց Սառա։

— Այսինքն ածխավաճառը պահ մ'երևցաւ. իսկ ձեր միւս ընկերը հոս կերակուր կերաւ լա Կուալէօղլին և Շուրինէօրի հետ,— և օկրուհին աչք մը նետեց Ռոտոլֆին այն սեղանակցին որ գինետունը մնացեր էր։

Թոմաս և Սառա Շուրինէօրը նայելու դարձան։

Քանի մը վայրկեան քննելէն ետև՝ Սառա իր ընկերին անդգիարէն ըսաւ։

— Կը ճանչէս այս մարդը։

— Ո՛չ, Քարլ՝ Ռոտոլֆին հետքը կորուսեր էր այս մութ փողոցներուն մէջ։ Սակայն տեսնելով որ Մըրֆի ածխագործի հաղուստով սոյն գինետան չորս կողմը կը թափառի և անդադար ապակիներէն ներս կը նայի, կասկածի դացեր էր, և հետևապէս եկաւ գործը մեզի յայտնեց։ Անշուշտ Մըրֆի զանի ճանչցած պիտի ըլլայ։

Մեղմ ու օտար ձայնով այս խօսակցութիւնն ըլլալու ատեն՝ Մէդր տ'Էքօլ՝ Թոմն ու Սառան դիտելով՝ լա Շուէդին ըսաւ։

— Անկոթը հարիւր առնոյ մը փակցուց օկրուհիին։ Մութը կոխելու վրայ է, անձրև կայ, հովը կը փչէ. երբոր ծբարնին կապեն (դուրս ելնեն) անոնց ետևէն կը սամարին և ապուռն է կոդեն (կը կողոպտենք)։ Կէն արմատ մ'ունի հետը, ուստի չկրնար պրծնիլ։

Թոմ ու Սառա այս նոզկալի բարբառն անդամ լսելով՝ չպիտի կարենային հասկընալ, և այսպէս չէին գիտեր թէ իրենց դէմ ինչ որոգայթ կը լարեն։

— Անհոգ եղիր, հոգի, (fourline) — վրայ բերաւ լա Շուէդ — թէ որ Խլորդը ֆուրլին յոյն պոյ զրպանս է արջասպս, և իսկոյն սրուակը անոր կոխորդէն վար կը թափեմ... պէտք է միշտ տղոց ըմպելիք տալ որ չլան։— Ապա յարեց — մտիկ ըրէ, հոգի, Բէկրիօդը որ դանենք, պէտք է անշուշտ ղբրով առնենք ատանինք։ Եթէ անդամ մը մեր տունը նետենք զանի, քիթը արջասպով պիտի շփեմ որ անկէ ետքը երես (frimousse) չունենայ գլուխ բռնելու։

— Բան մ'ըսեմ, լա Շուէդ, ալ քեզի հետ պիտի կարդուիմ— ըսաւ Մէդր տ'Էքօլ. — քեզի պէս վարպետորդի ու սրատոտ կին մը չկայ... արջառի վաճառականին գիշերը... ինչ ըլլալդ հասկցայ ու ըսի։ Ահաւասիկ իմ կինս քսան մարդ կ'ուժէ։

— Աղէկ գտեր ես, հոգի, թէ որ Սքըլէդն ինձի պէս կին մ'ունենար հսկող.. այն ատեն էլէն Բոնոթելով՝ էշ նահապակ չէր ելնար։

— Անոր բանը բուսաւ. անշուշտ մանգալէն անցնելու համար պիտի ելնէ զնդանէն, կոտոֆ մ'ալ պիտի պակսի։

— Ի՞նչ այլանդակ լեզուով կը խօսին այս մարդիկը— ըսաւ Սառա, որ Մէդը ա՛էքօլին և լա Շուէդին վերջին խօսքը ակամայ մտիկ ըրեր էր։ Յետոյ Շուրինէօրը ցոյց տալով՝ յարեց։

— Երկու հարց ու փորձ ընենք սա մարդը Ռոտոլֆի մասին, կարելի է բերնէն բան մ՚առնենք։

— Փորձենք— ըսաւ Թոմ։ Եւ Շուրինէօրին ուղղելով խօսքը. — աղբարիկ, ըսաւ. կը յուսայինք որ այս գինետան մէջ մեր բարեկամին մէկը կը գտնենք. քեզի հետ ընթրիք ըրեր է. քանի որ ծանօթ է, կրնաս ըսել թէ ուր գնայ։

— Հա՛, կը ճանչեմ զանի, որովհետև երկու ժամ առաջ գիս լաւ մը թոսկեց լա Կուալէօզը պահպանելու համար։

— Առաջուց գինքը տեսած չէիր բնաւ։

— Ինա՛ւ... Պրա-Ռուժին բնակած տան դաւթին մէջ իրարու հանդիպեցանք։

— Կապելուհի, շիշ մը գինի ևս գրկէ, և աղէկ տեսակէն— ըսաւ Թոմաս Սէյդօն։

Սառա և ինքն հազիւ իրենց՝ շուրթը լեցուն բաժակներուն տարեր էին. իսկ Պօնիս խաթունն անշուշտ իր մառանին գինին պատուելու համար, արդէն բաժակը քանի մ՚անդամ պարպեր էր։

— Եթէ կը հաւանի, պարոնին սեղանը բեր գինին,— յարեց Թոմ՝ Սառային հետ Շուրինէօրին մօտ երթալով՝ որ զարմանք ու ախորժ կ՚զգար այս քաղաքավարութենէն։

Մէդը ա՛էքօլ ու լա Շուէդ արկոտի լեզուով և մեղմիկ կը խօսակցէին իրենց սև սև խորհուրդներուն վրայ։

Երբ գինին բերին, Սառա և իր եղբայրը՝ Շուրինէօրի հետ մի և նոյն սեղանը նստած՝ նոյնպէս և օկրուէին, որ երկրորդ հրաւէրի մը չէր սպասած, խօսակցութիւնը նորէն սկսան։

— Խօսքդ մի՛ մոռնար,— ըսաւ Թոմաս Սէյդօն Շուրինէօրի հետ բաժակները զարնելով— կըսէիր, քաջդ իմ, որ մեր Ռոտոլֆի ընկերը Պրա-Ռուժին բնակարանը գտար։

— Այո՛, քաջդ իմ— պատասխանեց նա, և իր բաժակը թեթև մը պարպեց։

— Ի՞նչ զարմանալի անուն է այս... Պրա-Ռուժը։ Ո՞վ է այս Պրա-Ռուժը։

— Մոխին հաւերը կոտրէ,— ըսաւ Շուրինէօր անտարբերութեամբ, և յարեց, — Գինիդ սքանչելի է, Պօնիս խաթուն։

— Ուրեմն բաժակդ պարապ մի՛ թողուր, աղբարիկ— վրայ բերաւ Թոմաս Սէյդօն, նորէն Շուրինէօրի բաժակը լեցնելով։

— Քու կենդանութեանդ— ըսաւ նա — նոյնպէս և փոքրիկ բարեկամիդ կենդանութեան, որ... վերջապէս հերիք է... Զուն ու ինքը նոյն ոտանին մէջ չեփուիր, կըսէ առակը... ա՜հ... ուրիշին ծախէ... ես աւանակ չեմ։

Սառաի երեսի գոյնը թեթև մը նետեց. իր եղբայրը շարունակեց.

— Աղէկ չհասկըցայ Պրա-Ռուժին վրայ ըսածդ։ Անշուշտ Ռոտոլֆ նոյն պահուն իր տունէն դուրս կ՚ելնէր։

— Քեզ ըսի որ Պրա-Ռուժ մոխին հաւերը կոտրէ։

Թոմաս Շուրինէօրին երեսը նայեցաւ զարմանքով։

— Ի՞նչ կը նշանակէ մոխի հաւ... բացատրէ խնդրեմ...։

— Մոխի հաւ ոտոտոշ, մոխոտհէն (contrebandier) նշանակէը չգիտես։ Կ՚երևի թէ դու պոպէր ընդուն չես խօսիր։

— Աղբա՛ր, ըսածդդ բան մը չեմ հասկընար։

— Ըսածս այս է։ Մինթէ Ռոտոլֆին պէս դու ալ արկոտի լեզուն չե՞ս խօսիր։

— Արկո՛տ— ըսաւ Թոմաս Սէյդօն և հիացած Սառային նայեցաւ։

— Օ՛ն, օ՛ն, իրաւ որ դուք պան պարակ մարդիկ էք...։ Իսկ մեր Ռոտոլֆը բուն աղբար մ՚է. մի նայիր որ հովահարի ներկիչ է, արկոտի լեզուին վրայ ինձ դաս կրնայ տալ...։ Լա՛ւ, քանի որ այս գեղեցիկ բարբառը չես խօսիր, ահա

պարզօրէն կը յայտնեմ ձեզի որ Պրա-Ռուժ մաքսահէն մ'է, թող թէ Էլիսեան դաշտն ալ Ճաշարան մ'ունի։ Մաքսահէն է ըսելովս չեմ մատներ զինքը... այս արհեստը ամօթ չը տեսներ, այլ մաքսի գործակալներուն (gabelous) քթին տակն անպամ կը խրոխտայ. բայց եթէ բան չունիս փնտռէ, դը-տիր զինքը... Պրա-Ռուժ շուտկի պէս ծակէ ծակ կը մտնէ։

— Ռոտոլֆ այս մարդուն տունը ի՞նչ բան ունէր— հարցուց Սառա։

— Խաչ մը կայ, պարոն... կամ տիկին... որը կու-զես ընտրէ, ինչ որ ըսեմ սուտ է։ Գիտցածս Ճշմիւ ըսի, ինչպէս Ճիշտ է որ սա զինին կը անկեմ։ Այն իրկուն լա Կուալէօզին հետը կ'խնայի, աս ալ կարծելով թէ զինքը պիտի ծեծեմ, Պրա-Ռուժին տան ուղին փախաւ. ես ալ ե-տևէն ընկայ... մութ, մութ էր գժոխքի պէս, ուստի լա Կուալէօզը բռնելու տեղ, Ռոտոլֆին փակայ... աս ալ իմ վարձքս տուաւ. բայց ի՞նչ ոյժ ունի... թշուառականը... մանաւանդ վերջին կռուփները... անիծից արմատ, ինչպէս կարկտի պէս կ'իջնէին։ Խօսք տուաւ այն կռփահարութեան կերպն ինձ սորվեցնելու...։

— Հապա Պրա-Ռուժ ի՞նչ մարդ է— հարցուց Թոմ — ի՞նչ տեսակ ապրանք կը ծախէ։

— Պրա-Ռուժ, մի հարցներ. կը ծախէ ամէն բան որ արգիլուած է ծախելու, կընէ ինչ որ արգիլուած է ընելու։ Ահա այս է իր պաշտօնը։ Ի՞նչ կըսես դու, Պօնիս խաթուն։

— Ո՛հ Ճիշտ է, կրողը ամէն քարի տակէ կ'ելնէ— ըսաւ օկրուհին։ Դամբլը փողոցի տան մը գլխաւոր բնիկն է... տունն ալ ծիծաղելի տեսք մ'ունի... բայց կարՃ կապեմ...

— յարեց օկրուհին, վախնալով որ չափէն աւելի կը խօսի։

— Այն փողոցին մէջ Պրա-Ռուժին բնակած տունն ի՞նչ թիւ ունի— հարցուց Թոմաս Սէյդօն Շուրինէօրին։

— Թիւն է 13, պարոն։

— Կարելի է այն կողմէն լուր մ'առնենք— ըսաւ Սէյ-

դօն կամացուկ մ'իր քրոջը. — վաղը Քարլը հոն պիտի գրկեմ։

— Քանի որ Պ. Ռոտոլֆը կը Ճանչես— վրայ բերաւ Շուրինէօր— կրնաս պարծիլ որ արի... և բարեսիրտ բա-ընկամ մ'ունիս...։ Եթէ ածխագործը վրայ չհասնէր աղ-ւոր կոծ մը պիտի տար Մէդր տ'էքօլին, որ լա Շուէդին հետ վարն անկիւնը նստեր է...։ Անիծից արմատ, ձեռքս տան բզիկ բզիկ կընեմ սա պառաւ վհուկը, ինչու որ կը կատղիմ քանի որ լա Կուալէօզին ըրածը միտքս կը բերեմ... բայց համբերութիւն... ատամն ընդ ատաման, ինչպէս որ կըսեն։

Նոյն միջոցին կէս գիշեր զարկաւ ժամացոյցը յՕդէլ-տը-Վիլը։

Գինետան կանթեղն աղօտ լոյս մը կը սփռէր։

Կապլիոնի բոլոր հիւրերը մի առ մի ձգեր գացեր՝ միայն Շուրինէօր, իր երկու սեղանակիցներն, Մէդր տ'էքօլն ու լա Շուէդ մնացեր էին։

Մէդր տ'էքօլ լա Շուէդին ըսաւ կամացուկ մը։

— Երթանք գիմացի ուղին պահուինք. հիմա մեր մարդ-ները ձրարնէն կը կոպեն։ Եթէ ձախ կողմը բռնեն, Ս. Էլուա փողոցին մէկ անկիւնը կ'սպասենք. թէ որ աջ կողմը զար-նեն, ընդերքի շուկային (triperie) դին գտնուած փլատակ-ներուն մէջ կ'սպասենք. հոն մեծ ծակ մը կայ. այնուհետև ընելիքս գիտեմ։

Եւ Մէդր տ'էքօլ լա Շուէդին հետ դէպ 'ի դուռը գիմաց։

— Այս իրկուն բան մը չէք անկեր, — ըսաւ անոնց օկրուհին։

— Ձէ, Պօնիս խաթուն... պատսպարուելու համար ե-կեր էինք— ըսաւ Մէդր տ'էքօլ և լա Շուէդին հետ դուրս ելաւ։

ԳԼՈՒԽ Է.

ՔՍԱԿ ԿԱՄ ՄԱՀ

ԿԱՊԼԻՈՆԻՆ դուռը գոցուելուն՝ ձայն մը հանեց. Թոմ՝ ու Սառա այս ձայնէն կարծես թէ սթափ առին, սեղանէն ելան ու շնորհակալ եղան Շուրինէօրին որ իրենց քանի մը տեղեկութիւններ տուաւ։ Շուրինէօր ալ դուրս ելաւ. հովին ուժգնութիւնը կը սաստկանար, հեղեղի պէս անձրև մը կը վազէր։

Մէգը տ'էքօլն ու լա Շուէդ՝ դիմացի ուղիին մէջ դարանամուտ՝ Շուրինէօրին՝ փողոցէ մը՝ ուր փլած տուն մը կար, հեռանալը տեսան։ Փոքր առ փոքր իր գինովութենէ ծանրացած ոտքին ձայնն անլսելի եղաւ՝ բռնաշունչ քամիին և յորդահոս տարափին մէջ որ պատերուն դէմ կը ժայթքէր։

Թոմ ու Սառա փոթորկին չնայելով՝ գինետունէն դուրս ելան՝ և Շուրինէօրին բռնած ձամբուն հակառակ ձամբէն քարկին։

— Տոպրակն ընկաւ— ըսաւ Մէգը տ'էքօլ լա Շուէդին ցած ձայնով մը— արքասպի սրուակդ բաց. զգուշութիւն։

— Եկուր հանենք սա մեր մուճակներն որ եռևէն ձայն մը չլսեն— պատասխանեց լա Շուէդ։

— Խելքիդ մեռնիմ, իրաւունք ունիս, հա, մատի վրայ քալենք, իմ պառաւիկս։

Այր ու կին իրենց մուճակները հանեցին և մութին սահեցան տունները քերելով...։

Այս կերպով միակնուհին և Մէգը տ'էքօլին դոփիւնն այնչափ տկարացաւ որ կարող եղան գրեթէ 'ի մօտոյ հետեւիլ Թոմ ու Սառային, առանց շշուկ մը հանելու։

— Աղէկն այն է որ մեր կառքը փողոցին ծայրը կ'սպասէ — ըսաւ Թոմաս Սէյդօն —վասն զի անձրևէն պիտի թրջինք, արդեօք կը մնիս Սառա՞

— Շատ հաւանական է որ մաքսահէնին, սա Պրա–Ռուժին մէջոցաւ լուր մ'առնենք— ըսաւ Սառա մտախոհ՝ առանց եղբօրը հարցումին պատասխանելու։

Ցանկարծ Թոմ կայ առաւ ու ըսաւ։

— Սխալ ճամբէ եկայ. գինետան ձախ կողմի փողոցէն զարնելու էր. քակուտ տան մ'առջևէն անցնելով մեր կառքը պիտի գտնէինք։ Ուրեմն դառնանք։

Մէգը տ'էքօլն ու լա Շուէդ որ մօտէն իրենց որսին կը հսկէին, դրան մը որմնածակը մտան, որպէս զի չտեսնուին, թէև Թոմ ու Սառա գրեթէ անոնց քսուելով անցան։

— Իմ բանիս աւելի աղէկ կպայ որ փլատակներուն կողմը երթան— ըսաւ մեղմիկ մը Մէգը տ'էքօլ. թէ որ Խլրդիրը ձայն մը հանէ... ընելիքս գիտեմ։

Սառա և եղբայրը կապլիոնին առջևէն կրկին անցնելով՝ խարխուլ տան մը մօտ հասան։ Այս տունը կիսովին փլած էր և իր բաց գետնափորերը տեսակ մը վիհ դարձեր էին, որուն երկայնութեամբը այն կողմէն փողոցը կը տարածուէր։

Ցանկարծ Մէգը տ'էքօլ վագրի մը պէս բուռն և դիւրաշարժ ցատկեց, իր լայնափ ձեռքովն Սէյդօնին կոկորդը բռնեց ու անոր ըսաւ։

— Քսակդ տուր, թէ ոչ մահդ սա փոսին մէջ կը գտնես։

Ցետոյ աւազակը Սէյդօնն հրելով՝ գանի օդին մէջ տատանեց, և մէկ ձեռքով գրեթէ փոսին վրայ կախուած բռնեց, իսկ միւս ձեռքով Սառաի թևը պրկեց իբր մամլիի մը տակ։

Դեռ Թոմ շարժում մը չբրած՝ լա Շուէդ հիանալի շուտութեամբ անոր վրան գլուխը թալեց։

Սառա ճիկ չհանեց, պրծելու ճար մը չգտնուեց, այլ միայն հանդարտիկ ըսաւ։

— Եղբայր, քսակդ տուր.— եւ աւազակին դառնալով՝ — ձայն ձուն չենք հաներ, մինակ մի գնասեր մեղի։

Լա Շուէդ այս որոդայթին մէջ ընկնող երկու թշուառ-

ներուն դրպաններրը պարպելէն ետև՝ Սառային ըսաւ։

— Ձեռներդ ցոյց տուր, մատնի չունի՞ս. չունի եղեր— կմկմաց պառաւը։ — Զարմանալի բան, մատնի չկայ... մրսի գլխիդ։

Այս շտահաս և անակնկալ պարագայիս մէջ Թոմաս Սէյդօն իր պաղարիւնութիւնը բնաւ չկորուսաւ։

— Կուզե՞ս ինձի հետ սակարկութիւն մ՚ընել։ Թղթակալիս մէջ այնպիսի թղթեր կան որ քեզի բսլբոլին անպէտ են, զայն ինձի բեր վաղը և քեզի քսան հինգ ոսկի կտամ— ըսաւ Թոմ Սէդը–տ՚էքօլին, որուն ձեռնն այնչափ սաստիկ չէր սեղմեր իր կոկորդը.

— Հա՛, որպէս զի մեզի ականատը նետես, — պատասխանեց չարագործը. — Ուրիշը նետէ՛, և բանդ գնա առանց ետիդ նայելու։ Փա՛ռք տուր որ այսպէս աժան կ՚ազատիս։

— Կեցցէ՛ր— ըսաւ լա Շուէդ — թէ որ մէկ հոգին բարեսիրտ է, իր թղթակալը կրնայ ստանալ, հնար մը կայ։— Ապա Թոմաս Սէյդօնին դառնալով։ — Ս. Տընի դաշտը գիտե՞ս ուր է։

— Այո՛, գիտեմ։

— Ս. Ուէնի դիմացը Բէվօլդ փողոցին ծայրը տափակ է դաշտը, անկից անդին հեռուն կը տեսնուի. վաղը մթնակ այն տեղ եկու, ստակը հետդ բեր, զիս հոն կը գտնես թղթակալովդ. քեզի կը դարձնեմ զայն եթէ շատ, շատ մը ստակ վճարես։

— Բայց աչքդ բա՛ց, ծուղակը կ՚իյնաս, լա Շուէդ։

— Այնչափ աւանակ չեմ. ես ըրածս գիտեմ... լրտես չկայ... առջևս բաց է, հեռուն կրնամ տեսնել։ Մէկ աչք ունիմ... բայց սուր է. թէ որ անկիւնը ուրիշի մը հետ գայ, փոշիս չտեսներ, շուտ մը կծիկը կը դնեմ։

Սառաի միտքը յանկարծ բան մ՚ընկաւ ու աւաղակին ըսաւ։

— Ստակ շահիլ կուզե՞ս։

— Կը հարցընե՞ս։

— Քու ո՞վ ըլլալդ հիմա հասկըցայ. մը գտնուած կապլենին մէջ ածխագործին փնտռած մարդը գու ալ տեսար։

— Բարակ պեխով մէկը։ Այո՛, տեսայ և այն թշուառականին մտքը պիտի ծամի, բայց ժամանակ չունեցայ...։ Քանի մը կոփոց տալով գլուխս դարձուց և զիս սեղանին վրայ տապալեց... առջի անգամն է որ ասանկ ձուն մը գլխիս կդայ...։ Ո՛հ, վրէժս պիտի առնեմ։

— Լաւ ուրեմն, մեր ուզածն ալ այն է— ըսաւ Սառա։

— Այն է— պոռաց Մէդը տ՚էքօլ. —1000 ֆրանք տուր ինձի և քեզի անոր գլուխը կը բերեմ։

— Ապիրատ, մենք անոր գլուխը չենք ուզեր... ըսաւ Սառա Մէդը տ՚էքօլին։

— Ուրեմն ի՞նչ կուզէք։

— Վաղը Ս. Տընի դաշտն եկու, հոն կը գտնես իմ ընկերս— յարեց նա —վստահ եղիր որ մինակ պիտի գայ և ընելիքդ քեզի կ՚իմացնէ։ Եթէ 1000 ֆրանք, այլ 2000 ֆրանք պիտի տամ թէ որ գործը գլուխ հանես։

— Աչքդ լա՛յս— ըսաւ կամացուկ մը լա Շուէդ Մէդը տ՚էքօլին —ստակ շահելու ճամբան գտար. ասոնք «սկեղծ անբաներ» են, որ կարծես թէ թշնամի մը հորը կը փորեն. այս թշնամին, ճիշտ այն խլուրդն է, զոր պիտի ճղմիր... պէտք է անպատճառ երթալ, թէ ոչ ես քու տեղդ կ՚երթամ...։ Ահա մեր բաղդը կը բանի, ծերուկս, սոթթուել պէտք է։

— Շատ աղէկ, կինս յանձն կ՚առնէ— ըսաւ Մէդը տ՚էքօլ, —մեր ընելիքն անոր կը յայտնէք և ես գործը կարգի կը դնեմ...։

— Լաւ, վաղը ժամը մէկին։

— Մէկին։

— Ս. Տընի դաշտը։

— Ս. Տընիի դաշտը։

— Ս. Ուէնի և Բէվըլդի փողոցին մէջ տեղը, զոհին ծայրը պիտի գտնուիս։

— Ա՛նպատճառ։

— Եւ ես թղթակցիդ կը բերեմ։

— Այն ատեն խոստացած 500 ֆրանքը կ՚ստանաս, և առ հաշիւ զումար մ՚ալ միւս գործին համար՝ թէ որ խոհեմութեամբ վարուիք։

— Հիմակ աչ կողմէն գացէք, մենք ալ ձախ կողմէն, ապա թէ ոչ...։

Եւ Մէդը տ՚էքօլ ու լա Շուէդ շտապով հեռացան անկից, մինչդեռ Թոմաս Սէյդօն ու իր քոյրը դէպ՚ի Նոդր-Տամի գաւիթը արտորնօք դիմեցին։

Անյայտ վկայ մը այս տեսարանին ներկայ գտնուեր էր... Նոյն ինքն Շուրինէօրն էր, որ փլած տան փլատակներուն մէջ սքլեր էր անձրևէն պահպանուելու համար։ Սառաի ըրած առաջարկութիւնն առ աւազակն Ռոտոլֆի մասին Շուրինէօրին հետաքրքրութիւնը չափազանց զրգռեր էր. ըստ երևոյթին իր նոր բարեկամը վտանգի մէջ տեսնելուն, վըշտացաւ որ անոր առաջը չէ կարող առնել։ Այս աղուոր զգացումին զրգիռ տուին նաև առ Մէդը տ՚էքօլ և լա Շուէդ ունեցած ատելութիւնը։

Շուրինէօր միտքը դրաւ իմացնել Ռոտոլֆին այս սպառնալից վտանգը. բայց ինչպէս. սուտ հովահարի ներկայարին հասցէն մոռցեր էր։ Կարելի է Ռոտոլֆ ալ ռաք չըկոխեր կապլինոնին մէջ, ուրեմն ինչպէս գտնելու էր զանի։ Այս խորհրդածութիւնն ընելով՝ Շուրինէօր՝ Թոմ ու Սառային եաւէն անզգայօրէն գացեր՝ և անոնց Նոդր-Տամի գաւիթը սպասող կառքին մէջ մտնելը տեսեր էր։

Կառքը ճամբայ ելաւ։

Շուրինէօր կառքին ետևը հնձաւ։ Առաւօտեան ժամը մէկին կառքն Դիտարանին արահետը կեցաւ և Թոմ ու Սառա

նոյն տեղին կից դռիհի մը մէջ մտան ու անհետ եղան։ Գիշերը շատ մութ էր, Շուրինէօր՝ միւս օրն իր գտնուած տեղը ճանչելու համար, գրպանէն դանակը հանեց ու դռիհին անկիւնը գտնուած ծառին վրայ լայն ճեղքուած մը բացաւ։ Յետոյ իր հղիկը գնաց, որմէ շատ հեռու ընկեր էր։ Շատ ատենէ՚ի վեր առաջին անգամն էր որ Շուրինէօր իր խշտեկին մէջ խոր քուն մը քաշեց, և ինչպէս որ ինքը կըսէր, յիանապէսնէրու ապանդարանին սոսկալի երազը իր քունը չվրդովեց։

ԳԼՈՒԽ Ը.

ՀԵՄԵԼԻՔ

Մեր արդէն պատմած այլ և այլ դէպքերն այն իրկուն անցնելով՝ միւս օրն աշնայնի պայծառ արև մը սկսաւ փայլիլ պարզօրէն երկնից երեսը. գիշերուան մրրիկը դադրեր էր։ Այն նողկալի թաղն՝ ուր ընթերցողը մեզի հետ մտաւ, կարծես թէ արևուն պայծառութէնէն իր ահռելի տեսքը փոքր ինչ կորուսեր էր, թէև միշտ բարձր տուներուն պատճառաւ մութ էր։

Առաւօտեան ժամը ասն մէկին Ռոտոլֆ Ֆէվ փողոցը մը. տաւ և շիտակ օկրուհիին գինետունը դիմեց՝ թերևս բանի տեղ չգնելով այն երկու անձինքն որոյմէ առջի իրկուն խոյս տուեր էր, և կամ անոնց հանդիպելու և դիմադրաւ կենալու մտօք.

Ռոտոլֆ նորէն բանտորի հագուստ հագեր էր, սակայն հագուստին մէջ ընտրութիւն մը կար. իր նոր բադէնին տակէն. կուրծքին կողմը բաց, կարմիր ասուի շապիկ մը կը տեսնուէր, և արծթէ կոճակներով զոցեր էր. ուրիշ սպիտակ կտաւէ շապիկի մ՚օձիքը սև մետաքսէ փողպատին վրայ ձգեր և վզէն թոյլ՚ի թեթև կապեր էր. իր կապուտ թաւշէ խոյրիկին տակէն, որ փայլուն պահպանակ մ՚ունէր, խարտեշ մազերուն մէկ քանի դանդուրները դուրս սպրդեր էին։

առջի իրիկուան խոշոր ու կուռ մուճակներուն տեղ՝ մաքուր կօշիկներ հագեր էր, որ չքնաղ ոտք մը երևան կը հանէին և ձիթագոյն թաւշէ լայն տաբատէ (pantalon) մ'ելնելով՝ խիստ փոքր կ'երևէին։

Այս հագուստը անյարմար չէր Ռոտոլֆին վայելչակազմ ձևին, քանի որ ինքը գեղեցիկութեան, կորովի և ուժի հաղորդիչ տիպար մ'էր։

Օկրուհին կապլիոնին սեմին վրայ գլուխ կը բռնէր՝ երբոր Ռոտոլֆ երևցաւ։

— Ի՞նչ կը հրամէք, տղաս։ Անտարակոյս քսան ֆրանքիդ ճացորդն ուզելու եկար—ըսաւ յարգական կերպով մը օկրուհին, որ վախցեր էր մոռնալու թէ Շուրինէօրին յաղթողը առջի իրիկուն իր տրապզին վրայ ոսկի մը նետեր էր — 17 ֆրանք և 10 սու տալիքս ճաց։ . . այս բաւական չէ, երէկ եկան քեզի հարցուցին. բարձրահասակ և աղէկ ծածկուած պարոն մ'էր, և թևն առեր էր մարդու հագուստով ծպտեալ կին մը։ Շուրինէօրին հետ քանի մը շիշ գինի պարպեցին։

— Վայ, Շուրինէօրի՞ն հետ պարպեցին. և անոր ինչ ըսին։

— Պարպեցին ըսելով կը սխալիմ, մինակ իրենց շրթերը քիչ մը թրջեցին և . . .։

— Քեզի կը հարցնեմ թէ Շուրինէօրին ինչ ըսին։

— Ասկից անկից խօսք ըրին, ինչ գիտնամ, Պրա—Ռուժին, անձրևին, օդին վրայ խօսեցան։

— Մի՞թէ Պրա—Ռուժը կը ճանչե՞ն։

— Չէ՛, Շուրինէօր անոնց հասկցուց թէ ո՞վ է . . . և թէ ինչպէս դուն, . . .։

— Լաւ, այդ ուրիշ խնդիր է։

— Հիմա ստակդ կուզես այնպէս չէ՞։

— Այո՛ . . . և լա Կուալէօզը պիտի առնեմ գիւղ տանիմ։

— Ո՛հ, այդ բանը կարելի չէ, տղաս։

— Ինչո՞ւ համար։

— Ո՞վ գիտէ, թերևս չդառնար։ Իր լաթերն իմն են,

ասկից զատ կերակուրի և օթևանի ստակ՝ վեց շաբաթի համար՝ ինն ընտսուն ֆրանք կը պահանջեմ իրմէ. թէ որ ինքը համեստ աղջիկ մը չըլլար տունէն դուրս՝ սա փողոցին ծայրն անգամ երթալու չէի ներեր, բայց . . .։

— Լա Կուալէօզ ինն ընտսուն ֆրանք պարտք ունի քեզի։

— Ինն ընտսուն ֆրանք և տաս սու . . .։ Բայց քեզի ինչ, տղաս. կարծես թէ այս գումարը վճարելու միտք ունիս։ Նայիմ քեզի լորտի պէս վարուիս։

— Ա՛ռ— ըսաւ Ռոտոլֆ օկրուհին անտաղէ տրապզին վրայ հինգ ոսկի նետելով։ —Հիմակ, ըսէ նայիմ, անոր վարձու տուած լաթերդ ինչ կ'աժեն։

Պառաւն ապշած՝ մի առ մի ոսկիները կը քննէր կասկածոտ և անվստահ դէմքով մը։

— Ի՞նչ կը նայիս. միթէ կարծես թէ ոսկիները շինծո՞ւ են. տար ցցուր, և շուտ լմնցնենք . . .։ Ըսէ քանի՞ կ'աժէ այս խեղճին տուած հագուստդ։

Օկրուհին՝ որ ինչ ըսելիքը չգիտեր, և մէկ կողմէն կը փափաքէր որ մեծ աւար մը զարնէ, միւս կողմէն կը զարմանար որ բանուոր մ'այնչափ դրամ ունենայ, և կը վախնար որ չբռնուի, միշտ աւելօքը կորզել յուսալով՝ պահ մը լուռ կենալէն ետև՝ ըսաւ։

— Լաթերն քիչէն քիչ . . . հարիւր ֆրանք կ'աժեն։

— Ա՛յս քրջերն, երեսդ խաչ հանէ. երէկուան ստակը կը պահես, վրան ալ ոսկի մը կ'տամ, և գործը կը լմննայ։ Աւելի ստակ պահանջել . . . ողորմութեան կարօտ տնանկներուն իրաւունքը գողնալ է։

— Դու գիտես տղաս, ես լաթերս կ'առնեմ. լա Կուալէօզ հրաման չունի ասկից դուրս ելնելու. իմ ստայուածքս ուզած գնովս ծախելու ազատ եմ։

— Գեհենին հուրն օրին մէկը քու վարձդ ըլլայ, առ ուզած ստակդ և գնա շուտ լա Կուալէօզը կանչէ։

Օկրուհին ոսկին գրպանը նետեց, և կարծեց թէ այս

քանուորը զողութիւն մ'ըրած կամ ժառանգութեան մը տէր եղած է, և անոր ըսաւ պժգալի ժպիտով մը։

— Ինձ նայէ. ինչո՞ւ համար դու անձամբ վեր չես ելներ լա Կուալէօզը կանչելու.. պիտի ուրախանայ... վասն զի, խաչ վկայ, երէկ ծածուկ ծածուկ քեզի կը նայէր։

— Դո՛ւ գնա կանչէ և ըսէ անոր որ զինքը գիւղը պիտի տանիմ... ուրիշ խօսք մ'ընէր։ Մանաւանդ չեմ ուզեր գիտնայ որ իր պարտքը քեզի տուի...։

— Եւ ինչ պատճառաւ։

— Քու գիտնալու բանդ չէ։

— Աղէկ ըսիր, հոգս է հատեր. իմ հացիս եղ կը քսես, պիտի կարծէ որ դեռ իմ ձեռքիս տակն է...։

— Լեզուդ քեզի պիտի քաշե՞ս. վեր պիտի ելնե՞ս...։

— Ո՛հ, այդ ինչ աչքեր են. եղուկ անոնց որ քեզի հետ բան գործ ունին..։ Հանդարտէ, ահա կ'երթամ... կ'երթամ...։

Եւ օկրուհին վեր ելաւ։

Քանի մը վայրկեանէ եաքը վար իջաւ։

— Լա Կուալէօզին հաւասալը չէր գար. կաս կարմիր եղաւ երբ իմաց տուի որ վարն ես...։ Իսկ երբոր ըսի որ այսօր գիւղը անցնելու հրաման ունիմ, կարծեցի որ խելքը գլխէն պիտի թռի. առջի անգամն է որ զէս գրկելու փափաք մ'ունեցաւ։

— Կարելի է քեզնէ հեռանալու... ուրախութենէն։

Ֆլէօր-տը-Մարի նոյն պահուն ներս մտաւ, նորէն առջի օրուան պէս հագեր էր իր բերիական գորշ շրջազգեստը, նարնջի շալն եաին կապուած ունէր և կարմրագիծ թաշկինակը՝ ուսկից միայն երկու խոշոր ոսկեհեր գիսակներ կ'երևէին։

Գոյն առաւ տուաւ Ռօտոլֆը ճանչելով և շփոթալի դէմքով մը վար նայեցաւ։

— Աղջիկս, կուզես ինձի հետ այսօր գիւղ երթալ— ըսաւ Ռօտոլֆ։

— Ամենայն սիրով, Գ. Ռօտոլֆ— ըսաւ լա Կուալէօզ— քանի որ Պօնիս տիկինը հրաման ունի։

— Այո՛, հրաման կտամ, իմ պզտիկ կատուս, քարի վարքիդ համար... որուն զարդն ես...։ Ինչ և է եկո՞ւ պաչիկ մը տուր ինձ։

Եւ լեպեշտի կինն իր յոռի խոցոտ երեսն երկնցուց։

Թշուառ աղջիկը՝ թէև զզուելով՝ ճակատը օկրուհիին շրթին մօտեցուց, բայց Ռօտոլֆ արմկովը բուռն հարուած մը տուաւ պառաւին և մինչև տրապիզը քշեց. ապա Ֆլէօր-տը-Մարին թևն առաւ և կապլիոնէն դուրս ելաւ, մինչդեռ Պօնիս խաթունն անոր գլխին անէծք կը թափէր։

— Զգոյշ եղիր, պարոն Ռօտոլֆ— ըսաւ լա Կուալէօզ— կարելի է որ օկրուհին գլխիդ բան մը նետէ, չգիտեմ ինչ անզգամ է։

— Հոգ մ'ըներ, աղջիկս։ Բայց ինչ ունիս. շփոթած կ'երևիս... տրտում ես... միթէ կը դժարիս հետս գալու։

— Ընդ հակառակն... բայց... բայց... թևդ մտեր եմ։

— Ի՞նչ կայ։

— Դու բանուոր մ'ես... կարելի է մէկը աեսնէ քեզ ինձի հետ և երթայ գլխաւորիդ քեզ մատնէ... ՁԼաս մը չհասնի քեզի։ Վարպետները չեն ախորժիր որ իրենց գործաւորները անկարգ ըլլան։

Եւ լա Կուալէօզ թևը Ռօտոլֆին թևէն մեղմիկ քաշեց և յարեց։

— Դու մինակ գնա առջևէն... ես մինչև քաղքին դուռը քեզի կը հետևիմ... երբ անգամ մը դաշտերն ելնենք, քովդ կգամ։

— Վախդ փարատէ— ըսաւ Ռօտոլֆ, աղջիկին փափուկ խօսքէն այլայլած, և անոր թևն նորէն առնելով —իմ վարպետս այս թաղը չբնակիր և միաքս ալ Ծաղիկներու քարափին (quai) մօտ կառք մը բռնել է։

— Ինչպէս որ կուզես, Պ. Ռօտոլֆ, քեզի ՁԼաս մը չը հասնելու համար իմ դիտողութիւնս ըրի...։

— Կը հաւատամ, և շնորհակալ եմ։ Բայց համարձակ ըսէ, պիւղին որ կողմն որ ըլլայ հաճելի է քեզի։

— Փոյթս չէ Պ. Ռօտոլֆ, բաւական է որ պիւղն ըլլայ... օդը գեղեցիկ է.. բայց օդին հով առնել ինչ աղուոր է։ Գիտես որ վեց շաբաթէ 'ի վեր Ծաղիկներու շուկայէն անդին դացած չեմ։ Իսկ օկրուհին վրաս վստահութիւն ունենալուն կը թողուր որ Միջնաքաղքէն դուրս ելնէի։

— Եւ միթէ՛ ծաղիկ դնելու համար այս շուկան կդայիր։

— Ա՛հ, չէ՛, սակայն չունէի. մինակ տեսնելու և անոնց անուշ հոտն առնելու համար կդայի...։ Օկրուհին հրամանաւ ծաղիկներու շուկան կէս ժամի մօտ դեղերելով այնչափ գոհ կըլլայի որ ամէն բան կը մոռնայի։

— Հապա երբ օկրուհին տունը դառնայիր... այն դարշելի գուիհներուն մէջ...։

— Կը հարցնե՞ս... աւելի տխուր կը դառնայի... և արտասուքս կը բռնէի որ ծեծ չուտեմ։ Ճշմարիտը... շուկան... ինչ բանի աչք ունէի դիտե՞ս, ան մաքրասէր փոքրիկ դործուհիներուն որ իրենց ծաղկի թաղարը գիրկն առած՝ ուրախ զուարթ կը պտըտէին։

— Հաւաստի եմ որ եթէ մինակ քանի մը ծաղիկ պատուհանիդ մէջ ունենայիր կրնայիր օրերդ անով անցունել։

— Շատ իրաւ է ըսածդ, պարոն Ռօտոլֆ։ Օկրուհին անդամ մը՝ իր տօնին օրը Ճաշակս դիտնալով՝ ինձ պղտի վարդենի մ'ընծայ ըրեր էր։ Զգիտես որչափ երջանիկ էի, հաւատա՛, ալ չէի ձանձրանար. մինակ իմ վարդենիս կը նայէի... անոր թերթիկներն ու ծաղիկները համբուրելով կ'ըլլլ

— Եւ ինչ կը յուսայիր։

— Բարերար հոգի մը գտնելու որպէս զի զիս օկրուհիին քովէն հանէ և գործի մը դնէ... և այս յուսով կը մը-խիթարուէի... ապա կըսէի իւրովի։ Թշուառութիւնս մեծ է, բայց գոնէ մէկու մը դէշութիւն ըրած չեմ... եթէ ոխերդատու մ'ունենայի, հիմա այս վիճակին մէջ չէի ընկ-ներ...։ Այն ատեն տրտմութիւնս քիչ մը կը փարատէր... որ վարդենիիս կորուստին համար քիչ մ'աւելցեր էր— յա-րեց լա Կուալէօզ հառաչելով։

— Միշտ նոյն մեծ ցաւն ունիս...։

— Այո՛... կուզէ՞ս տեսնել, ահաւասիկ։

Եւ լա Կուալէօզ իր գրպանէն փայտի փոքրիկ կապոց մը հանեց, որ ուշի ուշով կորուած և նարօտով կապուած էր։

— Ուրեմն վարդենիիդ չոր տունկը դեռ պահե՞ր ես։

— Ինչպէս չպահեմ... աշխարհիս մէջ բոլոր ունեցածս այս է։

— Ուրիշ բան մը չունի՞ս։

— Զունի՛մ...։

— Հապա բուստէ մանեակդ որո՞ւնն է։

— Օկրուհիին։

— Քրջի կտոր մը, գտակ մը, թաշկինակ մ'ալ չունիս։

— Ո՛չ, ո՛չ ինչ, ո՛չ ինչ չունիմ... խեղճ վարդենիիս չոր ոստերէն զատ. և ասոր համար հոգիս անոր վրան է...։

— Ռոտոլֆ և լա Կուալէօզ Ծաղիկներուն քարափն հա-սան, ուր կառք մը կ'սպասէր. Ռոտոլֆ լա Կուալէօզը հը-րաւիրեց որ մտնէ, ինքն ալ մտաւ և կառավարին ըսաւ։

— Ս. Տընիի կողմը քշէ. եաքէն կըսեմ բռնելիք ճամ-բաղ։

Կառքը ճամբայ ելաւ. արևը շողուն էր, երկին ամպ մը չկար. կծու և թարմ քամի մը վար առնուած ասպիներէն ներս կը փչէր։

— Այս ինչ է, կնիկի լոգիկ մը,— ըսաւ լա Կուալէօզ, որ

չտեսնելով նոյն հագուստին վրայ նստեր էր։

— Մի՛ զարմանար, քեզի համար է, աղջիկս, հետս ա-ռի որ չըլլայ թէ մոխս։

Այս տեսակ պատիներու անվարժ՝ խեղճ աղջիկը հիանա-լով Ռոտոլֆին երեսը նայեցաւ։

— Տէր Աստուած, բայց որչափ բարեսիրտ ես, պարոն Ռոտոլֆ, ամօթապարտ եմ քու առջևդ...։

— Ինչո՞ւ համար, բարեսի՞րտ ըլլալուս։

— Զէ՛, բայց... ալ երէկուան պէս մի խօսիր հետս, հի-մակ բոլորովին ուրիշ մարդ մ'ես...։

— Նայիմ, Գլէօր-տը-Մարի, ըսէ ինձ, ո՞րն աւելի կը սիրես, երէկուան Ռոտոլֆը... թէ այսօրուան Ռոտոլֆը։

— Աւելի աղէկ կը սիրեմ քեզ այդպէս... բայց, երէկ կարծէի թէ քու հաւասարդ եմ...— Ապա խօսքն ուղղե-լով՝ առ ահի որ Ռոտոլֆը չվիրաւորէ, անոր ըսաւ, —երբ հաւասարդ էի կըսեմ... պարոն Ռոտոլֆ, քաջ կղզամ որ իրօք չեմ...։

— Բան մը կը դիտեմ վրադ, Գլէօր-տը-Մարի, որ զար-մանքս կը տանի։

— Ի՞նչ բան, պարոն Ռոտոլֆ։

— Կ'երևի թէ մոռցար երէկ լա Շուէդին քեզի ըսածը... թէ ծնողքդ կը ճանչէ։

— Ո՛չ, բնաւ չմոռցայ... բոլոր զիշերը այդ բանին վը-րայ մտածեցի... և շատ լացի... բայց ստոյգ եմ որ ը-սածը ճշմարիտ չէ... միակնուհիին հնարքն է, որպէս զի սիրաս խորտակէ...։

— Կարելի է որ լա Շուէդ քու ակնկալութեանդ հակա-ռակ բան մը դիտէ. եթէ ըսածը հաստատուի, միթէ ծը-նողքդ պտնելով չէ՞ր ուրախանար։

— Ափսոս, պարոն Ռոտոլֆ, թէ որ ծնողքս զիս չսիրե-ցին... ինչ պէտք ունիմ զանոնք գտնելու... զիս տես-նել անդամ չեն ուզեր... իսկ եթէ զիս սիրեցին... ի-

բենց նախատինք մը պիտի ըլլամ... և թերևս այս նախատինքը չկրելով մեռնին...»

— Եթէ ծնողացդ սիրելի էիր, Գլէօր-տը-Մարի, պիտի պթան, ներեն և սիրեն քեզ... իսկ եթէ կամաւ երեսի վրայ թողին քեզ... իրենց երեսէն կրած սոսկալի տառապանքդ տեսնելով՝... իրենց սրաի կսկիծն ու խայթը վբէժդ պիտի լուծեն։

— Ի՛նչ օգուտ ունի վբէժ առնել։

— Իրաւունք ունիս... խօսքը պոչէ...»

Նոյն պահուն կառքը Ս. Տընի և Բէվոլդ գոհերին բերանը Ս. Ուէնի ճոտ հասեր էր։

Թէպէտ չորս կողմի տեսարանը միօրինակ էր, Գլէօր-տը-Մարի այնչափ ուրախ եղաւ, ինչպէս որ ինքը կըսէր, դաշտերը տեսնելով՝ և լա Շուէդին յիշատակէն ճոքին մէջ ծնած տխուր տեսիլները մոռնալով՝ իր չքնաղ երեսը սկսաւ վարդի պէս բացուիլ։

Ուստի դէպ 'ի կառքին դուռը ծռելով ծափ զարկաւ ու գոչեց»

— Պարոն Ռօտոլֆ, այս ինչ երջանկութիւն է... ահա գալարաւէտ երկիր ու դաշտեր կը տեսնեմ։ Արդեօք կը՞նեբե՛ս որ քիչ մը վար իջնեմ... օդն ինչ աղուոր է... սիրտս ա դալարուտ հողին վրայ վազվզել կուզէ...»

— Աղէ, աղջիկս, վազվզենք... կառապան, կեցէ՛ր։

— Ի՞նչպէս, դո՞ւ ալ վազել կուզես, պարոն Ռօտոլֆ։

— Հապա՛, ինձի համար մեծ բերկրանք մ'է։

— Ի՛նչ երջանկութիւն, պարոն Ռօտոլֆ։

Եւ Ռօտոլֆ ու լա Կուալէօզ ձեռք ձեռքի տալով՝ սկսան շուտ շուտ վազ 'ի վազ դալ նորահունձ լայնադիր արտի մը մէջ։

Անկարելի է բացատրել Գլէօր-տը-Մարիին ուտոստումները, ուրախալիր ճիչերն և հիացումը։ Երկար ատեն բանտարգել վթիկի մը պէս բաց օդը կը շնչէր բերկրալիր...

կ'երթար, կ'գար, կանկ կ'առնէր, կը քալէր և նոր 'ի նոր բոյ զուարթութեամբ կը համակուէր։ Զատկածաղիկներ (Marguerette) և ոսկեփայլ կոկոններ որ տեսաւ, բա Կուալէօզ ուրախութենէն թռաւ և ուզեց մարգագետնին բոլոր ծաղիկները մի առ մի հաւքել։ Այսպէս բաւական ժամանակ խայտալէն և շատ շուտ յոգնելէն ետև՝ վասն զի մարշական կրթութենէ զուրկ մնայեր էր, շունչ առնելու համար կանկ մ'առաւ և խորունկ փոսի մ'եզրը տարալուծ կոճղի մը վրայ նստաւ։

Գլէօր-տը-Մարիին թափանցիկ ու ոգիտակ դէմքն, 'ի բնէ բիչ մը տմոյն, երփն իրփն փայլեցաւ։ Իր կապոյտ ճաճ աչուներն անուշ մը կը փայլիէին. իր կարմրուն, ոգեոգաւ բերանին մէջ նամէտ մարգրիտներու երկու շարք կ'երևէր. կուրծքն՝ իր հին փոքրիկ նարնջի շալին տակ կը բաբէր, սրտին ելևէջը ճնշելու համար իր մէկ ձեռքը անոր վրայ դրբեր էր, մինչդեռ միւս ձեռքով դաշտերէն հաւքած ծաղիկներու փունջ մը Ռօտոլֆին կ'ընծայէր։

Քանի սիրուն էր այս անմեղ դէմքին վրայ զուտ ու անսուտ ուրախութեան երևոյթը։

Երբոր Գլէօր-տը-Մարի կարող եղաւ խօսելու, անպատում երանութեան շեշտով՝ և գրեթէ սրբանուէր երախտագիտութեան ոգւով մը Ռօտոլֆին ըսաւ։

— Քանի՛ ողորմած է Աստուած որ մէզի այսօր այսպիսի զեղեցիկ օր մը կը շնորհէ։

Ռօտոլֆին աչքերը լցան երբ այս թշուառ, ընկեցիկ, անարգուած և կորած արարածին բերնէն լսեց այն երջանկութեան և անասելի երախտագիտութեան աղաղակն ու Արարիչն, որովհետև արևուն նշոյլն ու մարդի մը տեսքը կը վայելէր։

. . . . . .

Անակնկալ դիպուած մը Ռօտոլֆին այլայլութիւնը դադրեցուց։

ԳԼՈՒԽ Թ.

ԽԱՂ

ԱՐԴԷՆ ըսինք, լա Կուալէօզ խորին փոսի մ'եզերը տապալ ծառի մը կոճղին վրայ նստեր էր։

Յանկարծ մարդ մը՝ որ սոյն փոսին մէջ յարդերու տակ թաղչեր էր, ոտք ելաւ, վրան թոնթուռեց և սարսափելի քահ քահ մը ձգեց։

Լա Կուալէօզ գլուխը դարձուց ահաբեկ և աղաղակ մ'արձակեց։

Այս մարդը Շուրինէօրն էր։

— Մի վախնար, աղջիկս— վերայ բերաւ Շուրինէօր երբ տեսաւ որ լա Կուալէօզ դողդողալով իր ընկերին մօտ ապաւէն մը փնտրեց։ — Ասոր ինչ կրսես, պարոն Ռոտոլֆ, զարմանալի հանդիպում մ'է այս, հէյ, միտքէդ կ'անցնէր որ դիս սոյս տեղ պիտի դանես, ես ալ բնաւ չէի յուսար...։

— Ապա ծանր ձայնով մը յարեց։ — Հաւատա՛, վարպետս... ինչ որ կուզեն թող ըսեն... բան մը կայ օդին մէջ... վերը... մեր գլխին վրայ, երկինքը... Երկնաւոր ներքաւորը ինչ ծաղիկ է, կարծես թէ մարդուս կրսէ։ Ուր որ քշեմ հոն գնա՛... և ահա ձեզի այս կողմերը քշեց, և այս ալ խելքէ մաքէ դուրս բան մ'է։

— Այդ տեղն ինչ բան ունիս... ըսաւ Ռոտոլֆ սաստիկ զարմացած։

— Քեզի համար արտը կը պահպանեմ, վարպետս...։ Ա՛յ, նեղովից արմա՛ն, բայց որ հովը փչեց ձեզ ճիշտ իմ գիւղն տնիկիս շրջականները... իրաւ որ, բան մը... անշուշտ հրաշք մը կայ ասոր մէջ։

— Բայց պիտի ըսես թէ այս տեղ ինչ բան ունիս։

— Հիմա կ'իմանաս, մինակ պահ մը սպասէ որ երթամ սա ձիեր դիտարանիդ վրայէն չորս կողմը դիտեմ։

Եւ Շուրինէօր փոքր ինչ հեռուն կեցած կառքին վազեց, ուր աչք մը նեռեց բոլոր դաշտին չորս կողմն և շուտ մը

Ռոտոլֆին մօտ դարձաւ։

— Բայց վերջապէս պիտի բացատրես ինձի թէ ինչ կը նշանակէ այդ ընթացքդ։

— Համբերէ, համբերէ, վարպետս... հարցուր մ'ալ ունիմ... ժամը քանի է։

— Կէս օրը կէս ժամ անցեր է— ըսաւ Ռոտոլֆ ժամացոյցը նայելով։

— Լա՛ւ... դեռ ատեն ունինք... լա Շուէդ կէս ժամն պիտի դայ։

— Լա Շուէդ.— գոչեցին միասին Ռոտոլֆ և նորատի օրիորդը։

— Այո՛... լա Շուէդ։ Համառօտ... ահա այս է եղելութիւնը, վարպետս, երէկ երբոր կապլիոնէն ելար գացիր, այն տեղ եկան...։

— Բարձրահասակ մարդ մը և մարդու հագուստով փոքր կին մը. զիս հարցուցին, այս դիտեմ, վերջը։

— Վերջը դինի խմցուցին ինձի և էջը ներքեւ տուին քու վրայօրդ...։ Ես բան մը չկրցայ ըսել... վասն զի ինձ պատիւ ըրած կոփոցէդ զատ՝ քեզնէ բան մը չսորվեցայ որ պիտանամ... հա՛, մինակ վերջին կռուփիդ համը բերանս մընայ... բայց թէ որ ուրիշ բան մ'ալ սորվէի, դարձեալ ինչ որ եմ՝ նոյնը պիտի մնայի...։ Վարպետ Ռոտոլֆ, հոգւով մարմնով քուկդ եմ...։ Այն օրէն 'ի վեր որ ըսիր ինձ թէ սիրտ և պատիւ ունիմ... կրոզը տանի զիս եթէ գիտեմ՝ թէ ինչու՞ իր սիրոյը համար դամփոի մ'ուներցած սէրը ես քեզի համար կ'զգամ...։ Բայց ինչ որ է... բանն այս է։ Իմ ձեռքս չէ, դո՛ւ ըրիր... ինչ որ կուզես ըսէ...։

— Շնորհակալ եմ, տղայ, բայց շարունակէ...։

— Երբ մեծ պարոնն ու ծպտուն փոքր կինը՝ տեսնելով որ բերնէս բան մը չեն կրնար քաղել, օկրուհիին գինետունէն ելան, նոյնպէս ես... անոնք Արդարութեան պաշտօ-

նատան կողմը զարկին, ես Նոգը-Տամի կողմը։ Երբ փողոցին ծայրը հասայ, տեսայ որ նեսի պէս ջրհեղեղի անձրևմը կը վազէ։ Քիչ մը մօտ փլած տուն մը կար. ըսի իւրովի. —Թէ որ տարափը շարունակէ, իմ խշտեկիս պէս հոնալ կրնամ քնանալ։ Շատմարանի նման փոսի մը մէջ կը սահիմ կ'իջնեմ, հին դերան մը անկողին կընեմ, հողի կոյտմը՝ սնարս, և թաղաւորի պէս այն տեղ կը պառկիմ...։

— Վերջը... վերջը...։

— Արդէն քեզի հետ քաշեր էի, վարպետ Ռոտոլֆ։ Նորէն դինի տանկեցի մեծին և ծպտուն փոքրիկին հետ, ըսել կուզեմ որ գլուխս բաւական ծանր էր... ասկից զատ անձրևին ձայնն ալ քունս կը բերէր։ Ուստի կ'սկսիմ մրափել, հազիւ թէ քունս քիչ մը տարեր էր, երբ ընդոստ կ'արթննամ աղմուկ մը լսելով։ Մէդր տ'էքօլն էր որ ուրիշի մը հետ մրթմրթելն կը խօսակցէր...։ Ականջ կը դնեմ... նզովից աբեհատ... ինչ լսեմ ազէկ... ղեղին ձայնը... որ այրակերպ ֆոտրոհիլին հետ գինեատունը եկեր էր։

— Ի՞նչ, իրօք Մէդր տ'էքօլին և լա Շուէդին հետ կը խօսակցէր, հարցուց Ռոտոլֆ ապուշ կեցած։

— Հա, Մէդր տ'էքօլին և լա Շուէդին հետ... իրաւունք խօսք կտային միս օրը մէկտեղ գտնուելու։

— Այսինքն, այսօր...— ըսաւ Ռոտոլֆ։

— Ժամը մէկին։

— Քանի մը վայրկեանէ։

— Ս. Ֆրէնի և Բէվոլդ դուեհին ծայրը...։

— Ահա այս տեղն է։

— Ճիշտ, վարպետ Ռոտոլֆ; այս է։

— Մէդր տ'էքօլ... զգոյշ կեցիր, պարոն Ռոտոլֆ— ցոչեց Փլէօր-տը-Մարի։

— Հանգարտե, աղջիկս... ան չպիտի դայ... այլ միայն լա Շուէդ...։

— Ինչպէս ծպտուն կնիկի մը հետ զիս փնտռելու համար

գինեատունը եկող մարդը այն երկու թշուառական տնձերուն հետ ծանօթացաւ...— հարցուց Ռոտոլֆ։

— Իրաւ որ չգիտեմ, բայց, վարպետս, եթէ եղնէի զործը լմննալէն ետև արթննայի. ինչ պիտի ըլլար վերջը. վասն զի մեծը կըսէր թէ թղթակալը լա Շուէդին ձեռքէն առնելով... փոխարէն հինգ հարիւր ֆրանք պիտի տայ, և ասկից կը հասկցուի որ Մէդր տ'էքօլն սկսեր է զանոնք կոշտրտել... և ապա Բաբիլոնիան կապած պիտի ըլլան։

— Զարմանալի է...։

— Տէր Աստուած, մինակ դողս քեզի համար է, պարոն Ռոտոլֆ— ըսաւ Փլէօր-տը-Մարի։

— Վարպետ Ռոտոլֆը տղայ մը չէ, աղջիկս, բայց ինչպէս որ կըսես... կարելի է բանը գէշի դառնայ... բայց ես հոս եմ։

— Շարունակէ դուն, տղայ։

— Մեծն ու փոքրուհին Մէդր տ'էքօլին երկու հազար ֆրանք տալու խոստացան... որ քեզի բան մ'ընեն... բայց չգիտեմ ինչ. լա Շուէդ հիմա այս տեղ պիտի դայ թղթակալը բերելու, և ինչ որ կը գառնայ իմանալով Մէդր-տ'էքօլին իմաց տալու, որ պէտք եղածը 'ի զործ պիտի դնէ եղեր։

Փլէօր-տը-Մարի դողալ եկաւ։

Ռոտոլֆ արհամարհոտ կերպով մը խնդաց։

— Վարպետ, երկու հազար ֆրանք կայ քեզի բան մ'ընելու համար... խօսքս անոր, կը մտածեմ որ երբ կոտրած շան մը համար հարիւր ֆրանք վարձ կը խոստանան բերողին, կարճ խելքովս կըսեմ ինքնովին։ Անասուն, թէ որ դու կորսուէիր հարիւր ստակ չէին տար քեզ գտնելու համար... և ահա քեզի բան մ'ընելու համար, Ռոտոլֆ, երկու հազար ֆրանք կտան... ուրեմն դու ոմ ես։

— Հիմակ քեզի կը յայտնեմ։

— Բաւական է, վարպետ...։ Սակայն երբ այս առաջար-

կութիւնն իմացայ ինքնովին ըսի։ Կուզեմ հասկընալ թէ ո՞ւր կը գտնուին այն մեծատուններն որ Մէդը տ՚էքօլը Ռոտոլֆին ետևէն պիտի ձգեն, օրին մէկը պէտք կըլլայ։ Ուստի երբ կը հեռանան, փլատակէս դուրս կ՚ելնեմ և անձայն անոնց կը հետևիմ. մեծն ու փոքրուհին Նօդը–Տամի դաւթին մօտ կառք մը կը բռնեն, կը հեծնան, ես ալ ետին կը նստիմ և դիտարանին պուլվարը կը հասնինք։ Դըժոխքի պէս մութ էր գիշերը. բան մը չէի տեսներ. ծառ մը կը ճեղքեմ որ միւս օրն այն տեղը գտնեմ։

— Շատ աղէկ ըրիր, տղայ,

— Այս առտու նոյն տեղը գայի։ Ծառէս տաս քայլ հեռի... դռնակով մը զոցուած դռիհ մը տեսայ...։ Դռիհին տղին մէջ մեծ ու փոքր ոտքի նշաններ... դռիհին ծայրը ալարտէղի դուռ մը, ուր հետք չկար... անշուշտ մեծին ու փոքրին բոյնն այն տեղ պիտի ըլլայ։

— Ապրիս, քաջ տղայ. առանց դիտնալու մեծ ծառայութիւն կընես ինձ։

— Ներէ, խնդրեմ, վարպետ Ռոտոլֆ, ես ալ այնպէս կարծէի... և այս պատճառաւ անոնց ետևէն ընկայ։

— Գիտեմ, տղայ, և չոր շնորհակալութեան տեղ կը փափաքէի ուրիշ վարձք մը տալ քեզի... զէշն այն է որ անաբծաթ գործաւոր մ՚եմ.... թէև ինչպէս կըսես, ինձի բան մ՚ընելու համար երիտ հազար ֆրանք կտան... կեցիր քեզի հասկրցնեմ բանը...։

— Լաւ, թէ որ չես ձանձրանար, ապա թէ ոչ փոյթս չէ... խաղ մը կը խաղան քեզի, այն խաղը ահա կ՚ուզեմ... մընացածը քու գիտնալիք բանդ է...։

— Կը գուշակեմ անոնց ուզածը...։ Լաւ միտ դիր ինձի։ Մեքենայով հովահարներու փղոսկրը տաշելու հնարը գիտեմ, բայց այս գիտը բոլորովին իմս չէ, ընկերիս կըսպասեմ որպէս զի զայն 'ի գործ դնեմ. ուստի հիմակ իրենց բոլոր ճիգը կը թափեն որ տունս պահած մեքենային օրինակը յափշտակեն, վասն զի այս գիտով կարելի է շատ տակ շահիլ։

— Ուրեմն մեծն ու փոքրուհին... ինչ են...։

— Գործատէրներ (fabricant) որոց քովն աշխատեցայ... և չուզեցի անոնց գիտս հաղորդել...։

Ռոտոլֆին այս բացատրութիւնը Շուրինէօրին գոհացուցիչ երևցաւ, վասն զի փոքը բաւական բաց չէր, ուստի վրայ բերաւ։

— Հիմա ոտքս չուրը հասաւ...։ Տես սա անպիտան մուրացիկները... գոնէ անձամբ իրենք գաբան լարելու չափ քաջութիւն ունենան... Բայց կարճ կապեմ, նայէ ինչ մըտածեցի այս առտու։ Արդէն գիտեմ թէ լա Շուէդ և մեծն ուր ժամադիր եղան, կ՚երթամ ըսի այն տեղ անոնց սպասելու, արագոտն եմ, բայց փայտատէր (débardeur) վարպետս պիտի սպասէ եղեր, այդ ալ փոյթս չէ...։ Ուստի հոս կգամ... սա ծակը կը տեսնեմ, վարէն գիրկ մը յարդ կ՚առնեմ, մինչև գլուխս կը ծածկուիմ, և լա Շուէդին կըսպասեմ...։ Այն միջոցին դուք ալ ծնգիէն կը փրթիք դաշտին մէջ և այս խեղճ լա Կուալէօզ ճիշտ իմ պարտէզիս մէկ ծայրը նստելու կգայ. ահա այն ատեն չկրցայ ինքզինքս բռնել, խաղ մը խաղալ ուզեցի և խենդի պէս խշտեկէսելնելով պոռացի...։

— Իսկ հիմա միտքդ ինչ է...։

— Միտքս լա Շուէդին սպասել է, որ անտարակոյս, առաջ պիտի գայ, և մեծին ըսելիքը ըսել, վասն զի ինչ որ իմանամ քեզի օգուտ է։ Այս դաշտին մէջ մինակ սա տապալ կոճղը կայ, ուսկից դիւրին է ամէն կողմը դիտել և կարծես թէ յատկապէս նստելու համար շինուած է...։ Լա Շուէդին ժամադիր տեղը ասկից չորս քայլ անդին, ճամբուն ծառն է. զբաւ կը դնեմ որ պիտի գան այս տեղ նստին, իսկ եթէ չգան... թէ որ բան մը չլսեմ... այն ատեն, երբ իրարմէ զատուին, լա Շուէդին վրայ կ՚խնամ,

ուրիշ Ճար չկայ, լա Կուալէօզին ակռային փոխարէնը կը վՃարեմ և վզէն բռնելով կը խզդեմ՝ թէ որ թշուառ օրիորդին ծնողացն անունը ինձ չյայտնէ, քանի որ ըսաւ թէ ինքը զանոնք կը Ճանչէ . . . : Ի՞նչ կըսես, վարպետս, այս իմ խելքիս :

— Գէշ չէ, տղայ, բայց քանի մը կէտեր կան շտկելու :

— Բայց առաջ սա ըսեմ, Շուրինէօր, որ ինձի համար կռուի չբռնուիս . . . եթէ լա Շուէդը ծեծես, Մէդր տ'էքսոլ . . . :

— Բաւական է, աղջիկս . . . միթէ լա Շուէդին առջև ձեռքըս կապած նստիմ . . . : Նզովեցեալ արմատ . Ճիշտ Մէդր տ'էքսոլն իր պաշտպանն ըլլալուն համար քանի մը հատ աւելի պիտի տամ :

— Մտիկ ըրէ, տղայ, լա Կուալէօզին վրէժը լա Շուէդէն առնելու աւելի ընտիր միջոց մը կայ : Եաքէն պիտի յայտնեմ քեզի . իսկ այժմ — ըսաւ Ռոտոլֆ լա Կուալէօզէն փոքր ինչ հեռանալով և մեղմաձայն — Իսկ այժմ, կուզէս ինձ Ճշմարիտ ծառայութիւն մ'ընել . . . :

— Խօսէ, վարպետ Ռոտոլֆ :

— Լա Շուէդ քեզ չՃանչեր :

— Առաջին անգամն է որ երէկ կապլէոնը տեսայ . . . :

— Ահա քու ընելիքդ այս պիտի ըլլայ . . . : Նախ կը զգուշանս, բայց երբ հոս մօտենայ, ծակէդ կ'ելնես :

— Զանի խզդելու համար . . . :

— Զէ . . . այդ վերջի գործ է . . . այսօր մինակ արդիլելու է որ մեծին հետ չխօսի . . . : Մեծը տեսնելով որ մարդ կայ, անոր չյանդգնիր բացուելու . . . եթէ մօտի, վայրկեան մը մի թողուր լա Շուէդը . . . քու առջևդ չպիտի կարենայ իր առաջարկութիւններն ընել . . . :

— Իսկ թէ որ մարդը մրմռայ . . . իր չափը պիտի ընդունի . . . ինքը ոչ Մէդր տ'էքսոլ մ'է, և ոչ վարպետ Ռոտոլֆ մը : Լա Շուէդին պիտի հետևիմ իր շուքին պէս :

Մարդն ինչ որ ըսէ պիտի լսեմ, և վերջապէս պիտի հեռանայ . . . և ապա լա Շուէդին քթին բերնին քանի մը հատ կտամ, կը սատկիմ թէ որ այս չընեմ . . . :

— Այդ բանին ատենը կայ . . . : Միակնուէին չդիտէ անշուշտ որ գո՞ղ ես թէ ոչ :

— Զէ, չդիտէ, բայց կարելի է Մեգը տ'էքսոլն իմ վրայ խօսած և ըսած ըլլայ անոր որ այսպիսի բան մ'իմ բնութեանս դուրս է . . .

— Եթէ այդպէս ըսած է . հիմա պիտի կարծէ քու բընելիք ընթացքդ որ բնութիւնդ փոխեր ես :

— Ե՞ս :

— Դո՛ւ :

— Նզովեցեալ արմատ . բայց պարոն Ռոտոլֆ . . . ըսէ նայիմ, . . հը՛մ, հը՛մ . . . այդ կատակը բնաւ իմ բանիս չը-պար . . . :

— Ինչ որ կուզես ըրէ . . . պիտի տեսնես որ վատ գործ մը չպիտի առաջարկեմ քեզի . . . : Երբ անգամ մը մարգը հեռանայ, կսկսիս լա Շուէդին մօտ քծնիլ . Եւ որովհետև աղտոր կրծօնը ձեռքէն փախցնելուն համար պիտի կատղի, դու ալ կ'աշխատիս անոր սիրտն առնել ըսելով թէ ուսելիք պատառ մը կայ, թէ քու դաւակցիդ կսպասես այն տեղ, և թէ Մէդր տ'էքսոլ քեզի միանայ նէ . . . ոսկին դնելու տեղ չպիտի գտնէք . . . :

— Սքանչելի է . . . սքանչելի . . .

— Ժամ մը սպասելէն ետքը անոր կըսես, « Իմ ընկերս գալիք չունի . . . գործը ուրիշ անդամի մաց » և վաղուան համար լա Շուէդին և Մէդր տ'էքսոլին հետ ժամադիր կըլլաս . . . բայց կանուխկեկ, կը հասնիս կը հասնիս :

— Կը հասկընամ . . . :

— Եւ այս իրկուն ժամը տասին՝ Էլիսեան դաշտին և Վէօվ ուղիին անկիւնը կը գտնուիս . ես ալ այն տեղ կըլլամ և սէտք եղածը քեզի կըսեմ . . . :

— Հապա եթէ այս որոգայթ մ'է. զգոյշ եղիր... Մէդը տ'էքօլ շուտիկ մ'է... քեզմէ ծեծը արդէն կերաւ... Թէ որ փոքր կասկած մ'առնէ, կրնայ քեզ սպաննել։

— Անհոգ եղիր...։

— Նեղվիլ արմատ. զարմանալի բա'ն... ուր որ ուզես գլուխ կը դարձնես... ալ տարակոյս չունիմ, ներսս կը վըկայէ որ Մէդը տ'էքօլին և լա Շուէդին գլխին ձուն մը պիտի գայ... սակայն... խօսք մ'ունիմ քեզի պարոն Ռոտոլֆ։

— Ըսէ նայիմ։

— Հաւատի եմ որ միտքդ Մէդը տ'էքօլն որոգայթի մը մէջ նետել, և ապա ոսոիկանութեան մատնել չէ... իրաւ է որ աննման աւազակ մը և բիւր անգամ մահուան արժանի է... բայց զանի ձեռք տալն... իմ բանս չէ։

— Իմ ալ բանս չէ, տղայ. բայց անոր և լա Շուէդին հետ ճաշիւ մ'ունիմ տեսնելու, քանի որ թշնամիներուս հետ ինձի դէմ կը դաւակցին... և թէ որ ինձ օգնես, կրնամ գործը գլուխ հանել։

— Է՛, այդ ուրիշ խնդիր, քանի որ արուն ու մատակը մի և նոյն խմորէն են... ուրեմն կը հաւանիմ... բայց շուտ, շուտ ընենք— գոչեց Շուրինէօր —վարը, հեռուն Ֆերմակ կէտ մը կը նշմարեմ, լա Շուէդին դտակը պիտի ըլլայ...։ Դուք դայէք, ես ալ իմ ծակս պիտի մտնեմ։

— Այս իրկուն ժամը տասին...

— Արդէն գիտենք, Վէօվ ուղիին և Էլիսեան դաշտին անկիւնը պիտի դտնուինք...

Գլէօր-տը-Մարի՝ Շուրինէօրին և Ռոտոլֆին խօսակցութեան այս վերջին մասը չլսեց, ու ընկերին հետ կառքը մտաւ։

ԳԼՈՒԽ Ժ.

ԻՂՁԵՐ

ՌՕՏՈԼՖ այս խօսակցութենէ ետև՝ պահ մը մտայոյզ և խոհուն կերպարան մ'առաւ։ Գլէօր-տը-Մարի չէր իշխեր իր ընկերին լռութիւնը վրդովելու և անոր երեսը կը նայէր տրտմագին։

Ռոտոլֆ գլուխը վերուց և սիրալիր ժպտելով անոր ըսաւ։

— Ի՞նչ կը մտածես, աղջիկս։ Արդեօք Շուրինէօրին հանդիպումը անախորժ եկաւ քեզի։ Քիչ մ'առաջ քանի զբաղուրթ էինք։

— Ընդ հակառակն բարիք մ'ե մեզի համար, պարոն Ռոտոլֆ, քանի որ Շուրինէօր կրնայ օգտակար ըլլալ քեզի։

— Արդեօք այս մարդը կապլիոնի յաձախորդներուն մէջ իբր բարի զգացումներու աէր մէկը չէր համարուեր։

— Գիտեմ, պարոն Ռոտոլֆ... երէկեան դիտուածէն առաջ զինքը սաէպ տեսեր՝ թէև հաղիւ հետը խօսէր էի... կարծէի թէ միւսներուն պէս անդգամ մ'է...։

— Այլ չմտածենք այս բաներուն վրայ, իմ փոքրիկ Գըլէօր-տը-Մարի։ Սրտիս ցաւ պիտի ըլլայ եթէ վշտացընեմ քեզ, ես կը փափաքէի որ գեղեցիկ օր մը ցուցնեմ քեզի։

— Ո՛հ, շատ երջանիկ եմ, օրեր, ամիսներ կան որ Բարիզէն դուրս ելած չեմ։

— Անշուշտ այն ատենէ 'ի վեր որ Ռիկոլէդին հետ միաձի կառքով (mylord) շրջելու կ'ելնէիք։

— Այո՛, իրաւ է, պարոն Ռոտոլֆ...։ Գարունին էր... բայց հիմա, թէև աշուն է, ուրախութիւնս նուազ չէ։ Ի՞նչ գեղեցիկ է արևը... դիտէ անդամ մը վա՛ռը... վա՛ռը, սա վարդագոյն մառը ամպե՛րը... սա բլո՛ւրը... որուն ծառերուն մէջ սիրուն Ֆերմակ տուներ կան...։ Տերևները դեռ կանաչ են, ինչ զարմանք, պարոն Ռոտոլֆ, այս հոկտեմբեր ամսուն մէջ անդամ։ Բայց Բարիզ տերևները շուտ

մը կը դեղնին... հապա վարը... սա աղուներուն ե-
ղ

մը... նայէ ինչպէս աղօրիի մը տանիսին վրայ կը դա-
գարին... գաշտերու մէջ մարդս չորս կողմը նայելէն չը-
ձանձրանար, ամէն բան զուարճալի է։

— Ֆլէօր-տը-Մարի, կը բերկրիմ տեսնելով որ անզգայ
չես այս տեսարանիս շուք տուող մանր մունր բաներուն։

Եւ քիչ մինչդեռ նորատի օրիորդն իր չորս դին պարզող
գեղաձիծաղ ու հանդարտիկ պատկերը կը նկատէր՝ իր օրջին
հետ դէմքն ալ կը բացուէր։

— Նայէ։ անգլին ալ, անդաստանին մէջ խոզանի կրակը
և աղուոր ճերմակ մուխն որ դէպ երկին կ'ելնէ... և սա
արօրն իր երկու տոկուն ու խոշոր ճարտուկ ձիերովը...։
Եթէ այր ըլլայի՝ երկրագործի արհեստը կընտրէի...։ Երբ
արտի մը մէջ արօրիդ ետևէն քալես... հեռուէն մեծ մեծ
անտառները տեսնելով, օրինակի համար, այս օրուան աղ-
ուոր օդով մը... անտարակոյս փափաք մը կը ծնի սրտիդ
մէջ այն փոքր ինչ տխուր երգերէն մէկը երգելու, որ արտ-
սուքդ կը քերեն... ինչպէս Պրպանդի ծենըվիէվ երգը։
Արդեօք գիտե՞ս, պարոն Ռոտոլֆ, Պրպանդի ծենըվիէվ անուն
երգը։

— Ո՛չ, չգիտեմ, աղջիկս. բայց դուն աղէկ օրիորդ մ'ես,
և ինձի համար զայն կ'երգես, մինչև իրկուն դեռ բաւական
ժամանակ ունինք զբօսնելու.

Այս խօսքիս վրայ, խեղճ լա Կուալէօզ՝ իր զուարթուն տե-
սիլները ցրուեց մտածելով որ բաց օդին աղատօրէն ախորժելի
ժամը անցնելէն ետև՝ իր ժահահոտ խցիկը պիտի դառնայ.
դլուխը ձեռքին մէջ պահեց և առատ արտսուք թափեց։

Ռոտոլֆ զարմանալով լա Կուալէօզին ըսաւ։

— Ի՞նչ ունիս Ֆլէօր-տը-Մարի, ինչո՞ւ կ'արտասուես։

— Բան մը չունիմ... պարոն Ռոտոլֆ— և աչուները
սրբեց ու ջանաց ժպտելու։ —Ներում կը խնդրեմ տրտմու-
թեանս համար... հոգ մ'ընէր...։ բան մը չունիմ, հաւ-

ատ... հով մ'էր անցաւ... հիմակ ուրախ զուարթ պի-
տի ըլլամ

— Բայց քիչ մ'առաջ ո՞րչափ զուարթ էին։

— Ահա այդ է պատճառը...— պատասխանեց Ֆլէօր-
տը-Մարի, իր արտասուալի աչերը Ռոտոլֆին դարձնելով։
Այս մէկ քանի խօսքէն Ռոտոլֆ ամէն բան դուշակեց և գե-
ռահաս աղջկին վիշտը փար ատելու մտօք՝ ժպտելով ըսաւ
անոր։

— Հաւատաք եմ որ վարդենիդ փիտքդ ընկաւ և կը ցա-
ւիս որ հետդ չըլլալով՝ անմասն մնաց քու զուարճութենէդ։

Լա Կուալէօզ այս կատակը պատրուակ բռնելով ժպիտ մը
ըրաւ. փոքր առ փոքր տրտմութեան այս թեթև մոայլը փա-
րատեց և մտածեց ներկան վայելել ու ապագան մոռնալ...
Իսկ կառքը Ս. Տընիի կը մօտենար, և հեռուէն ժամին
բարձր զանգակատունը կ'երևէր։

— Ա՛հ, ինչ դեղեցիկ զանգակատուն է— գոչեց լա
Կուալէօզ։

— Ս. Տընի եկեղեցիինն է, հոյակապ եկեղեցի մը...։
Եթէ տեսնել կուզես, կառքը կեցնենք։

Լա Կուալէօզ աչքերը վար առաւ։

— Օկրուհիին բնակարանը գտնուելէն՝ ի վեր ժամը ոտք
կոխած չեմ, մեղաւոր էի։ Իսկ բանտիս մէջ, ընդհակառակն,
կ'ախորժէի պատարագին սպասաւորելով երգել և Վարդա-
վարին՝ գեղեցիկ փունջեր կը շինէի խորանը զարդարելու
համար։

— Բայց Աստուած բարի է և ողորմած. ինչու համար ա-
ղօթելու, եկեղեցին մտնելու երկիւղ ունէիր։

— Ա՛հ, չէ, չէ... պարոն Ռոտոլֆ... այդ ամբարշտ-
ութիւն մը կըլլար... արդէն Աստուծոյ առջև մեղքս
շատ է։

Պահ մը լուռ կենալէն ետև՝ Ռոտոլֆ լա Կուալէօզին ըսաւ։

— Մինչև այսօր մէկը սիրե՞ր ես։

— Երբէք, պարոն Ռօտոլֆ։

— Եւ ինչ պատճառաւ։

— Արդէն տեսար կապլիոն եկող գացող հիւրերը...։ Ասկէ զատ սիրելու համար պէտք է պարկեշտ ըլլալ։

— Ի՞նչ ըսել կուզես։

— Այսինքն, պէտք է որ մարդս ինքնիշխան... և կարող ըլլայ...։ Բայց բան մ'ըսեմ, պարոն Ռօտոլֆ, եթէ չես դժարիր, խնդրեմ արի գոյէ այդ խօսքը...։

— Շատ աղէկ, Ֆլէօր-տը-Մարի, ուրիշ խնդրի վրայ խօսինք...։ Բայց չեմ իմանար թէ ինչո՞ւ համար այսպէս ելեւեսս կը նայիս, նորէն աչուներդ լցան... արգիօք քեզ վշտացուցի՞։

— Ա՛հ, ընդ հակառակն. այնչափ բարեսիրտ ես իմ մասիս որ արտասուքս ակամայ կը վազեն... զիս կը յարգես... և մէկ խօսքով, կարծես թէ մինակ իմ զուարճութեանս համար զիս այս տեղ բերիր, վասն զի կը գիտեմ որ զոհ կ'ելբեիս իմ երջանկութիւնս տեսնելով։ Բաւական չէր որ երէկ ինձ պաշտպան կեցար... այսօր ալ այսպիսի ախորժելի օր մը կը ցուցնես...։

— Ստուգիւ երջանիկ ես։

— Տարիները անցնի այս երջանկութիւնն չպիտի մոռնամ։

— Քանի հաղուագիւտ է, երջանկութի՛ւն ըսածդ...։

— Այո՛, շատ հաղուագիւտ...։

— Երկին վկայ, ես, տեսնելով որ շատ բան չունիմ, երբեմն կ'զբօսնում երազելու ինչ որ կուզեմ ունենալ, և կըսեմ իւրովի։ Ահա կը փափաքէի այս ըլլալ... ահա այս բաղդին վիճակիլ կուզէի...։ Իսկ դու, Ֆլէօր-տը-Մարի մթէ երբեմն ասանկ երազներ չե՞ս տեսներ, մթէ օդին մէջ պալատներ չե՞ս շիներ։

— Այո՛, երբեմն, բանտիս մէջ. օկրուհիին տունը մտնելէս առաջ՝ օրն 'ի բուն կ'երազէի ու կ'երդէի, բայց հիմակ սիրտ չունիմ...։ Իսկ դո՛ւ, պարոն Ռօտոլֆ, դու ինչ բանի աւելի աչք ունիս։

— Ե՛ս, ես կուզէի հարուստ, շատ հարուստ ըլլալ... սպասաւորներ, կառք ու ձիեր, ապարան մ'ունենալ, ընտիր ընկերութիւններ և ամէն օր թատրոն յաճախել։ Ապա դո՛ւ, Ֆլէօր-տը-Մարի։

— Ես այդչափ փառասէր չեմ. քիչ մը ստակ օկրուհիին պարտքս տալու, և մինչև գործ գտնելս պարէնս հոգալու, փոքրիկ սիրուն և մաքուր սենեակ մը, ուսկից աշխատելու ատենս ծառերը նայիմ, ահա բոլոր փափաքս։

— Եւ շատ մը ծաղիկներ պատուհանիդ մէջ...։

— Է՛հ, անշուշտ... նաև դիւղը բնակիլ եթէ կարելի ըլլար, ուրիշ բան չեմ ուզեր...։

— Փոքրիկ սենեակ մը, և գործ, ասոնք անմիջական պիտոյք են, բայց երբոր մարդս մինակ փափաքներ ունի, կրնայ նաև աւելորդ բաներ ալ փափաքիլ...։ Հիմա չէիր ուզեր կառքեր, անդամանդներ, և աղւոր հագուստներ ունենալ։

— Չէ՛, չէի ուզեր...։ Բաւ է ինձ իմ ազատութիւնս, դիւղային կեանք մը, և վստահութիւն մ'որ հիւանդատունը չպիտի մոռնիմ...։ Ո՛հ, մանաւանդ այս վստահութիւնը։ որ այն տեղ չպիտի մոռնիմ...։ Հաւատա՛, պարոն Ռօտոլֆ, ստէպ այս մտմտուքը միտքս կը պաշարէ... ահռելի մտմըտուք մ'է։

— Վա՛յ մեզի պէս թշուառներուն...։

— Թշուառութեան համար չէ... խօսքս... այլ ապա... երբ մոռնիմ...։

— Ի՞նչ կայ։

— Ուրեմն չգիտե՞ս, պարոն Ռօտոլֆ, թէ ապա մարմինդ ի՞նչ կընեն։

— Ո՛չ...։

— Դեռահաս աղջիկ մը կար՝ որուն հետ բանտը սենեակ մը կայ... հիւանդանոցը մեռաւ... իր մարմինը վիրաբոյժներուն տուին...— մրմռաց տարաբաղդ աղջիկը սարսռելով։

— Ա՛հ, իրօք սոսկալի բան. բա՛ւ է, դժբաղդ աղջիկ։

միթէ ստէպ ասանկ սղալի խորհուրդներ ունիս...:

— Կը զարմանաս, այնպէս չէ՞, պարոն Ռոտոլֆ, որ ամ-մօթ ունիմ... մինչև մահուանէս ետև...: Ա՜խ, Ա՜խ-ոռաչ իմ... ինչպէ՞ այդ բանը Լոզա՜ին վրա...:

Այս վշտալի ու դառն խօսքերը սաստիկ տրտմեցուցին Ռոտոլֆը:

Լա Կուալէօզ իր ընկերին տրտում երեսը դիտելով՝ ըսաւ անոր վեհերոտ ձայնով մը:

— Ներէ, պարոն Ռոտոլֆ, հարկ չէր այս տեսիլներս յիշել...: Դու զիս հետդ առիր որ խնտամ խօսիմ, և ահա ես քեզի ցաւալի բաներ կը պատմեմ... այո՛, խիստ ցաւալի. Տէր Աստուած, չգիտեմ ինչու համար այսպէս կը տրտմիմ, թէև ակամայ...: Երբէք այսօրեայ պէս երջանիկ եղած չէի, և սակայն անդադար աչքերս կը լեցուին... յուսամ որ չես մեղադրեր զիս, պարոն Ռոտոլֆ, այնպէս չէ՞: Վատն զի... կը տեսնես որ... տրտմութիւնս կղայ... ու շուտ մը կանցնի...: Հիմակ... նորէն մոռցայ... ալ չպիտի լամ...: Ահա, նայէ, պարոն Ռոտոլֆ... նայէ աչքերս...:

Եւ Գլէօր-տը-Մարի, ըմբոստ արտասր մը վանելու համար քանի մ'անգամ իր աչքերը գոցելէն ետև՝ մեծ... մեծ բացաւ զանոնք և սիրուն միամտութեամբ մը Ռոտոլֆին նայեցաւ:

— Գլէօր-տը-Մարի, խնդրեմ, մի՛ նեղեր ինքզինքդ... ուրախ եղիր եթէ ներսէդ կը բղխի ուրախ ըլլալ... տրտում, եթէ կուզես տրտում ըլլալ...: Աստուած գիտէ որ ես անգամ, երբեմն սև սև մտմտուքներ ունիմ... և շատ դժբաղդ կըլլամ երբ չդգացած ուրախութիւնս կեղծեմ:

— Իրաւ, պարոն Ռոտոլֆ, դո՞ւ ալ երբեմն տխուր ես:

— Անշուշտ. իմ ապագաս քուկինդ աւելի դեղեցիկ չէ... Ես ալ հայր ու մայր չունիմ... եթէ վաղը հիւանդ ըլլամ, ինչպէս ապրելիքս չգիտեմ...՝, օրն օրին վաստակածս ծսպառեմ:

— Գէշ կընես, իրաւ որ..., պարոն Ռոտոլֆ, շատ գէշ կընես — ըսաւ անոր Լա Կուալէօզ ծանր յանդիմանական ձայնով մը՝ որ Ռոտոլֆին քմծիծաղը շարժեց.— պարտաւոր էիր խնայութեան արկղը դնել ստակդ...: Ահա բոլոր իմ քաշածս ստակ չխնայելէ առաջ եկած է...: Երբ գործաւոր մը հարիւր ֆրանք պահեստի ունի՝ երբէք ասոր անոր բեխան չծռեր, չտաղնապիր... և շատ անգամ տաղնապը մարդուս միտքը կը մոլորէ:

— Ըսածդ շատ իրաւացի, շատ ճիշտ է, իմ փոքրիկ բարեմիտ տանտիկինս: Բայց հարիւր ֆրանք... ինչպէս գիրելու է հարիւր ֆրանք:

— Բայց, պարոն Ռոտոլֆ, շատ գիւրին է. արի՛ հաշիւն ընենք և պիտի համոզուիս...: Երբեմն օրն մինչև հինգ ֆրանք կը վաստակիս այնպէս չէ՞:

— Այնպէս է, այն պայմանաւ որ աշխատիմ:

— Բայց պէտք է ամէն օր աշխատիլ: Միթէ կարծես թէ վիճակդ ցաւալի՞ է: Սիրուն արհեստ մը կը բանիս... հոգ վահարի ներկարար ես... պէտք էր իբր զբօսանք դար այն գործը քեզի համար... ճշմարիտը կուզես, բնաւ ըրածդ խելք չէ, պարոն Ռոտոլֆ...— յարից Լա Կուալէօզ յանդիմանական ձայնով մը,— Գործաւոր մը երեք ֆրանքով կրնայ ապրիլ, և շատ աղէկ ապրիլ. անդին քեզի քառասուն սու կը մնայ, և ամսի զլուխ վաթսուն ֆրանք... ամիսը վաթսուն ֆրանք... այս ալ բաւական աղուոր գումար մ'է:

— Ճիշտ է, բայց չես հաշուեր որ փողոցները չափելն ու գործ մը չընելն ալ աղուոր բան է:

— Պարոն Ռոտոլֆ, նորէն կըսեմ, տղու չափ խելք չունիս...:

— Լա՜ւ, խելքս գլուխս պիտի ժողվեմ, փոքրիկ յանդիմանիչս. աղուոր խորհուրդներ կտաս ինձի... մտքէս անգամ չէին անցներ...:

— Իրաւ կըսես — հարցուց նորատի աղջիկը ձեռներն ի-

բարու զարնելով խնդալին — , չգիտես ո՞րչափ գոհ կընեն զիս . . . : Օրը քառասուն սու պիտի պահես , այնպէս չէ՞ :

— Միտքս դրի . . . օրը քառասուն սու պիտի խնայեմ — , ըսաւ Ռոտոլֆ ակամայ ժպտելով :

— Իրա՞ւ կըսես , իրա՞ւ :

— Քեզի խօսք կտամ . . . :

— Մանաւանդ խնայողութեանդ առաջին արդիւնքը տեսնելով՝ պիտի հպարտանաս . . . : Եւ այս բաւական չէ . . . բայց խօսք տուր որ ըսելիքիս վրայ պիտի չդժտիս . . . :

— Եւ կարծես թէ դաժան մարդ մ՚եմ :

— Ո՛չ , ամենևին . . . սակայն չգիտեմ եթէ պարտաւոր եմ :

— Այո՛ , պարտաւոր ես , Ֆլէօր-տը-Մարի , ամէն բան ըսելու ինձ . . . :

— Լա՛ւ ուրեմն , ըսեմ , դու որ . . . յայտնի կ՚երևիս , վիճակէդ բարձր մարդ մ՚ես . . դու ինչպէս օկրուհիին նման գինեասունները կը յաճախես :

— Եթէ այն կապլիոնը՝ չղայի քեզի հետ , Ֆլէօր-տը-Մարի , այսօր գիւղը գալու ուրախութիւնն ալ չէի վայելեր :

— Շատ իրաւ է , բայց ինչ հոգդ է , պարոն Ռոտոլֆ . . . : Ես՝ թէև փառք կտամ Աստուծոյ այս օրիս համար , բայց , Ճշմարիտը կուզես , սրտովին յանձն կառնում ուրիշ այսպիսի օրէ մը զրկուելու , եթէ գիտնամ որ կրնայ ինձ մը պատճառել քեզ :

— Օգո՛ւտ ըսէ , քանի որ ինձի տնտեսութեան ընտիր խորհուրդներ տուիր :

— Արդեօք անոնց պիտի հետևիս :

— Պատուոյս վրայ խօսք տուի քեզ : Օրը զէթ քառասուն սու մէկդի դնելու պիտի աշխատիմ . . . :

Նոյն պահուն Ռոտոլֆ ըսաւ կառապանին , որ Նարսէլ գեղէն անցեր էր , — Անշ կողմդ առաջին ճամբան բռնէ . Վիլիէ-լը-Պէլի մէջ տեղէն պիտի անցնիս և ապա ձախ կողմդ զարնելով՝ շիփշիտակ պիտի քշես շարունակ :

— Հիմակ որ ինչ գոհ ես , Ֆլէօր-տը-Մարի , — յարեց Ռոտոլֆ — կրնանք զբօսնուլ , ինչպէս որ արդէն ալ ըսի , օդին մէջ պալատներ շինելով : Ասի ստակով չէ , և յուսամ որ զիս չես յանդիմաներ այսպիսի ծախուց համար :

— Ո՛հ , հարկաւ , այդ ներելի է . . . : Օ՛ն , շինենք քու օդային պալատդ :

— Առաջ . . . քո՛ւկդ , Ֆլէօր-տը-Մարի :

— Նայինք իմ ճաշակս կը ճանչնես , պարոն Ռոտոլֆ :

— Փորձ մ՚ընենք . . . դիցուք թէ այս ճամբան . . . այս կըսեմ , որովհետև անոր վրայ ենք . . . :

— Իրաւունք ունիս , պէտք չէ հեռուն փնտռել :

— Ուրեմն դիցուք թէ այս ճամբան մեզ այս գեղեցիկ շատ հեռու՝ չքնաղ գեղ մը տանի :

— Այո՛ , աւելի հանգարտ կըլլայ :

— Այս գեղը բլրի մը գագաթ՝ ի վարն է և շատ մեծ ծառեր կան անոր մէջ :

— Անոր մօտ առու մ՚ալ կայ . . . :

— Այո՛ . . . , առու մը : Գեղին ծայրը սիրուն ագարակ մը կերևի . տանկին մէկ կողմը մրգաստան մը , միւս կողմն ալ ծաղկաւէտ պարտէզ մը :

— Այս ագարակն իրը թէ քոնն է և այն տեղ կերթանք :

— Անշո՛ւշտ :

— Ո՛ւր որ կաթ ալ կրնանք ունենալ :

— Է՛հ , կաթ միայն . չես ըսեր նաև սեր և թարմ հաւկիթներ :

— Եւ մե՛նք կերթանք հաւնոցէն առնելու :

— Հարկաւ մենք :

— Գոմն ալ կը մտնենք կովերը տեսնելու :

— Տարակո՞յս մի կայ :

— Նոյնպէս կաթնարանն ալ կ՚երթանք :

— Այո՛ , կաթնարանն ալ :

— Եւ աղաւնոցը :

— Եւ աղաւնոցն ալ :

— Ի՛նչ երջանկութիւն։

— Բայց ձգե՛ որ սա ագարակին նկարագիրն ընեմ։

— Լա՛ւ։

— Գետնայարկը ընդարձակ կոհանոց մը կայ ագարակին բանուորներուն համար, և սեղանատուն մը տանտիկինին համար։

— Տունը կանաչ շերդոյրներ (persienne) ունի... քանի՞ շէն են, այնպէս չէ՞, պարոն Ռոտոլֆ։

— Աղէկ մտածեցիր կանաչ շերտոյրները... քեզի համամիտ եմ... իրաւ որ կանաչ շերտոյրի պէս զուարթուն բան չկայ...։ Բնականապէս ագարակի տիրուհին (fermière) քու հօրաքոյրդ պիտի ըլլայ։

— Բնական է, և 'ի հարկէ շատ ընտիր կին մը պիտի ըլլայ։

— Ամենընտիր, քեզ մօր պէս պիտի սիրէ...։

— Այո՛, ընտիր հօրաքոյր մը, և քանի հաճելի է մէկէ մը սիրուիլ։

— Եւ դու ալ անշուշտ սիրէիր պիտի զինքը։

— Ո՛հ, — դոչեց Ֆլէօր-տը-Մարի ձեռները միացնելով և անպատում երջանկութեան զգացումով աչքերը դէպ 'ի երկին սևեռեց — Ո՛հ, պիտի սիրէի զինքը, և անոր հետ պիտի աշխատէի, կար կարէի, ճերմակեղէնները տեղաւորէի, լաթ լուայի, ձմեռուան համար պտուղներ պիտի չորցնէի և վերջապէս բոլոր տան հոգը պիտի տանէի...։ Երբէք իմ ծուլութենէս զանգատելու առիթ մը չպիտի տայի, հաւատա՛ եղիր... նախ՝ առտու կանուխ...։

— Բայց փոքր ինչ սպասէ, Ֆլէօր-տը-Մարի... ո՛րչափ անհամբեր ես... թո՛ղ որ սա տան նկարագիրն աւարտեմ։

— Աւարտէ՛, աւարտէ՛, պարոն նկարի՛չ յայտնի կը տեսնուի որ հովահարներու վրայ սիրուն դաշտանկարներ ընելու սովորութիւնն ունիս — ըսաւ լա Կուալէօզ խնտալով։

— Պզտի լեղուանի... թո՛ղ կըսեմ սա տունս աւարտելու...։

— Իրաւ է։ շատ կը խօսիմ, բայց որչափ զուարճալի է ձեր խօսակցութիւնը...։ Օ՛ն, շարունակէ՛, պարոն Ռոտոլֆ, ականջս քեզի է, լմեցուր ագարակի տիրուհին տունը։

— Սենեակդ վերի յարկն է։

— Իմ սենեակս, ինչ խնդութիւն... Օ՛ն, տեսնենք սա սենեակս, տեսնենք, ինչպէս բան է։ — Եւ դեռահաս աղջիկը Ռոտոլֆին աւելի մօտեցաւ, իր մեծ աչքերը աղէկ մը և հետաքրքրութեամբ բանալով։

— Սենեակդ երկու պատուհան ունի՝ որ ծաղկաւէտ պարտէզին և առուակէն ոռոգուած մարգագետնին վրայ կը նային։ Առուակին միւս կողմը բլուր մը կայ, շաղանակի հին ծառերով լի, և որոց մէջ տեղը եկեղեցիին զանգակատունը կը տեսնուի։

— Ո՛րչափ սիրուն է... ո՛րչափ սիրուն է, պարոն Ռոտոլֆ, ուր էր թէ նոյն տեղ գտնուէի։

— Երեք չորս կովեր խոտ կուտեն մարգին մէջ որ պարտէզէն գժնիկի ցանկով մը զատուած է։

— Եւ իմ պատուհանէս կովերը պիտի տեսնեմ։

— Ա՛նշուշտ։

— Անոնցմէ մէկը իմ սիրելիս պիտի ըլլայ, այնպէս չէ՞, պարոն Ռոտոլֆ, անոր գեղեցիկ մանեակ մը պիտի շինեմ զանգակիկ մը կախելով, և իմ ափիս մէջ իր կերակուրն ուտելու պիտի վարժեցնեմ։

— Շատ դիւրաւ կրնայ վարժիլ։ Բոլորովին սպիտակ, մաղաշ պիտի ըլլայ և անունը Մէ-ղէդ։

— Ա՛հ, աղուոր անուն է այդ, սիրուն Մէ-ղէդ, ո՛րչափ պիտի սիրեմ քեզի։

— Աւարտենք սենեակդ։ Ֆլէօր-տը-Մարի, գիտե՞ս սենեկիդ որմերուն վրայ ինչ պիտի ըլլայ, պարսիկ կտաւ, և նոյն տեսակ վարագոյրներ, մեծ վարդենի մը և ահագին այծի տերև մ'այս կողմէն տան պատերը կը ծածկեն և փեղկերդ կը պատեն, այնպէս որ ամէն առտու փունջ մը հան-

լու համար ձեռքդ կ'երկնցընես ու ցօղուն վարդեր և այծի տերևներ կը հաւաքես։

— Ա՛հ, պարոն Ռօտոլֆ, ինչ վարպետ պատկերհան մ'ես։

— Հիմակ նայինք որ ինչպէս պիտի անցընես օրերդ։

— Նայինք։

— Առտու հօրաքոյրդ կղայ, և ճակտիդ գորովալիր համբոյր մը տալով՝ կարթնցնէ. ապա սիրհ մը տաք կաթ կը բերէ քեզի որ խմես, վասն զի կուրծքդ տկար է, խեղճ աղջիկս։ Անկողնէն կ'ելնես ադարակին մէջ պտոյտ մը կընես, Միւզէդը, վառեկներն, սրտակից աղաւնիներդ, պարտէզին ծաղիկները... կը տեսնես։ Ծամն ինքին զեղադրութեան դասատուդ կղայ...։

— Ի՞նչ, դասատո՞ւս։

— Անշուշտ խելքդ կը հասնի որ պէտք է կարդալ, գրել, համրել սորվիլ, որպէս զի հօրաքեռդ օգնես ադարակին հաշիւները բռնելու համար։

— Շատ ճիշտ է, պարոն Ռօտոլֆ, խելքս ո՞ւր է... հարկաւ գիր գրել սորվիլ պէտք եմ հօրաքեռս օգնելու — ըսաւ թշուառ աղջիկը ծանր կերպով մը, և այնչափ համակուեր էր այս անդորը կենաց զեղաշիծաղ պատկերները տեսնելով՝ որ զանի իբր իրական բան մը կը համարէր։

— Դաս առնելէն ետև՝ տունը կը հաւքըտես, կամ զեղջական սիրուն զտակ մը կը բանիս...։ Ծամը երկուսին մօտ գրիդ կը պարապիս, և ապա հօրաքեռդ հետ դուրս կելնես ժուռ դալու, ամառը հնձողները տեսնելու, աշնան՝ մշակները, լաւ մը յոգնելէն ետև կը դառնաս և դաշտէն ափ մը լեցուն խոտ կ'առնես հետդ կը բերես քու սիրական Մէզդէնք համար։

— Վասն զի մարդէն պիտի դառնանք, այնպէս չէ՞, պարոն Ռօտոլֆ։

— Հապա՛, մանաւանդ որ փայտէ կամուրջ մը կայ գետակին վրայ։ Ի դարձին բնականապէս ժամը վեց կամ եօթ

կը լլայ. այն ատեն՝ քանի որ դիշերները քիչ մը զով են, ադարակին մեծ խոհանոցին մէջ աղուոր կրակ մը կը վառի հրճուելի. կերթաս այն տեղ տաքնալու և վաստակաբեկ մըշակներուն հետ, որ կընթրեն, պահ մը խօսակցելու։ Իսկ յետոյ դու ալ հօրաքեռդ հետ կերակուրդ կուտես։ Երբեմն գեղին երէցը կամ դրացի ադարակպան մը ձեղի սեղանակից կը լլայ։ Իսկ անկից ետքն ալ կը կարդաս կամ կարդ կը կարես, մինչդեռ հօրաքոյրդ թղթի զբաղած է։ Ծամը տասին ճակտէդ կը պաղնէ ճա՝ և դու սենեակդ կը քաշուիս. հետևեալ օրը մի և նոյն գործողութիւնը կ'սկսիս։

— Մարդս հարիւր տարի ալ ապրի այդ վիճակին մէջ, վայրկեան մը չձանձրանար, պարոն Ռօտոլֆ...։

— Բայց այդ դեռ բան մը չէ. կը մոռնաս կիրակի և տօն օրերը։

— Ի՞նչ կընեն այն օրերը, պարոն Ռօտոլֆ։

— Կը հագուիս կը շքուիս, գեղջուկն սիրուն շրջազգեստ մը կը դնես, և անոր հետ չքնաղ կլոր գտակներ՝ որ քեզի շատ կը վայելեն. հօրաքեռդ հետ միաձի կառքդ կը հեծնես, ադարակին մանչը ծաղն ալ առնելով՝ և գիւղին ձայնաւոր պատարագը տեսնելու կերթաս։ Իսկ ամառը, հօրաքեռդ հետ մօտակայ վիճակներուն բոլոր հանդէսները կը յաճախես անվրէպ։ Այնչափ բարեդէմ, անուշ և փոքրիկ սիրուն տընտեսուհի մ'ես, հօրաքոյրդ այնչափ կը սիրէ քեզ, գեղին երէցն այնչափ քու գովեստդ կընէ, որ շրջակայ ադարակապանները (fermier) քեզի հետ պարել կուզեն, վասն զի միշտ այս կերպով կեկսին ամուսնութիւնները...։ Ուստի փոքր առ փոքր դեռահաս տղաքներէն մէկը աչքդ կը բռնէ... և...

Ռօտոլֆ լա Կուալէօզին ըուլթեան վրայ զարմանալով՝ անոր երեսը նայեցաւ։

Թշուառ աղջիկը հազիւ թէ կարող էր իր հեծկլտանքը զսպել...։ Պահ մը՝ Ռօտոլֆին խօսքերէն խաբուելով՝ ներ-

ջան մոցեր էր, սակայն նորէն անոր յիշատակը սկսեր էր սիրտը ճմլել, և իր արդի վիճակին դժնէութիւնն աւելի զգալի երևիլ այն անդորր ու դեղաճիծաղ կենաց երազին առջև։

— Ի՞նչ ունիս, Ֆլէօր-տը-Մարի։

— Ա՛հ, պարոն Ռոտոլֆ, ակամայ սիրտս սաստիկ ցաւցուցիր... վայրկեան մը այդ դրախտը իրական բան մը կարծեցի...։

— Բայց, խեղճ աղջիկ, այս դրախտը իրօք կայ... կառապան, կեցէ՛ր...։ Հիմակ նայէ չորս դին...։

Կառքը կայ առաւ։

Լա Կուալէօզ անզգայօրէն գլուխը վերցուց և ինքզինքը բլրակի մը կատարը գտաւ. Ի՜նչ զարմանք և ապշութիւն գրաւեցին զինքը...։ Սիրուն դեղը բլրակին դար 'ի վարը շինուած, աղարակը, արօտը, դեղեցիկ կովերը, առուակը, շաղանակենին, հեռակայ եկեղեցին, բոլոր այս պատկերն իր աչքին առջևն էր, բան մը պակաս չէր, մինչև անդամ Մէ-ղէդ այն տեղն էր, դեղեցիկ սպիտակ երինջ մը, որ լա Կուալէօզին ապագայ մաերիմը պիտի ըլլար...։ Այս չքնաղ տեսարանիս վրայ հոկտեմբեր ամսեան պայծառ արև մը կը զարնէր...։ Շաղանակիներուն դեղին ու ծիրանի տերևները կապուտակ երկնից վրայ կը նկարուէին։

— Ուրեմն, հիմակ ի՞նչ կըսես, Ֆլէօր-տը-Մարի, մթէ քաջ նկարիչ մ'եմ—, հարցուց Ռոտոլֆ ժպտելով։

Լա Կուալէօզ անոր երեսը կը նայէր անձկալի զարմանքով մը։ Իր տեսածը գրեթէ դերբնային բան մը կերևէր իրեն։

— Պարոն Ռոտոլֆ, այս ի՞նչ բան է... Տէր Աստուած, մթէ երազ է... կը գողամ... ինչպէս, բոլոր ըսածներդ...։

— Այո՛, աղջիկս, բոլորովին պարզ ու գործադրելի է...։ Աղարակիս տիրուհին իմ ստնտուս է, այս տեղ

ՁԾցեր եմ...։ Այս առաւ կանուխ անոր գրեցի որ գամ պիտի զինքը տեսնելու, ես ալ քեզի բնական պատկեր մը կը նկարէի։

— Ճիշդ է, պարոն Ռոտոլֆ, արտօրէն բան մը չկայ այս բանին մէջ— ըսաւ լա Կուալէօզ խորին հառաչ մը հանելով։

Ռոտոլֆին՝ Ֆլէօր-տը-Մարին տարած աղարակը Պուգվալ գիւղին դրսի ծայրը շինուած էր, որ Էղուանէն երկու մղոն հեռի՝ փոքրիկ, առանձին և անշէն թեմ մ'է։ Կառքը՝ Ռոտոլֆին հրամանին համեմատ՝ զառ 'ի վայր ճամբէ մ'ի-ջաւ և երկար ծառուղի մը մտաւ՝ որուն երկու կողմը կեբասենիներ և տանձենիներ կային, և անձայն կը գլորէր բարակ և ցանցառ գալարէ օթոցի մը վրայ, որով առ հասարակ ծածկուած են մտակայ ճամբաները։

Ֆլէօր-տը-Մարի տխուր ու լին՝ վշտալի տպաւորութեան մը ներքև կը գտնուէր ակամայ, և Ռոտոլֆ անոր պատճառն ըլլալուն գրեթէ կը ցաւէր։

Քանի մը վայրկեանէ ետքը՝ կառքն աղարակին գաւթին մէջ դառն առջևէն անցաւ, իր շաւիղը շարունակեց դէպ ուղիղ նշդարի խիտ հովանոցի մը տակէն և կանգ առաւ փայտաշէն դրանդի մը (porche) մօտ՝ որ աշնահար կարմիր տերևներով հաստ որթատունկէ մը կիսովին ծածկուած էր։

— Ահա հասանք, Ֆլէօր-տը-Մարի — ըսաւ Ռոտոլֆ — գոհ չե՞ս։

— Այո՛, պարոն Ռոտոլֆ, գոհ եմ... բայց ինձ կերևի որ հիմա աղարակի տիրուհին առջևը պիտի ամչնամ և պիտի չհամարձակիմ անոր նայելու...։

— Եւ ինչո՞ւ համար, աղջիկս։

— Իրաւունք ունիս, պարոն Ռոտոլֆ... քանի որ զիս չճանչեր նա։

Եւ լա Կուալէօզ հառաչ մը ճնշեց։

Կերևէր որ Ռոտոլֆին գալուն կսպասէին։ Կառապանը կառքին դռնակը կը բանար, երբ շուրջ յիսուն տարու կին

մը, որ Բարիզի շրջակայ ագարակի հարուստ տիրուհիներուն պէս հագուեր, ու, թէև արտուամ, անուշ և հրաւիրելի դէմք մ'ունէր, դրանդին վրայ երևցաւ և ակնածու շտապով մը Ռոտոլֆը դիմաւորեց։

Լա Կուալէօզ կաս կարմիր եղաւ և պահ մը վարանելէն ետև՝ կառքէն վար իջաւ...։

— Բարի լոյս, իմ բարի ծօրժ տիկին...— ըսաւ Ռոտոլֆ ագարակի տիրուհիին — կը տեսնեմ, ուրշափ ժամապահ եմ...։

Ցետոյ կառապանին դարձաւ ու անոր ձեռքը ստակ տալով՝

— Դու մի՛ սպասեր, Բարիզ դարձիր։

Կառապանը՝ փոքրիկ յոյր մարդ մը, գլխարկ մը գրեր էր որ մինչև աչքը կիջնէր, և վատաւակ մը՝ (karrik) որուն մշտակպատ օձիքը գրեթէ բոլորովին դէմքը գոցեր էր. ստակը դրպանը նետեց, ձայն մը չհանեց, իր նստարանն ելաւ, ձին մտրակեց, և դալարուտ ուղիին մէջ շուտ մ'անհետ եղաւ։

Ֆլէօր-տը-Մարի անհանդարտ, այլայլուն, գրեթէ խուսվալի դէմքով մը Ռոտոլֆին մօտեցաւ և ցած ձայնով մ'անոր ըսաւ, այնպէս որ ծօրժ տիկինը չլսեց։

— Տէր Աստուած, պարոն Ռոտոլֆ, ներէ՛... կառքը ճամբեցիր...։

— Հապա՛...։

— Բայց օկրուէլին։

— Ի՞նչ կայ։

— Բա՛բէ... այս իրկուն պէտք է որ իր տունը դառնամ... ո՛հ, պէտք է անվրէպ դառնալ... թէ ոչ... զիս դողի տեղ պիտի դնէ...։ Հագուստներս անորն են... և պարտք ալ ունիմ...։

— Հոգ մ'ըներ, աղջիկս, ինձ կը վայլէ ներում խնդրել քենէ...։

— Ներո՛ւմ... և ինչ պատճառաւ։

— Անոր համար որ առաջուց իմաց չտուի քեզ թէ օկրուհիին ստակ մը տալիք չունիս... թէ կրնաս հոս բնակիլ եթէ կամիս, և թէ այն լաթերդ փոխելով՝ տիկին ծօրժին տալիքները հագնիլ։ Ան ալ գրեթէ քու հասակդ ունի, և պէտք եղածը պիտի հոգայ... կը տեսնես որ արդէն հօրաքեռ մը խնամքը քու վրադ տանելու կսկսի։

Ֆլէօր-տը-Մարի կարծէր թէ կ'երազէ, մէկ Ռոտոլֆին՝ և մէկ ագարակի տիրուհիին կը նայէր և չէր կարող լսածին հաւատալ։

— Ի՞նչ կըսէք — վրայ բերաւ աղջիկը այլայլուն ու թրթռակ ձայնով մը — ինչ, ալ Բարիզ չպիտի դառնամ... այս տեղ պիտի մնամ, տիկինը... հրաման կտա՞յ արդեօք... միթէ իրա՞կան է... մեր երազած օդային պալատը։

— Այո՛, իրացաւ այն երազը։

— Ո՛չ, ա՛հ, ո՛չ, շատ գեղեցիկ... շատ մեծ երջանկութիւն մ'է այս ինձի համար։

— Երբէք մարդուս երջանկութիւնը ծայրալեր չէ, Ֆլէօր-տը-Մարի...։

— Ա՛հ, կաղաչեմ, պարոն Ռոտոլֆ... մի՛ խաբեր զիս, մեծ կըլլայ ցաւս եթէ...

— Իմ սիրելի աղջիկս, հաւատա՛ ինձ — ըսաւ Ռոտոլֆ մի՛ և նոյն սիրալիր ձայնովը, բայց այնպիսի ազնուաշուքնչ շեշտով մը զոր առաջին անգամ Ֆլէօր-տը-Մարին կը լսէր,— նորէն կըսեմ... ազատ ես, եթէ կամիս, այժմէն տիկին ծօրժին մօտ վարել այն անդորրաւէտ կեանքը որուն պատկերը քիչ մ'առաջ քեզ կը հմայէր...։ Թէև տիկին ծօրժը իրօք հօրաքոյրդ չէ, բայց դորովալիր պիտի խնամէ քեզ. Թող ագարակին բանուորները քեզ իբր անոր եղբօր դուստրը նկատեն, և այս թեթև սուտը կրնայ կացութիւնդ աւելի հեշտալի ընել... կ'երդուիմ... եթէ կը հաճիս, Ֆլէօր-տը-Մարի, քու վաղեմի երազդ կարող ես կատարել։ Երբ ագարակի փոքրիկ տիրուհիի մը հագուստն հագնիս — յարեց Ռոտոլֆ ժպտելով— քեզ քու ապագայ մտերիմդ, Մի՞-

ղէջէն, այն սպիտակ սիրուն երնջին պիտի տանինք, որ անտարակոյս խոստացած մանեկիդ կսպասէ...: Նոյնպէս սիրական աղաւնիներուդ հետ ծանօթանալու պիտի երթանք, ապա կաթնարանն ալ. վերջապէս ապարակին չորս կողմը պիտի պտըտինք, վասն զի կուզեմ խոստումս կատարել:

Ֆլէօր-տը-Մարի ձեռներն ուժգին իրարու փայտուց: Զարմանք, ուրախութիւն, երախտագիտութիւն և ակնածութիւն իր գեղահրաշ դէմքին վրայ նկարուեցան. աչերն արտասուքով լցան, և ըսաւ.

— Պարոն Ռոտոլֆ... ուրեմն դու Աստուծոյ հրեշտակներէն մին ես, որ գժբաղդներու բարիք կընես առանց ճանչելու, և զանոնք ապականութենէ և թշուառութենէ կազատես:

— Իմ խեղճ աղջիկ — պատասխանեց Ռոտոլֆ խորին մելամաղձութեան և անպատում բարութեան ժպիտով մը՝ — թէև երիտասարդ եմ, բայց արդէն շատ աղէտներ կրեր եմ, զաւակ մը կորուսի որ այժմ քու տարիքդ պիտի ունենար...: ուստի կընտս մեկնել թշուառներու համար ունեցած կարեկցութիւնս... և մասնաւորապէս քեզի համար: Ֆլէօր-տը-Մարի, կամ լաւ ևս ըսեմ, Մարի, դնա ծօրժ տիկնոջ հետ...: Այո՛, Մարի, այսուհետև այս անունը պահէ, քեզի պէս անուշ և սիրուն անուն մ'է: Մեկնելէս առաջ դեռ ևս կը խօսակցինք միասին և զոհ սրտով պիտի բաժնուիմ քեզմէ... գիտնալով որ դու ալ զոհ ես:

Ֆլէօր-տը-Մարի բան մը չըսաւ, կիսովին ծունր կրկնեց, Ռոտոլֆին ձեռքն առաւ, զոր քաշելէն առաջ՝ համեստ ու շնորհալի կերպով մ'իր շուրթերուն տարաւ ակնածութեամբ. յետոյ ծօրժ տիկնոջ մօտ դնաց, որ անհնարին հետաքրքրութեամբ զանի կը նկատէր:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՄԸՐՖ ԵՒ ՌՕՏՈԼՖ

Ռոտոլֆ դէպ 'ի ապարակի բակը դիմեց և այն տեղ գտաւ այն բարձրահասակ մարդը՝ որ առջի իրկուն իրը ածխագործ ծպտեալ՝ Թոմ ու Սառային դալուստն իմաց տալու համար եկեր էր:

Մըրֆ, այս է յիշեալ անձին անունը, շուրջ յիսուն տարեկան էր. քանի մը ճերմակ մազեր արծթի պէս կը փայլէին երկու փոքրիկ շէկ դիսակի մէջ, որ կուս կունտ դանկին երկու կողմն զանգրեր էին. իր լայն, զուսնաւոր դէմքը բոլորովին ածիլուած էր, բաց 'ի խիստ կարճ աշխէտ կիսմօրուսէն, որ ականջէն վար չէին իջներ և լեցուն այտերուն վրայ մահկի ձևով բոլորած էին: Թէև տարուօք ու դիրուկ, Մըրֆ թեթևաշարժ էր ու կորովի: Մաղձոտ կերպարան մ'ունէր, բայց բարեսէր ու ժպիրհ կերևէր. սպիտակ փողպատ մը կապեր էր, մեծ բաճկոն մը, և երկարեզը սև թիկնոց մը դրեր. իր կանաչկեկ գորշ վարտիքը բարձպանին (guêtre) կտաւէն շինուած էր և հազիւ մինչև ծունկը կը հասնէր: Մըրֆին հագուստն ու առնի կտրուածքը կը յիշեցին այն կատարեալ տիպարը, զոր անգղիացիները տոհմիկ ապարակապան կանուանեն: Փութանք յայտնել որ Մըրֆ անգղիացի էր և տոհմիկ (squire), բայց չէ թէ ապարակապան:

Այն միջոցին որ Ռոտոլֆ բակը հասաւ Մըրֆ ճամբորդութեան փոքրիկ կառքի մը պարկին մէջ զգուշութեամբ նոր սրբած զոյգ մը հրացանակ կը տեղաւորէր:

— Այդ հրացանակները որո՞ւ համար կը պահես, — ըսաւ անոր Ռոտոլֆ:

— Այդ իմ դիտնալիք բանն է, տէր իմ — ըսաւ Մըրֆ կառքին բազմոցնէն (marche-pied) իջնելով:

— Դուք ձեր գործին՞ նայեցէք, ես ալ իմ գործիս:

— Ձիերն ո՞ր ժամուան համար ապսպրեցիք։

— Ձեր հրամանին համեմատ՝ մութ կոխելուն։

— Մթթէ այս առտու եկար։

— Ֆամ ութին։ Ժօրժ տիկինն ատիկեցաւ ամէն բան ժամանակին պատրաստելու։

— Սրտնեղութիւն (mauvaise humeur) մ'ունիս Մըրֆ... միթէ ինչ զոհ չե՞ս։

— Տէր իմ, արդեօք կտրելի չէ՞ այդ ձեր մտքը դրած պաշտօնը կատարել առանց այնչափ վտանգներ դիմադրաւելու։

— Քանի որ նպատակս ճանչել, գնհատել ու դատել է այն մարդիկն առանց կասկած մ'ազդելու, պէտք չէ՞ որ ա-նոնց հաղուստը, սովորութիւններն ու լեզուն գործածեմ։

— Այո՛, պէտք է, տէր իմ, բայց այս ալ իրաւ է որ երէկ իրկուն ձեր բարկութեան այրեցուց անհնազանդութեամբս. երբ Ժօրժ տիկնոջ տղուն վրայ քանի մը լուր ըստանալու մտօք, Միջնաքաղքին այն գարշելի փողոցը մտանք Պրա-Ռուժք որոնելու համար, և անոր խցիկին ճամբուն մէջ առջևդ ելնող աւազակին հետ կռուելու ատենդ թողուցիք որ ձեզի օգնեմ։

— Պարոն Մըրֆ, ըսել կուզես որ իմ ուժէս և քաջութենէս կը կասկածիս։

— Այդ խօսք է, արդէն փորձով գիտեմ որ թէ մին և թէ միւսն ունիք։ Փառք Աստուծոյ, Գերմանիայի Պէրդրանը, Ֆլադման՝ ձեզի զինակցութիւն սորվեցուց. Ռէմզկրթի Գըրապը կռփամարտութիւն (boxer). Բարիզի Լաղուրը Սաֆոթ և արկոթի լեզուն, քանի որ ասոնք կարևոր էին ձեր վտանգաւոր արշաւանաց համար։ Անվեհեր էք, պողպատիկ ջղեր ունիք, և թէև փափկասուն ու նիհար, կարող էք յաղթահարել զիս, ինչպէս արշաւի ձին կը յաղթահարէ բեռկիր ձի մը... ասոր տարակոյս չկայ...։

— Ուրեմն, ինչո՞ւ կը վախնաս։

— Կը պնդեմ, տէր իմ, որ անվայել է ձեզ որ և է ա-

պիրատի մը հետ կռուի բռնուիլ։ Թողնանք պատուաւորմարդու մ'եղած դժպատեհութիւնը (inconvenance), որ ածխով երեսը կը մրոտէ և սատանայ կը դառնայ... իմ ալեզարդ ղլխիս, պիրութեանս և զգօնութեանս չնայելով. իրաւ է որ իբր լարախաղաց կը ծպտիմ, ձեզի օգտակար ըլլալու համար, սակայն ըսածս ետ չեմ առնուր...

— Ո՛հ, քաջ կը ճանչեմ քեզ, ծերուկ Մըրֆս. երբ երկաթէ զանկիդ տակ գաղափար մը բնեռի, երբ անձնուիրութիւնը քու հաստատ և արի սրտիդ մէջ դրոշմուի, սադանն անգամ պարապ տեղ իր ակռաներն ու ճիրանները պիտի մաշէ զանոնք ջնջելու համար...։

— Ձիս կը շոյէք, տէր իմ, բան մը կը խորհիք...։

— Հոգ մ'ընէր...։

— Անշուշտ խենդութիւն մը, տէր իմ։

— Խեղճ Մըրֆս, անպատեհ ժամ կընտրես զիս խրատելու։

— Ի՞նչ է պատճառը։

— Վասն զի հպարտ եմ այսպիսի երանելի ժամ մը վայելելուս... ահա այս տեղն եմ...։

— Այս տեղ ուր երախտիք մ'ըրիք, գիտեմ. համեստ մշակներ վարձատրելու, կրթելու և խրախուսելու մտօք այս վայրս հաստատած անմոռանալի ֆիրմա, անբաւ բարերարութիւն մ'է սոյն երկրիս համար։ Ընդհանրապէս ուրիշներն արջառներ խնամելու կաշխատին, դուք մարդիկը հրահանգելու կը զբաղիք... ասի սքանչելի է...։ Ժօրժ տիկինն այս հիմնարկութեան դլուխ կանգնեցիք, ըսելիք չկայ... ազնիւ, քաջասիրտ կին մ'է...։ Առաքինութեան հրեշտակ մ'է... հրեշտակ մը...։ Սիրտս դիւրազդած չէ, բայց անոր աղէտքն արտասուքս շարժեցին...։ Իսկ ձեր նոր պաշտպանած օրիորդը... ճիշտը... չէ, չիսօսինք անոր վրայ, տէր իմ...։

— Ինչո՞ւ համար, Մըրֆ։

— Տէր իմ, ձեզի յարմար երևցածը կընէք...։

— Ի՞նչ որ արդար է կընեմ— ըսաւ Ռոտոլֆ անհամբերութեան նշան մը ցոյց տալով։

— Այո՛, ինչ որ արդար է... ըստ ձեզ...։

— Ինչ որ արդար է Աստուծոյ և խղճիս առջև — վրայ բերաւ Ռոտոլֆ խստութեամբ։

— Տէր իմ, զոյգենք այս խօսքը, իրարու վրայ չպիտի հասկընանք։ Նորէն կըսեմ, վերջ տանք։

— Ես կը հրամայեմ քեզ որ խօսիս — գոչեց Ռոտոլֆ տիրաբար։

— Երբէք առիթ տուած չեմ Ձեր վսեմութեան ինձ հրամայելու որ լռեմ... յուսամ որ խօսելու ալ չէք հրամայեր — պատասխանեց Մըրֆ գոռոզաբար։

— Պարոն Մըրֆ — գոչեց Ռոտոլֆ սրտմտելի շեշտով մը։

— Տէր իմ։

— Արդէն գիտես, պարոն, որ կամաւոր ըռութիւնը չեմ սիրեր։

— Վսեմափայլ տէր, ներեցէք, բայց վայել է ինձ երբեմն լռել, — ըսաւ Մըրֆ խստիւ։

— Եթէ կը խոնարհիմ քեզի հետ ընտանեբար խօսելու, այն պայմանաւ է, պարոն, որ դու ալ բարձրանաս հետս անկեղծօրէն խօսելու։

Անհնար էր նկարագրել Ռոտոլֆին տիրական վեհ կերպարանն՝ երբ այս վերջին խօսքերն արտասանեց։

— Ցիսուն տարեկան եմ և ազնուական։ Անարժան է Ձեր վսեմութեան հետս խօսիլ այսպէս։

— Լռէ...։

— Տէր իմ։

— Լռէ։

— Ձեր վսեմութիւնը ակամայ կստիպէ պատուաւոր մարդ մը՝ իր ըրած ծառայութիւնները յիշելու... ըսաւ ցուրտ կերպով մ'անդրադարձին։

— Քու ծառայութիւնն՞ը դ մի, միթէ լսելի չե՞մ վճարեր դանոնք։

Հարկ է ըսել, Ռոտոլֆի այս դժպհի բառերուն չէր տուած այն անուանարկ իմաստը, որով Մըրֆ վարձկանի մը տեղ կրնար անցնիլ. բայց սա այնպէս ծուռ մեկնեց։ Ամօթէն ծիրանի գոյն առաւ, իր երկու բուռները տրտմագին սրտմտութեամբ ճակտին զարկաւ. յետոյ յանկարծական դարձ մ'ընելով՝ աչքը Ռոտոլֆին վրայ նետեց, որուն ազնիւ դէմքը նոյն պահուն դժնեայ ու բուռն արհամարհութենէ կարկամեր էր, և այլայլած ձայնով մ'ըսաւ գողտրիկ վշտակցութեան հառաչ մը ճնշելով։

— Տէր իմ, սթափեցէք... ինքզինքնիդ կորուսեր էք...։

Այս խօսքերը Ռոտոլֆին բարկութեան չափը լցին. իր ակնարկը վայրենական փայլ մ'առաւ. շրթերը մոխիր դարձան և սպառնալի շարժումով մը դէպ 'ի Մըրֆ երթալով՝ գոչեց։

— Դու ինչպէս կը յանդգնիս...

Մըրֆ ետ քաշուեցաւ և իբր ակամայ աշխուժով մ'ըսաւ.

— Տէր իմ, տէր իմ, ՅԻՇԵՑԷՔ ԱՆԳԱՄ ՄԸ ՑՈՒՆՎԱՐԻ 13Ը։

Այս խօսքը Ռոտոլֆին վրայ գիւթական արդիւնք մ'ունեցաւ։ Իր դէմքն որ բարկութենէ կրճատեր էր, պարզեցաւ։ Աչքը Մըրֆին յարեց, գլուխը ծռեց, և յետոյ պահ մը լուռ կենալէն ետև՝ այլայլուն ձայնով մը մրմնաց։

— Ա՛հ, պարոն, անգութ ես... թէև կը յուսայի որ իմ ապաշաւս... իմ խղճիս խայթը...։ Եւ նորէն դու... դո՛ւ ես...։

Ռոտոլֆ չկրցաւ աւարտել, ձայնը մարեցաւ. քարէ կոյտի մը վրայ ընկաւ նստաւ և իր ձեռքին մէջ գլուխը պահեց։

— Տէր իմ— գոչեց Մըրֆ վշտագին — բարեսէր տէրդ իմ, ներեցէք, ներեցէք ձեր հաւատարիմ ու ծեր Մըրֆին։ Համբերութիւնս հատնելով՝ և զայրոյթիդ հետևութենէ վախնալով, չէ թէ ինձի համար... աւա՜ղ, այլ քեզի համար, այն խօսքն ըսի... և ըսի առանց բարկութեան, առանց յանդիմանութեան, ակամայ և արդահատութեամբ ըսի...։

Տէր իմ, դիւրագրգիռ ըլլալս յանցանք մ'է ինձ... Աստուած իմ, ես, ես միայն կարող եմ ճանչել բնաւորութիւնդ, ես որ մանկութենէդ 'ի վեր քովէդ չհեռացայ...: Կաղաչեմ, ըսէք որ այն դժնդակ օրը յիշելուս կը ներէք ինձ... բա՛ր է, արդէն քանի քանի անգամ քաւուած...:

Ռոտոլֆ գլուխը վերուց, շատ տժգոյն էր, և անուշ ու տրտմագին ձայնով մ'իր ընկերին ըսաւ.

— Բաւական է, բաւական, իմ ծերունի բարեկամս, շնորհակալ եմ որ մէկ բառով այս իմ դժպհի զայրոյթս դադրեցուցիր. ներում չեմ խնդրեր ես քեզնէ ըսած ծանր խօսքերուս համար. քաջ գիտես որ «էրրոր շրնէրէն շատ հեռու է», ինչպէս կըսեն մեր քաղքին բարեմիտ մարդիկը: Ցիմար էի, ա՛լ խօսքը չընենք:

— Ափսո՛ս, բաւական առեն տրտմութիւնդ չպիտի փարատի...: Քանի՞ մեղապարտ եմ...: Իմ միակ փափաքս է տեսնել անձկութեանդ դադարումը... և ես իմ անպիտան դիւրագրգռութեամբս քեզ անոր մէջ կընկղմեմ: Է՛հ, թշուառականս, ինչ օգուտ ունի բարեկիր մարդ մ'ըլլալ և ճերմակ մազեր ունենալը եթէ ոչ համբերութեամբ տանիլ այն յանդիմանութիւններն որոց արժանի չեմ:

— Լա՛ւ, լա՛ւ... իմ ծերունի բարեկամս երկուքնիս ալ յանցաւոր ենք — ըսաւ անոր Ռոտոլֆ անուշութեամբ — մոռնանք անցածը... դառնանք մեր առջի խօսակցութեան..., մեծ գովեստներ կտայիր ազարակիս հաստատութեան՝ և ծօրժ տիկնոջ ցոյց տուած խորին ակնածութեանս համար...: Կը խոստովանիս, այնպէս չէ՞, որ այս կինն իր ընտիր բնաւորութեան՝ իր աղէտից պատճառաւ արժանի է իմ հոգատարութեանս, թէև Տ'Արվիլ գերդաստանէն չ'իջներ... այն գերդաստանէն, որուն գլխաւորին հայրս յաւիտենական երախտագիտութիւն մ'ուխտեր էր...:

— Տէր իմ, միշտ գովեր եմ ծօրժ տիկնոջ ըրած բարիքդ:

— Սակայն կը զարմանաս թէ ինչո՞ւ հոգ կը տանիմ այն հէք աղջկին համար, այնպէս չէ՞:

— Տէր իմ, ներեցէք... սխալեր եմ... սխալեր եմ...:

— Ո՛չ... չեմ մեղադրեր քեզ, երևոյթէն խաբուած պիտի ըլլաս...: Սակայն, քանի որ կեանքս... բոլոր կեանքս կը ճանչես... քանի որ յանձն առած ապաշխարանքս կատարելու համար հաւատարմութեամբ և արիութեամբ կօգնես ինձ... իմ պարտքս կամ լաւ ևս ըսեմ, երախտագիտութեան հարկ մ'է համոզել քեզ որ թեթևակի չեմ շարժիր...:

— Գիտեմ, տէր իմ:

— Արդէն յայտնի են քեզ իմ դազափարներս այն մասին թէ՝ մարդ մը՝ որ ֆէոդալիզմ, կամ և կրոնականիզմ ունի ինչ տեսակ բարիք ընել պէտք է...: Պատուաւոր թշուառներու՝ որ կը տրանջան, օգնել աղէկ է: Հոգ տանիլ, փնտռել այնպիսիներ որ պատուով, զօրութեամբ կը մաքառին և անոնց օգնութեան հասնիլ, երբեմն գաղտնապէս... մեղքի տանող տառապանաց կամ փորձանքի ժամանակին առաջն առնուլ... աւելի աղէկ է: Վերականգնել, պարկեշտութեան ճամբան բերել անոնք որ քանի մը վեհ զգացումներ զուտ պահեր են՝ նոյն իսկ վթարելի արհամարհանաց, հալ ու մաշ աղէտից, և անբաւ ապականութեան մէջ, և այս առթիւ դիմադրաւ մնալ այն աղէտից, այն ապականութեան, այն տղմին մէջ... ա՛լ աւելի աղէկ է: Անդուլ ատելութեամբ, անհաշտելի վրէժխնդրութեամբ հալածել մոլութիւնը, վատութիւնը, ոճիրը, թէ տղմի մէջ սողան, թէ կերպասի մէջ գահակալեն, արդարութիւն է...: Բայց կուրօրէն օգնել այնպիսիներու թշուառութեան արժանի են, բայց վթարել, ապականել ողորմասիրութիւնն ու գթասիրութիւնը՝ անարժան, վատաղդի արարածներու օգնելով սոսկալի, ամբարիշտ, պիղծ գործ մ'է: Այսպիսի բան մ'Աստուծոյ էութիւնը կասկածի տակ կը ձգէ, մինչդեռ օգնողը պարտաւոր է թերահաւատը հաւատքի բերել:

— Տէր իմ, ըսել չուզեցի թէ անարժան անձի մը բարիք ըրիք:

— Դեռ խօսք մ'ունիմ ըսելիք, իմ վաղեմի բարեկամս...։ Գիտես որ այն աղջիկս, որուն վրայ ամէն օր կողքամ, այն աղջիկս՝ որուն անարժան մայրը Սատան անտարբեր մնալուն, աւելի սիրելի պիտի դառնար ինձ, հիմակ տասնվեց տարեկան պիտի ըլլար... այս դժբաղդ էակին պէս. արդէն գիտես որ այս հասակի աղջիկներուն համար ունեցած խորին և դրեթէ վշտալի համակրութիւնս չեմ կարող զսպել...։

— Ճիշտ է, տէր իմ... այդ կերպով պարտաւոր էի մինչև սոյն աղջկին համար տարած հոգդ...։ Եւ սակայն, միթէ Աստուած պատուել չէ այսպիսի թշուառներու նպաստելը։

— Այո՛, բարեկամ... երբոր արժանի են. ուստի ծօրժ տիկնոջ պէս կին մ'ամէն գթասիրութեան և յարգանաց արժանի է, նա՝ որ բարեպաշտ և բարեմիտ մօր մը ձեռօք իր պարտուց անթերի գործադրութեան վարժեցաւ, երբէք... երբէք անկից չվրիպեցաւ, և սոսկալի փորձանքներէ զերծ մնաց արիաբար...։ Բայց միթէ երկնային նախախնամութիւնը պաշտած չէ՞նք ըլլար, երբ ընտիր ընտիր ու բնատուր ձիրքով զարդարուն էակ մ'ապականութենէ կազատենք...։ Միթէ մեր արդահատութեան, մեր յարգանաց... այո՛, մեր յարգանաց իրաւունք չունի՞ իր բնազդումին լքուած թշուառ օրիորդ մը, օրիորդ մը՝ որ, թէև տանջուեր, բանտարկուեր, վատթարեր, տառապեր է, բայց և այնպէս իր սրտին խորը սրբօրէն պահած ունի այն աղնիւ սերմերն զոր Աստուած պարգևեր է։ Տեսնել պէտք էիր այս խեղճ արարածը... թէ՝ առաջին անգամ որ հոգս յայտնեցի, առաջին բարեկամական և համակիր բառն որ լսեց... ինչպէս իր արթուն հոգւոյն մէջ սթափ առին ամենընտիր բնազդումները, զուտ ճաշակը, փափուկ և բանահիւսի տեսիլները, նմանապէս մարդագետնի մ'սրուն վայրի ծաղիկները զարնան ատեն կը բացուին արևուն ճառագայթէն...։ Այս մէկ ժամու խօսակցութեան ատեն դիտեցի որ Գլէօր-տը-Մարիին

սրտէն բարութիւն, շնորհ և իմաստութիւն կը բղխի. այո՛, իմաստութիւն, իմ ծերունի Մրրկ։ Ծպիտ մը թռաւ թշուառ սրտէս և արտօսր մ'աչքէս՝ երբ նա իմաստալից և անուշ անուշ լեզուներ թափելու ատեն, համոզեց զիս որ օրը քառասուն սու խնայելու պարտաւոր եմ, որպէս զի կարողութենէ և փորձանքէ ազատ մնամ։ Խեղճ աղջիկ, քանի՞ ծանր և համոզակեր կերպով այս իմաստուն խրատը կտար ինձ, ինչ սրտի գոհութիւն, ինչ բերկրութիւն կզգար իմանալով որ խօսքին պիտի հետևիմ...։ Այլայլեր էի... ո՜հ, արտասուքս շարժեր էր...։ Բայց դու, ահա դու ալ կը շարժիս, իմ վաղեմի բարեկամս։

— Ճշմարիտ է, տէր իմ... օրը քառասուն սու խնայելու համար տուած յորդորը... կարծելով թէ բանուոր մ'էք, ... փոխանակ դրդելու ձեզ՝ որ իրեն համար ծախք ընէք ... այո՛, այս յորդորը սիրտս կը շարժէ։

— Լռութիւն, ահա կդան ծօրժ տիկինն ու Մարին... Ճամբայ պիտի ելնենք, ամէն բան պատրաստել տուր, պէտք է կանուխէն Բարիզ գտնուիլ։

Ծօրժ տիկնոջ խնամքովը Գլէօր-տը-Մարի բոլորովին կերպարանափոխ եղեր էր։ Գիւղային սիրուն կլոր գլուխ մը և երիս ոսկեթել խիտ գիսակներ իր կուսական դէմքը կը բոլորէին։ Սպիտակ բեհէղէ լայն ուսնոց մը ծոցին վրայ խաչաձև դրուած՝ կիսովին աներևոյթ կը ելլար բարձր կրծկալի (bavette) մը տակ՝ որ երփն երփն սնդուսէ փոքրիկ գոգնոցի մը յարած էր. և սնդուսին կապուտ ու վարդագոյն նշոյլները՝ կարմելեան (carmelite) շրջազգեստի մը մութ երեսին վրայ, որ կարծես թէ օրիորդին համար ձևեր էր, հայելի պէս կը փայլէին։ Օրիորդն երկիւղած (recueillie) կերպարան մ'առեր էր. տեսակ մ'երանութիւններ կան որ հոգին անպատմելի տրամութեան, սրբազին թախծութեան մէջ կընկղմեն։ Ռոտոլֆ չզարմացաւ Գլէօր-տը-Մարիին ծանրաբարոյ ընթացքին վրայ, մանաւանդ թէ զինքն այսպէս տես-

նելու կը յուսար։ Անոր վրայ ունեցած համարումը պիտի նուազէր անշուշտ եթէ օրիորդը զուարթուն և լեզուանի ե-բեւէր։

Իսկ Ժորժ տիկնոջ խոհուն և բարեպաշտ դէմքին վրայ երկայն աղէտից նշաններ կը տեսնուէին. արդէն մայրական կարեկցութեամբ և անձնուիրութեամբ կը նայէր Ֆլէօր-ա-Մարիին, որուն այս շնորհն ու անուշութիւնն ամենուն համակրութիւնը կը գրաւէին։

— Անհաւասիկ է՞ աղջիկ... որ ձեր երախտիքին համար իր շնորհակալութիւնը յայտնելու կգայ — ըսաւ Ժորժ տիկինը Ռոտոլֆին ներկայացնելով լա Կուալէօզը։

Իմ աղջիկ բառը լսելուն՝ լա Կուալէօզ իր մեծ աչերը ծանրաբար դէպ 'ի պաշտպանուհիին դարձուց և անմեկնելի երախտագիտութեան ոգւով զանի բաւական տաեն նկատեց։

— Շնորհակալ եմ քեզ Մարիին համար, իմ սիրելի տիկին Ժորժ. արժանի է գթասէր խնամոյդ... և միշտ արժանի պիտի ըլլայ։

— Պարոն Ռոտոլֆ — ըսաւ լա Կուալէօզ դողդոջուն ձայնով մը — կզգաս... այնպէս չէ՞, որ բան մը չեմ դներ ըսելու...։

— Այլայլութիւնդ ամէն բան կըսէ ինձ, աղջիկս...։

— Ո՛հ, քաջ կզգայ նա որ այս երջանկութիւնը երկնատուր է — ըսաւ Ժորժ տիկինը գորովանօք։ — Իմ սենեակս մտնելուն իր առաջին շարժումն եղաւ խաչելութեան պատկերիս առջև ծունր դնել։

— Ինչու որ հիմակ, ձեր շնորհիւը, պարոն Ռոտոլֆ... կը համարձակիմ աղօթելու... ըսաւ լա Կուալէօզ։

Մըրֆ յանկարծ գլուխն անդին դարձուց. վասն զի լա Կուալէօզին ամենապարզ խօսքերէն զգացած յուզմունքն իր մաղձային հպարտութեան կը դպչէր երևան հանելու։

Ռոտոլֆ օրիորդին ըսաւ.

— Աղջիկս տիկին Ժորժին հետ քիչ մը խօսք ունիմ...

իմ Մըրֆ բարեկամս քեզ ապարակը պիտի տանի... և քու ապագայ սիրականներդ պիտի ծանօթացնէ քեզի... մենք ալ պահէ մը կղանք ձեզի կը գանենք...։ Ո՞ւր ես, Մըրֆ... Մըրֆ չե՞ս լսեր...։

Նոյն միջոցին աղնուական պարոնը կոնակը դարձուցեր՝ իբր թէ քիթը կը խնջէր սոսկալի դրնդիւնով մը, իր թաշկինակը գրպանը դրաւ, գլխարկն աչերուն վրայ կոխեց, և կէս մը դառնալով՝ թեւը Մարիին տուաւ։ Մըրֆ այս Ճարպիկ շարժումին իր երեսը ոչ Ռոտոլֆին և ոչ տիկին Ժորժին ցցուց. այլ աղջկին թեւը բռնեց և ապարակին շէնքերը դիմեց, այնչափ արագ արագ քալելով որ լա Կուալէօզ անոր հետևելու համար ստիպուեցաւ վազել, ինչպէս մանկութեան տաեն լա Շուէդին եռևէն կը վազէր։

— Լաւ, Ժորժ տիկին, ի՞նչ կարծիք ունիք Մարիին վերայ.— ըսաւ Ռոտոլֆ։

— Պարոն Ռոտոլֆ, արդէն քեզի ըսի որ օրիորդն այն ինչ սենեակս մտաւ... Քրիստոսի պատկերը տեսնելով՝ վազեց և ծունր դրաւ...։ Կարելի չէ նկարագրել թէ այս շարժումն որչափ ինքնածին, բնական և բարեպաշտական է։ Իսկոյն հասկըցայ որ իր հոգին ապականած չէ։ Ասկից զատ, պարոն Ռոտոլֆ, իր երախտագէտ զգացումները կեղծ չափազանցութիւն մը չունին... շինովի չեն, այլ մանաւանդ սրտէն կը բղխին։ Բան մը պատմեմ որ համոզուիս թէ իր կրօնական բնազդումն որչափ ընդարձակ և ազդու է։ Անցեալ մ'անոր ըսի.— Անշուշտ շատ զարմացար, շատ ուրախ եղար երբ պարոն Ռոտոլֆ իմաց տուաւ քեզ որ այսուհետև այս տեղ պիտի մնաս... արդեօք ինչ խորին տպաւորութիւն ըրին այս խօսքերը քու վրադ...։ — Ո՛հ, իրաւ է — պատասխանեց նա։ — Երբ պարոն Ռոտոլֆ այդ բանն ըսաւ ինձ, չգիտեմ թէ յանկարծ ինչ անցաւ ներսի դիս. այն տեսակ երկիւղալի երանութիւն մը զգացի, զոր կզգայի երբ եկեղեցի մը մտնէի... երբ կարենայի մտնել, — յարեց նա —

վասն զի զիտես, տիկին... — Զթողուցի որ խօսքն աւարտէ տեսնելով որ ամօթէն երեսը կը շարաղունի: — Գիտեմ աղջիկս... և միշտ իմ աղջիկս պիտի անուանեմ քեզ... զիտեմ որ շատ տառապանք քաշեցիր... բայց Աստուած կօրհնէ անոնք որ զինքը կը սիրեն, ու կը վախնան... անոնք որ թշուառ եղեր են, և կապաշաւեն...:

— Ա՛զէ, իմ բարի ծօրժ տիկին, կրկնակի զոհ եմ ըրածէս: Այս խեղճ աղջիկն երթալով աչքդ պիտի մտնէ... շատ ազէկ գուշակեր ես, ընտիր բնաղդումներ ունի:

— Ուրիշ բան մ'ալ սիրաս շարժեց, պարոն Ռօտոլֆ, այն է որ բնաւ հարցում մը չուղղեց քու վրայօք, թէև անտարակոյս իր հետաքրքրութիւնը մեծ էր: Այս զողարիկ զգուշութիւնը տեսնելով՝ ուզեցի փորձել թէ կամովին է: Ուստի անոր ըսի. կարծեմ թէ հետաքրքիր ես իմանալու թէ քու խորհրդաւոր բարերարդ ո՞վ է. — Գիտէմ... — պատասխանեց նա սիրուն միամտութեամբ մը. — Իր անունն է իմ բարերար:

— Ուրեմն պիտի սիրես զանի, աղնիւ կին, զոնէ փոքր ինչ սրտիդ կընայ սփոփում տալ...:

— Այո՛, այս աղջկով պիտի սփոփիմ... ինչպէս որ պիտի սփոփէի... անով ալ— ըսաւ ծօրժ տիկինը կսկծեցուցիչ ձայնով մը:

Ռօտոլֆ անոր ձեռքը բռնեց:

— Արի՛, արի՛, մի՛ վհատիր... եթէ մինչև ցայսօր մեր խուզարկութիւնները պարապ ելան, կարելի է օր մը...:

Տիկին ծօրժ իր գլուխն օրեց տրամագին և դառնապէս ըսաւ.

— Հիմակ իմ խեղճ զաւակս քսան տարեկան պիտի ըլլար:

— Քսան տարեկա՞ն է, ըսէ...:

— Աստուած ձայնդ լսէ և ուխտդ կատարէ, պարոն Ռօտոլֆ:

— Ուխտս պիտի կատարէ... կը յուսամ...: Երէկ, (թէև պարապ տեղը) Պրա-Ռուժ անուն թշուառական մը

փնտռելու գացի, որուն համար ըսեր էին թէ որդւոյդ վրայ տեղեկութիւններ ունի: Պրա-Ռուժին բնակարանէն իջնելու առենս, կռիւ մ'ունեցայ, և այս գժբաղդ աղջկին հանդիպեցայ...:

— Ափսոս... զոնէ իմ մասս ունեցած բարի գիտաւորութեանդ տարիւ նոր խղճալի մը գտար, պարոն Ռօտոլֆ:

— Ռոշֆորէն լուր մը չունիս:

— Ոչ— ըսաւ տիկին ծօրժ կամացուկ մը և դողդողալով:

— Աւելի աղէկ... ա՛լ կասկածի տեղ չկայ. այն հրէշն իր մահը գտած է աւազակներուն մէջ՝ ուզելով փախչիլ թիա...

Ռօտոլֆ այս սոսկալի բառն արտասանելու ժամուն կանգ առաւ:

— Թիարանէն, ո՛հ, Թիարանէն... պիտի ըսէիր...— գոչեց ողորմելի կինը սոսկումով և մոլորապին ձայնով մը —: Իմ որդւոյս հայրը...: Ա՛հ, եթէ այս եղիկի զաւակս գեռ կապրի... եթէ ինձի պէս անունը չփոխեց, ինչ նախատինք... ինչ նախատինք է մեզ: Այս ալ բաւական չէ..., թերևս հայրը իր ահռելի խոստումը բռնեց...: Երբեք ինչ. ըրաւ զաւակս, ինչու համար ձեռքէս յափշտակեց:

— Այս գաղտնիքը հանելուկ մ'է մեզի համար — ըսաւ Ռօտոլֆ խոհուն դէմքով մը. — այս թշուառականն ինչ նը-պատակաւ որդիդ առաւ տարաւ, երբ, ինչպէս որ ըսիր, տասն հինգ տարի առաջ, օտար երկիր գաղթելու ջանայ: Այն տարիքով աղայ մը կրնար փախուստը դժուարացնել:

— Ափսոս, պարոն Ռօտոլֆ, երբ իմ անուանս (խեղճ կընկան դողը բռնեց այս բառը հնչելու առեն) սահմանագլուխը բռնուելով Բարիզ բերին, քանտը դրին, և ինձ ալ թոյլ տուին որ երթամ զինքը տեսնեմ, այս ահռելի խօսքերն ըսաւ ինձ. « Զաւակդ յափշտակեցի, վասն զի զանի կը սիրես, և այս միջոցաւ պիտի ստիպեմ քեզ ինձ ստակ ղրկելու, իսկ տղադ անկից պիտի օգտի թէ ոչ... իմ գիտցածիք բանս

է . . . : Մեռնի կամ կենդանի մնայ , ինչ փոյթդ է . . . բայց թէ որ կենդանի մնայ , անխնամ չմնար . որդւոյդ նախատինքը պիտի մարսես , ինչպէս մարսեցիր հօրը նախատինքը » : Աւա՜ղ , ամիս մ'ետքը ամուսինս ցմահ թիարան դատապարտուեցաւ . . . : Անկէց 'ի վեր իմ ալերսպին թախանձանքս , որով նամակներս լի են , անկարող եղան անոր սիրտը շարժելու , այս գաւակիս վիճակին վրայ բան մը չկրցայ իմանալ . . . : Ա՜հ , պարոն Ռոտոլֆ , ո՞ւր է արդեօք հիմակ իմ որդեակս : Այս դուժալի խօսքերը միշտ միտքս կը պաշարեն . « Որդւոյդ նախատինքը պիտի մարսես , ինչպէս որ մարսեցիր իր հօրը նախատինքը » :

— Բայց անմեկնելի զաղանութիւն մ'է այդ . ի՞նչ հարկ կար վիճարել , խանդարել այս թշուառ որդիդ , մանաւանդ , ի՞նչ հարկ էր դողնալ :

— Արդէն ըսի , պարոն Ռոտոլֆ , իր միտքը ստիպել էր զիս որ իրեն ստակ ղրկեմ . թէև ունեցածս կերաւ , սակայն քիչ մը ստակ ունէի , զոր այս կերպով սպառեց : Որչափ որ անօրէն մարդ մ'էր , կը յուսայի որ գոնէ թշուառ զաւակս կրթելու համար փոքրիկ դումար մը կը պահէ . . . :

— Արդեօք զաւակդ նիշ մը , նշան մը չունէր , որով կարելի ըլլայ զինքը ճանչելու :

— Ոչ ինչ , բայց եթէ այն ըսած նշանս , պարոն Ռոտոլֆ , լոկ լաժուարտէ (lapis-lazuli) շինուած փոքրիկ հոգին սրբոյ պատկեր մը , որ վզէն արծաթ օղակով մը կախուած է . այս մասունքը Պապէն օրհնուած էր :

— Մի՛ , մի՛ ախրիր , սիրտ առ . Աստուած հզօր է :

— Արդարև Նախախնամութիւնը զիս քու առջևդ հանեց , պարոն Ռոտոլֆ :

— Շատ ուշ , իմ բարի տիկին Ժորժ , շատ ուշ : Եթէ առաջ ըլլար , թերևս քու յաւերուդ մեծ մասին առաջը կառնէի . . . :

— Ա՜հ , պարոն Ռոտոլֆ , միթէ արդէն զիս առատօրէն չինամեցիր :

— Ինչպէս : Մինակ այս ապարակը դնեցի : Քու բարօրութեան ատենդ , անձամբ քու հողերուդ հսկելու փափաք ունէիր . հիմակ յանձն առիր իմ մատակարարս ըլլալու , և քու խնամոյ , քու գործուն տնտեսութեան շնորհիւն այս ապարակն ամէն տարի կը բերէ ինձ . . . :

— Ի՞նչ կը բերէ , տէր իմ — , ըսաւ Ժորժ տիկինն Ռոտոլֆին խօսքը կտրելով — միթէ հասոյթը չե՞նք գործածեր , ոչ միայն մշակներուն վիճակը բարելաւելու , որ արդէն իրենց մուրքն այս անանման ապարակին մէջ իբր մեծ շնորհ մը կընդունին . . . այլ նաև նահանգիս թշուառները միխիթարելու . . . մեր Լաբօրդ բարի երէցին միջոցաւ . . . :

— Աղէկ միտքս ձգեցիր այս սիրելի երէցն — ըսաւ Ռոտոլֆ Ժորժ տիկնոջ գովեստներուն վերջ տալու մտօք — արդեօք իմաց տուիր անոր իմ գալուստս . կը փափաքիմ անոր հովանաւորութիւնը հայցել նորեկ օրիորդին համար . . . յուսամ թէ նամակս ստացաւ :

— Պարոն Մըրֆ այս առտու գալով զայն յանձնեց :

— Այս նամակիս մէջ համառօտ կը պատմի թշուառ աղջկին պատմութիւնը . մեր բարեկրօն հովուին ստոյգ չէի որ այսօր պիտի կարենամ գալ . . . և այն ատեն Մըրֆ պիտի բերէր Մարին այս տեղ :

Ապարակին սպանելէն մէկը այս խօսակցութիւնն՝ որ պարտէզին մէջ կըլլար , ընդմիջեց :

— Տիրուհիս , պատուարժան երէցը ձեզի կսպասէ :

— Տղա՛յ , արդեօք սուրհանդակին ձիերը հասա՞ն — հարցուց Ռոտոլֆ :

— Այո՛ , պարոն Ռոտոլֆ , լծելու վրայ են :

Եւ սպան պարտէզէն հեռացաւ գնաց :

Տիկին Ժորժ , երէցն ու ապարակին ընիկները մինակ Ռոտոլֆի անունով կը ճանչէին Գլէօր-սը-Մարիին պաշտպանը։ Մըրֆ խոհեմութեան կողմն նմանը չունէր . միշտ Ռոտոլֆին հետ մինակ եղած ատեն գէր է՛ կը կոչէր զանի , իսկ օտար-

ներու առջև ուրիշ անուն չէր տար այլ միայն պարոն Ռօտոլֆ։

— Մոռցայ ըսելու քեզ, սիրելի տիկին Ժօրժ — յարեց Ռօտոլֆ տուն դառնալով — որ Մարին կուրծքի ակարութիւն ունի, կարծեմ. զրկանքն ու թշուառութիւնն իր առողջութիւնը խանգարեր են։ Այս առտու, բայց օդին՝ անոր երեսին դեղնութիւնն աչքիս զարկաւ, թէև այտերը վարդի պէս գունաւոր էին. նոյնպէս աչքերն ալ, կարծեմ, փոքր ինչ տենդային փայլ մ'ունէին...։ Անմիջական խնամքի կարօտ է խեղճ աղջիկը։

— Վստահ եղիր իմ վրայ, պարոն Ռօտոլֆ։ Բայց, փառք Աստուծոյ, վախնալիք բան մը չկայ...։ Իր այս տարիքին մէջ...գիւղը աղուոր օդ, հանգիստ, երջանկութիւն վայելելով՝ ինքզինքը շուտ մը պիտի գտնէ։

— Յուսամ... բայց պարձեալ գիւղիս բժիշկներուն վրայ համարում չունիմ... Մըրֆին պիտի ապսպրեմ իմ բժիշկն այս տեղ բերելու, հնդիկ մ'է... խիստ վարպետ մարդ մը... որ պէտք եղած ողջապահիկ կանոնը քեզի կը յայտնէ։ Մարիին վրայ սակայն լուր պիտի տաս ինձի...։ Ատենէ մ'եռքը, երբ բոլորովին հանգստանայ և հանդարտի, իր ապագան ալ կը մտածենք...։ Կարելի է միշտ քու մօտդ կենալու նախապատիւ կը համարի... եթէ քեզ զոհ ընէ։

— Իմ փափաքս ալ այս է, պարոն Ռօտոլֆ... ամէն օր լայած զուարկիս տեղը կրնայ բռնել նա։

— Վերջապէս, թէ քեզի համար, թէ անոր համար մեր յոյսը չկտրենք։

Այն միջոցին որ Ռօտոլֆ և տիկին Ժօրժ աղարակին կը մտէին, Մըրֆ և Մարին ալ միւս կողմէն կղային։

Տոհմիկ անգլիացին լա Կուալէօզին թեւը թողուց և շիտաթալի դէմքով մ'եկաւ Ռօտոլֆին ականջէն վար ըսաւ.

— Այս փոքրիկ աղջիկը գիս դիւթեց. ա՛լ չգիտեմ թէ ո՞վ աւելի իմ համակրութիւնս կը վայելէ, Մարին թէ տիկին Ժօրժը...։ Արդարև վայրենի և անագորոյն կենդանի մ'եմ եղեր։

— Աներկիւղ էի, ծերունի Մըրֆս, որ անոր արժանիքը պիտի ճանչես — ըսաւ Ռօտոլֆ ժպտելով և աղնուական պարոնին ձեռքը սեղմելով։

Տիկին Ժօրժ՝ Մարիին թեւին կռթնելով՝ գետնատան փոքրիկ սրահը մտաւ անոր հետ՝ և այն տեղ Լաբօրդ երէցը գտաւ...։

Մըրֆ ուղևորութեան պատրաստութիւններն ընելու գնաց։ Տիկին Ժօրժ, Մարի, Ռօտոլֆ և երէցը մինակ մնացին։

Թէև պարզ, բայց խիստ դիւր (confortable), այս փոքրիկ սրահը պարսիկ կտաւէ զարդ ու կահ կարասի ունէր, նոյնպէս տան միւս մասերն ալ, ճիշտ Ռօտոլֆին նկարագրածին պէս լա Կուալէօզին։ Հաստ օթոց մը գետինը փռեր, աղուոր կրակ մը կրակարանին մէջ կը վառէր և գոյն գոյն մարգարտի ծաղիկներէ երկու ահագին փունջեր, որ երկու բիւրեղեայ ամանի մէջ դրուած էին, պալսամոնի թեթև հոտ մը կը բուրէին։ Կիսաբաց կանաչ շերտերներէն մարգագետինը, առուակը կը տեսնուէր, և անկից անդին շագանակենի անտառակը։

Լաբօրդ երէցը, կրակարանին մօտ նստած՝ ուրթուն տակին անցած կերևէր. յեղափոխութեան վերջին օրերէ հետէ այս վիճակը կը հովուէր։ Քանիո՛ն պատկառելի էր իր ալևոր՝ նիհար և փոքր ինչ ցաւագար կերպարանն, որուն չորս դին պատեալ երկայն սպիտակ մազերը իր սև փիլոնին օձիքին վրայ կիջնէին։ Իր սև փիլոնը շատ մը տեղէ կարկատաններ ունէր, վասն զի երէցը կըսեր թէ՝ աւելի աղէկ ունի տաքուկ աղուոր չուխայով մը քանի մը աղքատիկ տղաքներ հագուեցնել, քան թէ իր փիլոնները տարիներով ծրարել ու պահել։ Այս բարի երէցն այնչափ ծեր, այնչափ ծեր էր որ իր ձեռներն անդադար կը դողային և երբ դուն ուրիշ խօսելու ատենը վեր վերցնէր կարծես թէ կօրհնէր։

— Հայր սուրբ — ըսաւ ակնածութեամբ Ռօտոլֆ — տիկին Ժօրժ այս դեռահաս աղջիկն հոգն իր վրայ առնելու հա-

ձեցաւ... և որուն համար քու խնամքդ ալ կը խնդրեմ։

— Իմ խնամոց ալ իրաւունք ունի, պարոն, ինչպէս ամէն անոնք որ մեզի կը գիմեն...։ Աստուծոյ ողորմութիւնը անսպառելի է, իմ սիրելի աղջիկս... ասոր մէկ նշանը ցցուց քեզ ծանր փորձանքներէ... ազատելով... ամէն բան գիտեմ...։— Եւ Մարիին ձեռքն իր դողդոջուն և սրբանուէր ձեռքին մէջ առնելով՝ յարեց — Այն վեհանձն մարդն որ քեզ ազատեց Ս. Գրոց այս խօսքը կատարեց։ «Մերձ է տէր առ ամենեսեան ոյք կարդան առ նա ճշմարտութեամբ։ Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր, աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա։» Հիմակ կը մնայ քեզ քու վարքովդ անոր բարեաց արժանի ըլլալ. միշտ քեզի խրախոյս տալու... նոր մտած ճամբուդ մէջ քեզ պահպանելու համար միշտ պատրաստ պիտի դտնես զիս տիկին Ժորժ, ամենօրեայ օրինակ մը պիտի ըլլայ քու առջևդ... իսկ ես արթուն խորհրդատու...։ Աստուած իր գործն անկատար չպիտի թողու...։

— Եւ ես պիտի աղօթեմ անոնց համար որ իմ վրայ գըթացին և զիս անոր գիրկը բերին, հայր սուրբ...— ըսաւ լա Կուալէօզ քահանային առջև ծնկի գալով։ Այլայլութիւնը մեծ էր, հեծկլտանքը զինքը կը խղդէին։

Տիկին Ժորժ, Ռոտոլֆ, երէցը... սաստիկ յուզուած էին։

— Ոտք ելէ՛ր, իմ սիրելի զաւակս — ըսաւ երէցը — քիչ ատենէն պիտի ընդունիս... այն ծանր սխալանաց քաւումն՝ որոց զոհն էիր քան թէ մեղապարտ. վասն զի ըստ մարգարէին խօսելու համար. «Հաստատէ տէր զամենայն զայթակղեալս, և կանգնէ զամենայն զլորեալս»։

Նոյն պահուն Մըրֆ սրահին դուռը բացաւ։

— Պարոն Ռոտոլֆ — ըսաւ նա — ձիերը պատրաստ են...

— Մնաք բարեաւ, հայր իմ... մնաս բարեաւ իմ բարի տիկին Ժորժ... ձեզի կը յանձնեմ ձեր զաւակը... մեր զաւակը պիտի ըսէի։ Օ՛ն, մնաս բարեաւ, և դու Մարի.

քիչ ատենէն ձեզ տեսնելու պիտի գամ նորէն։

Պատկառելի կրօնաւորը տիկին Ժորժին և լա Կուալէօզին թևին յենած՝ որոնք անոր երերուն քայլերը կուղղէին, սրահէն դուրս ելաւ որպէս զի Ռոտոլֆին երթը տեսնէ։

Արևուն վերջին ճառագայթներն այս համակիր ու տրտում ակումբը կը լուսաւորէին։

Ծերունի քահանայ մը, զթութեան, քաւութեան և յաւիտենական յուսոյ նշանակը...։

Կին մը՝ այն ամէն տեսակ վիշտերով փորձուած՝ զորս կարելի է կրել կողակից մը, մայր մը...։

Ծաղկահաս օրիորդ մը՝ գեռ այն ինչ մանկութենէ ելած՝ և որ երբեմն մոլութեան անգունդն ընկեր էր՝ թշուառութեան և վատազգի ոճրագործներու ճանկէն ազատիլ չկարենալով։

Ռոտոլֆ կառքը հեծաւ, Մըրֆ ալ անոր քովը նստաւ... Ձիերը վազ ընդ վազ ճամբայ ելան։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԹԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռոտոլֆ՝ լա Կուալէօզը տիկին Ժորժին խնամոց յանձնելէն ետև՝ միւս օրը միշտ իբր բանուոր հագուած՝ ճիշտ կէսօրին սաբրեր (abritté) կ'սպասէր Բոնէէ–Փլէօրէ գինետան դրան տակ, որ Պէրսի քաղաքագռնէն շատ հեռու չէ։

Առջի իրկուն ժամը տասին՝ Շուրինէօր՝ Ռոտոլֆին ժամադիր եղած տեղն անյաղթ գտնուեր էր։ Այս ժամադրութեան արդիւնքը պատմութեանս կարգը պիտի յայտնէ։ Ուրեմն կէս օր էր. հեղեղանման անձրև մը կը վազէր. Սէն գետը՝ անընդհատ անձրևներէն զեղելով՝ սաստիկ բարձրացեր էր և քարափին մէկ մասը կողողէր։ Ռոտոլֆ ատեն ատեն քաղաքադրան կողմը կը նայէր անհամբեր, հուսկ ուրեմն

հեռուէն անձրևարգելի (parapluie) մը տակ սքլած մարդ մը և կին մը տեսաւ և իսկոյն ճանչցաւ լա Շուէդն ու Մէդր ա՛էքօլը։

Այս երկու անձերը բոլորովին այլակերպեր էին։ աւազակն իր յոռի զգեստները թողեր և վայրագ կերպարանը փոխեր էր. երկայն կանաչ (castorine) տառատոկ մը և կլոր փեղջոյր մը հագեր էր. իր փողպատն ու շապիկը յետին ծայր ճերմակ էին։ Եթէ այս մարդուն դէմքն այնչափ զարհուրելի ու ժանտ, ու ակնարկը, որ միշտ վառ էր ու շարժուն, գաղանային փայլ մը չունենար, անոր հանդարտ և անվրդով քալուածքը տեսնողը պիտի կարծէր թէ պարկեշտ (honnête) ոստանիկ մ՚է։

Նոյնպէս միակնուհին՝ որ հագուեր շքուեր էր՝ ճերմակ գտակ մը, քաշմիրի տեսակ անշահ մետաքսէ խոշոր շալ մը կը կրէր և ձեռքը մեծ զամբիղ մը (cabas) բռներ էր։

Անձրևը պահ մը դադրեր էր. Ռօտոլֆ իր զգուանքը բրոնելով՝ շիտակ դնաց ահռելի ամոլը (couple) դիմաւորելց։ Մէդր ա՛էքօլ կապլիոնի արկոսին տեղ կոկիկ լեղու մը կը գործածէր որմէ կ՚երևէր թէ միտքն անմշակ չէր և իր արիւնարբու գործենկոտութիւններուն հետ զարմանալի դիմապատկեր մը կը ներկայէր։ Երբ Ռօտոլֆ անոր մօտեցաւ՝ աւազակը խորին յարգանօք գլխի ողջունեց. իսկ լա Շուէդ խոնարհութիւն ըրաւ։

— Պարոն... ամենախոնարհ ծառայ եմ.. — ըսաւ Մէդր ա՛էքօլ։ —Եւ պատրաստ հրամանիդ. քանի ուրախ եմ քու ծանօթութիւնն ընելու. կամ լաւ ևս ըսեմ, վերանորոգելու... քանզի առջի օր ռնդեղջիւր մը սպանելու չափ երկու բուռն կոուփներ տուիր ինձ...։ Բայց հիմակ լենք այս կէտը, հաւատի եմ որ կատակ մը, զուտ կատակ մ՚էր այն քու կողմէդ...։ Գոյենք... ծանրակշիռ խնդիրներ մեզ նորէն կը միացնեն...։ Երէկ իրկուն ժամը տասնմէկին Շուրինէօրը տեսայ կապլիոնը, ժամագիր եղայ այս առաւ հետը տեսնուելու, որպէս զի հասկընամ

եթէ կուզէ մը... գործակիցն ըլլալ. բայց կերևի թէ բայէ՚ի բայ կը մերժէ։

— Ուրեմն կընդունիս։

— Եթէ կը հաճիս, պարոն... անունդ ինչ է։

— Ռօտոլֆ։

— Պարոն Ռօտոլֆ... եկուր սա Բանկէ-Գլէօրլն մտնենք... դեռ ոչ ես և ոչ տիկինս ճաշ ըրած ենք... պատառ մը հայ ուտելով կրնանք խօսակցիլ մեր մանր մունր գործերուն վրայօք։

— Շատ աղէկ։

— Ճամբան ալ կրնանք խօսիլ. զուք և Շուրինէօրն անպատճառ կնկանս և ինձի փոխարինութիւն մ՚ընելու պարտաւոր էք... Ձեր պատճառաւ 2000 ֆրանքի կորուստ մ՚ունինք։ Լա Շուէդ սպաւոր մեծ պարոնի մը հետ, որ անցած իրկուն քեզ փնտուելու եկեր էր կապլիոնը, ժամագիր եղեր էր Ս. Ուէնի մօտ. այս պարոնը 2000 ֆրանք կը խոստանար մեզի՝ այն պայմանաւ որ քեզի բան մ՚ընենք...։ Շուրինէօրն այս բանը մեկնեց ինձի...։ Բայց կը մտածեմ, Ֆինէդ,— ըսաւ աւազակը լա Շուէդին — որ աղէկ կըլլայ եթէ մեր առջևէն Բանկէ-Գլէօրլն երթաս, խուց մը բռնես և մեր նախաճաշն ապպրես, քանի մը կողիկ, որթի կտոր մը, աղցան և երկու շիշ ընտիր Պոնի գինի բաւական են. մնաքալ ետևէդ կը հասնինք։

Լա Շուէդ որ իր ակնարկը Ռօտոլֆին վրայէն պահ մը վերցուցած չէր, Մէդր ա՛էքօլին նշանացի աչք ընելէն ետև՝ հեռացաւ, և ասաւ իր խօսքը շարունակեց։

— Պարոն Ռօտոլֆ, կըսէի թէ Շուրինէօր երկու հազար ֆրանքի առաջարկութեան վրայ զիս ըսաւ բաւականին հրահանգեր էր։

— Ի՞նչ կը նշանակէ, հրահանգել։

— Իրաւունք ունիս... այս ոճը խիստ բարձր կը գտնես ինձի համար. կուզէի ըսել որ Շուրինէօր հարևանցի մը բացատրեր էր ինձ թէ՝ սպաւոր մեծ մարդն իր երկու հազար ֆրանքովն ինչ կուզէր քեզնէ։

— Լաւ, լաւ...։

— Բայց ես լաւ չեմ գտներ, երիտասարդ. քանզի Շուրինէօր Ս. Ուէնի մօտ երէկ առտու լա Շուէդին հանդիպեցայ՝ մաղի չափ չհեռացեր է անորմէ, երբ սղաւոր մեծ մարդուն դալուստը տեսեր է, որով այս պարոնն ալ չհամարձակեր է կնկանս մօտենալու։ Հետևապէս դու պարտաւոր ես երկու հազար ֆրանքի շահ մը ցուցնել մեզի։

— Առկից աւելի դիւրին բան չկայ...։ Բայց մը խօսքին դառնանք. Շուրինէօրի գեղեցիկ գործ մ'առաջարկեր էի, նախ ընդունեց, ապա մերժեց։

— Այդպիսի արտառոց գաղափարներ շատ ունի նա...։

— Յակայն մերժելով՝ դիտեց...։

— Ցայտնեց, ըսէ...։

— Է՛ թշուառական... քերաքանութեանդ ալ պոչը չես ձգեր։

— Իբր Մէդը ա՛էքօլ, (վարժպետ), իմ արհեստս է։

— Ուրեմն յայտնեց ինձի որ՝ եթէ ինքը ոչ-նոթ հայ ուսել չուզեր, միտք չունի ուրիշներն ալ արգիլելու, և թէ կարող եմ գործը քեզի բանալ։

— Եթէ անխոհեմութիւն չէ, արդեօք կրնամ իմանալ թէ ինչ պատճառաւ Ս. Ուէն ժամադիր եղար երէկ առտու Շուրինէօրի հետ, որով լա Շուէդն ալ այն տեղ գտնելու առիթ ունեցաւ։ Ինքը շփոթ պատասխան մը տուաւ ինձ այս մասին։

Ռոտոլֆ անզգալի կերպով մը շրթերը խածաւ և ուսերը շարժելով պատասխանեց։

— Հարկաւ պիտի շփոթէր, որովհետև իմ խորհուրդս կէս մը բացեր էի անոր... կը հասկընաս անշուշտ... քանի որ կը վարանէր միշտ։

— Խոհեմութիւն ըրեր ես...։

— Ա՛նշուշտ, քանի որ մէկ քարով երկու գլուխ կուզէի ծակել։

— Յետին ծայր խոհական անձ մ'ես...։ Բայց խօսքին թեզը չկարենք. ուրեմն Ս. Ուէն ժամադիր եղեր էիք Շուրինէօրի հետ անոր համար որ...։

Ռոտոլֆ պահ մը դեղեցիկն ետև՝ յաջողեցաւ ձշմարտանման առասպել մը պատմել Շուրինէօրի ձախող ընթացքը պարտրկելու համար, ու յարեց։

— Անհաւասիկ խնդիրը...։ Առաջարկած կողոպուտս շահաւոր է, վասն զի մեր գիտցած տան տերը գիւղը կը գտնուի, միակ վախս այն էր որ Բարիզ չդառնայ։ Ապահով ըլլալու համար Բիէրֆիթ կերթամ, ուր կը գտնուի ամառատունը և այն տեղ կիմանամ որ վաղը չէ միւս օր պիտի վերադառնայ։

— Շատ աղէկ։ Բայց խնդրէն դուրս ելար... ինչ հարկ կար ժամադիր ըլլալ 'ի Ս. Ուէն Շուրինէօրի հետ։

— Այդչափ բթամիտ չէի կարծեր քեզ...։ Բիէրֆիթ Ս. Ուէնէն որչափ հեռու է։

— Մէկ մղոնի չափ։

—Իսկ Ս. Ուէն Բարիզէն։

— Նո՛յնչափ։

— Ուրեմն, եթէ Բիէրֆիդ մարդ մը չգտնէի, այսինքն տունը թափուր ըլլար... հոն ալ ուսելու հայ կար... Բարիզինէն նուազ շահաւէտ, իրաւ, բայց բան մ'էր... Շուրինէօր զիս Ս. Ուէն կսպասէր, կը դառնայի որ զինքը գտնեմ։ Այն ատեն Բիէրֆիդ պիտի գայինք ինձ ծանօթ կարուկ ճամբէ մը, և...։

— Կը հասկընամ։ Եթէ, ասոր ներհակ, ձեր գործը Բարիզ բուսնէր, ինչ պիտի ընէիք։

— Էդուալին քաղքին գուռը կը բռնէինք Բէվօլդի ճամբէն և անկից ալ Վէօվ ուղին...։

— Ճիշտ քայլ մ'իրարմէ հեռի... շատ պարզ է։ Ասկից կը հետևի թէ Ս. Ուէն ձեր կեդրոնն էր՝ այս կամ այն գործը կատար հանելու... ընտիր յատակագիծ։ Հիմակ կը հասկնամ թէ Շուրինէօր ինչ պատճառաւ Ս. Ուէն գտնուեր է...։ Ըսել է թէ Վէօվ ուղիին տունը մինչև միւս օրն անձնակ պիտի մնայ...։

— Անբնա՛կ... դոնապանէն զատ։

— Ի հարկէ... և կըսես թէ շահաւէտ հարուած մ'է։

— Իր զլխաւորին սենեկին մէջ վաթսուն հազար ֆրանք կայ, զուտ ոսկի։

— Եւ միթէ ծակ ու ծուկ տեղերը զիտես։

— Հայր մերիս պէս։

— Լռութիւն... ահա՛ հասանք, թերահաւատներու առջև խօսքը զոցենք։ Զգիտեմ եթէ զու ալ ինձի պէս ես, առաւօտեան օդն ախորժակս բացաւ։

Լա Շուէդ զինետան սեմին վրայ էր։

— Այս կողմէն— ըսաւ նա —այս կողմէն... արդէն նախաճաշիկը սպասպրեցի։

Ռօտոլֆ ուզեց որ աւազակը առաջ անցնի, և այս մասին իր պատճառներն ունէր... սակայն Մէդը տ'էքօլ այնչափ վրայ տուաւ այս մարդավարութիւնը մերժելով՝ որ նախ Ռօտոլֆ ներս մտաւ։ Սեղան չնստած Մէդը տ'էքօլ երկու միջնորմները թեթև մը զարկաւ, որպէս զի հասկընայ թէ ինչ խտութիւն և հնչիւն ունին։

— Շատ կամայ խօսելու պէտք չունինք— ըսաւ նա— միջնորմը բարակ չէ։ Ապսպրել պէտք է որ ամէն բան մէկէն բերեն որ մեր խօսակցութիւնն անդադար չընդհատի։

Զինետան մէկ սպասուհին նախաճաշիկը բերաւ։ Դուռը չը զոցուած Ռօտոլֆ զիտեց որ Մբրֆ ածխագործը մօտակայ խցի մը սեղանին առջև նստեր է ծանրաբար։ Այս մը նը կարագրած տեսարանը՝ երկար, նեղ և փողոցին վրայ նայող պատուհանէ մը լուսաւորուած սենեկի մը մէջ կ'անցնէր, որ դրան դիմացը կիյնար։ Լա Շուէդ կռնակը պատուհանին դարձուցեր էր, սեղանին մէկ կողմը Մէդը տ'էքօլ միւս կողմը Ռօտոլֆ նստեր էր։

Երբ սպասուհին գնաց, աւազակը տեղէն ելաւ, իր պնակն առաւ և գնաց Ռօտոլֆին մօտ նստաւ, այնպէս որ զուռն անոր աչքէն խաբանէ։

— Այսոքէս աւելի աղէկ կրնանք խօսիլ— ըսաւ նա —և պէտք չենք ունենար մեր ձայնը բարձրացնելու։

— Ասկից զատ՝ իմ և դրան մէջ տեղ կուզես խաբան ըլլալ, որպէս զի զուրս չելնեմ— պատասխանեց Ռօտոլֆ պաղութեամբ։

Մէդը տ'էքօլ հաստատական նշան մ'ըրաւ, և ապա, տաւատակին քովնտի զրպանէն սագի փետրի չափ խոշոր ու բոլորշի երկար դաշնիկ մը (stylet) հանելով կիսովին, որուն փայտեայ դաստականը (poigneé) իր մազոտ մատերուն մէջ չէր երևեր, ըսաւ.

— Կը տեսնեմ սա...։

— Այո՛։

— Ուրեմն՝ ազդ առ սատահակս...։

Եւ ընքուինները պռստելով՝ այնպէս որ իր վազրի պէս լայն ու տափակ ճակատը խորշոմեց, նշանակելի շարժում մ'ըրաւ։

— Այս ալ քաջ զիտցիր, որ մարդուս պլաթը ես սրեցի— յարեց լա Շուէդ։

Ռօտոլֆ՝ սքանչելի հանդարտութեամբ մ'իր ձեռքը բադենին (blouse) տակ անցուց և երկփող ատրճանակ մը հանեց, Մէդը տ'էքօլին ցցուց և նորէն զրպանը դրաւ։

— Շատ աղէկ... իրար հասկընալու համար ստեղծուած ենք— ըսաւ աւազակը —բայց դու իմ միտքս չես իմանար...։ Հիմակ անկարելի բան մը պիտի ենթադրեմ...։ Եթէ դան զիս բռնեն, դու ինձի դարան մը լարած ըլլաս կամ ոչ... ես աբսոլիւթ պիտի պաղչիմ. (մեռցնեմ)։

Եւ կատաղի աչք մը նետեց Ռօտոլֆին վրայ։

— Ես ալ նոյն միջոցին անոր վրայ կը ցատկեմ քեզ օգնելու համար, հոգի— զոչեց լա Շուէդ։

Ռօտոլֆ լուռ կեցաւ, ուսերը շարժեց, բաժակը զինի լեցուց ու խմեց։

Այս պաղ արիւնութիւնը Մէդը տ'էքօլին ահ ազդեց։

— Միտքս միայն իմաց տալ էր...։

— Լաւ, լաւ, դիր շամփուրդ ղրպանդ, այս տեղ շամփրելու հաւ չկայ։ Ծեր ագաղաղ մ'եմ, և սուր բիտեր ունիմ —ըսաւ Ռօտոլֆ —ալ գործի վրայ խօսինք...։

— Խօսինք... բայց շամփրիս մի դպիր. ոչ ձայն ունի այն և ոչ մարդու ղլխիցաւ կտայ...։

— Եւ շատ աղուոր գործ կը աեսնէ, հողի, այնպէս չէ՞— յարեց լա Շուէդ։

— Աղէկ միտքս ընկաւ— հարցուց Ռօտոլֆ լա Շուէդին —արդեօք լա Կուալէօղին ծնողքը իրօք կը ճանչէս։

— Իմ մարդս երկու նամակ ունի որ այս բանին վրայ կը խօսին...։ Բայց երբէք չպիտի տեսնէ զանոնք, փոքրիկ Բ-ոմբիշը... մատներովս երկիս աչերը պիտի բրեմ եթէ ցուցընէ...։ Ո՛հ, երբ անգամ մը կապլանին մէջ գտնեմ ղինքը, իր բանը պիտի բուսնի...։

— Է՛յ, հոս նայէ, Գինէդ, կը խօսինք, կը խօսինք և գործ մ'ըրած չունինք։

— Միթէ կրնանք լեղ- կոբել անոր առջևը։— հարցուց Ռօտոլֆ

— Ամենայն վստահութեամբ. փորձառու կին մ'է, և մեզի կրնայ նպաստել իր լրտես, բանբեր, դրոշմահան, գողկից, ծախիչ ևն. ընտիր տան տիկնոջ մ'ամէն յատկութիւններն ունի...։ Ընտիրարհիկ Գինէդ։— յարեց աւազակը ահռելի պառաւին ձեռք կարկառելով. — Կարելի չէ նկարագրել անոր ըրած ծառայութիւնները...։ Բայց շալդ ինչո՞ւ չես հաներ Գինէդ, յուրտ կառնես երբ դուրս ելնես... սա՝ թոռին վրայ դիր նայիմ զամբղիդ հետ։

Լա Շուէդ իր շալը հանեց։

Ռօտոլֆ՝ թէև զգաստամիտ և միշտ ինքզինքին տէրը, շը կրցաւ զարմանքը պարտըկել երբ պառաւին վիզը տեսաւ հողին սրբոյ փոքրիկ լաժուարդէ պատկեր մը, որ արծթէ հաստ շղթայի մ'օղակէն կախուած էր, ճիշտ տիկին Ժօրժինն ընկարագրածին նման, զոր իր որդին վիզը կը կրէր աներևոյթ ըլլալու ատեն։

Այս պիտն ընելով՝ Ռօտոլֆին միտքը յանկարծ բան մ'ընկաւ։ Շուրինէօրի խօսքին համեմատ՝ Մէգը ա՛էքօլ վեց ամսէ հետէ թիարանէն խոյս տուեր՝ ու երեսն ու դէմքը այլակերպելուն՝ ոստիկանութեան բոլոր խուզարկութիւններն 'ի դերև հաներ էր... նոյնպէս վեց ամսէ 'ի վեր տիկին Ժօրժին ամուսինը թիարանէն փախեր էր և ոչ ոք անոր վրայ լուր ունէր։ Ռօտոլֆ մտածեց թէ կարելի է այն թըշուառ կնկան երիկը Մէգը ա՛էքօլն է։ Եթէ այս ենթադրութիւնը ճիշտ ելնէր, կը յուսար անոր ողբալի որդւոյն վիճակն իմանալ, նոյնպէս լա Կուալէօղին ծննդեան վերաբերեալ մէկ քանի թղթերը ձեռք ձգել։ Ուստի Ռօտոլֆ իր խորհուրդներուն մէջ յարատևելու նոր նոր պատճառներ կը գտնէր։ Բարեբաղդաբար աւազակը լա Շուէդը մեծարելու զբաղած ըլլալով Ռօտոլֆին մատանջութիւնը չդիտեց։

— Է՛ անօրէն... աղուոր շղթայ մ'ունիս վիզդ...— ըսաւ Ռօտոլֆ միակնուհիին։

— Աղուոր... և ժան...— պատասխանեց պառաւը խընամալով։ — Շինծու է, այս կը դնեմ մինչև որ մարդս աղէկն առնէ...։

— Այդ բանը պարոնէն կախում ունի, Գինէդ... Եթէ առատ աւար մը զարնենք, գործդ կը շտկուի...։

— Իրաւ կը զարմանամ թէ ինչպէս աղէկ նմանցուցեր են — շարունակեց Ռօտոլֆ։ — Իսկ ծայրինը... ի՞նչ է այն պզտիկ կապուտ բանը։

— Իմ մարդուս պարգևն է, մինչև որ ինձի ժամացոյց մը գնէ... անանկ չէ՞, հողի։

Ռօտոլֆ կը տեսնէր որ իր կասկածները քիչ քիչ կը հաստատուին։ Անհամբեր էր Մէգը ա՛էքօլին պատասխանը լսելու։ Ասի վրայ բերաւ։

— Բայց պէտք է որ ասի աղէկ պահես, թէև ժամացոյցը պակաս է, Գինէդ... հմայեկ մ'է (talisman)... և յաջողութիւն կը բերէ...։

— Հմայիկ մը— ըսաւ Ռօտոլֆ անհոգ կերպով մը։ — Ուրեմն հմայեկի կը հաւատաս դու, է։ Բայց որ ծակէն գտար ատի... գործարանին հասցէն տուր որ ես ալ հատ մը գնեմ։

— Ա՛լ շինող չկայ, սիրելի պարոնս, խանութը գոց է... լաւ քննէ. այս գոհարը հին շինք մ'է...երեք սերունդէ կիջնէ...։ Աչքիս լուսին պէս կը սիրեմ զայն, ընտանեկան աւանդութիւն մ'է— յարեց նա նոզկալի ժպիտով մը։ — Եւ ահա այս պատճառաւ է որ Գինէդինտուի զայն... որպէս զի Ճարպիկութեամբ ինձի օղնած գործերուն մէջ բանը յաջող բերէ...։ Ի հարկէ պիտի տեսնես, պիտի տեսնես ինչ քաներ կրպայ ձեռքէն... երբ մէկտեղ առևտրական գործողութիւն մ'ընենք...։ Բայց մեր խօսքը չմոռնանք... կըսէիր թէ Վէօվ ուղիին մէջ...։

— 17 թիւ տունը կայ, ուր հարուստ մը կը բնակի... և անունն է... պարոն...։

— Անուան պէտք չունիմ... անքաղաքավարութիւն է... կըսես թէ սենեկի մը մէջ վաթսուն հազար ֆրանք կայ ղուտ ոսկի։

— Վաթսուն հազար ֆրանք մի— գոչեց լա Շուէդ։

Ռօտոլֆ գլխի նշանով մը նոյնը հաստատեց։

— Եւ կըսէիր թէ այս տան բոլոր պարագաները քեզի ծանօթ են,— ըսաւ Մէգը ա'էքօլ։

— Քաջածանօթ։

— Միթէ մուտքը դժուարին է՞։

— Վէօվ ուղիին կողմէն եօթ ոտք բարձր պատ մը կայ, պարտէզ մը, ցած պատուհաններ. տունը լոկ դեռնայարկ մ'ունի։

— Մինակ դռնապան մը կը պահպանէ այս գանձը։

— Այո՛,

— Երիտասարդ, ըսէ նայիմ, ինչ է պատերազմի յատակագիծդ։

— Ամենապարզ է... պատէն 'ի վեր կ'ելնէս, տան դուռը ներսէն կը բանաս, կամ դրսէն պատուհանը կը կոտրես կը մտնես, բանիդ կրպայ։

— Ամէն բանանձամբ այսինքն՝ կնիկիս օգնութեամբը չքննած պատասխան մը չեմ կրնար տալ. բայց եթէ բոլոր ըսածներդ ճշմարիտ են, ինձի կ'երևի որ գործը տաք տաք... այս իրկուն իսկ լմնցուցնելու է։

Եւ աւազակը ակնապիշ նայեցաւ Ռօտոլֆին։

— Այս իրկուն... անկարելի է— պատասխանեց նա։

— Ինչո՞ւ համար, քանի որ տան տէրը մէկ երկու օր պիտի ուշանայ։

— Իրաւ է. բայց ես, ես չեմ կարող այս իրկուն,..։

— Ստուածդ սիրես. լաւ, ես, ես ալ վաղը չեմ կարող։

— Ի՞նչ պատճառաւ։

— Այն պատճառին համար որ քեզ կ'արգիլէ այս իրկուն գործելու...— պատասխանեց աւազակը հեգնելով։

Պահ մը մտածելէն ետև՝ Ռօտոլֆ վրայ բերաւ։

— Շատ ալէկ... թող այս իրկուն ըլլայ։ Ուր պիտի գտնուինք։

— Իրարմէ չպիտի զատուինք— ըսաւ Մէգը ա'էքօլ։

— Ի՞նչպէս։

— Ի՞նչ հարկ կայ զատուելու։ Օդը կը բացուի. ժուռ գալով կերթանք Վէօվ ուղիին աչքը մը կը նետենք, և կը տեսնես թէ կինս ինչպէս աշխատիլ գիտէ։ Այս աւարտելէն ետև, հը դառնանք թուղթ մը կը նետենք և Էլիսեան դաշտին մէկ դեռնափորին մէջ... զոր կը ճանչեմ... և դեռին շատ մօտ է, պատառ մը բան կուտենք. և որովհետև Վէօվ ուղիին անց ու դարձը կանուխկեկ կը դադրի, ժամը տասին մօտ դէպ 'ի այն կողմը կը դիմենք։

— Ես ալ ժամը իններին քեզի կդամ կը գտնեմ։

— Բայց ըսէ, կուզե՞ս թէ ոչ գործը մէկտեղ ընել։

— Այո՛, կուզեմ։

— Ուրեմն, պէտք չէ որ քովէս հեռանաս... ապա թէ ոչ...:

— Ապա թէ ոչ...:

— Պիտի կասկածիմ որ պոչէս պէտք է բռնէս, և ասոր համար ինչ բաժնուիլ կուզես...:

— Եթէ կամք ունենամ թակարթ մը լարել քեզ... ո՞վ կարդիլէ զիս այս իրիկուն իսկ լարելու...:

— Շատ չքաշես... բանն այն է որ բնաւ չէիր յուսար թէ ես գործն այսչափ շուտ լմնցունել ուզեմ: Եթէ չթողում քեզ, չես կրնար մէկու մը ձայն տալ...:

— Ուրեմն ինչ կասկած ունիս...:

— Շատ կասկած ունիմ... բայց մտածելով որ ասաջարկած բանդ բոլորովին սուտ չկրնար ըլլալ, և վաթսուն հազար ֆրանքին կէսը ստանալու համար կ'արժէ որ փորձ մ'ընեմ՝ յանձն կ'առնեմ այդ փորձը, բայց այս իրիկուն կամ երբէք... եթէ հովի երթայ բանը, այն ատեն քու մօրուքդ ձեռքս պիտի ըլլայ... և ես ալ... օրին մեկը... իմ արհեստիս մէկ վարպետութիւնը քեզի պիտի մնծարեմ...:

— Ես ալ ետ չպիտի մնամ փոխարէնը հատուցանելու... ապահով եղիր:

— Բոլոր այդ խօսքերը ստրկի մը չեմ առներ— ըսաւ լա Շուէդ: —Ես ալ քու կարծիքդ եմ, հոգի. այս իրիկուն, կամ ոչ ինչ:

Ռոտոլֆ անհնարին անձկութեան մէջ կը գտնուէր, եթէ Մէդր տ'էքօլը բռնելու այս առիթը ձեռքէ հանէր, տնտարակոյս երբէք նոյնը գտնելիք չունէր. այս աւազակը անկից ետքը պիտի զգուշանար, և կարելի է ճանչցուելով՝ բռնուէր և թիարան ղրկուէր, որով նաև Ռոտոլֆին դիտնալ փափաքած գաղտնիքն ալ հետը պիտի տանէր: Ուստի բաղդին, իր հնարագիտութեան և արիութեան վստահելով՝ Մէդրը տ'էքօլին ըսաւ:

— Կը հաւանիմ, այս իրիկուն իրարմէ չպիտի զատուինք:

— Ահա հիմա ալ քուկդ եմ... Բայց քիչէն ժամը երկու

պիտի զարնէ...: Ասկից մինչև Վէօվ ուղին բաւական հեռու է. սաստիկ է անձրևը. վճարենք մեր ճաշը և կառք մը բռնենք:

— Եթէ կառք պիտի բռնենք, ատեն ունիմ գլանիկ մը քաշելու:

— Ինչո՞ւ չէ— ըսաւ Մէդր տ'էքօլ — Գինէդս ծխին հոտէն կ'ախորժի:

— Ուրեմն, երթամ քանի մը գլանիկ գնեմ— ըսաւ Ռոտոլֆ ոտք ելնելով:

— Ի՞նչ ծանրութիւն քեզի համար— ըսաւ Մէդր տ'էքօլ ղանի կեցնելով —Գինէդ կրնայ գնել...:

Ռոտոլֆ նորէն տեղը նստաւ:

Մէդր տ'էքօլ անոր միտքը գուշակեր էր:

Լա Շուէդ դուրս ելաւ:

— Ի՛նչ տնտես կին ունիմ, հը՛մ— ըրաւ աւազակը — և ինչ տիրասէր. կրակն անգամ կը նետուի ինձի համար:

— Այս ինչ ցուրտ է, մարդ փայտ կը կարի հոս— վրայ բերաւ Ռոտոլֆ իր երկու ձեռքը բադէնին տակ պահելով:

Այն ատեն՝ խօսակցութիւնը Մէդր տ'էքօլին հետ շարունակելով՝ իր բաճկոնին գրպանէն մատիտ և կտոր մը թուղթ հանեց, առանց կասկած տալու, արտորնօք քանի մը բառ գծեց, գիրերը զատ զատ նշանակելով որ չխառնուին, որովհետև առանց նայելու իր բադէնին տակը կը գրէր:

Այս տոմսակը Մէդր տ'էքօլին սուր աչքէն անտես գրուելէն ետև՝ կը մնար պէտք եղած տեղը հասցնել:

Ռոտոլֆ ոտք ելաւ մեքենայապէս, պատուհանին մօտեցաւ և սկսաւ կիսաձայն երգել մատուցները ապակիներուն վրայ զարնելով:

Մէդր տ'էքօլ եկաւ փեղկէն նայելու և Ռոտոլֆին ըսաւ:

— Նայիմ, ինչ եղանակ է այդ երգածդ:

— Կերգեմ... դո՜ պէտք չառնես ինձ վարդ:

— Շատ սիրուն եղանակ մ'է... կուզէի գիտել թէ անցորդները կը զառնան մտիկ ընելու երգէդ հրապուրուելով։

— Այդ մեծամտութիւնը չունիմ...։

— Կը սխալիս, երիտասարդ. վասն զի սքանչելի կերպով կը թմրկես ապակիներուն վրայ։ Բայց ես բան մը կը մտածեմ... կարելի է Վէօվ ուղիին տան պահապանը յանդուգն թշուառական մ'է... թէ որ դէմ կենայ... դու մինակ ատրճանակ մ'ունիս... և այդ ալ ձայն կը հանէ, մինչդեռ այս տեսակ գործի մը (և իր դաշունին բռնատեղը ցցուց Ռոտոլֆին) թնդիւն չհաներ... յուզմունք չհաներ։

— Ի՞նչ, միթէ մտքդ զանի սպաննե՞լ է։— գոչեց Ռոտոլֆ։ —Եթէ այդպիսի գաղափարներ կը տածես... բանին վերջ տանք... գործը չկայի պէս բռնէ... ես քեզի հետ չեմ...։

— Հապա եթէ արթննայ։

— Կծիկը կը դնենք...։

— Ասոր խօսք չկայ. պէտք է առաջուց ամէն բան որոշել, ուրեմն մեր ընելիքը մինակ գողութիւն մ'է՝ պատէն անցին անցնելով և գուռը խորտակելով...։

— Մինակ այդչափ...։

— Ոչինչ բան մ'է, բայց թող ըսածդ ըլլայ...։

— Եւ քանի որ վայրկեան մը քովէդ պիտի չհեռանամ —մը. տածեց Ռոտոլֆ —չպիտի թողում քեզ որ արիւն թափես։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԱ ՇՈՒԷԴ խուցը մտաւ ծուխը բերելով։

— Կարծեմ թէ անձրևը դադրեցաւ— ըսաւ Ռոտոլֆ գլանիկը վարելով —թէ որ կառքն անձամբ երթանք բռնելու... քիչ մը ոտքերնիս կը բացուի։

— Ինչպէս անձրև չգար.— վրայ բերաւ Մէգը տ'էքօլ

—Կո՞յր ես, չե՞ս տեսներ... կը վախնամ որ Գինէդս հարբուղի կենթարկի... անոր անդին կեանքը կը վտանգի... և իր գեղեցիկ նոր շալը կ'ապրուի...։

— Իրաւունք ունիս, մարդս, սոսկալի օդ մը կընէ։

— Լաւ, սպասուհին հիմա պիտի գայ... ստակը տալով կ'ապսպրենք անոր որ երթայ մեզի կառք մը բռնէ— յարեց Ռոտոլֆ։

— Շատ խելացի խօսք մ'ըսիր, երիտասարդ։ Այսպէս կրնանք Վէօվ ուղիին կողմերը երթալ շրջիլ։

Սպասուհին ներս մտաւ։ Ռոտոլֆ հարիւր սու տուաւ անոր։

— Ա՛հ, պարոն... կամիցուներս դիս... չպիտի թողում— գոչեց Մէգը տ'էքօլ։

— Թո՛ղ տուր... դու ալ ուրիշ անգամ կը վճարես։

— Ուրեմն կը հաւանիմ... բայց այն պայմանաւ որ ես ալ ուրիշ անգամ բան մը մեծարեմ քեզի, Էլիսեան դաշտին մէկ գինետան մէջ... որ գեղեցիկ տեղ մ'է... գիտեմ։

— Լա՛ւ... լաւ... կընդունիմ։

Սպասուհին ստակը տալէն ետև՝ վար իջան։ Ռոտոլֆ՝ առ +ողջ+ավ+որ+ՈՒՆ լա Շուէդին, ուզեց ետ մնալ։ Մէգը տ'էքօլ չթողուց, և անոր ամէն շարժումները գիտելով՝ խիստ մնաէն գնաց։ Այս ճաշարանին տէրը գինի ալ կը ծախէր։ Գնորդներուն մէջ մրոտած դէմքով և մինչև աչքն իջած լայն գլխարկով ածխագործ մը կար՝ որ տրապղին վրայ խըմածը կը վճարէր, երբ այն երեք հոգին երևցան։ Թէև Մէգը տ'էքօլ և միակնուհին ուշադիր կը հսկէին Ռոտոլֆին վրայ որ այս գաղտնի ամբոխին առջևէն կը քալէր, սակայն նա կարող եղաւ կառք հեծնելու առեն Մըրֆին շուտ մը աննշմարելի նշան մ'ընել։

— Ո՞ւր պիտի երթանք, պարոն— հարցուց կառապանը։

Ռոտոլֆ բարձրաձայն պատասխանեց.

— Այն ուղին...։

— Որ Ազասիա կըսուի և Պուլջայնի անտառն է— գոչեց Մէդը տ'էքօլ անոր խօսքը կտրելով. և ապա յարեց.— կառապան, աղէկ քշէ, ուշած ստակդ պիտի առնես։

Կառքին դռնակը զոցուեցաւ։

— Ինչպէս այս խլուրդներուն առջև մեր երթալիք տեղը կը յայտնես.— վրայ բերաւ Մէդը տ'էքօլ։ —Եթէ յանկարծ գործը երևան ելնէ, փոքրիկ նշան մը մեր կորուստը կը պատճառէ։ Ա՛հ, պատանի, պատանի, շատ անխոհեմ ես։

Կառքը առաջ երթալու վրայ էր, Ռօտոլֆ պատասխանեց։

— Ճիշտ է. պարապ զտնուեցայ. բայց իմ զլանիկովս տարերի պէս պիտի մրոտեմ ձեզ. զէշ չըլլար կարծեմ թէ որ ապակիին մէկը բանանք։

Եւ Ռօտոլֆ խօսքն ու գործը մէկ ընելով՝ բարակ ծալըուած փոքրիկ թուղթը ճարպիկութեամբ մը կառքէն դուրս ձգեց, այն թուղթը որուն վրայ շուտ մը մատիտով քանի մը բառ գրեր էր...։ Մէդը տ'էքօլին նայուածքն այնչափ սուր էր որ թէև Ռօտոլֆ անվրդով դէմք մը կը ցուցնէր, աւազակը անշուշտ անոր վրայ յաղթութեան անըմբռնելի նշան մը դիտեց, վասն զի, դռնակէն իր գլուխը հանելով՝ կառապանին պոռաց։

— Քշէ՛... կառապան, քշէ՛. կառքիդ ետևը մարդ կայ։

Կառքը կեցաւ։ Կառապանը նորէն տեղը նստաւ, չորս դին դիտեց ու ըսաւ։

— Աչքիդ երևցեր է, պարոն, մարդ չկայ։

— Է՛ անօրէն, ես անձամբ պիտի նայիմ— պատասխանեց Մէդը տ'էքօլ դուրս ցատկելով։

Եւ ոչ մարդու մը շուրջը տեսաւ Մէդը տ'էքօլ, վասն զի Ռօտոլֆ դռնակէն իր թուղթը վար նետելէն 'ի վեր՝ կառքը արդէն բաւական ճամբայ առեր էր, և կարծեց թէ իրօք աչքին երևցեր է։

— Հիմա վրաս պիտի խնտաք— ըսաւ նա վեր ելնելով—

չգիտեմ թէ ինչու համար կարծեցի թէ մէկը մեր ետևէն կգայ։

Նոյն պահունկառքը շեղակի փողոցէ մը դարձաւ։ Մրլֆ, որ աչքէ չէր հեռացուցած զայն և Ռոտոլֆին հնարքը հասկըցեր էր, վազեց և տոմսակը, որ երկու քարի մէջ տեղն ընկեր էր, զետնէն առաւ։

Քառորդէ մ'ետքը, Մէդը տ'էքօլ կառապանին ըսաւ։

— Կեցիր քիչ մը, մեր միտքը փոխեցինք. դէպ 'ի Մատրլէնի մայտանը քշէ։

Ռօտոլֆ անոր երեսը նայեցաւ զարմանօք։

— Ի՞նչ կը զարմանաս, պատանի. այն հրապարակէն ամէն տեղ դիւրին է երթալ։ Եթէ մեր հետքը գտնեն, կառապանին վկայութիւնը ստրկի մը չեն առներ։

Ճիշտ այն պահուն որ կառքը քաղքի դրան կը մօտենար, բարձրահասակ մարդ մը, որ Ճերմկեկ երկար տարատոկ մը հագեր, գլխարկը աչերուն վրայ կոխեր, և պինդ թխագոյն երես մ'ունէր, սրարշաւ որսի մեծ ու փառաւոր երիվարի մը պառանոցին վրայ ծռած՝ անցաւ նոյն ճամբէն ուրագօրէն։

— Դեղեցիկ ձիուն, քաջ ձիաւոր կը վայլէ.— ըսաւ Ռօտոլֆ դռնակին ծռելով և աչքով Մրլֆին հետևելով (վասն զի նոյն ինքն էր)։ Ի՞նչպէս կարշաւէ սա խոշոր մարդը... տեսար։

Ռօտոլֆ իր խնդութիւնը սքողեց բոլորովին։ Անշուշտ Մրլֆ կարդացած պիտի ըլլար Մէդը տ'էքօլին հսկողութենէ պրծած՝ այն տոմսակն որ գրեթէ եգիպտական նշանագիր կը պարունակէր։ Աւազակը վստահ ըլլալով որ կառքին ետևէն եկող չկայ՝ ուզեց լա Շուէդին ըրածն ընել. որ կը քնանար, կամ լաւ ևս, քնանալ կը կեղծէր. ուստի Ռօտոլֆին ըսաւ։

— Պատանի, ներէ ինձ. կառքին շարժումը միշտ վրաս զարմանալի թուլութիւն մը կը բերէ, և քունս կը տանէ տղու մը պէս....։

Աւաղակը սուտ քուն ըլլալով՝ միտք ունէր դիտելու թէ արդեօք իր ընկերին երեսն այլայլութիւն մը կը մատնէ։ Ռոտոլֆ այս խաբէութիւնը դուրս հանեց և պատասխան տուաւ։

— Այս առտու շատ կանուխ ելայ։ Ես ալ քուն ունիմ... քու ըրածդ պիտի ընեմ...։

Եւ աչքը դոցեց։ Շատ չանցաւ Մէդը տ'Էքօլին և լա Շուէդին հոնչիւնէն, որ միաձայն կը խրկային, այնչափ խաբուեցաւ Ռոտոլֆ որ, իր ընկերներն անդունդները կարծելով՝ արտեւանունքը բացաւ...։ Բայց Մէդը տ'Էքօլ և լա Շուէդ հոնչյային խորդումներ կը հանէին, արթուն էին, և բաց աչքը խրենց ափերուն մէջ այլանդակ կերպով դնելով կամ ծուելով մատերնին՝ խորհրդաւոր բանակցութիւն մը կընէին...։ Յանկարծ այս նշանացի խօսակցութիւնը դադրեցաւ։ Աւաղակը թեթեւ նըշանէ մ'անշուշտ հասկըցաւ որ Ռոտոլֆ արթուն է, և գոչեց խնտալով։

— Օ՛, օ՛, ընկերակից...։ դու կուզես բարեկամներդ փորձել, դո՞ւ։

— Պէտք չէ որ այս բանիս զարմանաք, դուք որ աչքերնիդ բաց կը խորդաք։

— Ի՛մ մասին, մի՛ մեղադրեր զիս, պարոն, ես քնաշրջիկ եմ...։

Կառքը Մատլէնի մայտանը կեցաւ։ Անձրևը պահ մը դադրեր էր, բայց ամպերը հովին բռնութենէ մղուելով այնչափ սև էին և մթին, որ գրեթէ արդէն գիշեր էր։ Ռոտոլֆ, լա Շուէդ և Մէդը տ'Էքօլ Գուր-լա-Բէն գիմեցին։

— Երիտասարդ, միտք մ'ունիմ... զոր պիտի հաւնիս —ըսաւ աւաղակը։

— Ի՞նչ միտք։

— Կուզեմ ստուգել թէ Վէօվ ուղիին տան վրայօք բոլոր ըսածներդ ստոյգ են։

— Եթէ հիմա պատրուակով մը երթաք, կարելի է որ

կասկածներ յարուցանէք...։

— Այդչափ ապուշ չեմ... պարոն... միթէ բանի տեղ չե՞ս դներ իմ կինն, որուն անունն է Ֆինէդ։

Լա Շուէդ գլուխը տնկեց։

— Դիտէ անդամ մը, պարոն, կարծես նժոյգի պէս պաշտերազմի փողը լսելուն ականջները կը տնկէ։

— Ուրեմն զինքն առջևէն իբր լրտես մը կուզես ղրկել։

— Այո՛, այդ կուզեմ։

— Թիւ 17, Վէօվ ուղին, այնպէս չէ՞, պարոնիկ, գոչեց լա Շուէդ անհամբեր։ Անհոգ եղիր, թէև մէկ աչք ունիմ, բայց սուր է։

— Կը տեսնես, երիտասարդ, կը տեսնես, կեփի կը մրկի որ ժամ առաջ երթայ։

— Եթէ ներս մտնելու համար Ճարպիկ բրթի, այդ հնարքդ զէշ չեմ գտներ։

— Քովդ պահէ սա անձրևնոցը, հոգի...։ Կէս ժամէն հոս եմ, և պիտի տեսնես թէ ձեռքէս բան մը չաղատիր— գոչեց լա Շուէդ։

— Վայրկեան մը համբերէ, Ֆինէդ, նախ Աբէ-Նոպ «Էրոն ինչ-նենք... ասկից քանի մը քայլ հեռի է։ Եթէ պզտի Դօրդէյարը (կաղ) այն տեղ գտնենք, հետդ կ'առնես կը տանիս. անի դունէն դուրս կը կենայ պահ ընելու, դու ալ ներս կը մտնես։

— Աղէկ ըսիր, այն պզտի Դօրդէյարը աղուէսի պէս խորագէտ է, թէև տաս տարեկան, և այն է որ անցածն օր...։

Մէդը տ'Էքօլ նշան մ'ընելուն լա Շուէդ խօսքը կտրեց։

— Ի՞նչ է այդ Աբէ-Նոպ-Սէրտ ըսածդ. ինչ ծաղրելի անուն գինետան մը համար— հարցուց Ռոտոլֆ։

— Դիտողութիւնդ գինեպանին ըրէ։

— Անունն ի՞նչ է։

— Որո՞ւ, Աբէ-Նոպ-Սէրտին գինեպանին։

— Այո՛։

— Ի՞նչ պէտք ունիս իմանալու, Ինքն իր հիւրերուն անունը չհարցներ։

— Եհ, մի երկնցունէր . . . .

— Ուզած անունդ տուր անոր, Բիէր, Թոմաս, Գրիստոֆ կամ Պարնարպէ կոչէ զինքը, ուզածդ կը կատարէ . . . : Բայց ա-հա հասանք . . . Եւ դէպ ժամուն . . . վասն զի տարաւիր նորէն կսկսի . . . Եւ դէտը ինչպէս կ'որոտայ, կարծես թէ հեղեղատ մ'է, նայէ անդամ մը . . . : Եթէ այսպէս երկու օր ալ շարունակէ՝ ջուրը կամրջին կամարներէն պիտի անցնի :

— Հասանք կըսես . . բայց ո՞ր է այդ անիծեալ գինետունը . . . այս կողմերը տուն չեմ տեսներ :

— Անշուշտ պիտի տեսնես, թէ որ չորս դիդ նայիս :

— Ո՞ւր կուզես որ նայիմ :

— Ոտքիդ տակը :

— Ոտքիս տակը մի :

— Այո . . . :

— Ո՞ր կողմը :

— Ահա . . . սա տեղ . . . տանիսը չե՞ս տեսներ : Նայէ որ վերան չկոխես :

Եւ արդարև Ռոտոլֆ դիտած չէր այն ստորերկրեայ օթևաններէն մէկը, որ դեռ ևս քանի մը տարի առաջ Էլիսեան դաշտը ուր ուրեք կը գտնուէին, և մասնաւորապէս Գուր-լա-Բէնի մօտ :

Տամուկ և տղմոտ դեռնի մը վրայ փորուած հողաշէն սանդուղ մը տեսակ մը լայն փոսի մը խորը տը տանէր . այս փոսին սեպաձև մէկ կողմը ցած, գծուած և խարխուլ տուն մը յենած կը կենար . իր կղմինդրէ ու մամուտ տանիսը հազիւ թէ Ռոտոլֆին գտնուած հողին հարթ հաւասար էր : Այն ողորմելի տնակին մասը կը սեպուէին՝ տախտակաշէն երկու երեք հատ որդնահար հիւղեր որ մառանի, ճաղարնոցի և սայլարանի տեղ կը բռնէին :

Նեղ ուղի մը՝ փոսին երկայնքը կտրելով՝ սանդղէն մինչև տան դուռը կը տանէր . սարբնայ մը (treillage) դեռնին միւս կողմը և հողին մէջ մնուած երկու շար կոշտ սեղաններ կը դոյէր : Թիթեղեայ անշահ տախտակ մը տխուր կերևոյթ մը կը հանէր ծխնիին վրայ դառնալով . թէև ժամդամ՝ դեռ վրան նշմարելի էր Նէպոհոդ

էրդէր սէրբ մ . . : Պանդոկին նշանագիրն այս քարայրին դար՝ի վերը գերանի մը վրայ կ'օրորէր, քարայրը մ'որ ճշմարիտ մարդ-կայնոց որջ մ'էր :

Թանձր ու խոնաւ մշուշ մ'անձրևին կը միանար . . . գիշերը մօտէ :

— Ի՞նչպէս կը գտնես այս ապարանը . . . երիտասարդ— վրայ քերաւ Մէդը տ'Էքօլ :

— Ցաւն հինգ օրէ հետէ եկած առատ անձրևներէն . . . տարակոյս չկայ որ վարը անուշ զովութիւն մը կը տիրէ . . . բայց հրամէ, անցիր . . . :

— Պահ մ'սպասէ . . . նախ՝ պէտք է գիտնամ որ կապելապետը հոս է . . . լուութիւն :

Եւ աւազակը իր լեզուն բերնին ձեղունին կցելով ուժգին, այլանդակ շչիւնն ու հռնչիւն մը հանեց, զոր կարելի է այս օրինակ շեշտե լ :

— Պը՛րրրր՛ր . . . :

Նոյնպիսի շռինդ մ'ելաւ նաև քարայրին խորէն . . . :

— Հոս է— ըսաւ Մէդը տ'Էքօլ : —Ներսէ . . . պատանի . . . կիներուն յարգը մի մոռնար, թող որ լա Շուէդ առաջ անցնի . . . ես ալ ձեր ետևէն կգամ . . . : կամաց, կամաց, չնչնաք . . . գետինը շատ սահուն է . . . :

ԳԼՈՒԽ ԺԴ

ԱՐԻՆՈՑ ՍԻՐՏ

Արէ-նոդ-Սրդին կապելապետը՝ Մէդը տ'Էքօլին ձայնին պատասխանելէն ետև՝ մարդավարութեամբ մինչև իր տան սեմը եկաւ :

Այս անձը, զոր Ռոտոլֆ Միջնաքաղքին մէջ փնտռելու ելեր էր, և որուն ճշմարիտ անունը, կամ սովորական մականունը տակաւին չգիտի ճանչէր, Պրա-Ռոժ էր :

Այս մարդը՝ ծիւրած՝ վոիտ ևնիհար՝ գրեթէ յիսուն տարեկան կ'երևէր : Իր կերպարանքը ոռմոռչի և կատուի կը քաշէր . իր

սրամիտ քիթը, խորասոյզ (fuyant) կզակը, ոսկրուտ այտերը, սև, վառվռուն ու սուր փոքրիկ աչերը՝ խորամանկութեան, նրբամտութեան և ուշմտութեան անմեկնելի տիպ մը կտային իր դէմքին։ Խարտեշ, կամ աւելի ճիշտը, մաղձոտ գոյնին պէս գեղնուկ հին կեղծամ մը (perruque) գանկին սարը գրուած՝ իր ալէխառն ծոծրակը (nuque) բաց կը թողուր։ Կլոր բաճկոնակ մը (veste) հագեր էր և երկար սևկէկ գոգնոց մը, զոր թանգարաններուն (cabaretier) մատուռակները կը գործածեն։

Այս մեր երեք անձերն, այն ինչ սանդղին յետին աստիճանը կոխեր էին՝ և ահա տաս տարու տղայ մը, կարկամ (rachitique) կաղ և փոքր ինչ հաշմած՝ եկաւ Պրա-Ռուժին մօտ կեցաւ, և անոր այնչափ շատ կը նմանէր որ տեսնողը անշուշտ իր որդին էր պիտի ըսէր։

Իր հօրը սուր ու նենգաժէտ նայուածքը՝ ըրբենի, ծաղրասէր (gouailleur) և խարուսիկ երեսն ունէր որ Բարիզի անառակին (voyou) յատուկ է, վաղահաս ապականութեան զարհուրելի տիպար մ'էր նա, իրօք Ռիաբանի հուանդ մը, ինչպէս որ բանտերու սոսկալի լեղուով կանուանեն։ Տղուն ճակատը կիսովին անհետաքրքիր էր բաշի պէս կարծր ու ձիգ դեղնկեկ թաւուտ մազերուն ներքև։ Շապանակի գոյն տարատ մը, (pantalon) կաշի գօտիով կապուած գորշ բաղէնմ՝ Դօրդիյարի հագուստը կը կազմէին, որ իր հաշմութեան համար այսպէս կը կոչուէր։ Իր հօրը մօտ ողջ կրունկին վրայ շիտակ կեցեր էր, իբր ճայ մը ճահճի մ'եղրը։

— Ահա լակոտը (mome)— ըսաւ Մէդր տ'էքօլ. —Գինէթ, ժամանակը սուղ է, գիշերը մօտ... պէտք է օգուտ քաղել մնացած ժամերէն։

— Իրաւունք ունիս, մարդս... երթամ հօրն ըսեմ որ իր պղտի բղէզը (moutard) մեղի տայ։

— Բարեւ, ծերուկ— ըսաւ Պրա-Ռուժ առ Մէդր տ'էքօլ նրբիկ, սուր ու կծու ձայնով մը —ինչ հրաման ունիս տալու։

— Սա ունիմ՝ որ մեկ քառորդի համար բղէզդ կնիկիս.

որ այս կողմերը բան մը ձգեց... թո՛ղ երթայ օգնէ զայն գտնելու համար...։

Պրա-Ռուժ քթիթ մ'ըրաւ, Մէդր տ'էքօլին նշանացի աչք մը նետեց և իր տղուն ըսաւ։

— Դօրդիյար..., տիկին լա Շուէդին հետ գնա...։

Աղտոտ ու փնթի տղան կաղն 'ի կաղ գնաց և միակնուհիին ձեռքը բռնեց։

— Արևուդ մեռնիմ, ահա... ահա ճշմարիտ զաւակ մը. — ըսաւ Գինէդ —նայէ ինչպէս մարդու մօտ է... Բէկրիոդին չնմանիր, կարծես թէ միշտ սիրտը կը խառնուէր քանի քովս գար այն անպիտան մուրացկանուհին։

— Օ՛ն, շուտ ըրէ, Գինէդ... աչքդ բաց և արդէն ցորենը կրկոտ... քեզ այս տեղ կսպասեմ...։

— Շատ չպիտի սպասես... առաջ անցիր Դօրդիյար։

Եւ միակնուհին ու պղտիկ կաղը ելքծուտ սանդղէն վերելան։

— Գինէդ, անձրևնոցդ մոռցար... — գոչեց աւազակը։

— Թո՛ղ մնայ այդ ծանրութիւնը, մարդս...— պատասխանեց պառաւը և Դօրդիյարին հետ անհետ եղաւ վերջալուսի դէզադէզ ամպերուն և հովին տխուր ձայներուն մէջ, որ Էլիսեան դաշտին մեծ կնձնիներուն սևաթոյր ու անաբև ճիւղերը կը շարժէր։

— Ներս մտնենք— ըսաւ Ռոտոլֆ։

Գինետան դունէն անցնելու համար, որ երկու սրահի բաժնուած էր, հարկ եղաւ ծռիլ։ Մէկուն մէջ տրապիզ մը և խլեալաց գնդասեղան մը (billard) կար. մուսին մէջ սեղաններ և երբեմն կանաչաներկ պարտիզի աթոռներ։ Երկու նեղ փեղկեր, որոց ապակին ճղքած էր և ոսաայնապատ՝ հաղիւ կը լուսաւորեն այս սրահներուն կանաչ և բորակալի պատերը։

Հաղիւ թէ Ռոտոլֆ բոպէ մը մինակ մնաց։ Պրա-Ռուժ և Մէդր տ'էքօլ ատեն գտան քանի մը խօսք և խորհրդաւոր

նշանները իրարու առնել տալու։

— Անշուշտ մինչև Ֆինէգին դալը բաժակ մը դարեջուր կամ օղի կը խմես... ըսաւ Մէդր տ'Էքօլ։

— Չէ՛,... ծարաւի չեմ։

— Ինչպէս որ կուզես... իսկ ես, օղի մը պիտի տնկեմ — վրայ բերաւ աւազակը։ Եւ երկրորդ սրահին կանաչագոյն փոքրիկ սեղանը նստաւ։

— Մութը սկսեր էր սաստիկ կոխել քարայրին չորս դին. ուստի երկրորդ սենեկին մէկ անկիւնը չէր տեսնուեր այն դեռնափոր բաց մառանը՝ (cave) ուր երկթև կափարէչ միայն կարելի էր իջնել, և որմէ մէկը գործի դիւրութեան համար միշտ բաց կը մնար...։ Մէդր տ'Էքօլին նստած սեղանն այս խորունկ ու ծակին մօտ էր և կրնակն անոր դարձուցեր էր, որպէս զի Ռօտոլֆին աչքէն ծածկէ բոլորովին։

Իսկ Ռօտոլֆ իր մատանջութիւնը չմատնելու համար պատուհաններէն կը նայէր իբր անտարբեր։ Թէպէտ Մըրֆին վազն 'ի վաղ Վէօվ ուղին դիմելը տեսեր, բայց լիովին սիրտը հանդարտ չէր։ Կը վախնար որ աղնուամիտ անդղիացին իր տոմնակին միտք բանին, զոր լակոնական ոճով գրելու ստիպուեր էր։ բոլորովին հասկցած չըլլայ, քանի որ մինակ այս բառերը կը պարունակէր։

— Այս էրկոռն, ժամը պաս։ Զգո՛յշ եղէր։

Ռօտոլֆ որչափ որ հաստատ միտքը դրեր էր այս ժամէն առաջ Վէօվ ուղին չերթալ և Մէդր տ'Էքօլին քովէն չհեռանալ, սակայն դարձեալ կը դողար որ չըլլայ թէ այս յարմար առիթը ձեռքէ հանելով՝ իմանալու համար փափաքած գաղտնիքէն զրկուի։ Թէև կորովի և զինեալ՝ կը մտածէր թէ ինչպէս ահարկու և ամէն բանի կարող... մարդասպանի մը խորամանկութեան հետ դլուխ պիտի ելնէ։ Բայց իր վրդովը պարարկելու համար Մէդր տ'Էքօլին սեղանն եկաւ նստաւ և գինի մ'ապսպրեց անոր յարմարելու մտօք։

Գրա-Ռուժ, աւազակին հետ կամացուկ քանի մը բան խօսելէն 'ի վեր՝ հեռաքրքիր, հեգնական և կասկածոտ դէմքով մը Ռօտոլֆը կը դիտէր։

— Երիտասարդ, կը մտածեմ— ըսաւ Մէդր տ'Էքօլ — որ եթէ կինս գայ ըսէ թէ մեր տեսնելիք մարդիկը տուն են, ժամն ուրին կրնանք անոնց այցի երթալ։

— Երկու ժամ առաջ գացած կըլլանք— ըսաւ Ռօտոլֆ — նեղութիւն տուած կըլլանք անոնց...։

— Այդպէս կը կարծես։

— Հաւատա՛ եմ...։

— Վա՛շ, բարեկամի մէջ... սպասման չըլլար։

— Ես աղէկը գիտեմ. նորէն կըսեմ ժամը տասնէն առաջ երթալ պէտք չէ։

— Որչափ կամակոր ես, դու, պատանի։

— Այս է իմ համոզումս... և կրողը տանի զիս եթէ ժամը տասնէն առաջ տեղէս թնտամ։

— Ձեր հանդստութիւնը նայեցէք, կէս գիշերէն առաջ չեմ գոցեր գրպակս— ըսաւ Գրա-Ռուժ իր նրբիկ ձայնովը։

— Ճիշտ այն միջոցին կդան հոս իմ ամենէն ընտիր գնորդներս... և տանս մէջ եղած աղմկէն դրացիներս բնաւ չեն գանդատիր։

— Պատանի, ամէն ըսածիդ պէտք է դլուխ ծռել— վրայ բերաւ Մէդր տ'Էքօլ։ —Թող այդպէս ըլլայ, մեր այցելութիւնը ժամը տասնին կընենք։

— Ահա լա Շուէդ դարձաւ— մրմռաց Գրա-Ռուժ, ստորերկրեայ տունն իջնելէն առաջ Մէդր տ'Էքօլին հանած աղաղակին նման աղաղակ մը լսելով և անոր պատասխան տալով։

Վայրկենէ մ'ետքը՝ լա Շուէդ ներս մտաւ մինակը։

— Ձեռքով դրածի պէս... ծակ ու ծուկը գտայ, մարդ. — գոչեց լա Շուէդ ներս մտնելով։

Գրա-Ռուժ խոհեմութեամբ քաշուեցաւ, առանց Դօրդիյարի վրայ հարց ու փորձ ընելու, կ'երևի թէ անոր գալստին տակաւին չէր սպասեր։ Պառաւը Ռօտոլֆին և աւազակին դիմացը նստաւ։

— Ի՞նչ լուր ունիս— ըսաւ Մէդը տ'էքօլ։

— Այս տղան մինչև սա կէսը Ճշմարիտը խօսեր է։

— Կը տեսնե՞ս— զոչեց Ռոտոլֆ։

— Թո՛ղ որ լա Շուէդ պատմէ, երիտասարդ։ Խօսէ նայինք, Ֆինէգ։

— Թիւ 17 տունը հասայ՝ Գօրդէյարը ծակի մը մէջ սըմքած իրը դէտ թողլով...։ Դեռ ցորեկ էր։ Փոքրիկ միջնադրան մը (porte batârde) զանգակիկը կը զարնեմ, դուռ մը՝ որուն ծխնիները դուրս ընկեր՝ և սեմին տակ երկու բթամատ ծակէ լոյս կ'առնէր... չերկարեմ, պահապանը կը բանայ։ Բայց զանգակը զարնելէն առաջ՝ պտակս գրպանս դրեր էի, որպէս զի իրը գրացուցի մ'երևիմ։ Այն ինչ պահապանը կը տեսնեմ և կ'սկսիմ բոլոր ուժովս լալ, վլվլուկ հանել և ըսել թէ իմ պապկաս, իմ Գօղոթս, իմ պաշտելի սիրուն թըռչունս կորուսի...։ Պահապանին կըսեմ նաև թէ Մօրպէօֆ փողոցը կը բնակիմ և իմ Գօղոդիս Եռեէն պարտիզէ պարտէզ վազելով՝ մինչև այն տեղ հասեր եմ։ Վերջապէս կաղաչեմ նոյն պարոնը որ թռչնիկս փնտռելու թոյլ տայ ինձ։

— Հըմ— ըրաւ Մէդը տ'էքօլ Ֆինէգը ցոյց տալով պարծուկ զոհունակութեամբ մը —ինչ կին։

— Մեծ Ճարպիկութիւն— ըսաւ Ռոտոլֆ —բայց վերջը...։

— Պահապանը կը թողու որ թռչունս փնտռեմ, և ահա Գօղոդ, Գօղոդ կանչելով՝ պարտիզին մէջ կը վազվզեմ, ու օդին մէջ չորս դին կը նայիմ որ ամէն բան լաւ մը դիտեմ։ Պատերէն ներս՝ չորս կողմը սարբնայ կայ, Ճշմարիտ սանդուղներ. պատին մէկ անկիւնը՝ դէպ 'ի ձախ՝ ելնարանի (echelle) նման նոՃի մը կը գտնուի, ուսկից ծոցուր կին մ'անդամ կրնայ իջնել։ դետնատունը վեց պատուհան ունի, ուրիշ դատիկոն չկայ, և զորս ընչաք (soupirail) առանց ձողի։ Դետնատան պատուհանները փեղկերով կը գոցուին, վարէն ակիշ մը (crochet), վերէն հայրիկ մը (gâchette) միայն,

կոխէ յենդրը, (plinthe) քաշէ երկաթէ թելը...։

— Եւ թինթ մը (zest) տուր...— ըսաւ Մէդը տ'էքօլ — և ահա կը բացուի։

Լա Շուէդ շարունակեց։

— Ներսի դուռն ապակիէ է... դրսէն երկու շերտզոյր կայ։

— Նշանաւոր կէս— ըսաւ աւաղակը։

— Ճիշտ է... կարծես թէ այն տեղն ես— ըսաւ Ռոտոլֆ։

— Ձախ դին— վրայ բերաւ լա Շուէդ — բակին մօտ ջրհոր մը. չուանը բանի կղայ, եթէ դրան կողմէն մեր փախուստը արգիլուի, վասն զի այս դիէն պատին կից սարբնայ չկայ...։ Տնէն ներս մտնելու առեն...։

— Տան մէջն ալ մտար։ Կը նայիս. ներսն ալ մտեր է, պարոն...— ըսաւ Մէդը տ'էքօլ զոռոզաբար։

— Անշուշտ, մտայ։ Գօղոդս չգտնելով այնչափ ողբ ու կոծ հանեցի որ վրաս իրը թէ մարմրուք մ'եկաւ. պահապանէն հրաման ուզեցի քիչ մը դրան սեմը նստելու. բրեմիտ մարդը զիս ներս հրամցուց և բաժակ մը ջուր ու գինի մեծարեց։ «Լոկ բաժակ մը ջուր, բաւ է, ըսի բաժակ մը ջուր միայն, իմ բարեսիրտ պարոնս»։ Այն ատեն զիս նախասենեակը տարաւ... ամէն կողմը դորդ փռուած է. ընտիր զգուշութիւն, ոչ ոռքի և ոչ ապակիի բեկորներու ձայնը կը լսուի, եթէ հարկ ըլլայ ապակի կոտրել. աջ ու ձախ զին գոներ ու բարակ լեղուակով նիզեր. անդամ մ'որ փչես կը բացուին։ Ներսը, շատ ներսը հաստ դուռ մը տեսայ բանալիով գոցուած. արկղի ձև ունէր... ոսկի կը հոտէր... զամբղիս մէջն էր մոմս...։

— Կը լսե՞ս, պարոն, մոմն ալ պակաս չէ... առանց մոմի տեղ մը չերթար... ըսաւ աւաղակը։

Լա Շուէդ շարունակեց։

— Բայց վարպետութիւնն ոսկիի հոտ տուող դրան մօտիկ

էր։ Ի՞նչ ընեմ, իբր թէ սաստիկ, սաստիկ հաղ մը կը բռնէ գլխս և պատին կը կոթնիմ։ Պահապանը հաղս լսելով՝ ըսաւ։ «Պեցիր քիչ մը շաքար դնեմ ջրիդ մէջ»։ Կ'երևի թէ գնաց դպալ մը փնտռելու, վասն զի արծաթեղէնի հրճուելի ձայնը ականջիս զարկաւ... մի՛ մոռնար, հոգի՛, արծաթեղէնն աջ կողմի խուցը։ Կարճ կապեմ, հազալով ու հեծեծելով՝ ներսի դրան մօտեր էի... մոմն ափիս մէջն էր... ձեռքս նիզին վրայ դրի, որպէս թէ բան մը չկայ։ Ահա բանալիին դրոշմը որ եթէ ոչ այսօր, անշուշտ օրին մէկը կընայ բանի մը ծառայել...։

Եւ լա Շուէդ աւազակին տուաւ դեղին մոմի կտոր մը, որուն վրայ ճշգիւ կը տեսնուէր դրոշմը։

— Հիմա կուզենք իմանալ թէ այս է արդեօք արկղին դուռը— ըսաւ լա Շուէդ։

— Հարկաւ... անոր մէջն է ոսկին— վրայ բերաւ Ռոտոլֆ։ Եւ իւրովի ըսաւ։ —Կարելի՞ բան է որ Մըրֆ այս անօրէն պառաւէն խաբուի. ինչո՞ւ չէ, քանի որ գիտէ թէ յարձակումը ժամը տասին պիտի սկսի... և անտարակոյս այն ժամուն պէտք եղած զգուշութիւնները ձեռք առած պիտի ըլլայ...։

— Բայց բոլոր ստակը այն արկղին մէջ չէ— վրայ բերաւ լա Շուէդ, որուն կանաչ աչքը շողշողաց. —Երբ պատուհաններուն մօտ գայի, միշտ Գօղոդս փնտրելու համար, դրան ձախ դին սենեկի մը դրասեղանին վրայ դրամի ծրարներ տեսայ... հա՛, տեսայ կըսեմ. ինչպէս որ քեզ կը տեսնեմ, մարդս... քիչէն քիչ տասներկու հատ էին ծրարները։

— Ո՛ւր է Գօրդիյարը— կըսէ յանկարծ Մէդը տ'էքօլ։

— Ան իր ծակին մէջն է... պարտիզին դռնէն երկու քայլ հեռու...։ Մութին կատուի պէս կը տեսնէ։ Թիւ 17 տունը մինակ մէկ դուռ ունի, եթէ մարդ դայ Գօրդիյար մեզի իմաց պիտի տայ։

— Լա՛ւ է...։

Հաղիւ թէ այս խօսքն արտասաներ էր, որ Մէդը տ'էքօլ

յանկարծ Ռոտոլֆին վրայ ընկաւ, կոկորդէն բռնեց և սեղանին ետևը դանուած բաց դետնափոր մառանին մէջ դահավիժեց...։

Այս յարձակումն այնչափ շուտ, անակնկալ և բուռն եղաւ որ Ռոտոլֆ չատիկեր էր գուշակել և անոր տոջևն առնել։ Լա Շուէդ ահ ու դողէն սուր ճիչ մը հանեց, վասն զի այս յեղակարծ կռուին պատճառն իսկոյն չկրցեր էր հասկընալ։ Երբ Ռոտոլֆին մարմնին ձայնը, որ առտիճաններէն կը գլորէր, դադրեցաւ, Մէդը տ'էքօլ որ այս տան «դոորբէրբէյ» բնիկները քաջ կը ճանչէր, ծանր ծանր մառանն իջաւ և ուշադիր ականջ կախեց։

— Հոգի... աչքդ բաց...— գոչեց միակնուքին կափարչէն ներս ծռելով։ —Շամբոորդ քաշէ...։

Աւազակը պատասխան չտուաւ և անհերևոյթ եղաւ։

Պահ մը խորին լռութիւն տիրեց. բայց վերջը մառանին խորերէն հնչեց հեռաւոր ժանգոտ դրան մը շռինչն որ իր ծխնիներուն վրայ կը շառաչէր, և նորէն ձայնը կտրեցաւ։

Սոսկալի խաւար մը կը պատէր ամէն կողմ։

Լա Շուէդ զամբղին մէջ բան մը փնտռեց, լուցկի մը շողացուց և փոքրիկ մոմ մը վառեց, որուն տկար նշոյլն այս չարաշուք սրահը սփռեցաւ։

Նոյն միջոցին կափարչին ծակէն Մէդը տ'էքօլին հրեշային դէմքը երևան ելաւ... լա Շուէդ իսկ սոսկումով ճիչ մը ձգեց երբ տեսաւ այն գունատ. կրճատ, վերալի և ահարկու գլուխը, փոսփորային աչերով՝ որ իբր սողուն մը կը սողար դետինը, աղջամղջին... և մոմին լուսէն հազիւ լուսաւորուած անդնդի մը մէջ։

Երբ պառաւն իր այլայլութիւնը փարատեց՝ տեսակ մը զարհուրելի շողոքորդութեամբ պոռաց։

— Ո՛րչափ ահարկու ես, հոգի. ես անգամ լեղասպատառ եղայ։

— Շո՛ւտ, շո՛ւտ... Վէօվ ուղին երթանք— ըսաւ աւա-

զակը երկաթէ ձողով մը կափարէին երկու թեւերը դոյելով.
— Կարելի է որ ժամէ մը բանը բանէն կ'անցնի։ Եթէ թա-
կարթ մ'է, դեռ լարած չեն անշուշտ... եթէ թակարդ չը-
կայ, առն ու աւարը մինակ մեզի կը մնայ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՆԿՈՒՂ

ՌՕՏՈԼՖ այսպէս թաւալ գլոր գալով՝ ընկեր անշարժ
մարեր էր սանդղին ոտքը։ Մէգը ա'բօլ աւելի խորունկ նկղի
մը (caveau) մուտքը քաշքշելով զանի տարեր վար ձգեր՝ և
հաստ երկաթապատ դուռ մը կուռ 'ի կուռ դոյեր էր, յե-
տոյ լա Շուէդը գտեր էր, որպէս զի երթայ անոր հետ գո-
ղութեան, և թերևս մարդասպանութեան գործը կատարէ,
վէօլ ուղիին տան մէջ։

Շուրջ ժամէ մ'ետքը, Ռօտոլֆ փոքր առ փոքր ինքզինքը
գտաւ։ Գետինը՝ խաւարին տեղ մը պառկեր էր. թեւերը չորս
կողմը տարածեց և քարաշէն աստիճաններու դպաւ։ Ոտքին
տակը պաղ պաղ բան մ'զգայ, ձեռքը հոն տարաւ... ջրա-
շեղջ մ'էր այն։

Բուռն ճիգ մ'ընելով սանդղին յետին ոտքը նստաւ. թմբ-
ռութիւնը քիչ քիչ սկսեր էր փարատիլ. քանի մը շարժումներ
ըրաւ. բարեբաղդօրէն և ոչ մէկ կողմը կոտրեր էր։ Ականջ
դրաւ... բան մը չլսեց... ոչ ինչ, այլ միայն ջրի ծանր
տակը, ու անքնդհատ կարկաչը։

Նախ այս կարկաչին պատճառը չհասկցաւ...։

Քանի կ'ուշաբերէր ու միտքը կարթննար՝ աւելի լաւ կըմ-
բռնէր Ռօտոլֆ այս դարանակալութեան պարագաները՝ որուն
զոհ ընկեր էր։ Իր բոլոր յիշատակներն ամփոփելու ժամա-
նակ՝ տեսաւ որ իր ոտներն թրջեր են. ծռելով դիտեց որ
ջուրը մինչև կրունկը (cheville) հասեր է։

Եւ չորս դին տիրող խորագին լռութեան մէջ միշտ կը
լսէր այն ծանր, տկար, յարատև կարկաչը...։ Այս անդամ
անոր պատճառն իմացաւ։ Ջուրը սկսեր էր կոխել նկուղը...
Սէն գետը սաստիկ յորդեր, և այս ստորերկրեայ տեղը գե-
տին երեսէն շատ վար էր...։

Սոյն վանդղէն բոլորովին սթափ եկաւ Ռօտոլֆ. կայծա-
կի պէս տամուկ սանդղէն վեր վազեց։ Կատարն որ հասաւ
դրան մը զարկաւ. զայն ղղրդեց ընդունայն. դուռը էր
ՃԷՆՆԷՐՈՆ վրայ կը կենար անսասան։

Այս յուսահատ վիճակին մէջ իր առաջին հոգը Մըրֆ
եղաւ։

— Եթէ անփոյթ մնայ, այս հրէշը անշուշտ պիտի սպան-
նէ զինքը... և ես— դոչեց նա —ես միայն անոր մահուան
պատճառ պիտի ըլլամ... խեղճ Մըրֆ...։

Այս հալումաշ մտմտուքը Ռօտոլֆը զայրացուց. ոտքերը
կամարի ձև՝ և ուսերը կորելով՝ բոլոր ոյժը թափեց որ դու-
ռը բանայ... բայց դուռը թեթև ճիկ մ'անգամ չհանեց...։
Նկղին մէջ լծակ մը գտնելու յուսով՝ վար իջաւ։ Սանդղին
երկրորդ աստիճանին վրայ քանի մը կլոր ու կակուղ մար-
միններ իր ոտքին տակ գլորեցան խոյս տալով. մուկեր էին՝
զոր ջուրը իրենց ծակերէն դուրս կը վանէր։ Ռօտոլֆ նկղին
չորս դին առ թարթափ ժուռ եկաւ ոտքերը մինչև ծունկը
ջրի մէջ։ Բան մը չգտաւ։ Նորէն սանդղէն ելաւ ծանր ծանր
և մթին յուսահատութեամբ մը պաշարուած։

Սանդղին ոտքերը համրեց, տասն երեք հատ էին. երեքն
արդէն ջրին մէջն էր։

Տասն երեք. աղէտաբեր թիւ...։ Կան վիճակներ, ուրա-
մենէն զօրեղ միտքերը նախապաշարումներէ զերծ չեն. այս
թիւին մէջ Ռօտոլֆ չարագուշակ նշան մը տեսաւ։ Մըրֆին
վանդալից կացութիւնը նորէն յիշեց։ Պարապ տեղը դրան
և հողին մէջ ծակ մը փնտռեց. խոնաւութենէն փայտն ու-
ռեր և խոնաւ գետնին կպեր էր պնդապէս։

Ռոտոլֆ բարձրաձայն պոռաց, կարծելով որ իր աղաղակը մինչև գինետան մարդերուն կը հասնի, և ապա ականջ դրաւ...։

Ոչ ինչ լսեց, ոչ այլ ինչ՝ բայց միայն ջրին ծանր, տըկար և անընդհատ կարկաչը. որ վեր կ'ելնէր անդադար։

Ռոտոլֆ կրնակը դրան տուած նստաւ տառապագին, ողբաց իր բարեկամը, որ թերևս մարդասպանի մը դանակին տակ կը մաքառէր։ Այն ատեն իր անխոհեմ և յանդուգն խորհուրդները կշտամբեց, թէև անոնց շարժառիթը զովելի էր և ազնիւ։ Կսկծանքը կը յիշէր Մըրֆին անձնուիրութեան բիւրաւոր փորձերը, անոր որ, թէև հարուստ և մեծարելի, իր սիրական կինն ու զաւակը թողեր էր որպէս զի Ռոտոլֆին առաջադրած տաժանելի ապաշնարութեան գործը 'ի կատար հանելու աջակից գտնուի։

Սակայն ջուրը միշտ կը բարձրանար... սանդղին հինգ ոտքը միայն դուրսն էին։ Ռոտոլֆ դրան մօտ կանգնած ատեն նկղին ձեղունին կը դպէր իր ճակատը։ Կարող էր հաշուել թէ իր ճգնաժամ որչափ ժամանակ պիտի տևէր։ Ծանր, լին և ահռելի մահ մ'էր այս։ Միտքն ընկաւ իր քովը պահած հրացանակը, և ինքզինքն վիրաւորելու վտանգն աչքն առնելով՝ դրան դէմ պարպելու կը պատրաստուէր զանի դղրդելու յուսով...։ Հրազէնը փնտռեց և չգտաւ. Մէգը տ'էքօլին հետ կռուելու ժամանակ սահեր ընկեր էր...։ Եթէ Մըրֆի վտանգի մէջ չըլլար, Ռոտոլֆ հանդարտութեամբ պիտի կրէր այս մահը...։ Թերևս եպերելի գործեր կատարեր էր Ռոտոլֆ.. սակայն բարիք ալ ըրած էր, և Աստուած գիտեր որ աւելի ևս ընելու տրամադիր կը գտնուէր։ Ռոտոլֆ դեռ անքաւելի յանցանքի մ'իբր արդար պատիժ սեպելով այս վիճակը, անտրտունջ կը կրէր սոյն յանկարծահաս վճիռը։ Նոր տանջանք մ'ալ եկաւ իր համբերութիւնը փորձելու։ Մուկերը ջրէն վանուելով՝ աստիճան առ աստիճան սանդղէն վեր ելեր էին։ Դռնէն կամ ուղղագիծ պատէ մագլցիլ կարող չըլլալով՝ Ռոտոլֆին հագուստներուն վրայ ապաւէնք մը փընտ-

ռեցին։ Երբ տեսաւ որ անոնց սառ թաթիկներն և թաւ մարմինը իր վրայ կը վխտան, անասելի զզուանք մը զգաց...։ Ուզեց զանոնք վոնտել, սակայն մուկերն իրենց սուր և պաղ ակռաներով սկսան անոր ձեռները կծել ու արիւնել։ Նորէն Ռոտոլֆ գոռ ու գոչում հանեց, ոչ ոք լսեց զինքը... փոքր մի ևս՝ ձայնն ալ պիտի դադրէր. ջուրը մինչև վիզը հասեր էր և քիչ. առնէն բերանը պիտի լեցուէր։

Օդը ծնշուելով սկսաւ պակսիլ այս դեռնափոր նեղ տեղը. թալիի առաջին նշանները Ռոտոլֆին վրայ երևցան. քունքին շնչերակները բուռն զարկին, գլխի պտոյտը շատցաւ, մռնելու մօտ էր...։ Արդէն ջուրն ականջին մօտ կը պղպջար, կարծէր թէ ինքն իր վրայ կը դառնար. իր մտքին նշոյլն ալ մարելու վրայ էր երբոր արագ ոտքի տոփիւններ և մարդու ձայն մը նկղին դրան կողմը հնչեցին։

Յոյս մը Ռոտոլֆին կիսամեռ մարմնին ու ոյժը կաղդուրեց, մտքի ծայրայեղ ճիգ մ'ընելով այս խօսքերն՝ որ վերջինն էին և հասկանալի, կարող եղաւ ըմբռնել.

— Հիմա ինչպէ՞ս է. տեսա՞ր որ մարդ մը չկայ։

— Նղովեց արմատ, իրաւ է... — պատասխանեց Շուրինէօրին ձայնը տրտմագին։

Եւ տոփիւնները հեռացան։

Ռոտոլֆ ուժաբեկ չկրցաւ աւելի ևս դիմանալ և սանդղէն վար սահեցաւ ընկաւ։

Յանկարծ նկղին դուռը դրսէն դղրդմամբ բացուեցաւ, անոր մէջ ամփոփուած ջուրն՝ իբր սահանքի դռնէ մը սկսաւ ժայթքիլ... և Շուրինէօր՝ որ ետ դարձեր էր (պիտի ըսենք վերջէն պատճառը) Ռոտոլֆին երկու բազուկները բռնեց, որ կէս մը խղդուած դրան սեմին փաթթուեր էր ջղաձիգ շարժումով մը, և ազատեց։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀԻՒԱՆԴԱԿ

ՌՕՏՈԼՖ Շուրինէօրի ձեռօք անխուսելի մահուանէ մ'ազատելէն ետև՝ կը փոխադրուի Վէօվ ուղիին տան մէջ, ուր լա Շուէդ կրկոտելու գացեր էր Մէդը տ'էքօլին գաւառքութենէ առաջ, և դոկիկ զարդարուն սենեկի մը մէջ կը պառկի. մեծ կրակ մը վառարանին մէջ կը փայլի. գարանի մը վրայ կոնթեղ մը պայծառ լոյս մը շորս դին կը սփռէ. հանաչ դամասկէ ծանր վարագոյրներով անկողնին մուտին մէջ կ'երևի։

Միջահասակ խափշիկ մը՝ որ Ֆերմակ մազեր և ունքեր, նարնջի ու կանաչ ժապաւէն մը կապուտ հագուստին կոճկնոցին վրայ ունի, ֆանթէքիանէ (à secondes) ժամացոյց մը ձախ ձեռքն բռնած է, որուն վրայ կը նայի և Ռօտոլֆին երակին զարկը կը համրէ աջ ձեռքով։

Այս հնդիկը ախուր է և խոկուն. Ռօտոլֆին քունը կը դիտէ զորովագին դէմքով մը։

Շուրինէօր հնոտի լաթեր հագած, վրան գլուխը տղմոտ՝ թևերը կախ ու ձեռներն իրարու կապած՝ անկողնին ոտքը կեցեր է անշարժ. իր շէկ մորուսն երկայն է. վշի գոյն խիտ դէմը թրջած ու խառն 'ի խուռն. իր պղնձի գոյն կերպարանը խորին գութ մը կը յայտնէ հիւանդին համար։ Հաղիւ կը համարձակի նա շունչ առնել, իր լանջին թռնոը կը ֆնչէ. հանդիստ չէ, քանի հնդիկ բժշկին տարտամ երեսը կը տեսնէ կը զողայ որ գուժալի լուր մը բերնէն չելնէ. իսկ Ռօտոլֆը նկատելով՝ սա փիլիսոփայական խորհրդածութիւնը կընէ ցած ձայնով մը։

— Այսպէս տկար տեսնելով՝ որո՞ւ մտքէն կ'անցնի, որ նոյն իսկ սոյն երիտասարդն է որ իմ վրայ վերջին կռուփները տեղացուց... կարծեմ թէ երկար ատեն վատուժ պիտի

մնայ... այնպէս չէ՞, տոքտոր։ Ճշմարիտը կըսեմ, թանգ ոընտնայ և կրնակս թմրկելով անցուցէ իր հիւանդութենէ ելած օրերը... ասով վրայ կրնայ գալ... ինչ կըսես. տոքտոր։

Հնդիկն անմռունչ թեթև նշան մ'ըրաւ ձեռքովը։

Շուրինէօր լեզուն կապեց մնայ։

— Բեր սա դեղջուրն— ըսաւ բժիշկը։

Շուրինէօր՝ որ իր բևեռապինդ մկներն ակնածութենէն գրան առջևը հաներ էր, անմիջապէս բթամատին վրայ քալելով գէպ 'ի գարանը գիմեց թեթևակի. բայց և այնպէս իր սրունքն ու թևերն այնչափ ծռմրկեց և օրորեց, այնչափ ուսերն ու կրնակն ուռեցուց ու տատանեց որ ուրիշ պարապայի մը մէջ սոյն այլանդակ շարժումները կրնային ծիծաղ շարժել։ Խեղճ մարդն իր բոլոր ծանրութիւնն մարմնոյն այն մասին կուզէր տալ, որ գետինը չէր դպեր, թէև գետինն որչափ որ օթոյ կար, կը սարսէր իր յաղթ ու ծանր հատակին տակ։ Գէշն այն է որ ծուռ բան մը չընելու եռանդէն և ուշի ուշով բերած թափանցիկ սրուակը (fiole) ձեռքէն չըսահեցնելու ահ ու դողէն, իր լայն ափին այնչափ սեղմեց անոր ծռիկը (goulot) որ շիշն է կոտրեցաւ և դեղջուրը գորգին վրայ թափեցաւ։

Այս ձախող դէպքին վրայ՝ Շուրինէօր քար կտրեցաւ, իր խոշոր մկ սրունքն օդին մէջ, իր բթամատները ջղաձիգ պըրկուն (contracté) և անշարժ մնացին, և շփոթալի՝ մէյ մը բըժշկին երեսը սկսաւ նայիլ և մէյ մը ձեռքը մնացած սրուակի կտորին։

— Ի՞նչ անճարակ մարդ— գոչեց բժիշկը սրանեղուն թեամբ մը։

— Էյ, անիծիր արմատ, ինչ անբան եմ.— յարեց Շուրինէօր ինքզինքը յանդիմանելով։

— Ի՛հ, հոգ չէ, — ըսաւ Էսկուլապը գարանը նայելով— աղէկ որ սխալեր ես. ես միւս սրուակը կուզէի...։

— Կարմրիկ՞ սրուակը.— ըսաւ մեղմիկ մ'անճարակ հիւանդապահը։

— Հարկաւ... ուրիշ սրուակ չկայ։

Շուրինէօր՝ զինուորական վաղեմի մեկ սովորութեանը համեմատ՝ շուտ մը դարշապարին վրայ շրջան մ'ըրաւ և սրուակին բեկորները ճղմեց. աւելի փոփուկ ոտքեր չարաչար կը ճերաւորուէին, բայց մեր հին փայտկիրը զայդ մը բնական մոյկեր ունէր ձիու սմբակին պէս կարծը։

— Առջիդ եաիդ նայէ, հիմա ոտքդ պիտի արիւնես— ըսաւ բժիշկը։

Բայց Շուրինէօր սկանջ չկախեց այս աղդարարութեան, այլ դլխովին իր նոր գործոնը զբաղած՝ որմէ պատուով կուդէր ելնել, որպէս զի իր առջի անճարակութիւնը մոռցնէ, տեսնելու էր թէ ինչ քնքուշ, ինչ թեթև և ինչ խղճահար կերպով՝ իր երկու խոշոր մատերն երկնցուց և նրբին շիշն բռնեց։ Թիթեռնիկ մը՝ իր թեերուն ոսկեդինիկ փոշին մեկ հատիկն անդամ չդիտի կարենար Շուրինէօրի բթամատին և ցցամատին մէջ տեղը ձդել։

Սև բժիշկն այս ծայրայեղ զգուշութիւնը դիտելով՝ վախցաւ որ նոր ձուն մ'ալ չդատահի. սակայն դեղջուրն անվնաս իր ձեռքն հասաւ։ Շուրինէօր՝ անկողնին մօտելու ատենը՝ միւս սրուակին մնացած կոտրտուքն իր ներքանին տակ նորէն ճղմեց։

— Բայց դու խե՛ւ ես. մէթէ մէտք ունիս ոտքերդ հաշմոտելու— ըսաւ բժիշկը մեղմիկ մը։

Շուրինէօր զարմանքով անոր երեսը նայեցաւ։

— Հաշմոտէ՞լ ըսիր, պարոն բժիշկ։

— Ահա երկու անդամ է որ ապակիները կը կոխկրտես։

— Եթէ այդ է միայն ըսելիքդ, հոդ մ'ըներ... ոտքեր-ցուս պակ պոխոպակ ֆամոշ եմ։

— Պզտի դդալ մը.— ըսաւ բժիշկը։

Շուրինէօր նորէն սկսաւ իր ջիւ-հարբական (sylphidique) շարժանները, և բժշկին ուզածը բերաւ... Ռոտոլֆ դեղջուրէն քանի մը դդալ առնելէն ետև՝ շարժում մ'ըրաւ և քիչ մը ձեռները շարժեց։

— Լա՛ւ, լա՛ւ, թմրութիւնն անցնելու վրայ է— ըսաւ ինքնին բժիշկը. —արիւնն աղէկ եկաւ, վտանգ չկայ։

— Ազատեցա՛ւ, ապրիս, կեցցէ Սահմանադրութիւնը.— գոչեց Շուրինէօր իր ուրախութիւնը չկրնալով զսպել։

— Կաղաչեմ լուռ ու հանդարտ կեցիր— ըսաւ անոր հնդիկը։

— Շատ աղէկ, պարոն բժիշկ։

— Երակը կարդին է... գոհ եմ... գոհ...։

— Հապա պարոն Ռոտոլֆին խեղճ բարեկամը ինչ վիճակի մէջ է, տոքտոր։ Նեղվից արմատ. եթէ իմանայ որ... բաղդունի որ...։

— Լռութիւն։

— Շա՛տ աղէկ, տոքտոր։

— Նստիր։

— Բայց, պարոն...։

— Նստիր ըսի. դլուխս ցաւ մնաս ասդիս անդին դառնալովդ. պէտք է որ հանդարտ ըլլամ։ Արի, նստիր նայիմ։

— Պարոն բժիշկ, աղտոտ եմ, աղտոտ լաստի փէտի մը պէս՝ դոր իր լաստէն կը հանեն. կամ կարասին կը մրոտեմ։

— Եթէ անտանկ է դեռինը նստիր։

— Օթոցը կաղտոտեմ։

— Է՛, ինչ որ կուդես ըսէ, բայց, Աստուծոյ սիրուն ըլլայ, հանդարտ կեցիր— ըսաւ բժիշկը անհամբեր, թիկնաթոռի մը մէջ լարուելով նստաւ, և ճակատը ձեռքին կռթնցուց։

Շուրինէօր՝ պահ մը կուռքի պէս մնալէն ետև՝ չէ թէ հանգչելու, այլ բժշկին հնազանդելու մտօք, մեծ զգուշութեամբ աթոռ մ'առաւ, ուրախ դուարթ դալն դարձուց այնպէս որ աթոռին կրնակը օթոցին վրայ եկաւ, այն բարեմիտ դիտամբ որ կոկիկ ու հանդարտ նստի անոր առջևի ցուպերուն վրայ և բան մը չաղտոտէ... այս գործողութիւնը ծանր ծանր ու գողտրիկ կերպով մը կատարեց... Դժբաղդաբար Շուրինէօր լծակի օրէնքն ու մարմիններու հաւասարակշռութիւնն ինչ է չդիտէր. աթոռը յատիլիներս դարձաւ (basculer), խեղճ մարդն ակամայ

շարժումով մը թեւերն առաջ նետեց և աշտանակիր մը (guéridon) մը տապալեց, որուն վրայ ափսէ մը, թաս մը և թէյաման մը կար։

Այս սոսկալի աղմկէն հնդիկ բժիշկն իր սենեակն վրայ ուսելով գլուխը վերուց. մինչդեռ Ռօտոլֆ ընդոստ արթննալով եւ անկողնին մէջ նստաւ, անձկութեամբ չորս դին նայեցաւ, գաղափարներն ամփոփեց ու պոռաց։

— Մըրֆ, ո՞ւր է Մըրֆը։

— Ձեր վսեմափայլութիւնը, թող հոգ չընէ— ըսաւ հնդիկը սկսածութեամբ— մեծ յոյս կայ որ բժշկութի։

— Միթէ վիրաւորուած է— գոչեց Ռօտոլֆ։

— Աւաղ, այո՛, տէր իմ։

— Ո՞ւր է... տեսնել կուզեմ զինքը։

Եւ Ռօտոլֆ փորձ մը փորձեց ելնելու. բայց ուժասպառ ընկաւ Ճնշուած տեղերուն յատէն, որոց կսկիծն այն սահմն կզգար։

— Զիս Մըրֆին մօտ տարէք, քալելու ոյժ չունիմ— գոչեց նա։

— Տէր իմ կը նեղէ նա... և վտանգաւոր է այս միջոցին սաստիկ այլայլութիւն մ'անոր պատճառել։

— Ա՜հ, կը խաբէք զիս. մեռած է... սպաննուած մեռած է...՝ Եւ ես... ե՛ս անոր սպաննութեան պատճառ եղայ— պոռաց Ռօտոլֆ կսկծալի ձայնով մը և ձեռները դէպ 'ի երկինք բարձրացուց։

— Տէր իմ, զիտէք որ սուտ չեմ խօսիր... պատուիս վրայ կը հաւատամ ձեզի որ Մըրֆ կենդանի է... թէև կարեւէր վիրաւորուած, սակայն մեր յոյսը մեծ է որ բժշկութիւն պիտի գտնէ։

— Սոսկալի լրի մը զիս պատրաստելու նպատակով այդպէս կը խօսիք... անշուշտ յուսահատ վիճակի մը մէջ կը գտնուի։

— Տէր իմ...։

— Հաւատի եմ որ... զիս կը խաբէք... կուզեմ որ անմիջապէս զիս անոր մօտ տանիք... բարեկամի տեսքը միշտ օգտաբեր է...։

— Նորէն կը կրկնեմ, տէր իմ, պատիւս վկայ որ, միայն

թէ արտօրէն գիպուած մը չպատահի, Մըրֆ անկողնէն պիտի ելնէ։

— Իրաւ է, իրաւ կըսես, իմ սիրելի Դաւիթ։

— Ա՜հ, ճշմարիտը, տէր իմ։

— Մտիկ ըրէ, գիտես թէ որչափ կը յարգեմ քեզ, քանի որ իմ տունէս ես, միշտ իմ վստահութիւնս կը վայելես... երբեք անպիտ գիտութեանդ վրայ կասկած ունեցած չեմ... բայց կաղաչեմ եթէ բուժային խորհուրդ մ'ընելու (consultation) պէտքը կզգաս...։

— Տէր իմ, առաջ ես ալ այդ մտածեցի. իսկ այժմ այդպիսի խորհուրդ մը բոլորովին անօգուտ կը գտնեմ, հաւատացէք ինձ.. ասկից զատ ձեր երէկուան հրամանին համեմատ՝ չուզեցի օտար մարդեր այս տեղ հրաւիրել...։

— Բայց այս բաներն ինչպէս գարձան. — ըսաւ Ռօտոլֆ հնդկին խօսքը կտրելով — ոչ քաշեց զիս այն գետնափորէն՝ ուր կը խղդուէի... Շուրինէօրին ձայնը լսելուս մէկ շփոթի յիշատակն ունիմ, արդեօք կը սխալիմ։

— Ամենևին, ոչ, այս բարեմիտ մարդն ամէն բան կրնայ պատմել ձեզ, տէր իմ, որովհետև ամէն բան ինքն ըրաւ։

— Բայց զինքը չեմ տեսներ, ո՞ւր է։

Բժիշկն աչքովը փնտռեց նորելուկ հիւանդպահը, որ իր անկամն շփոթած՝ անկողնին վարագոյրին ետեւը պահուտեր էր։

— Ահա այս տեղն է— ըսաւ բժիշկը —ամօթահար կ'երևի։

— Ո՞ւր ես, յառաջ եկուր, կարիճս— ըսաւ Ռօտոլֆ ձեռքը իր ազատչին կարկառելով։

Շուրինէօրին շփոթութիւնն սակաւ առ սակաւ կաւելար քանի կը լսէր որ սև բժիշկը սակայ, որ իմ և վսեմափայլութեան բռնելով կը խօսակցէր Ռօտոլֆին հետ։

— Մօտ եկուր... տուր նայիմ ձեռքդ— ըսաւ Ռօտոլֆ։

— Ներում շնորհէ, պարոն, ոչ, տէր իմ պիտի ըսէի... վսեմափայլութիւն... բայց...։

— Առաջուան պէս պարոն Ռօտոլֆ անուանէ զիս... այդ

անունը աւելի կը սիրեմ։

— Ես ալ այնպէս, չեմ շփոթիր...։ Բայց ձեռքս... խնդրեմ ներէ... այնչափ գործ ունիմ քանի մ'օրէ 'ի վեր որ...։

— Խօսք կը հասկընամ. ձեռքդ տուր նայիմ։

Ռոտոլֆին թախանձանքէն ստիպեալ՝ Շուրինէօր երկչոտութեամբ իր մրոտ և կոշտ ձեռքն երկնցուց... Ռոտոլֆ սեղմեց զայն մտերմօրէն։

— Հիմա նստիր նայիմ, և ամէն բան ինձ պատմէ... գետնափորն ինչպէս գտար։ Աղէկ միտքս ընկաւ, հապա Մէգը տ'էքօլը։

— Հոս ապահով տեղ մ'է նա— ըսաւ սև բժիշկը։

— Երկուքն ալ... ինքը և լա Շուէդ փէտի տրցակի պէս կապուած են... անշուշտ իրարու երես նայելով կը գարշին և աղուոր պատկեր մը կը ներկայեն.

— Հապա իմ թշուառ Մըրֆս, Ասուած իմ, դեռ նոր կը մտածեմ... Դաւիթ ո՞ր կողմն առած է վէրքը։

— Ալ կողմին վրայ, աէր իմ... բարեբաղդաբար դանակը կշտին վարի դին գպեր է։

— Ո՛հ, սոսկալի վրէժ մը պիտի լուծեմ...։ Դաւիթ, յոյսս քու վրադ է։

— Արդէն գիտէք, աէր իմ, հոգւով մարմնով քուկդ եմ — պատասխանեց հնդիկն պաղութեամբ մը։

— Բայց ինչպէս ժամանակին հասեր ես այս տեղ, իմ կրաբիձս— ըսաւ Ռոտոլֆ Շուրինէօրին։

— Եթէ կը հաճիք, աէր... ոչ, պարոն... վսեմափայլութիւն... Ռոտոլֆ... թող ծայրէն սկսիմ։

— Իրաւունք ունիս. ականջս քեզի է. բայց զիս Ռոտոլֆ անուանէ միշտ։

— Շատ լաւ... անշուշտ կը յիշէք որ երէկ իրկուն, 'ի դարձին գիւղէն, ուր թշուառ Կուալէօղլին հետ գայեր էիք, ինձ ըսիք։ «Աշխատէ գտիր Մէգը տ'էքօլը Միջնաքաղքին մէջ. անոր ըսէ թէ՝ աղուոր կողոպուտ մը կայ ձեռքի տակ, թէ դու չես ուզեր անոր մէջ մատ դնել, բայց եթէ քու տեղդ իմանալ կուզէ, թող վաղը (այս առաւ էր) Պէրսիի քաղքին դուռը Բանկէ-Ֆլէորի պանդոկը գտնուի և հոն կը գտնէ այն անձն որ երդօնը պատրաստէր է։»

— Վերջը։

— Ձեղմէ կը բաժնուիմ, Միջնաքաղքը կը վազեմ... օկրուհիին պանդոկը կերթամ, Մէգը տ'էքօլ չկայ. Ս. Էլուա փողոցը, Գէվ փողոցը, Վիէյլ-Տրաբրի փողոցը կը զարնեմ... հոգի չկայ...։ Հուսկ ուրեմն անոր հեռքը կը գտնեմ այն շուտիկ լա Շուէդին հետ՝ Նօդր-Տամի գաւթին մօտ՝ փոքրիկ դերձակի մը դրպակին մէջ, որ փերեզակ մը, գողակից մը, գող մ'է։ Կ'երևի թէ՝ սպաւոր պարոնէն, որ ձեզի բան մ'ընել կուզէր, շորթած ստակով հպարտիլ շքուիլ կուզէին և պատահական զգեստներ կը գնէին։ Լա Շուէդ կարմիր շալի մը սակարկութիւնը կընէր...։ Օ՛ պատաւ հրէշուհի...։ Իսկ Մէգը տ'էքօլին այն խօսքը կը բանամ. ինձ կըսէ թէ իր բանին կգայ և որոշեալ տեղը պիտի գտնուի։ Լաւ, այս առաւ, ձեր երէկուան հրամանին համեմատ, հոս կգամ որ պատասխանը բերեմ...։ Դուք ալ ինձ կըսէք։ «Տղայ, վաղն արևը չելած եկուր, օրդ հոս կ'անցնես, և իրկունը... բան մը պիտի տեսնես որ տեսնելդ կ'ուժէ...։» Դուք քիչէն քիչն ըսիք, բայց ես քիչէն շատ հասկցայ։ Իրաւի ըսի, պատրաստի ծուղակ մ'է այս Մէգը տ'էքօլին խաղ մը խաղալու, խայծ մ'է որ անոր բերանը կը նետէ որսալու համար։ Եւ արդարև, աննման եղերնագործ մ'է... եղնավաճառն ըսպաննողն այն է, այն է կըսեն Ռուլ փողոցն ուրիշ մէկու մը գլուխն ուտողը...։ Քաջ գի...։

— Յանցանքն իմն է որ ամէն բան մանր չայտնեցի քեզի, աղայ...։ Կարելի է այն ատեն այս սոսկալի աղէտը չէր պատահեր։

— Այդ ձեր գիտնալիք բանն էր, պարոն Ռոտոլֆ, իմ գիտնալիք բանս էր ձեզի ծառայել... վասն զի, ինչո՞

չըսեմ... ինչ է պատճառը չգիտեմ, արդէն ալ ըսեր եմ ձեզի, կարծեմ թէ քու պահապան շունդ եմ. վերջապէս... բաւ է...: Ուստի առանձինս ըսի. պարոն Ռոտոլֆ օրականս կը վճարէ, օրս իրն է, երթամ պիտի անոր համար գործածեմ...: Ասոր վրայ սա խորհրդածութիւնը կընեմ: Սէգր ա՛ֆքօլ հանած վարածին մէկն է. պիտի կասկածի անշուշտ դարան մը կը լարուի իրեն համար...: Իրաւ է որ պարոն Ռոտոլֆ գործը վաղուան ձգելու պիտի աշխատի, բայց անօրէն աւազակն այս կողմի շրջականները դիտելու համար՝ այսօր կելնէ այս կողմերը կգայ կը թափառի, և եթէ պարոն Ռոտոլֆին վրայ կասկածն աւելնայ, ուրիշ գողակից մ'ալ հետը կ'առնու, որպէս զի կողոպուտը միւսակն ուտէ: Ասոր առաջն առնելու համար, կըսեմ իրովի: Պէտք է որ երթամ անանկ տեղ մը սքլիմ՝ ուսկից կարենամ տեսնել պատերը, պարտէզին դուռը. միւսակ այս մուտքն ունի...: Եթէ ծածուկ խորշ մը գտնեմ... քանի որ կ'անձրևէ, բոլոր օրը հոն կ'անցնեմ, մանաւանդ գիշերը և վաղն առտու պարոն Ռոտոլֆին ալ տունը երթալու պատրաստ կը գտնուիմ: Ուստի նորէն Վէօվ ուղին կը դառնամ որ սոր մը գտնեմ: Ի՞նչ տեսնեմ աղէկ. ձեր դռնէն տաս քայլ հեռու գինետանի մը, (bouchon)... վարի յարկը պատուհանին մօտ կը նստիմ. մէկ լիտր գինի ու քառորդ լիտրի ընկոյզ բերել կտամ, ըսելով թէ բարեկամներու կսպասեմ... կուղ մը և մեծ կին մը. այս ընտրեցի որ աւելի բնական երևի: Կը տեղաւորուիմ և կըսկսիմ ձեր դուռը նայիլ...: Զրհեղեղի պէս անձրև կը վաղէր, անոյ ու դարձ չկար, և գիշերը կը մօտենար...:

— Բայց— ըսաւ Ռոտոլֆ Շուրինէօրին խօսքը կտրելով.—ինչո՞ւ համար շիտակ իմ տունս չգացիր:

— Որովհետև ըսեր էիք որ միւս առտու գամ, պարոն Ռոտոլֆ... անկից յառաջ գալու սիրտ չբրի, որ հացկատակի կամ պապո-կի տեղ չանցնիմ, ինչպէս որ կըսեն պատուհանները...: Կիմանաք...: Ուստի գինետանկին պատուհանն էի, ընկոյզներս

կը կտրէի, թերթիկ գինիս (piquette) կը տանկէի, երբ մը-շուշին մէջ կը տեսնեմ որ լա Շուէդ՝ Գրա-Ռուժին լակոտ Գօրդիյարին հետ հեռուէն կը փրթի: Լա՛... կըսեմ ինքնին... հիմա բանը պիտի եկի: Եւ իրաւ, Գօրդիյար ուղիին մէկ փոսին մէջ կը կզկի կը մնայ խլրդի պես... իսկ լա Շուէդ գտակը կը հանէ, գրպանը կը դնէ և դուռը կը գարնէ: Եւ խեղճ Մբրֆ, ձեր բարեկամը դուռը կը բանայ փակնուհիին, որ ահա վէվէուկ մը հանելով պարտիզին չորս գինիկը վազվզէ: Ինքզինքս կուտէի որ հասկընամ թէ լա Շուէդ ինչ գործ ունի հոն...: Ի վերջէ դուրս կ'ելնէ, գտակը կը դնէ, քանի մը բառ կըսէ Գօրդիյարին, որ շուտ մ'իր ծակը կը պահուրտի, և ինքը կծիկը կ'առնէ կերթայ...: Մամուքը նորէն գլխս կ'առնէ, և կըսեմ. խելքս տեղ ըրա... չվոթինք. բանն այս է: Գօրդիյար լա Շուէդին հետ եկաւ, ուրեմն Սէգր ա՛ֆքօլն ու պարոն Ռոտոլֆ Գրա-Ռուժին տունն են: Լա Շուէդ եկած է տան ձոկ ու ձոկը գիտելու. տարակոյս չկայ որ այս իրիկուն տունը պիտի կոխեն, Պ. Ռոտոլֆ, որ կարծէ թէ յարձակումը վաղը պիտի կատարուի, ապուրը կուտէ: Եթէ Պ. Ռոտոլֆ նեղն ընկած է, պէտք է որ Գրա-Ռուժին տունն երթամ և անցած դարձածը իմանամ. այո՛, բայց եթէ նոյն միջոցին Սէգր ա՛ֆքօլ հոս գայ... այս ալ հաւանական է...: Ուրեմն հարկ է տունը մնալ և Պ. Մբրֆին ըսել... արթուն կեցիր...: Այո՛, բայց սա բզէզ Գօրդիյարը դրան քովն է. դուռը զարնելս պիտի տեսնէ, և լա Շուէդին իմաց պիտի տայ. եթէ ան ալ գայ... ամէն բան ծուռ պիտի երթայ... մանաւանդ չգիտցուիր թէ Պ. Ռոտոլֆ ինչ որոշում ըրած է այս իրիկուան համար...: Նեղվիցս արմատ, այս այտներն և ականջներն ուղեղիս մէջ կը բզբզային... գլուխս իմս չէր, չորս կողմը կրակ կը տեսնէի... և ինչ ընելիքս չգիտէի: Ըսի իրովի. արի դուրս ելիր, կարելի է բայց օդը քեզի աղէկ խորհուրդ մը փչէ: Դուրս կելնեմ... բայց օդը ինձի խորհուրդ մը կտայ: Բաղէնս և փողպատս

կը հանեմ, Դորդիյարին ծակը կերթամ, ըզէզը կրնակին կաշիէն կը բռնեմ. պարապ տեղ կիյ կտայ, կը ճանկրտէ... կը ճչէ, հոգ չեմ ըներ... զանի բաղէնիս մէջ կը դնեմ, ծրարի մը պէս կը փաթթեմ, մէկ ծայրը թեղնիկներով, (manche) մեսը՝ պողպատով կը կապեմ. շունչը կարած չէր, ծրարը թեւիս տակ կառնեմ, այն կողմերը ցած պատով պարտէզ մը կը տեսնեմ և Դորդիյարը նորատունկ կաղամբի մը մէջ կը նետեմ, խոճկորի պէս (cochon de lait) կը խանչէր, բայց քանի մը՝ քայլ հեռուէն ձայնը չէր լսուեր...: Անկից ճամբայ կելնեմ, առեւնն էր: Ուղիին մէջ ծառերէն մէկուն վրայ կը մագլցիմ, ճիշտ ձեր դրան դիմացի ծառը, Դորդիյարի փոսին վրայ: Տաս վայրկենէ հետ՝ ոտքի ձայն մը կը լսեմ. անձրեւը շարունակ կը վազէր: Սաստիկ մութ էր... ականջ կը դնեմ, եկողը լա Շուէդն էր:

— Դորդիյա՛ր... Դորդիյա՛ր...— կըսէ լա Շուէդ կամացուկ մը: —Կերևի թէ լեկոզը անձրևին ապասելու ձանձրացեր է — ըսաւ Մէդը ա՛էքօլ հայհոյելով: —Եթէ ձեռքս անցնի, շան ոլորին պիտի խզեմ...: —Հոգի, մի՛ բարկանար, կարելի է որ բան մ՚իմաց տալու գնաց... ո՛ զիտէ, արդեօք ծուզակ մը կայ... պարոնը կ՚առաջարկէր որ տունը ժամը տասին կոխենք...: —Ես ալ անոր համար կ՚արտորամ— կը պատասխանէ Մէդը ա՛էքօլ, —դեռ ժամը եօթն է: Դու սատկը աչքովդ տեսար, անոր նայէ... ով որ վտանգի մէջ չնեռուիր, անօթի կը մնայ. տուր նայիմ սա Ֆռ-շանը (monseigneur) և մկրատը»:

— Ի՞նչ տեսակ զորձիներ են...— հարցուց Ռոտոլֆ:

— Մէդը ա՛էքօլ Պրա-Ռուժին տունէն կգար. ո՛հ, Պրա-Ռուժին տունն ալ գարբնարան մ՚է...: Մէդը ա՛էքօլ մէկ բոպէի մէջ դուռը բռնի կը բանայ և լա Շուէդին կըսէ.— Հոգ կեցիր. աչքդ չորս բաց և եթէ ձայն մ՚առնես, դու ալ ցեն ցենի տուր:

— Դու ալ բաճկոնիդ կոճակին անցուր շամբրդ որ շուտ

մը քաշես— կըսէ միակնուհին: Եւ Մէդը ա՛էքօլ պարտէզը կը մտնէ...: Ես այս տեսնելով՝ ծառէս վար կը ցատկեմ, լա Շուէդին վրայ կ՚ինկնամ և անոր... աղէկ տեսակէն՝ երկու հատ ըմբոշկ կ՚ինչեցնեմ այնպէս որ անշունչ զետինը կը փռուի...: Իսկոյն պարտէզը կը վազեմ... Ի՜նչ զովիկ արմատ, Պ. Ռոտոլֆ... ուշ հասայ...

— Թշուառ Մբրֆ:

— Խեղճը դրանդին վրայ (perron) Մէդը ա՛էքօլին հետ կը զբօսէր. արդէն թէև վիրաւոր, անդուլ կը կուռէր, առանց օգնութիւն կանչելու: Քաջ մարդ. հաւատարիմ շուներու կը նմանի: Ակռաներով՝ չէ թէ լեզուով զանի բզկտել պէտք է կըսեմ, և երեսն՝ի վար երկուսին վրայ ալ կ՚ինկնամ, Մէդը ա՛էքօլին մէկ ոտքէն բռնելով՝ քանի որ նոյն միջոցին այն կտորը մինակ պարապ էր: —Կեցցէ Սահմանադրութիւն, ես, Շուրինէօրն եմ, Պ. Մբրֆ. միասին, նայիմ քեզ, տափենք: —Ա՛հ, անօրէ՛ն, ո՞ր ծակէն ելար դու:—պոռաց Մէդը ա՛էքօլ զայրագին: —Հիմա կը հասկրցընեմ քեզի —Պատասխան կտամ, ծնկերուս մէջ անոր մէկ սրունքը կը ճնշեմ և թեւին մէկը կը պրկեմ, այն թեւն որ դաշոյնը բռներ էր, և լաւն էր...:

— Ո՞ւր է... Պ. Ռոտոլֆը, — կը զոչէ Մբրֆ՝ մէկ կողմէն ինձի օգնելով:

— Աղնիւ, քաջ մարդ: —Մրմնջեց Ռոտոլֆ վշտագին:

— Զգիտեմ— կը պատասխանեմ: —Կարելի է որ այս ապիրատը զանի սպաննեց...: Եւ Մէդը ա՛էքօլն աւելի կը նեղեմ, թէև կը ջանար իր դաշունովը զիս շամփրել, բայց ես լանջս անոր թեւին վրայ դրած էի և մինակ դաստակն ազատ էր: —Ուրեմն միս մինակ ես.— կըսեմ Պ. Մբրֆին Մէդը ա՛էքօլին հետ վէգս շարունակելով: — Այս կողմերը մարդ կայ,— կը պատասխանէ ինձ, —բայց եթէ պոռամ չեն լսեր: —Հեռու է: —Տաս բոպէի չափ: —Ուրեմն, ե-

թէ անյորդներ կան, պռռանք, մեղի կրնան հասնիլ։ —Չէ՛, քանի որ մեր ձեռքին տակն է, պէտք է որ այս տեղ պահենք զանի... բայց ուժէ ընկած եմ... և վիրաւորուած»։ —Ուրեմն, էֆ նզովից արմատ, գնա մարդ կանչէ, թէ որ կրնաս եկնել. ես կաշխատիմ զանի ձեռքէս չփախչնելու։— Պ. Մերֆ կը պրծի և Սէդը տ'էքօլին հետ մինակ կը մնամ... նզովից արմատ, գովուելու համար չեմ ըսեր... բայց վայրկեան մ'եղաւ որ զուարճալի չէր վիճակս...։ Պէս մը գեսինը, և կէս մը փոքրիկ սանդղին սալաքարին վրայ էինք... թեւերս աւազակին վիզը փաթթեր էի... այսոր անոր այսին կպեր էր...։ Կովի պէս շունչ կառնէր կտար. ակռաներուն կրճտիւնը կը լսէի... սասսիկ մութ էր... միշտ անձրեւը կը վազէր... գաւիթը դանուած կանթեղը քիչ մը կը լուսաւորէր մէջ... իր սրունքներէն մէկը իմինիս մէջ անցուցեր էի... բայց դարձեալ, իր երիկամն այնչափ զօրաւոր էր որ իր մարմնին հետ մէկտեղ գեռնէն մէկ ոտնաչափ բարձր կը վերցնէր զիս։ Կուզէր զիս խածնել, բայց չէր կարող։ Երբէք այն իրիկուան ուժիս պէս ոյժ մ'ունեցած չեմ...։ Նզովից արմատ... սիրտս կը զարնէր... բայց աղէկ կողմն...։ Ինքնովին կըսէի. «Կատաղի շուն մը բռնող կաշկանդող մարդու մը կը նմանիմ և չեմ թողուր որ ուրիշները խածնէ... —Թոյլ տուր երթամ, քեզի բան մը չեմ ըներ. — կըսէ ինձ Սէդը տ'էքօլ շնչասպառ ձայնով մը։ —Ա՛հ, վատ ես դու,— կըսեմ անոր —Ուրեմն քու բոլոր արիութիւնդ լակ ոյժդ է։ Կողոպտելու համար Բուասիի կովի վաճառականը չէիր համարձակեր սպաննելու թէ որ ինձի չափ ոյժ ունենար։—Ո՛չ— կըսէ ինձ, —բայց անոր պէս քեզ ալ պիսպանեմ։— Այս ըսելով մարմին այնչափ ուժգին վեր կը նետէ՝ նոյն միջոցին սրունքներն ալ տնկելով, որ կիսովին զիս տակը կառնէ...։ Եթէ գաշոյնը բռնած թեւը լաւ մը չսեղմի... բանս բուսեր էր...։ Նոյն պահուն իմ ձախ դաստակս սխալ տեղ մը բռնեց, մատերս քակելու սկսուած էի...։ Դոր-

ձը կը դէշնար...։ Ուրովի կըսեմ։ Ես տակն եմ, ինքը վրա։ Հիմա պիտի սպաննէ զիս։ Փոյթս չէ, իմ տեղս աւելի կը սիրեմ քան թէ իրը... Պ. Ռօսոլֆ ինձ ըսաւ սր սիրա ուսպասիւ ունիմ... կղզամ որ իրաւ է...։ Այսպէս կը մտածէի երբ լա Շուէդը կը տեսնեմ... իր կլոր աչքով և կարմիր շաղը... սանդղին վրայ կանգուն...։ Նզովից արմատ, կարծեցի թէ խոլիկ մը (couchemâr) կը տեսնեմ...։ —Ֆինէդ, — կը գոչէ անոր Մէդը տ'էքօլ —գանակս ձեռքէս ընկաւ, առ գեանէն... սա տեղն... իր տակն է... և զարկ... կրնակին զարկ, երիւս ուսին մէջ տեղը...։ —Կեցիր, հոգի, կեցիր որ ինքզինքս գանեմ։— Եւ ահա լա Շուէդ (բու) կը գառնայ... մեր չոր գին կը գառնայ ու գառնայ իրը ճշմարիտ չարագուշակ թռչուն մը։ Վերջապէս գաշոյնը կը տեսնէ և կը ցատկի որ առնէ... բայց փորի վրայ պառկած ըլլալուս ոտքովս անանկ հարուած մը կտամ կուրծքին՝ որ յափսիթերս կը գըլլատրի գեսինը, չորս թաթուլներն օդին մէջ օրորելով։ Նորէն ոտք կելնէ և կը փրփրի։ Ճարս հատեր էր, նորէն Մէդը տ'էքօլին կը փաթթուէի, բայց վարէն անանկ հարուածներ կտար կղակիս որ մաղ մեաց ձեռքերս պիտի քակէի, երբ երեք չորս գինեալ կարիճներ կը տեսնեմ որ սանդղէն վար կ'իջնէին... և Մերֆ, բոլորովին գունատ՝ բժշկին կոթներ էր և հազիւ քալելու կարողութիւն ունէր...։ Մէդը տ'էքօլ և լա Շուէդ կը բռնուին և կը կապուին...։ Բայց այս բաւական չէր, ինձ Պ. Ռօսոլֆը պէտք էր...։ Լա Շուէդին վզէն կը բռնեմ, խեղճ լա Կուալէօզին ակռան կը յիշեմ, և քաւթաոին թեւը պրկելով կը պլորեմ ու կըսեմ։ —Ո՞ւր է Ռօսոլֆ։ Ձայն չհաներ. մէյ մ'ալ կոլրեմ և կը պոռայ։ —Պրա—Ռուժին Աբլանոթ Սէրթ օթեանը, շատմարանին մէջ...»։ Շատ աղէկ։ Երթալու ատեն Գօրգիյարը իր կազամբին մէջ կը փնտռեմ որ հետս առնեմ, ճամբուս վրայ էր... կը նայիմ... մինակ բաղէնս կը տեսնեմ... չոր ակռաներովը բզկտեր էր։ Աբլանոթ Սէրթը որ կը հասնիմ Պրա—Ռուժին կոկորդէն կը

բռնեմ ու կը հարցնեմ...։ Ո՞ւր է Մէդը տ'Էքօլին հետ այս իրիկուն հոս եկող երիտասարդը։

— Այդչափ մի սեղմեր կոկորդս, հիմա կըսեմ քեզի, կեցիր անոր խաղ մը խաղալ ուզեցին և մառանիս մէջ պահեցին, երթանք դուռը բանալու։» — Վար կ'իջնենք... մարդ չկար... — Կրնակս դարձուցած ատենս դուրս ելած պիտի ըլլայ— ըսաւ Պրա-Ռուժ —տեսար որ մարդ մը չկայ։» — Տրտում տխուր կը դառնայի, երբ լապտերին լուսովը մառանին խորն ուրիշ դուռ մը կը տեսնեմ։ Խզոյն կը վազեմ, դուռը կը քաշեմ կը բանամ, և երեսիս կընդունիմ դոյլ մը ջուր։ Ձեր երկու թևերն ջրէն դուրս կը տեսնեմ... ձկի պէս ձեզ կորսամ և շալակս տոնելով այս տեղ կը բերեմ, ինչու որ կառք մը բռնելու մարդ չկար։ Ահա բանը, Պ. Ռոտոլֆ... և կրնամ ըսել առանց պարծենալու, որ ըրածէս շատ գոհ եմ...։

— Տղայ, քեզի պարտաւոր եմ կեանքս... պարտ մ'է այս ղոր պիտի հատուցանեմ, վստահ եղիր։ Դաւիթ, խնդրեմ գնա նայէ թէ Մըրֆ ինչ վիճակի մէջ է, — յարեց Ռոտոլֆ —շուտով դարձիր։

Հնդիկը դուրս ելաւ։

— Տղայ, Մէդը տ'Էքօլն ուր է, դիտե՞ս։

— Գետնասենեկի մը մէջ լա Շուէղին հետ։ Կարծեմ թէ փաւորին ձեռքը պիտի յանձնել տաք, Պ. Ռոտոլֆ։

— Ո՛չ...։

— Ի՞նչ, մթթէ ազատ պիտի թողուք...։ Ա՛հ, Պ. Ռոտոլֆ մեծանձնութիւնը մեկդի ձգէք...։ Նորէն կըսեմ, այն մարդ չէ, կատղած շուն մ'է... առջևն ելնողը պիտի խածնէ։

— Այդ մասին հանդարտ եղիր... ալ մարդ մը խածնելիք չունի։

— Ուրեմն կերևի թէ տեղ մը պիտի բանտարկէք։

— Ո՛չ. կէս ժամէն ասկից դուրս պիտի ելնէ։

— Ո՞վ. Մէդը տ'Էքօլ։

— Այո՛։

— Ի՞նչ, առանց փաւորի։

— Այո՛...։

— Ասկից ազատ համարձակ... պիտի մեկնի։

— Ազա՛ռ...։

— Եւ մի՞ս մինակ։

— Մի՛ս մինակ...։

— Բայց դէպ ո՞ւր...։

— Ո՛ւր որ կամի...— ըսաւ Ռոտոլֆ և դուժալի ժպիտով մը Շուրինէօրի խօսքը կարեց։

Հնդիկը ներս մտաւ։

— Խօսէ նայիմ, Դաւիթ... ինչպէս դտար Մըրֆը...։

— Տէր իմ...։ կը նիրհէ — ըսաւ բժիշկը տրտմագին։ Ընչաւութիւնը միշտ ծանր է...։

— Ուրեմն միշտ վատնդ կայ...։

— Իր վիճակը... տէր իմ... շատ փափուկ է...։ Սակայն պէտք է յուսալ...։

— Ո՛հ, Մըրֆ, վրէժ... վրէժ...— գոչեց Ռոտոլֆ կատաղութիւնը ղսպելով։ Ապա յարեց։ — Դաւիթ... խօսք մ'ունիմ...։

Եւ հնդիկն ականջէն վար կամացուկ բան մ'ըսաւ։

Հնդիկը դող ելաւ։

— Մթթէ կը դեղեցիս։ — ըսաւ Ռոտոլֆ, — թէև ստէպ խօսեր եմ քեզի այս գաղափարիս վրայ... դայն գործ ածելու ժամը հասաւ...։

— Ձեմ դեղեցիր, տէր իմ...։ Այդ ձեր գաղափարը պատժական օրինաց վերանորոգութիւն մը կը պարունակէ, իրաւագէտներու քննութեան արժանի, վասն զի այդ ձեր ըսած պատիժն ոչ միայն... ահռելի է... այլ և բեղմնաւոր դեղջի բերելու...։ Այս նկատմամբ գործադրելի է։ Առանց համբերելու այն օձիրներն որով սոյն աւազակը ցմահ թիարանի դատապարտուեր էր... երեք մարդու կենաց դաւաճա-

նեց... արքաի վաճառականին... Մըրֆին... և ձերբ... ...Վ արդարութիւն է...:

— Եւ ասով ապաշաւի անսահման հորիզոն մը կրնայ իր առջևն ունենալ...— յարեց Ռոտոլֆ: Պահ մը լուռ կենալէն ետև՝ վրայ բերաւ: — Իսկ հինգ հազար ֆրանք ընդունիլ անոր, Դաւիթ:

— Շատ է անշուշտ, տէր իմ:

— Կարիա՞ս — ըսաւ Ռոտոլֆ ապշած Շուրինէօրին — պարոնին երկու խօսք ունիմ ըսելիք: Նոյն միջոցին պատկոյ սենեակը գնա... դրասեղանին վրայ կարմիր թղթակալ մը պիտի գտնես, անոր մէջէն հազար ֆրանքնոց հինգ հատ արժէքներ կառնուս և ինձ կը բերես:

— Եւ որո՞ւ համար է այդ հինգ հազար ֆրանքը — զարմացած Շուրինէօր ակամայ:

— Մէդր ա՛էքօլին համար... նոյնպէս լսէ՝ որ գինքն այս տեղ բերեն:

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՊԱՏԻԺ

Այս սենեակս կարմրազարդ և փառաւորապէս լուսաւորուած սրահի մը մէջ կանգնի:

Ռոտոլֆ՝ որ թաւշէ երկար ոև պարեզօտ (robe de chambre) մը հագեր էր, և որով իր դէմքին դեղնութիւնն աւելի ևս կարտայայտէր, զորոյ ծածկուած մեծ սեղանի մ՝առջև նստեր էր: Սոյն սեղանին վրայ կը տեսնուին Մէդրը ա՛էքօլին թղթակալը, լա Շուէդին շինուի արծթէ շղթան, որմէ կախուած է լաժուարաէ պատկերը, Մըրֆիը զարնող արիւնալի դաշոյնը, դուռը բռնաբարելու համար գործածուած աբցանը, և վերջապէս պատկից խլէն Շուրինէօրին բերած հազար ֆրանքնոց հինգ հատ արժէքները:

Սենեակին մէկ կողմը հնդիկ բժիշկը, միւս կողմը նստեր է Շուրինէօր: Մէդր ա՛էքօլ՝ որ պնդապէս կաշկանդուած է և շարժում մ՝ընելու անկարող՝ սրահին մէջ տեղը՝ ֆլոբոն (à roulettes) մեծ թիկնաթոռի մը վրայ է: Այս աւաղակը բեռող մարդիկ կը քաշուին կերթան: Ռոտոլֆ, բժիշկը, Շուրինէօր և մարդասպանն առանձին կը մնան:

Ռոտոլֆ ա՛լ զայրոյթ չունի. հանդարտ, տրտում է և պատկառելի. հանդիսաւոր և զարհուրելի պաշտօն մը կատարելու կը պատրաստուի.

Բժիշկը կը խորհի:

Շուրինէօր անորոշ երկիւղ մը կզգայ, իր ակնարկը Ռոտոլֆին ակնարկէն չէ կարող հեռացնել:

Մէդր ա՛էքօլին գոյնը կապուտ է... կը վախնայ...:

Դուրսը խորին լռութիւն մը կը տիրէ: Միայնակ անձրևին ձայնը կը լսուի, որ կը վաղի... կը վաղի տանիսէն քարայատակին վրայ:

Ռոտոլֆ՝ խօսքը Մէդր ա՛էքօլին կուղղէ:

— Դո՛ւ, փախստականդ Ռոչֆորի թիարանէն, ո՛ւր մնացիր դատապարտեալ էիր... իբր դրամանենգ, գող և մարդասպան... դո՛ւ Անդէլմ Տիւրէսնէլն ես:

— Սո՛ւտ է — կըսէ Մէդր ա՛էքօլ այլայլած ձայնով մը, և չորս դին իր վայրենի և անհանդարտ նայուածքը շրջելով:

— Դու Անդէլմ Տիւրէսնէլն ես... Բուասիի ճամբուն վրայ սպաններ և կողոպտեր ես արքաի վաճառական մը:

— Սո՛ւտ է:

— Քիչ մը վերջը պիտի խոստովանիս:

Աւաղակը Ռոտոլֆին երեսը նայեցաւ զարմանքով:

— Այս դիւեր գողութիւն ընելու համար այս տունը մտաբ՝ տանտէրը դաշունովդ զարկեր...:

— Դու առաջարկեցիր ինձ այդ գողութիւնը — — Մէդր ա՛էքօլ փոքր ինչ համարձակութիւն առնելով. — զբաղուածաբ՝ ձակեցան... ես ալ ինքզինքս պաշտպանեցի:

— Զարկած մարդդ վրադ չյարձակեցաւ... անզէն էր։ Իրաւ է որ... ես առաջարկեցի այս գողութիւնը... հիմա սոր պատճառը պիտի ըսեմ քեզի։ Առջի իրիկուն Միջնաքաղքին մէջ մարդ մ'և կին մը Թալլելէն եաւ՝ յանձնարէր զիս ծպանելու հաղար ֆրանքի համար։

— Ես ականջովս լսեցի — ըսաւ Հուրինէօր։

Մէդր տ'էքօլ դազանային ատելութեան աչք մը նետեց անոր։

Ռոտոլֆ շարունակեց։

— Կը տեսնես որ իմ կողմս գրգռուելու պէտք չունէիր չարիք գործելու համար...։

— Դուք իմ դատաւորս չէս, ա՛լ չպիտի պատասխանեմ քեզ...։

— Գողութիւնն առաջարկելուս պատճառն այս է. գիտէի որ Թիարանէն փախեր ես... անբաղդ օրիորդի մը ծնողքը կը Ճանչէիր, այն օրիորդն որուն բոլոր Թշուառութեան հեղինակը քու դաւակիցդ, լա Շուէդն է... գողութեան խայծով որսալ կուզէի քեզ, խայծ մը, որով պայն կարող եմ հրապուրուիլ։ Անգամ մ'որ ձեռքս ընկնէիր, պիտի ըսէի քեզ, որը կընտրես, ոստիկանութեան մատնուիլ, որ արքայի վաՃառականին մահն անշուշտ գլխովդ պիտի վՃարեցնայ...։

— Սուտ է, այդ ոՃիրը չգործեցի։

— Թէ ոչ իմ ձեռքս Գաղղիայէն դուրս, մշտատև արգելարան մը քշուիլ, ուր Թիարանէն նուազ տաժանելի վիՃակ մը կուտենաս. բայց այս Թեթև պատիժը պիտի շնորհէի քեզ, այն պայմանաւ որ խնդրած տեղեկութիւններս ինձ հաղորդես։ Թէև մահապարտ՝ բանտէն փախեր էիր. եթէ քեզ ձերբակալ ընէի, եթէ այնպիսի վիՃակի մէջ դնէի քեզ որ ուրիշի վնաս չկարենաս հասցնել՝ ընկերութեան ծառայութիւն մ'ըրած կըլլայի, և քու քովդ գտնուած գաղտնիքն իմանալով Թերևս դժբաղդ քան յանցաւոր արա-

բած մ'իր ընտանեաց ծոցը դարձնէի։ Այս էր ահա իմ առաջին նպատակս. իրաւ է որ ըստ օրէնի չէր. բայց քու փաստաբանդ, բայց քու նոր 'ի նորոյ գործած ոՃիրներդ, քեզ խուսադ, բայց քու նոր 'ի նորոյ գործած ոՃիրներդ, քեզ օրինաց պաշտպանութենէն դուրս կարտաքսեն...։ Երկի նախնամական յայտնութեամբ մ'իմացայ որ դու Անսէլմ Տիւրէսնէլն ես։

— Սուտ է, իմ անունս Տիւրէսնէլ չէ։

Ռոտոլֆ սեղանին վրայի լա Շուէդին շղթան առաւ, և Մէդր տ'էքօլին ցոյց տալով լաժուտարտէ փոքրիկ հոգին սրբոյ պատկերը,

— Սրբապիղծ — գոչեց սպառնալից ձայնով մը։ — Այս սուրբ մասունքը վատազգի արարածի մը տուեր ես... եռակի սրբանուէր մասունք մ'է այն... վասն զի քու որդիդ այս բարեպաշտոն նուէրն իր մօրն ու հանիին ձեռքէն ստացեր էր։

Մէդր տ'էքօլ այս յայտնութեան վրայ ապուշ կրթած՝ գլուխը վար ծռեց առանց պատասխանելու։

— Տասն հինգ տարի կայ որ որդիդ իր մօրը քովէն գողցեր։ դու մինակ գիտես թէ կենդանի է թէ մեռած. հեռագիր։ դու մինակ գիտես թէ ինչպէս ոՃիրներդ նոր պատճառ մ'ունէի տեսապէս երբ իմացայ քու ով ըլլալդ՝ նոր պատճառ մ'ունէի քեզ բռնելու։ Ես իմ անձնական վրէժս չեմ ուզեր լուծել...։ Այս գիշեր առանց գրգռի մարդու արիւն թափեցիր։ Վիրաւորած մարդդ քու արիւնռուշտ բնաւորութեանդ վրայ անկասկած՝ վստահութեամբ գիմաւորեց քեզ և հարցուց թէ ինչ կուզես։ — Ստակդ և կեանքդ... և դաշունի հարուած մը տուիր անոր։

— Այսպէս պատմեց Պ. Մըրֆ երբոր զինքը դարմանելու սկսայ — ըսաւ բժիշկը։

— Սխալ է, նա սուտ կը խօսի։

— Մըրֆ երբէք սուտ չխօսիր — ըսաւ Ռոտոլֆ պաղ կերպով մը։ — ՈՃիրներդ նշանաւոր հատուցում մը կը պահանջեն։ Պատէն ցատկելով մտար այս պարտէզը, մե-

մը զարկիր որ կողոպտես։ Ուրիշ մարդասպանութիւն մ'ալ ըրիր...։ Այս տեղ պիտի մնանիս...։ Առ կինդ ու որդիդ մեր ունեցած գումարն ու յարդը կոտրիպն զիս ալ ինքդ կառափնա-ռի նախատինքէն ազատ պահել քեզ...։ Պիտի բսուի որ յարձակումի մ'պատեն սրամահ սպաննուեր ես...։ Ուրեմն պատրաստուէ... հրաշէնները լեցուն են։

Ռոտոլֆին դէմքն անոզբելի էր...։

Մէդր տ'էքօլ մծաւոր սենեկի մը մէջ երկու ապրձանա-կիր մարդիկ տեսեր էր...։ Իր անունն հրեան ելեր էր։ մոռացեց որ իր կենաց վերջ պիտի տան, որպէս զի իր յե-տին ոճիրները մութին մէջ մնան և իր ընտանեաց անունը այս նոր նախատինքէն կրկին չարատի։ Իր նմանները պէս այս մարդն ալ որչափ գաղանաբարոյ, նոյնչափ վատ էր։ Գարծելով որ իր օրհասը մօտալուտ է դողդոջաց ու պոռաց։

— Շնորհ։

— Քեզի համար ոչ շնորհ և ոչ ներում կայ — ըսաւ Ռո-տոլֆ։ — Եթէ այս տեղ հրաշանի չրռնեն, կառափնատն անդին կպպասէ քեզ։

— Աւելի աղէկ զինիմ կառափնատը... զոնէ երկու երեք տարի ևս կապրիմ... ինչու կը դժկամակիս, քանի որ էտքէն պիտի պատժուիմ...։ Շնորհ... շնորհ ըրէ...։

— Բայց կինդ... բայց որդիդ... քու անունդ կը կրեն։

— Արդէն անպատիւ է անունս... ուր օր մ'ալ դեռ ևս ապրիմ, բաւ է, շնորհ...։

— Եւ ոչ իսկ կենաց համար այն քամահրանքն ունիս, որով երբեմն մեծ յանցաւորները կը ճարակին. — ըսաւ Ռո-տոլֆ զզուանօք։

— Սակայն օրէնքը չներեր որ մենք մեզի պատժենք — վրայ բերաւ Մէդր տ'էքօլ վստահութեամբ։

— Օրէնքը, — գոչեց Ռոտոլֆ — օրէնքը... դու կը հա-մարձակիս օրէնքը կոչել, դու որ միշտ ընկերութեան դէմ իբր ստահակ մը բացէ 'ի բաց զինուած կը կռուիս...։

Աւազակը պատիները նայեցաւ առանց պատասխան տալու, և ապա հեզազոյն ձայնով մ'ըսաւ.

— Գոնէ զիս վրաս և զիս մի սպաններ։

— Պիտի ըսես թէ որդիդ ո՞ւր է։

— Այ... այ... պիտացածս պիտի յայտնեմ քեզ...։

— Պիտի ըսես թէ որո՞նք են այն դեռահաս աղջկինն ծնողքը։

— Պիտի ըսես թէ որ ինքդ են այն դեռահաս աղջկինն ծնողքը։ Որ իր մանկութեան տաեն այնչափ տանջանք կրեր է լա Շուէդին ձեռքը։

— Թղթակալիս մէջի թղթերը կրնան քեզի լոյս մը տալ այն անձերուն վրայ, որ օրիորդը լա Շուէդին յանձնեցին։

— Ո՞ւր է քու որդիդ։

— Մի թէ կեանքս պիտի շնորհես ինձ։

— Առաջ ամէն բան խոստովանէ...։

— Բայց, եթէ խմանաս... — ըսաւ Մէդր տ'էքօլ վա-խանելով։

— Արդեօք սպանեցիր զինքը։

— Չէ... չէ... իմ դաւակիցներուս մէկուն յանձնեցի։

— Ուր, երբ զիս ձերբակալ ըրին, կարող եղաւ խոյս տալու...։

— Ի՞նչ ըրաւ տղադ...։

— Զանի կրթեց. կարևոր ծանօթութիւններ տուաւ անոր։ Նանդի սեղանաւորի մը քով գնէ... որպէս զի մեզի հրահանգ, սեղանաւորին վստահութիւն տայ և մեր խոր-հուրդները գիւրէ։ Թէև Ռոշֆոր էի, մինչև փախուստիս օրը, այս ձեռնարկին յատակագիծը կուղղէի. բարեկամիս հետ ճուռանչաններով կը թղթակցէի։

— Ո՛հ, Տէր Աստուած, որդին... որդին...։ Այս մարդը կը զարհուրեցնէ զիս — գոչեց Ռոտոլֆ սոսկումով մը և գլուխը ձեռքին մէջ պահեց։

— Բայց գործը լոկ դրամանենգութիւն մ'էր — պոռաց աւազակը. — և ասկէ զատ, երբ որդիս իմացաւ գաղտնիքը... իր աջակցութիւնը մերժելով՝ բարկացաւ... ամէն բան ինքը մեծաւորին յայտնեց և Նանդէն աներևոյթ եղաւ...։

գահարանիս մէջ որդւոյս հետքը գտնելու համար ըրած փորձերուս ապացոյցը պիտի տեսնես. . . : Վերջին անգամ Դամբլ փողոցը տուն մը կը բնակէր, և Ֆրանսուա Ժէրմն անուանով ծանօթ էր. նոյնպէս իր հասցէն իմ պահարանիս մէջն է: Տեսար. . . ամէն բան ըսի. . . ամէն բան. . . : կը մնայ քեզ խոստումդ կատարել, մինակ այս գիշերուան գողութեան համար զիս ոստիկանութեան յանձնէ:

— Հապա կը մոռնաս Բուասիի արջառի վաճառականը:

— Անկարելի է որ այդ գործը յայտնուի. ապացոյցներ կը պակսին: Այս բանս կը խոստովանիմ քեզի, իմ անկեղծութիւնս ցոյց տալու համար, սակայն գատաւորին առջև պիտի ուրանամ. . . :

— Ուրեմն կը խոստովանիս:

— Զքաւորութեան մէջ էի, ապրուստ չունէի. . . լա Շուէդ յորդորեց զիս. . . : Հիմա կը զղջամ. . . կը տեսնես, քանի որ կը խոստովանիմ. . . : Ա՛հ, թէ որ վերհանձն ես, զիս գատաստանի մի մատներ, և պատուիս վրայ խօսք կտամ քեզ որ ընթացքս պիտի փոխեմ:

— Պիտի ապրիս. . . և գատաստանի չպիտի մատնեմ քեզ:

— Ուրեմն կը ներես ինձ — գոչեց Մէդը տ'Էքօլ, լսածը չհաւատալով — կը ներես ինձ:

— Կը գատեմ քեզ. . . և կը պատժեմ, գոչեց Ռոտոլֆ հանդիսաւոր ձայնով մը: — Քեզ գատաստանի չպիտի յանձնեմ, վասն զի թիարան կամ գլխատութեան տեղը պիտի երթաս, և այս չպիտի ընեմ. . . ոչ, չպիտի ընեմ. . . : Թիարանը մի, որպէս զի նորէն այն տեղի խուժանին վրայ ուժիդ և անզգամութեանդ շնորհիւը տիրապետես, որպէս զի քու ընդաբոյս գաղանային բռնակալութիւնդ գոհ ընես. . . , որպէս զի ամէն մարդ քեզնէ զարշի ու երկնչի, վասն զի ոճիրն ալ իր փառասիրութիւնն ունի, և դու կը բերկրիս քու վայրենի անօրէնութեանդ մէջ. . . : Թիարանը, ո՛չ, ո՛չ. քու երկաթի մարմնդ թիակի աշխատութեան և թիապանին

(argousin) գաւազանին կը տակայ գիմազրաւ: Ի՞նչ պէտք է, շղթանները կընան խորտակիլ, պատը ծակուիլ, պարիսպներէ վեր ելնուիլ, և օրին մէկը նորէն կը կտրիս անուրդ և ընկերութեան վրայ՝ կատաղի վայրագ գազանի մը պէս՝ կը յարձակիս ամէն կողմ կապուտ ու կողոպուտ, քանդ ու սպանդ գործելով. . . վասն զի ոչ ոք կրնայ ազատիլ քու Հերակլեան ուժէդ և դանակէդ, և այս բանը չպիտի ընես. . . ոչ, չպիտի թողուն որ ընես: Բայց քանի որ թիարանը կարող ես կալանդ կտրել. . . ինչ ընելու է որ մարդկային ընկերութիւնը քու կատաղութենէդ ազատ մնայ. միթէ քեզ գահՀին մատնեմ:

— Ուրեմն մահս — պոռաց աւազակը — իմ մահս կուզես:

— Մի յուսար. . . վասն զի այնչափ մեծ է ապրելու տենչդ՝ որ փախստի յուսով թերևս օրհասական ասկալի տանջանաց անհաղորդ մնաս: Ապուշ. . . դաժան յոյս մ'է այն. . . այլ փոյթ չէ. . . քանի որ կարծես թէ քու վիճակիդ անհնարին դժնդակութիւնը կրնայ վարպուրիլ քու աչքիդ, մինչև որ գլխդ գահՀին ճանկին տակ չծռի, մահուան հաւատալիք չունիս դու: Իսկ այն տեղն ալ թերևս ահ ու սոսկումէ անբան և անկենդան մարմին մը դառնաս, և իբր ողջակէզ ընծայուիս քու զՀերուդ ստուերներուն. . . : Ո՛չ, այս չպիտի ըլլայ, կըսեմ քեզ. . . մինչև յետին բոպէն կը յուսայիր դու ազատելու. . . դու, ո՛հ Բէշ. . . կը յուսայիր: Ո՛չ, ո՛չ. . . եթէ զղջումի չդաս. . . ես չպիտի թողում որ այս կենաց մէջ յոյս մ'ունենաս, այո՛, ես չպիտի թողում. . . :

— Բայց ինչ բրի այս մարդուն. . . ո՞վ է այն, իզմէ ինչ կուզէ, ուր եմ ես. . . — պոռաց Մէդը տ'Էքօլ իբր խելացնոր:

Ռոտոլֆ շարունակեց.

— Եթէ, ընդ հակառակն, լրբօրէն մահը քամահրէիր, դարձեալ հնարին չէր քեզ տանջանաց ենթարկիլ. . . քեզի

համար գլխատութեան տեղն արիւնալի բեմ մը պիտի դառնար, ուր, շատերուն պէս, դու ալ պիտի պարծենայիր գաղանութեանդ վրայ... դու ալ ողորմելի կեանքէ մը զզուած՝ վերջին հայհոյութեամբ մը հոգիդ կեղտին պարտաւոր պիտի ընէիր...: Այս ալ պէտք չէ ընել...: Ազնիւ բան մը չէ ժողովուրդի մը համար տեսնել մահապարտ մը՝ որ վաղը կատակի կառնէ, դահիճը կը ծաղրէ, և շունչը կաւանդէ առակ նշաւակի ընելով այն երկնային կայծը զոր Աբարիչը մեր սրտին մէջ ներշնչեց...: Հոգւոյ մը փրկութիւնը նուիրական բան մ'է: Ամէն յանցանք կը քաւուի և սրբուի, բսաւ Փրկիչը, բայց գատարանէն մինչ գլխատութեան բեմը, ճամբան շատ կարճ է, քաւումի և ապաշաւի համար ժամանակ պէտք է: Այս ժամանակը... ահա քեզի պիտի տրուի...: Տար երկին որ անկից օգուտ քաղէիր:

Մէգը տ'էքսլ գեանէ գետին անցեր էր...: Իր կեանքին մէջ առաջին անգամն էր որ մահէն աւելի ահարկու բան մը զգաց...: Այս անորոշ երկիւղը սոսկալի էր...:

Ռոտոլֆ շարունակեց.

— Անսէլմ Տիւրէսնէլ, ոչ, թիարան չպիտի երթաս... դու չպիտի մեռնիս...:

— Բայց ինչ կուզես իրմէ... փթէ գժոխքէն ելար դու:

— Մտիկ ըրէ...— ըսաւ Ռոտոլֆ ոտք ելնելով և իր շարժումին ոգառնալից ազդեցութիւն մը տալով: — Դու քու դժգոյն չարաչար ու մեղսօրէն գործածեցիր... այդ քու դժգոյն պիտի ջլատեմ ես...: Ամենէն կորովի մարդիկ քու առջեւդ գոռալ կելնէին... դու ամենէն տկարներուն առջեւ պիտի դողաս...: Մարդասպան... Աստուծոյ արարածներ յաւիտենական մթութեան մէջ ընկղմեցիր... յաւիտենական խաւարը քեզի համար այս կենաց մէջ.... այսօր... հիմակ... պիտի սկսի...: Քու պատիժդ ոճիրներուդ պիտի հաւասարի...: Բայց — յարեց Ռոտոլֆ տեսակ մը վշտալիր գթութեամբ — այս զարհուրելի պատիժը դոնէ քեզի ան-

ահմանն ապագայ մը կընծայէ քաւութեան... Քեզի չափ յանցաւոր կըլլայի եթէ, քեզ պատժելով, իսկ վրէժխնդրութեան գործ մը կատարէի, թէև օրինաւոր հնարուէր... Այս պատիժը... փոխանակ մահու պէս անարգիւն բլլալու, արդասաւոր հետեւութիւն պիտի ունենայ. փոխանակ գեհենին պարտաւոր ընելու... քեզ պիտի վերադնէ...: Որպէս զի ուրիշի վնաս տալէն դադրիս... աշխարհիս շքեղութիւններէն քեզ զրկեմ՝ Լ'ասպատ... եթէ անթափանցելի մթութեան մը մէջ քեզ դահավիժեմ... փայտակ... իսկ ոճիրներուդ յիշատակով... այն նպատակն ունիմ՝ որ անոնց մեծութիւնը նկատես անդադար...: Այո՛... արտաքին աշխարհէն յաւէտ զատուելով... պիտի բռնադատուիս գալ յաւէտ նոյիլ քու ներքի դիդ... և այն ատեն, յուսամ որ վատ համբաւէ սեցած ճակատդ ամօթապարտ պիտի մնայ... եղեռնէ մաշած հոգիդ... աբդահատութեամբ պիտի ամռքի...: Քու ամէն մէկ խօսքդ հայհոյանք մ'է... քու ամէն մէկ խօսքդ աղօթք մը պիտի դառնայ...: Դու յանդուգն ես և վայրենի, վասն զի ուժեղ ես... անուշ և հեզ պիտի դառնաս, վասն զի տկար պիտի բլլաս...: Սիբագ գոյ է գղջումի... օր մը պիտի լաս բրած զոհերուդ վրայ...: Դու՝ Աստուծոյ շնորհած բանականութիւնն եղծեցիր, յափշտակութիւն և մարդասպանութիւն գործելու անասնային կրից դարձուցիր... մարդ էիր և վայրենի գազան եղար... օր մը բանականութիւնդ պիտի վերածնի խղճիդ խայթէն, պիտի բարձրանայ քաւութեան...: Դու և ոչ յարգեցիր ինչ որ կը յարգեն նոյն իսկ վայրի կենդանիները... այս է իրենց մատակներն ու կորիւնները...: Շատ մ'օրեր յանցանացդ քաւում գտնելու համար նուիրեցէն եան՝ քու վերջին աղօթքդ պիտի ըլլայ աղաչել զԱստուած որ կնկանդ և զաւկիդ մէջ մեռնելու անակնուն երջանկութիւնը շնորհէ քեզ...:

Այս վերջին խօսքերն ըսելու ատեն Ռոտոլֆին ձայնը ալեալեալ էր տրամութեամբ:

Մէդը տ'էքօլ ամ դրեթէ սոսկում մը չէր զգար... կարծեց թէ իր դատաւորն այս քաքոյական յորդորը կարդալէն առաջ ուզեց զինքը զարհուրել։ Աւազակը Ռոտոլֆին ձայնին քաղցրութենէ դրեթէ սիրտ առաւ, վախը փարատելով աւելի լրբացաւ, և կոշտ ծիծաղ մը ձգեց ու ըսաւ.

— Զարմանալի բան, միթէ վնասակ կը հանէք, թէ ոչ այս տեղ քրիստոնէականի դաս առնելու համար նստեր եմք...։

Ռոտոլֆ փոխանակ պատասխան տալու, բժշկին ըսաւ.

— Դոկտոր կատարէ, Դաւիթ... թող Աստուած զիս պատժէ միայն եթէ կը սխալիմ...։

Հնդիկը զանգակը զարկաւ։

Երկու մարդ ներս մտան։

Դաւիթ նշան մ'ընելով կողմնակի սենեկի մը դուռը ցցուց։

Թիկնաթոռն՝ որուն մէջ Մէդը տ'էքօլ կաշկանդուած էր ու շարժելու անկարող, գիլ 'ի գլոր ներս տարին։

— Ուրեմն զիս պիտի խղդէք հիմա... շնորհ... կաղաչեմ... գոչեց Մէդը տ'էքօլ մինչդեռ ներս կը քշէին զինքը։

— Գայլը բերանը դրէք, — ըսաւ սեր խուցը մտնելով։

Շուրինէօր ու Ռոտոլֆ մինակ մնացին։

— Պարոն Ռոտոլֆ — ըսաւ Շուրինէօր դունատ ու դողդոջուն ձայնով մը. — պարոն Ռոտոլֆ, խօսեցէք հետս... կը վախնամ... միթէ երազ է տեսածս... ինչ կընեն անոր, Մէդը տ'էքօլին։ Ա՛լ չպտտար, ձայն ձուն չկայ... վախս աւելի կը սաստկանայ...։

Դաւիթ խցէն դուրս ելաւ, ժպտոյն էր՝ ինչպէս որ են սեւերը... շրթերը ծերմակ էին։

Այն երկու մարդիկը նորէն Մէդը տ'էքօլ միշտ կապուած էր աթոռին վրայ, սրահը բերին։

— Գայլը հանեցէք... կապերը քակեցէք — ըսաւ Դաւիթ։

Պահ մ'ահռելի լռութիւն մը տիրեց։

Երկու մարդիկը Մէդը տ'էքօլին կապերը քակեցին և գայլը հանեցին։

Մէդը տ'էքօլ հաղթեպ ոտք ելաւ. իր նոզկալի դէմքին վրայ մոլեղնութիւն, ահ ու սոսկում գրոշմուեր էին. քայլ մ'առաւ ձեռները դէպ յառաջ տարածելով. ապա թիկնաթոռին մէջ ընկաւ ու պոռաց անբացատրելի անձկութեան և յուսակտուր կատաղութեան շեշտով մը, թեները դէպ յերկին վերցնելով։

— Կ'ոյր...։

— Դաւիթ, տուր անոր սա պահարանը — ըսաւ Ռոտոլֆ։

Հնդիկը Մէդը տ'էքօլին դողդոջուն ձեռքին մէջ փոքր պահարան մը դրաւ։

— Այս պահարանին մէջ բաւական ստակ կայ քեզի պատրաստարան մը... և հայ հոգալու համար... մինչև կենդանի վերջն առանձնութեան մէջ։ Հիմակ ազատ ես... կորիր գնա... և զղջացիր... Աստուած գթած է։

— Կ'ոյր... կրկնեց Մէդը տ'էքօլ մեքենայապէս պահարանն առնելով։

— Դուռները բացէք... թող երթայ։ — ըսաւ Ռոտոլֆ։

Դուռը դղրդումով մը բացին։

— Կ'ոյր... կ'ոյր եմ... — կրկնեց աւազակը ուժաթափ։

— Ազատ ես... ստակ ունիս... ել գնա։

— Եկնեմ երթամ մի... բայց... բան մը չեմ տեսներ ես. — պոռաց նա մոլեղին։

— Բայց սոսկալի ոճիր մ'է անխնայ գործ ածել ոյժդ... որպէս զի...

— Ոճիր մ'է անխնայ գործ ածել ոյժը... — կրկնեց Ռոտոլֆ վեհ ձայնով մ'անոր խօսքն ընդմիջելով։ — Իսկ դու, ինչպէս գործ ածեցիր ոյժդ, դո՛ւ։

— Ո՛հ, մա՛հ...։ Այո՛, մահը նախապատիւ կը համամարէի — գոչեց Մէդը տ'էքօլ։ — Հիմակ ամենուն խաղալիկը պիտի ըլլամ... ամէն բանէ պիտի վախնամ... ողջ մ'անգամ կրնայ ծեծել զիս...։ Աստուած իմ։ Աստուած իմ, ինչ պիտի ըլլայ վերջս...։

— Հիմա սառակ ունիս . . . :

— Այս սառակը պիտի գողցնեմ — , ըսաւ աւազակը :

— Պիտի գողցնես . . . : Կը լսե՞ս այդ խօսքդ . . . զոր աչ եւ գողով կը սեպես . . . դու որ գող ես . . . կորիր . . . :

— Ասուածոյ սիրուն ըլլայ — ըսաւ Մէդր ա՛էքօլ աղերսալի գէմքով մը — թո՛ղ մէկը ձեռքէս բռնէ առաջնորդէ զիս : Ի՞նչպէս պիտի քալեմ փողոցները . . . : Ա՛հ , սպաննեցէք զիս . . . ձեր գութը հայցելով կաղաչեմ . . . սպաննեցէք զիս :

— Ո՛չ . . . օր մը պիտի զեղջի գան դու . . . :

— Երբէք . . . երբէք չպիտի զղջամ . . . — գոչեց Մէդր ա՛էքօլ կատղութեամբ : — Ո՛հ , վրէժս պիտի առնեմ . . . հաւատացէք . . . որ վրէժս պիտի առնեմ . . . :

Եւ թիկնաթոռէն դուրս ցատկեց՝ բռունները գոց ու սպառնալից :

Առաջին քայլն որ առաւ , գթեց :

— Ոչ . . . ո՛չ . . . կարող չեմ . . . թէև որչափ ոյժ ունիմ : Ա՛հ , քանի՛ արժանի եմ ցաւակցութեան . . . ո՛չ ոք կը գթայ իմ վրայ . . . ոչ ոք . . . :

Անհնար է նկարագրել՝ այս ահռելի տեսարանին առեն՝ Շուրինէօրի ահն ու ապշութիւնը . իր վայրենի ու բիրտ երեսը վշտակցութիւն կը ցուցնէր : Ռօտոլֆին մօտ եկաւ և կամացուկ մ՚անոր ըսաւ ,

— Պարոն Ռօտոլֆ , իրաւ է որ իր արժանի պատիժը կը-տաւ . . . հոչակաւոր եղեռնագործ մ՚է . . . զիս ալ առեն մը սպաննել ուզեց . բայց հիմա կոյր է . . . չէ կարող քալել . . . կսեսնի է որ փողոցներն ոտքի տակ իյնայ խորտակուի . . . : Հրաման ունիս որ զինքը տեղ մը տանիմ որ գոնէ հանգարտ նստի :

— Շատ աղէկ . . . — ըսաւ Ռօտոլֆ այս վերհանձնութենէ սիրտը եկած՝ և Շուրինէօրի ձեռնը բռնելով : — Շատ աղէկ . . . գնա՛ . . . :

Շուրինէօր Մէդր ա՛էքօլին մօտեցաւ և ձեռքն անոր ուսին վրայ դրաւ :

Աւազակը սարսռեցաւ :

— Ո՞վ կը դպի ինձ . — ըսաւ նա խորին ձայնով մը :

— Ես . . . :

— Դու ո՞վ ես :

— Շուրինէօր :

— Դո՞ւ ալ միտք ունիս վրէժ լուծելու , է :

— Դուրս չես կարող ելնել . . . թեւս մտիր . . . քեզ պիտի առաջնորդեմ . . . :

— Դո՞ւ . . . դո՞ւ :

— Հա՛ , սիրաս չդիմանար . . . եկո՛ւր նայիմ :

— Թափարգի՛մ մէջ պիտի նետես զիս :

— Ես վատ չեմ . . . թշուառութեանդ կարեկից եմ . . . ել երթանք . . . լուսնալու մօտ է :

— Լուսնալու մ՚օտ է մի . . . ա՛հ , ա՛լ երբէք չպիտի տեսնեմ թէ երբ արևը կելնէ . . . չպիտի տեսնեմ , — պոռաց Մէդր ա՛էքօլ :

Ռօտոլֆ աւելի ևս չկրցաւ տանիլ այս տեսարանս . . . շտապաւ ներս մտաւ , ետեւէն ալ Դաւիթ , և երկու սպասաւորներուն նշան ըրաւ որ հետևանն :

Շուրինէօր և Մէդր ա՛էքօլ առանձին մնացին :

— Իրա՛ւ , ինձ տրուած պահարանին մէջ ստակ կայ՝ — ըսաւ աւազակը երիտասարդ լուրթենէ մ՚ետքը :

— Այո՛ , կայ . . . ես անոր մէջ հինգ հազար ֆրանք դրի . . . : Այս դրամով տեղ մը կրնաս երթալ բնակիլ թոշակով . . . պեղի մ՚անկիւնը , որ մնացած օրերդ անցընես . . . թէ ոչ , կուզես որ քեզ օրուհիին օթեւանը տանիմ :

— Նա զիս պիտի կողոպտէ :

— Պրա-Ռուժին կայանը :

— Ան ալ ստակս կապտելու համար զիս կը թիւնաւորէ :

— Ուրեմն ո՞ւր տանիմ քեզ :

— Չկիտեմ... : Աղէկ որ դուն գող չես, դու Շուրինէօր : Խնդրեմ, պահարանս բանալիս մէջ լաւ մը պահէ որ լա Շուէէ չտեսնէ, թէ ոչ ունեցածս կը թալէ :

— Լա Շուէէը. Պօժան հիւանդանոցը տարին... այս գիշեր ձեզի հետ կառուելու առնենք՝ անոր մէկ սրունդը տեղէն խախտեցի :

— Բայց ուր երթամ, Աստուած իմ, քանի որ սա սև վարագոյրն աչքիս առջևն ունիմ, միշտ աչքիս առջևը... և ինչ կըսես, եթէ այս սև վարագուրին վրայ տեսնեմ այն մահաբիլ երեսներն որ...

Մէդը տ'էքօլ սարսուռ մ'զգաց և խորին ձայնով մ'ըսաւ Շուրինէօրին :

— Այն գիշերուան մարդը մնաւ :

— Չէ :

— Ուրախ եմ :

Եւ աւազակը քանի մը բոպէ լռեւ կեցաւ. ապա մոլեգնաբար ցատկելով պոռաց.

— Սակայն դու բերիր այս ձուները գլխիս, Շուրինէօր... ապիրատ... եթէ դու չբերիր այն մարդը «փէրը դնկաց» և ես ալ ստակներն առած տարած էի... : Եթէ կոյր եմ... յանցանքը քուկդ է... այո՛, քուկդ է յանցանքը... :

— Ա՛լ մի մտածեր այդ բանին վրայ... գէշ կըլնես քեզի... : Օ՛ն, պիտի դաս, թէ ոչ... յոգնած եմ, պիտի քնանամ... : Բաւական հանդիստ ըրի... : Վաղը նորէն փայտ կրելու պիտի երթամ : Քեզ ալ ուզած տեղդ տանելէս ետև պիտի պառկիմ :

— Բայց ես ուր երթալիքս չգիտեմ, չգիտեմ... իմ խըշտեակս... երթալու կը վախնամ... պիտի ստիպուիմ յայտնելու...

— Լաւ ուրեմն, մտիկ ըրէ. յանձն կառնեմ մէկ երկու օրուան համար շնչարկս (chenil) դալ... : Թերևս յաջողիմ քանի մը բարեմիտ մարդիկ գտնել, որ քու ոչ ըլլալդ չգիտ-

նալով իբր ապիկար պատսպարեն քեզ թեթև թոշակով մը... Աղէկ միտքս ընկաւ... Ս. Նիկոլա նաւահանգստէն մարդ մը կը ճանչնամ, որուն մայրն, ընտիր կին մը, Ս. Մանտէ կը բնակի... և չքաւոր է... : Կարելի է քեզ խնամելու յանձնառու ըլլայ... : Կուզես հոն երթալ, ըսէ հա կամ չէ՞ :

— Քու վրայ վստահութիւն ունիմ, Շուրինէօր... : Տունդ դալու չեմ վախնար իմ ստակովս... : Դու երբէք գողութիւն ըրած չես, դո՛ւ, բարեբաղդօրէն :

— Գիտես, ատեն մը կը յանդիմանէիր զիս որ քեզի պէս գողնոց մը չեմ :

— Այն ատեն... որո՞ւ մտքէ կ'անցնէր որ... :

— Եթէ խօսքդ մտիկ ընէի... հիմա թալեր ստակդ ծրէ՛ դրկ ձգեր էի քեզ :

— Իրաւ է, բայց դու ոչ ու քէն չես պահեր... — ըսաւ աւազակը հեղօրէն. — դու իրմէ աւելի կ'աժես :

— Նղովից արմատ. տարակոյս մի կայ. Պ. Ռոտոլֆ ըսաւ ինձ որ սիրտ ու պատիւ ունիմ :

— Ո՞վ է այս մարդը... բայց մարդ չէ նա : — պոռաց Մէդը տ'էքօլ յուսահատական կատղութիւնն սաստկանալով — մարդ չէ նա, ո՛չ, այլ հրէշ մը... :

Շուրինէօր ուսերը թոթուեց ու ըսաւ :

— Նորէն սկսար տաքնալ. շուտ ըրէ երթանք :

— Տունդ պիտի երթանք, այնպէս չէ՞, Շուրինէօր :

— Հա՛ :

— Այս գիշերուան գործին համար երդում ըրէ, խնդրեմ, որ ոչ մը պահած չես :

— Կ'երդնում որ չեմ պահած :

— Եւ ստոյգ գիտես որ մեռած չէ... մարդը :

— Ստոյգ եմ... :

— Գոնէ անոր արիւնը մտած չ'եղայ — ըսաւ աւազակն իւրովի. — եթէ գիտնան... թէ Ռուլ փողոցին ծերուկը... թէ Ս. Մարդէնի ջրմուղին... կինը... : Ա՛հ, հիմակ ալ

բոլորովին այս բաներուս պիտի մտածեմ... կոյր... Աստուած իմ, կոյր եմ— յարեց նա բարձրաձայն: Եւ Շուրինէօրի թևին կքթնելով Վէօվ ուղիին տունէն դուրս ելաւ:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԻԼ-ԱՏԱՄ

Այս մը կար որ այս մեր պատմած դէպքերը պատահեր էին: Հիմակ մեր ընթերցողը պիտի տանինք Իլ-Ատամի փոքրիկ քաղաքը, որ Ռաղ դեսին ափունքն անտառի մը ստորոտը սքանչելի դիրք մ'ունի:

Գաւառի մը մէջ ամենէն մանր իրերը մեծ դէպքեր կը դառնան: Ուստի Իլ-Ատամի պարապորդներն, որ այն առաւ ժամին մայտանը ման կ'գային, շատ հետաքրքիր էին իմանալու թէ նոյն մայտանին վրայ եկեղեցիին դիմացը գտնուած ամենէն գեղեցիկ մսավաճառանոցին նոր տէրն երբ քաղաքը պիտի հասնի:

Պարապորդներէն մին՝ միւսներէն աւելի անհամբեր՝ հարցուփորձ ընելու համար մսագործին մանչին քովը գնաց, որ խնդում ու զուարթ դէմքով միսերը գործունէութեամբ մը կարգի դնելու հոգ կը տանէր: Մանչը պատասխան տուաւ հարցնողին թէ տակաւին չՀանչեր նոր կարուածատէրն, որ փոխանորդութեամբ այն խանութը ծախու առեր էր:

Շատ չանցաւ երկու հոգի Բարիզէն գալով՝ գրպակին գրքան առչիւը կառքէ մ'իջան:

Մինն էր Մբրֆ, որուն վէրքը բոլորովին բուժուեր էր, միւսն էր Շուրինէօր:

Թէև ամենուն գիտցած բանն է, սակայն դարձեալ պիտի կրկնենք թէ հաղստի ազդեցութիւնն այնքան մեծ է, որ միջնաքաղքին կապլիոններուն հիւրն իր նոր զգեստներովը լիովին անՀանաչ մէկը եղեր էր: Կերպարանն ալ նոյն այլակերպութիւն կրեր էր. իր հնոտի հաղուստներուն հետ վայրենի,

կոշտ և յանգուգն դէմքն ալ մերկացեր էր: Իր երկու ձեռներն ընկուզի գոյն կղբենիի (castorine) երկար ու տաքուկ թիկնոցին գրպանին մէջ դրած քալելը տեսնողը՝ պիտի կարծէր թէ աշխարհիս ամենէն անՀնաս ոստանիկն է (bourgeois):

— Տղայ, Հշմարիտը կուզե՞ս, Ճամբան երկայն էր և ցուրտը շատ կծու, այնպէս չէ:

— Պ. Մբրֆ, ես գրեթէ բան մը չզգացի... շատ գոհ եմ... և ուրախութիւնը... աղէկ գիտես որ կը տաքցնէ մարդս...: Ասկից զատ... երբ գոհ եմ կըսեմ... կարելի է...:

— Ի՞նչ ըսել կուզես:

— Երէկ Ս. Նիգոլայի խորշն եկար դիս դտնելու, ուր շան պէս փայտ կը հանէի տաքնալու համար... չէի տեսեր քեզ այն իրիկունէն 'ի վեր... որ ալեզարդ խափշիկը Մէդր տ'էքօլը կուրցուց... որպէս զի աւազակը գողութիւն չքնէ... շատ աղէկ էր... բայց ի՞նչ օգուտ... նեղվից արմատ, սիրտս տակն ու վրայ եղաւ...: Հապա Պ. Ռոտոլֆին դէմքը ուր դնեմ... այն դէմքն որ գառնուկի պէս անուշ էր... նոյն պահուն լեզուպատառ ըրաւ դիս...:

— Լաւ... լաւ... վերջը,

— Այն ատեն գու ըսիր ինձ: «Բարի լոյս, Շուրինէօր.» —Աստուծու բարին, Պ. Մբրֆ... ոտքի վրայ ես, է... գոհ եմ, նեղվից արմատ, շատ գոհ: Հապա Պ. Ռոտոլֆ ինչպէս է: —Վէօվ ուղիին պատահումն քանի մ'օր ետքը, սաիպուեցաւ մեկնելու, և քեզ մոռցաւ, տղայ ...: —Զարմանալի բան, Պ. Մբրֆ ըսի քեզ, թէ որ Պ. Ռոտոլֆ զիս մոռցաւ... իրօք... շատ կը ցաւիմ...:»

— Կուզէի ըսել, կարիՀս, որ մոռցաւ ծառայութիւններդ վարձատրելու... բայց և այնպէս անոնց յիշատակն անջինջ պիտի մնայ սրտին մէջ...:

— Այն ատեն, Պ. Մբրֆ, այդ խօսքերը շուտ մը սիրտս բացին... նեղվից արմատ... ես... քաջ գիտցիր որ չպիտի մոռնամ զինքը... ըսաւ ինձ որ սիրտ ու պատիւ ունիմ...

վերջապէս այսչափ հերիք է...։

— Գէշն այն է, տղայ, որ նորին վսեմափայլութիւնը ճամբայ ելաւ առանց քու մասիդ յանձնարարութիւն մ'ընելու, իմ ալ ունեցածս չունեցածս տիրոջս է, չեմ կարող փափաքիս համեմատ... իմ կողմէս պէտք եղածը քեզի հաստուցանել։

— Հոգ՞դ է հատեր, Պ. Մորֆ... կատակ կընես...։

— Բայց այն աղէտալի իրկունէն ետև՝ որ սատանան դրդեց քեզ Վէօվ ուղիին կողմը չդալու...։ Անշուշտ մեծաւորը մեկնելէն առաջ քեզի համար ալ բան մը կընէր։

— Կը հարցնէս... Պ. Ռոտոլֆ դիս չփնտռեց... ես ալ կարծեցի թէ ալ իրնէ պէտք չունի...։

— Բայց պարտաւոր էիր մտածելու որ դոնէ իր երախտագիտութիւնը քեզի յայտնելու պէտք ունէր...։

— Քանի որ ըսիր թէ Պ. Ռոտոլֆին մտքէն ելած չեմ, Պ. Մորֆ...։

— Լաւ, շատ լաւ, դոյնենք խօսքը... այս ըսեմ միայն որ մինչև քեզ դտնելը շատ յոգնեցայ...։ Մինթէ օկրուհիին կապելիոնն ալ չեմ յաճախեր։

— Չէ։

— Եւ ինչո՞ւ համար։

— Խելքիս այնպէս փչեց...։

— Շատ աղէկ... բայց ըսած խօսքիդ դառնանք...։

— Ո՞ր խօսքիս, Պ. Մորֆ։

— Կըսէիր ինձ... դոհ եմ քեզ դտնելուս... և դեռ ևս գոհ, կարելի է։

— Բանն այս է, Պ. Մորֆ։ Երէկ լաստափայտիս դալով՝ ինձ ըսիր, —Տղա՛ս, հարուստ չեմ, բայց կրնամ քեզի գործ մը դտնել որ հիմակուան գործիդ չափ տաժանելի չէ և քեզի կրնայ օրը չորս ֆրանք բերել։» —Օրը չորս ֆրանք մի... կեցցէ Սահմանադրութիւն... հաւատալ չէր գար ըսածիդ... ֆոխ. Հարիւրապետի թոշակ մ'է այդ, ըսի։ Զեռք կայ,

Պ. Մորֆ։— Բայց դու դարձար ըսիր, —պէտք չէ որ պապուկի պէս հագուած ըլլաս, ինչու որ տեսնելիք մարդիկդ այդ հագուստէդ կրնան խրտնիլ։— Ես ալ պատասխան տուի քեզի։ —Բոլոր ունեցածս վրաս է։— Դու ալ ըսիր. — Դամբլ փողոցն ելիր։— Ես ալ ետևէդ եկայ, Հիւսար մամիկին դրպակէն փայփլուն հագուստներ ընտրեցի առի. դու սառակը կոխեցիր և քառորդի մը մէջ հողատէրի, կամ ատամնաբուժի մը պէս հագուեցայ կապուեցայ։ Հետս ժամադիր եղար Բօրդ-Ս-Տընի դանուելու այս առտու կանուխկեկ, քեզ այն տեղ դտայ կառքովդ, և ահա հիմակ հոս ենք։

— Շատ աղէկ, այս պատմածիդ մէջ ցաւելու բան մը կայ։

— Կա՛յ... եղածն այն է որ աղուոր հագուեր եմ, կը հասկընաս, Պ. Մորֆ... այս իմ բանիս ձեռք չտար... և երբ իմ թերմաշ բադէնս և ծուիկ ծուիկ քուրջերս հագնիմ... աչքիս դէշ պիտի երևամ... ատ ալ ձգէ... ինձի համար օրը չորս ֆրանք վաստակը, ինձի համար որ մինակ երկու հատ կը շահէի... և այս ալ յանկարծակի... փառաւոր բան մը կերևայ, անանկ բան մ'որ շատ չիրնար տևել... և ատոր համար աւելի աղէկ ունիմ մինչև կեանքիս վերջը խշտեկիս յարդէ անկողնին մէջ պառկիլ, քան թէ հինգ վեց դիշեր կակուղ անկողնի մը մէջ...։ Ահա ես ալ ատանկ բնաւորութեան տէր մարդ մ'եմ։

— Բոլորովին պարապ չէ ըսածդ...։ Բայց աւելի աղէկ է միշտ փափուկ անկողնի մէջ պառկիլ։

— Տարակոյս չկայ, աւելի աղէկ է ցկուշտ հաց ունենալ քան անօթութենէ սատկիլ։ Ի՞նչ կը տեսնեմ, միթէ սպանդանոց մ'է այս։— ըսաւ Շուրինէօր մանչին սակրի հարուածներուն ականջ դնելով և վարպուրներուն մէջէն կովի հատ ու կտորները նշմարելով։

— Այո՛, կտրիճս... իմ բարեկամներուս մէկուն է այս սպանդանոցը...։ Մինչև ձիուս քիչ մը յոգնութիւն առնելը կը փափաքիս արդէօք դրպակը մտնել...։

— Ինչո՞ւ չէ, երիտասարդութիւնս միայն բերաւ, թէև իմ ձիներանս Մօն-Ֆօքօնն էր, և արջառ՝ սատկած դրսատներ։ Գոյր բաղդ, թէ որ ձեռքս դրամ ըլլար մնայորդի արհեստը ամենէն աւելի կընտրէի։ Աղբոր քուռակի մը վրայ հեծած՝ վաղն 'ի վաղ տօնավաճառն երթալ ոչխար ու կով գնելու, իրկուն տուն դառնալ և կրակին քովիկը նստիլ, տաքնալ եթէ մսխմ, չորնալ եթէ թրջիմ, հոն գտնել տան տիկինը, բարի գիրուկ մամա մը, ինտում ու ղուարթ, և երամովին զաւակներ որ պայուսակդ կը պրպտեն որ տեսնեն թէ պապան ինչ բերաւ իրենց... և միւս օր առտու... գինարանին մէջ կով մ'եղջիւրներէն բռնել, մանաւանդ երբ հեսա է... է անդգամ... պէտք է որ հնոտ ըլլայ... անրակէն անցնել... մորթել, ջարդել, պատրաստել ու կախել... նղովից արմատ, այս է իմ բոլոր փառասիրութիւնս, ինչպէս որ լա Կուալէօ-ղին փառասիրութիւնն էր դարձշաքար ուտել, երբ գեռ փոքր էր...։ Պ. Մըրֆ, անունը տալով միայն եկաւ այս խեղճ աղջիկը... օկուհիին գինետունը տեսած չունիմ, և կարծեմ թէ Պ Ռոտոլֆ այն տեղէն ազատեց զինքը։ Իրաւ որ աղէկ գործ մ'ըրած եղաւ, Պ. Մըրֆ։ Թշուառ աղջիկ, դէշութիւն չունէր սրտին մէջ... և ուրչափ նորահասակ էր...։ Իսկ ժամանակ անցնելով... սովորութիւնը...։ Կարճ կապեմ, Պ. Ռոտոլֆ շատ աղէկ ըրաւ։

— Ես ալ քու կարծիքդ ունիմ, բայց պիտի դաս դրպակը տեսնելու մինչև որ մեր ձին քիչ մը շունչ առնէ։

Շուրինէօր և Մըրֆ դրպակը մտան և՝ ասա դացի՝ գոմը տեսնելու, ուր երեք հատ փառաւոր կովեր և քանի չափ ոչխարներ կային, յետոյ ախուռը, կառանոցը, գինարանն, շտեմարանները և տան այլ և այլ մասերը պտըտեցան, որոնք այնչափ կոկիկ և մաքուր էին որ դիւրին էր գուշակել թէ անոնց տէրը կանոնաւոր և ունևոր մարդ մ'էր։

Ձերի գտիկնանէն զատ՝ երբ ամէն բան տեսան,

— Խոստովանէ— ըսաւ Մըրֆ —որ բարեկամս երջանիկ չըլլար մ'էլ։

Այս տունն և բոլոր ապրանքն իրն են, թոզ հաղարի չափ կլորիկ սիուզներն (écu) իր առուտուրին համար։ Ասկէ զատ՝ երնստու հինգ տարեկան է, ցլի պէս ոյժ ունի, երկէ զատ՝ երնստու հինգ տարեկան է, ցլի պէս ոյժ ունի, կաթի առողջութիւն մը, և ագրեստին համար մեծ ճաշակ մը։ Վարը տեսած ընտիր և պարկեշտ մանչդ՝ շատ ուշիմ է և անոր տեղը կը բռնէ՝ երբ տօնավաճառը կերթայ արջառներ գնելու...։ Ի՞նչ կըսես, միթէ դու ալ երջանիկ չես գտներ իմ բարեկամս...։

— Ա՛հ, անշուշտ, երջանիկ է Պ. Մըրֆ, բայց ինչ օգուտ. աշխարհիս մէջ բաղդաւորն ալ կը գտնուի անբաղդն ալ։ Երբ կը մտածեմ որ օրը չորս ֆրանք պիտի շահիմ... և կան անանկներ որ անոր կէսն կամ աւելի քիչ կը վաստկին...

— Գուշե՞ս երթալ և տան վերի մասերն ալ տեսնել։

— Ամենայն սիրով, Պ. Մըրֆ։

— Կալուածատէրն ալ, որ քեզ իր քովը պիտի առնէ, աղէկ որ վերն է։

— Կալուածատէրը մի՞։

— Այո։

— Զարմանալի բան, ուրեմն ինչո՞ւ համար առաջուց իմաց չտուիր ինձ։

— Ետքէն կը բացատրեմ բանը...։

— Պահ մ'սպասէ— ըսաւ Շուրինէօր տխուր ու շփոթ դէմքով Մըրֆին թևէն քաշելով. —մտիկ ըրէ, բան մ'ունիմ ըսելիք... կարելի է որ Պ. Ռոտոլֆ չայտնեց քեզ, բայց ես իմ գլխաւորիս բայէ 'ի բաց պիտի ըսեմ... վատ զի թէ որ իր բանին չեմ գար, աւելի աղէկ է որ հիմայէն հասկըցուի... քան թէ ետքը։

— Ի՞նչ ըսել կուզես։

— Ըսել կուզեմ...։

— Ի՞նչ։

— Որ դատապարտ մ'եմ... որ թիարան մտեր եմ...— ըսաւ Շուրինէօր խոր ձայնով մը։

— Է՛հ, դու ալ— ըրաւ Մըրֆ։

— Իրաւ է որ մարդու մը գեան ըրած չեմ— գոչեց Շուրինէօր —և անօթի կը սատկիմ գողութիւն չեմ ըներ . . . : Բայց գողութենէն աւելի գէշ բան մ'ըրի— յարեց Շուրինէօր գեսլինն նայելով —մարդ մեռցուցի . . . բարկութենէս . . . : Վերջապէս բանն ասանկ չէ ,— վրայ բերաւ՝նա պահ մը լուռ կենալէն ետև —բայց ինչ և է , եղածին պէս պիտի պատմեմ մեծաւորին . . . : Աւելի աղեկ է որ հիմա Ճամբայ տայ ինձ քան թէ ետքէն գործը երևան դայ : Դու անշուշտ գիտես ինչ մարդ է , թէ որ իս չպիտի ընդունի , բացէ 'ի բաց ըսէ որ ես ալ եկած տեղս դառնամ :

— Եկուր , եկուր . . . — ըսաւ Մըրֆ :

Շուրինէօր Մըրֆին ետևէն գնաց . սանդղէ մը վեր ելան. դուռ մը բացուեցաւ և երկուքնին մէկէն Ռոտոլֆին առջևը գտնուեցան :

— Իմ բարեմիտ Մըրֆս . . . առանձին թող մեզ— ըսաւ Ռոտոլֆ :

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՆ

Կեցցէ՛ Սահմանադրութիւն , շունչ չափ ուրախ եմ ձեզ այս տեղ գտնելուս , պարոն Ռոտոլֆ , կամ լաւ ևս , վսեմափայլ տէր . . . — պոռաց Շուրինէօր :

— Բարի լոյս , տղայ , ես ալ չափազանց գոհ եմ որ քեզ կը տեսնեմ :

— Կը նայի՞ս սա խաբեբայ Պ. Մըրֆը , որ կուզէր կլեցընել ինձի որ ձգեր գացեր էս... բայց , Ճշմարիտը , ուէր իմ... :

— Ռոտոլֆ անուանէ զիս , աւելի կը սիրեմ այդ անունը :

— Շատ աղէկ , Պ. Ռոտոլֆ , ներում կը խնդրեմ որ Սէդր տէքօլին այն գիշերուան գիպուածէն ետև՝ չեկայ ձեզ տեսնելու... հիմա կզգամ որ անքաղաքավարութիւն մ'ըրի , բայց չէք մեղադրեր իս , այնպէս չէ :

— Ներողամիտ եմ քեզի— ըսաւ Ռոտոլֆ քմծիծաղով մը : ապա վրայ բերաւ :

— Միթէ Մըրֆ այս տունը քեզի ժուռ կայուց :

— Այո , պարոն Ռոտոլֆ... գեղեցիկ տուն , գեղեցիկ գրպակ շատ կոկիկ , շատ բարեկարգ է... : Կոկիկ ըսի , բայց կոկիկն ես պիտի ըլլամ այստեղեւ , Պ. Ռոտոլֆ : Պ. Մըրֆ օրը չորս ֆրանք շահիլ պիտի տայ ինձ . . . չորս ֆրանք :

— Անկից աւելի աղուոր կորկոտ մը պիտի առաջարկեմ քէ՛զի. տղայ :

— Ո՛չ , անկից աւելի աղուո՞ր , չդժարիս , բայց դժուար է . . , մնացէ անդամ մը , օրը չորս ֆրանք :

— Քեզի կըսեմ որ աւելի աղուոր կորկոտ մը կայ . վասն զի այս տունը . մէջն համբարն , այս գրպակը և հազար ոսկի որ սա թղթակալիս մէջ կը գտնուի, բոլորը մէկէն քուկդ են :

Շուրինէօր ապուշ դէմքով մը ժպտեցաւ , իր ծնկին վրայ գրած երկայնասան կղզեներին տափակցուց , ղոր ջղաձգօրէն կը սեղմէր , և Ռոտոլֆին ըսածը չհասկցաւ , թէև անոր խօսքերը շատ պարզ էին :

Ռոտոլֆ վրայ բերաւ անուշութեամբ մը :

— Կիմանամ թէ ինչո՞ւ կը զարմանաս, բայց նորէն կըսեմ, այս տունը և այս գումարը քուկդ են , քու սեպհականութիւնդ են :

Շուրինէօր ծիրանի գոյն դարձաւ , իր կոշտ ձեռքն քրանալի ձակտին վրայ դրաւ և յուզեալ ձայնով մը թոթովեց :

— Ո՛չ , հասկրցայ... այսինքն... իմ սեպհականութիւնն...

— Այո... քու սեպհականութիւնդ... որովհետև բոլորն ալ քեզի կը բաշխեմ, կը հասկրնաս , քեզի կը բաշխեմ , քեզի . . . :

Շուրինէօր աթոռին վրայ երերայ , գլուխը քերեց , հաղայ , աչքը խոնարհեց և պատասխան չտուաւ... : Իր դաղափարներուն թելը չէր կարող բռնել... Ռոտոլֆին ըսածը քաջ կ'ըմբռնէր , և ճիշտ ասոր համար էր որ չէր կրնար ըմբռնածը հաւատալ: Իր միտքին ապրած ստոր թշուառու-

թեան և Ռօտոլֆին ապահոված վիճակին մէջ այնպիսի վիճ մը կար որ, Ռօտոլֆին ըրած ծառայութեամբը չէր լեցուեր։

— Ուրեմն իմ պարգևս քու ակնկալութենէդ շատ վեր կը թուի քեզ— ըսաւ անոր Ռօտոլֆ։

— Տէր իմ,— ըսաւ Շուրինէօր շտապաւ ոտք ելնելով — այս տունը և շատ մը տակ կ'առաջարկէք ինձ... որպէս զի փորձէք իս. բայց... ես ձեր գիտցածը չեմ...։ Արդէն ըսի որ կեանքիս մէջ գողութիւն ըրած չեմ...։ Ո՞ զիտէ, կարելի է մարդ սպաննելու համար... բայց յիսնապետին երաշխ ինձի բաւական է, — յարեց Շուրինէօր ախուր ձայնով մը։

— Ա՜հ, ողորմելի մարդիկ— գոչեց Ռօտոլֆ դառնապէս։

—Այնչափ քիչ մեղքցող ունին որ եթէ առատաձեռնութիւն մ'ընես կարծեն թէ սնոր շարժառիթը ոճիր մ'է...։

Ապա Շուրինէօրին դարձաւ ու քաղցր ձայնով մ'ըսաւ։

— Դու զիս ծուռ կը դատես... կը սխալիս...։ Ես քեզի պատուի դպչելիք բան մը չեմ առաջարկեր։ Ինչ որ կտամ քեզի անոր համար կտամ որ արժանի ես։

— Ե՞ս— պոռաց Շուրինէօր, որուն արմանքն ու զարմանքն նորէն սկսան։ —Ե՞ս, արժանի եմ, և ինչպէ՞ս։

— Ահա ըսեմ պատճառը։ Թէև մանկութենէդ 'ի վեր՝ ազանց բարին ու չարը ճանչելու՝ ինքն իր գլխիդ քու վայրենի բնազդումիդ ձգուեր ես, թէև սոսկալի եղեռնագործներու հետ տասն հինգ տարի թիարան մնացեր, չքաւորութենէ և անօթութենէ նեղուեր ես, իբր վատաղդի և զգօն մարդերու գատապարտութեան ենթակայ, չարագործներուն որջը յաճախելու ստիպուեր ես, սակայն դարձեալ, ոչ միայն առաքինի մնացեր ես, այլ և քու յանցանքիդ պատիժն ու քաւումը մարդկային օրինաց միջոցաւ սատանէն ետև՝ խղճիդ խայթն անդադար կը տանջէ քեզ։

Այս պարզ ու ազնիւ խօսքերը Շուրինէօրին զարմանքն աւելցուցին։ Ռօտոլֆին երեսը կը նայէր երկիւղալի և շնորհագեղ ակնածութեամբ մը և սակայն չէր կարող անոր հաւատ ընծայել։

— Ինչպէ՞ս կարելի է, պ. Ռօտոլֆ... որ, ինձի թմբուկներ տալուդ, ձեզ ինձի պէս բանաւոր մը կարծելով, քանի որ մամիս պէս արկոտի լեզուն կը խօսէիք... իմ կեանքս՝ ձեզի գլուխս գինիով տաքցած ատենը պատմելուս, ձկի պէս քեզ ջրէն հանելուս համար... պարտաւոր ըլլաք ինձ տուն մը... տակ տալ... մեծատուն մ'ընել... Հաւատացէք, պարոն Ռօտոլֆ, նորէն կըսեմ այս կարելի բան չէ...։

— Զիս քու կարգի մարդերէդ կարծելով՝ բնական ու անկեղծ կերպով պատմեցիր կեանքդ ինձ, առանց պահելու ինչ որ աղէկ կամ գէշ գործեր ես։ Դատեցի քեզ... լաւ դատեցի, և կախորժիմ քեզ վարձատրելու։

— Բայց, պ. Ռօտոլֆ, այս եղած բան չէ...։ Ո՛չ, վերջապէս, խեղճ բանուորներ կան... որ իրենց բոլոր կենաց մէջ պարկեշտ եղեր են, և սակայն...։

— Գիտեմ, և կարելի է անոնցմէ շատերուն ըրած բարիքս քեզի չեմ ըներ։ Բայց եթէ այն մարդն որ պարկեշտներու մէջ պարկեշտ կ'ապրի՝ անոնց համարումն քաջալերուելով հաւակրութեան և նպաստի արժանի է, նոյնպէս արժանի է այն որ, թէև բարեկիր մարդեր իրմէ կը խորշին, սոսկալի ոճրագործներու մէջ պարկեշտ կը մնայ։ Բայց այս բաւական չէ, գու իմ կեանքս ազատեցիր... նոյնպէս Մըրֆին, իմ ամենասիրելի բարեկամիս...։ Ուրեմն քեզի համար ըրածս ոչ միայն անձնական երախտագիտութեանս մէկ արդիւնքն է, այլ և բարի ու կորովի հոգի մը՝ որ մոլորեր է քան թէ կորսուեր... ապականութենէ ազատելու փափաք մ'է...։ Այս ալ հերիք չէ։

— Ուրիշ ինչ ըրի, պ. Ռօտոլֆ։

Ռօտոլֆ անոր ձեռքը բռնեց մաերմօրէն և ըսաւ։

— Դու գտացիր թշուառ մարդու մը՝ որ առաջ քեզ ըսպանանել ուզեր էր, և ոչ միայն անոր օգնական եղար, այլ և քու խեղճ բնակարանիդ մէջ, որ Նօդր-Տամի թիւ 9 անել փողոցն է, պատսպարեցիր։

— Ուրեմն գիտէք, Պ. Ռոտոլֆ, իմ բնակութիւնս։

— Մի կարծեր թէ ինչպէս դու, ես ալ կը մոռնամ ինձ պրած ծառայութիւններդ։ Երբ առնէս ելար, եաւէդ մարդ պրկեցի, որ Սէդը ա՛էքօլին հետ բնակարանդ մանելդ տեսաւ։

— Բայց Պ. Մբրֆ ըսաւ թէ իմ բնակած տեղս չէիք դիտեր, Պ. Ռոտոլֆ։

— Քու վրադ վերջին փորձ մ՚ընել կուզէի... միտքս հասկընալ էր թէ վեհանձնութիւնդ անշահախնդիր է...։ Եւ իրօք, քու արիական գործդ եաւ՝ ամենօրեայ տաժանելի գործիդ գարձար, բան մը շինդրեցիր իղնէ, բան մը չյուսացիր, և ոչ իսկ դառն տրտունջ մը հանեցիր բերնէդ՝ ծառայութիւններուդ մասին իմ կեղծած ապերախտութիւնս պարտաւելու համար. և երբ երէկ Պ. Մբրֆ քու սովորական աշխատանքէդ աւելի շահաւոր գործ մ՚առաջարկեց քեզ, ուրախ և շնորհապարտ սրտիւ ընդունեցար։

— Մտիկ ըրէք, Պ. Ռոտոլֆ, մարդս անօթի լեռնէր... օրը չորս ֆրանքը, միւսա չորս ֆրանք է...։ Սակայն ձեզի ըրած ծառայութեանս գալով... ես պարտաւոր եմ շնորհակալ ըլլալու...

— Ի՞նչ պատճառաւ...։

— Այո՛, այո՛, Պ. Ռոտոլֆ— յարեց նա ախուր դէմքով մը։ —Ամէն օր նոր նոր բաներ կզգամ... վասն զի ձեր ծանօթութիւնն ընելէս և այս երկու խօսքը. «դու-դի-ուէրդ և պոռֆ-ուանֆ», ըսելէդ 'ի վեր, չեմ գիտեր ինչու համար այսչափ կը մտածեմ...։ իրաւ արմանքս զարմանքս կը տանի որ երկու խօսք, լոկ երկու խօսք այնպիսի տպաւորութիւն մ՚ընեն։ Բայց Ճշմարիտը, երկու յորենի չնչին հատիկներ ցանեցէք հողին մէջ և մեծ մեծ հասկեր կը բուսնին։

— Այս Ճշգրիտ, գրեթէ բանաստեղծական բաղդատութիւնը Ռոտոլֆը զարմացուց։ Եւ իրօք, երկու բառ... ըղձայուն սրտերու համար լոկ երկու մոգական բառեր՝ գրեթէ յանկարծակի բեղմնաւորեր էին անոր աղդու հոգիին մէջ գտնուած ազնիւ բնազդումներու սերմը։

— Միթէ Սէդը ա՛էքօլը դու չդրիր 'ի Ս. Մանէ— վրայ բերաւ Ռոտոլֆ։

— Այո՛, պարոն Ռոտոլֆ...։ Ուղղամին պէս իր արժեատմսերն ոսկիի փոխել տուի ու գոտի մը գնելով վրան կարեցի...։ Իր կոբիոդը (quibus) անոր մէջ դրի և Ճամբայ հանեցի։ Օրն երսուն առ թոշակ տալով... բարեսէր մարդերու հետ կը ընակի որ անկից իրենք ալ կ՚օգտին։ Երբ լաստափայտս ձգելու առնունենամ, պիտի երթամ նայելու թէ ինչ ջրի մէջ։

— Քու լաստափայտդ մի՞...։ Բայց խանութդ կը մոռնաս։ կը մոռնաս որ այս տեղ տունդ կը գտնուիս։

— Բա՛ց ըսեմ, Պ. Ռոտոլֆ, թշուառիս քթէն մի բռնէք, արդէն գիս փոշիացուցիր բաւական զուարճացաք, ինչպէս որ ըսիք։ Իմ տունս և խանութս օդին մէջ պալատներ են...։ Անշուշտ ըսած էք ինքնովին։ Նայինք սա Շուրինէօր ինչ տեսակ կենդանի է, կրնանք արդեօք սագի պէս հաւատացնել իրեն որ այսպիսի պարգև մը պիտի ընեմ...։ Ալ բաւ է, Պ. Ռոտոլֆ։ Ծաղրասէր եք... վերջապէս։

Եւ սկսաւ քահ քահ խնդալ անկեղծօրէն։

— Բայց նորէն կըսեմ... հաւատա՛ որ...։

— Եթէ ձեզ հաւատայի... տարակոյս չունիմ, տէր իմ, որ պիտի ըսէիք. խեղճ Շուրինէօր, մ՚ղբ դուքս կը շարժես... բայց կարելի է հիւանդ ես։

Ռոտոլֆ սկսեր էր շփոթիլ որ չկրնար Շուրինէօրը համոզել։ Ծանր, տիրական, գրեթէ խիստ ձայնով մ՚ըսաւ անոր։

— Երբէք երախտագիտութեան և ազնիւ ընթացքի մ՚ինձ ներշնչած զգացումի հետ կատակ չեմ ըներ...։ Արդէն ըսի. այս տունը և խանութը քուկդ են... եթէ յարմար տեսնես... ինչու որ սակարգութիւնը թէական է։ Պատուիս վրայ երդում կընեմ որ այս բոլորը քեզի համար են, և սոյն պարգևն արդէն յայտնած պատճառներուս համար քեզի կտամ։

Ռոտոլֆին այս վէս, ազնիւ ձայնին և համոզակեր կերպա-

բանին առջև Շուրինէօր կասկածը փարատեց ու հաւատաց։ Քանի մը վայրկեան իր պաշտպանին երեսը նայեցաւ լռին, և ապա առանց սեթևեթի և սաստիկ յուզուած ձայնով մ'ըսաւ։

— Կը հաւատամ, ակը իմ, և շնորհակալ եմ մեծապէս ձեզի...։ Ինձ նման խեղճ մարդ մը խօսիլ չգիտէ։ Նորէն կըսեմ, հաւատացէք... պատուիս վրայ՝ շատ շնորհակալ եմ ձեզի... Ուրիշ բան մը չեմ կարող ըսել, կը հասկընաք... բայց եթէ կարօտեալներուն օգնութիւն չտիսի զլանամ... վասն զի անօթութիւնը և մուրացկանութիւնը... այն տեսակ օկրուշին ներ են որոնք իրենց ճանկին տակն առին այն ողորմելի լակուալէօզը... և ամէն մարդու քանը չէ, անգամ մ'որ անանկ ազնոցի մէջ կը գլորի, կանգնիլ և անկից ազատիլ։

— Տղայ, այսպէս խօսելով... երախտագիտութիւնդ ասկից աւելի աղէկ չէր կրնար բացատրել։

— Շատ ուրախ եմ, տէր իմ, վասն զի ուրիշ կերպով բացատրելը շատ դժուարին պիտի գար ինձի։

— Հիմակ ա՛լ... երթանք տունդ պատրաստելու. իմ քաջ Մրրֆս այդ զուարճութիւնը վայելեց, ես ալ վայելել կուզեմ։

Ռօտոլֆ և Շուրինէօր վար իջան։ Այն միջոցին որ բակը կ'իջնէին, մանչը՝ Շուրինէօրին դառնալով՝ ըսաւ յարգանօք։

— Քանի որ գուք պիտի ըլլաք, պարոն, այս խանութիս վարպետը, կը պարտաւորիմ յայտնելու որ առ ու տուր շատ կայ։ Կոշիկ և աղդրիկ (gigot) չմնաց... և պէտք է շուտ մը քանի մ'ոչխար մորթել։

— Սքանչելի է— ըսաւ Ռօտոլֆ Շուրինէօրին —ահաւասիկ տաղանդդ գործ դնելու յարմար առիթ մը։ Առաջին խայրին (etrenne) ես պիտի վայելեմ... բայց օդն ախորժակս բացաւ, կողկինեբեդ մէկ քանի հատ պիտի ուտեմ։

— Շատ աղնիւ էք... Պ. Ռօտոլֆ— ըսաւ Շուրինէօր ցնծալի դէմքով մը. —մեծապէս կը պատուէք զիս, ես ալ

իմ ձեռքիս եկածը պիտի ընեմ...։

— Վարպետ, գենարանը երկու ոչխար ղրկեմ։ — քսաւ մանչը։

— Այո՛... և սրած դանակ մը բեր։ բայց սայրը (tranchant) շատ սուր չըլլայ... այլ ետեր հաստատուն...։

— Ձեր ուզածն ունիմ, վարպետ... անհոգ եղիք... մարդ կրնայ անով ածիլուիլ... ահաւասիկ...։

— Նղովից արմատ... Պ. Ռօտոլֆ... ըսաւ Շուրինէօր արտորնօք, և թիկնոցն հանեց, շապկին թևերը սոսթեց ու իր ըմբշի բազուկները ցցուց։

— Ահա իմ երիտասարդութիւնս և սպանչարանը միտքս ընկան... հիմա պիտի տեսնէք թէ ինչպէս կը ջարդեմ... կրակ ու բոց... կուզէի որ արդէն ձեռքս ըլլար...։ Դանակդ, մանչո՛ւկ... ուր է դանակը... քաջ է... կը նայիմ որ արհեստէն կը հասկընաս...։ ընտիր երկաթ ունի...։ Ով որ կուզէ, թող գիմայս ելնէ...։ Նղովից արմատ, այսպիսի շամփրով մը կատղի ցուլ մը կրնամ տապալել...։

Եւ Շուրինէօր դանակը շոշաղցուց։ Աչերէն արիւն կը կաթէր, իր անասնային կողմը կը յաղթէր, ընազդումը, իր արիւնարբու ախորժակն անհնարին ուժգնութեամբ նորէն ելեւան կ'ելնէր։

Զենարանը բակին մէջն էր. մութ, քարաշէն և վերէն փոքրիկ ծակէ մը լուսաւորուած կոնաձև խուց մ'էր։

Մանչն ոչխար մը տարաւ մինչև դուռը։

— Անբակէն անցունեմ, վարպետ։

— Կապե՞լ մի, նղովից արմատ... հոպա իմ ծնկերս փայտ կը կրեն։ Մէկդի կեցի՛ր... մամլի մը պէս անոնց մէջ կը սեղմեմ դանի...։ Տուր նայիմ սա կենդանին և բանդ գնա։

Մանչը գրպակը դարձաւ։

Ռօտոլֆ Շուրինէօրին հետ միս մինակ մնաց. ուշադիր, զըրեթէ անձկութեամբ զանի կը քննէր։

— Օ՛ն, ձեռք զարկ գործիդ— ըսաւ նա։

— Երկար գործ չէ, նղովից արմատ... : Պիտի տեսնէք թէ ինչպէս դանակով կը խաղամ... : Արդէն ափերս կ'այրին... կարծես թէ ականջիս մէջ կը բզզան... : Քունքս կը զարնեն, ինչպէս որ կը զարնէին երբ ուրիշ տեսնէի,.. : Մօտ, մօտ եկուր դու... Է Մարլէն, որ դանակս կոկորդդ խօթեմ :

Եւ Շուրինէօր՝ որուն աչուներէն կրակ կը ցայտէր և Ռօտոլֆին ներկայութիւնը մոռցեր էր, ոչխարը հեշտիւ վերցուց և ոտ մ'ընելով տարաւ, գայլի մը նման որ իր սրսը կը յափշտակէ ու որջը կը տանի :

— Ռօտոլֆ անոր ետևէն դնաց, դուռը զոցեց և անոր կոթնեցաւ :

Սպանդարանը մութ էր, լուսի շող մը՝ վերէն գալով՝ Շուրինէօրի կոշտ դէմքը՝ իր ղեղին խարտեշ մազերն ու հրաներկ մորուսը կը լուսաւորէր, ըստ նկարու Ռանպրանդի... : Կորակոր ծոած՝ ակռաներով երկայն դանակ մը՝ որ մթնաղէն կը փայլէր, բռնած, իր ծունկերուն կը քսէ ոչխարը : Երբ զայն զսպեց, գլխէն բռնեց, վիզն երկնցուց... և մորթեց... :

Այն միջոցին որ ոչխարը դանակին ծայրն զգաց, անուշ ողբագին կերպով մայեց, կիսամեռ նայուածքը Շուրինէօրի գարձուց... և արիւնի երկու կաթիլ սպանդագործին երեսը ցատկեց :

Այն ձիչն, այն նայուածքը, այն արիւնը՝ որ վրան սրսկեր էր, ահռելի ապաւորութիւն մ'ունեցան այն մարդուն վրայ : Զեռքէն դանակն ընկաւ, դէմքը մոխիր դարձաւ և զարհուրելի ու խոժոռ երևոյթ մ'առաւ արիւնաթաթաւ վիճակին մէջ. աչուները կլորեցան, մազերը գլխուն վրայ տընկուեցան, յետոյ ետ ետ վազեց ու խեղդուկ ձայնով մը գոռաց :

— Ո՛հ, յիսնապե՛տը, յիսնապե՛տը... :

Ռօտոլֆ վրայ հասաւ :

— Խելքդ գլուխդ ժողվէ, մարդ... :

— Ահա... ահա... յիսնապետը... կրկնեց Շուրինէօր, քայլ առ քայլ ընդկրկեց... ակնապիշ՝ դաժան աչքով մը անտեսանելի ճիւաղ մը ցոյց տալով : Ապա, սոսկալի աղաղակ մը ձգելով՝ որպէս թէ ճիւաղն իրեն դպաւ, սպանդարանին խորը, ամենէն խաւարին կողմը վազեց ; և անդ՝ երեսը, կուրծքը, թևերը պատին զարնելով՝ իբր ահաւոր երևոյթէ մ'ազատելու համար կուզէր զայն տապալել, ու խորին և ջղաձիգ ձայնով մը կը կրկնէր.

— Ո՛հ, յիսնապետը... յիսնապետը... յիսնապետը... :

. . . . . .

ԳԼՈՒԽ Ի.

ԵՐԹ

Մարգիոն և Ռօտոլֆին խնամքը, որոնք դժուարաւ անոր այլայլութիւնը փարատեր էին, Շուրինէօր բոլորովին ինքզինքը դաեր էր : Ուստի իշխանին հետ՝ տան վերի դատիկոնին մէկ սենեակը կը դանուէր :

— Տէր իմ — ըսաւ նա վշտահար — երախտիքդ երբէք չպիտի մոռնամ... բայց, ճշմարիտը կուզէք, աւելի լաւ կը սեպեմ մեծագոյն թշուառութեան մէջ մնալ... քան թէ մսագործ ըլլալ... :

— Բայց... աղէկ մտածէ :

— Հաւատացէք, տէր իմ... երբ այն անպաշտպան անասունին ձայնը լսեցի... երբ զգացի անոր արիւնին կայլակներն երեսիս վրայ... տաք արիւն մը... որ կարծես թէ դեռ կենդանի էր... ո՛հ, չէք կրնար երևակայել թէ ինչ եղայ... ահա այն ատեն եբաղս տեսայ նորէն... յիսնապետը... և այն խեղճ դեռահաս զինուորները զոր կը մորթէի... որ անօգնական էին, և մեռնելու ատեն անանկ անուշ... անանկ անուշ երեսով ինձ կը նայէին... որ կարծես թէ վրաս կը գթային... : Ո՛հ, տէր իմ... խենդենալ բան մը չէր... :

Եւ թշուառ մարդն իր գլուխը ջղային շարժումով մը ձեռներուն մէջ պահեց :

— Օ՜ն, հանդարտէ նայիմ։

— Ներեցէք ինձ, տէր իմ, բայց հիմա՛ ալ արինին... զանակի տեսքը... չեմ կարող տանիլ...։ Ամեն վայրկեան այն ինչ մուցած երազները կը յիշեն ինձ... Ամէն օր ձեռներս ու ոտներս արիւնի մէջ թաթաւել... խեղճ կենդանիներ մորթել... որոնք հեղուկ կը նային, ա՛հ, չէ՛, չէ՛, տաժանելի գործ մ՚է...։ Աւելի աղէկ ունիմ կոյր ըլլալ Մէղը տ՚էքօլին պէս քան այս արհեստը բանիլ։

Այսպէս խօսելու տեսն՝ անհնարին է նկարագրել Շուրինէօ-ի շարժումներուն, ձայնին և կերպարանին ազդումը։ Բօտանլիին սիրտը սաստիկ շարժեցաւ։ Շատ գոհ էր որ իր մարդուն վրայ արիւնին տեսքն այնպիսի սոսկալի տպաւորութիւն մ՚ըներ էր։

Պահ մը, Շուրինէօ իրը մարդ՝ յաղթուեր էր իր դգլանային ու արիւնուշտ բնազդումն. բայց խղճին խոյթը յաղթեց սոյն բնազդումին։ Գնդեցիկ էր այս տեսարանս և մեծ դաս մը կ՚ընծայէր։

— Ներեցէք ինձ տէր իմ,— ըսաւ Շուրինէօ երկչոտութեամբ մը —իրաւ է որ պէտք եղածին պէս չեմ ճանչեր քու ըրած բարիքդ... բայց...։

— Ամենևին, տղայ, արդէն ըսի քեզի, այս սակարկութիւնը թէական է։ Քեզի համար մսագործի ահեստն ընտրեր էի, վասն զի դու յատուկ ճաշակ և հակում ունիս այս արհեստին...։

— Բարէ, տէր իմ, իրաւ է...։ Եթէ այն գիսցածներդ չըլլային, իմ երջանկութիւնս անոր մէջ կը գտնէի... ինչպէս որ քիչ մ՚առաջ Մբրֆին ալ ըսեր էի։

— Բայց դարձեալ մտածելով որ այս գործը կարելի է չես հաւնիր, ուրիշ բան մ՚որոշեր էի։ Մարդ մ՚որ ճէղայիրի մէջ շատ արտորէք ունի կրնայ իր ազարակներէն մէկը տալ ինձ քեզի համար։ Մօտակայ անդաստանները շատ բերրի են և մշակուած, բայց կը խոստովանիմ որ այս հողերը Աղլաս լեռին տահմանները կը գտնուին, այսինքն մեր բերդատեղ զօրաց մօտ՝ և միշտ արտաքսուց յարձակումներուն ենթակայ են...։ Այն տեղ բնակողն ոչ միայն երկրագործ մը, այլ և զինուոր պէտք է ըլլայ. մարտկոց մը, նոյնպէս ազարակ մ՚է այն։ Հողատէրը բացակայ գտնուելով՝ ա-

նոր կողմէն այն երկիրները բանեցնել տուող մարդն կրնայ քեզի ա-մեն բան հասկցնել. կըսեն թէ բարեկիրթ ու անձնուէր մէկն է, կրնաս քովդ պահել որչափ որ իրմէ պէտք ունենաս։ Երբ անդամ մ՚այն տեղ հաստատուիս, ոչ միայն աշխատանքով ու խելքովդ կրնաս քու ապրուստդ առնել, այլ և քաջութեամբդ իրական ծառայութիւն մը մատուցանել նոյն երկրին։ Գաղթականները զինուորական կենաց կը վարժին... արդ՝ քանի որ հողերդ ընդարձակ են և անկից կախում ունեցող վարձուորներդ շատուր, կարող ես մեծ դունդ մը կազմել և անոր գլուխն անցնիլ։ Քու արիութենէդ ոգի առնելով՝ այս դունդը մեծ օգուտ կրնայ գործել և գաշտին մէջ գտնուած յիրուցան կալուածները պաշտպանել։ Իրաւի կըսեմ, կը փափաքիմ որ այս ասպարէզը մտնես, թէև վտանգ կայ... կամ, լաւ ես վտանգաւոր ըլլալուն, վասն զի քու բնածին անվեհերութիւնդ այն տեղ կրնայ ճարակ գտնել, վասն զի, մեծ մեղք մը թիւնդ այն տեղ կրնայ ճարակ գտնել, վասն զի, մեծ մեղք մը քաւելէն ու դրեթէ վերազանցելէն ետեւ՝ քու փրկութիւնդ աւելի կատարեալ, աւելի ազնիւ, աւելի դիւցազնական կըլլայ, եթէ անսարտելի երկրի մը վտանգներուն մէջ ձեռք ձգուի քան փոքրիկ քաղքի մը անդորը կենդանութեան մէջ։ Եթէ ըսես թէ ինչու համար տուա-ջուց այս վիճակը չատաջարկեցի ես քեզի, կարծէի թէ միւսն աւելի յարմար կը գտնես, քանի որ այնչափ վտանգալի է այս առաջարկածս որ առանց հաւանութիւնդ առնելու չէի ուզեր յորդորել քեզ...։ Դեռ մտմտալու ատեն ունինք... Եթէ ճէղայիրի գործն անյարմար դատես, բայց՝ 'ի բաց խոստովանէ, ուրիշ բան մը կրնանք գտնել... Եթէ կը հաւանիս, վաղը դաշնագիրը կը գրուի, կը ստորագրուի... և ճէղայիր կ՚երթաս արտատէրին կողմն սահմանուած մարդու մը հետ, որպէս զի կալուածներն յանձնէ... Երբ-կու տարուան ազարակի վարձք կայ, այն գումարը հոն հանելուդ կտամնաս։ Հողը երեք հազար ֆրանք կը բերէ, աշխատէ, շէնցուր այն կողմերը, գործուանեայ, արթուն ու ժիր եղիր. անտարակոյս թէ քու և թէ քու օգնութեանդ կարօտ գաղթականներուն բա-

բօրութիւնը շատ հեշտիւ կ'աւելցնես. որովհետև աներկիւղ եմ որ միշտ գթասէր, միշտ վեհանձն պիտի գտնուիս, և պիտի յիշես որ հարուստ ԸԼԼԼԸ... շատ գալ է։ Թէպէտ ես քեզնէ հեռի պիտի մնամ, սակայն չպիտի մոռնամ. ոչ, երբէք պիտի չմոռնամ որ ես և իմ անգին բարեկամս քեզի պարտաւոր ենք մեր կեանքը։ Եթէ քու սիրոյ և շնորհապարտութեան մէկ փոքրը կուզես յայտնել ինձ, կը փափաքիմ որ շուտ մը կարդալ գրել սորվիս, որպէս զի գոնէ շաբաթն անգամ մ'ըրածդ գրածդ ինձի հաղորդես, և եթէ խորհրդի և օգնութեան կարօտութիւն մը ըլլաս ուղղակի ինձի գիմես։

. . . . . .

Աւելորդ է Շուրինէօրի սրտի խիղճն ու եռանդն նկարագրել։ Ընթերցողն՝ անոր բնաւորութեան յօժարութիւններն արդէն բաւական ճանչելով՝ կրնայ երևակայել որ ասկից աւելի յարմար առաջարկութիւն մը չէր կրնար ըլլալ անոր համար։

. . . . . .

Եւ իրօք հետևեալ օրը Շուրինէօր ճամբայ ելաւ ձէզայիր երթալու համար։

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԷՕՎ ուղին մէջ Ռօտոլֆին ունեցած տունը իր սովորական բնակութեան տեղը չէր։ Ս. ժերմէն արուարձանին ամենէն մեծ ապարանքներէն մէկուն մէջ կը բնակէր, որ Բլիմէ փողոցին և Էնվալիտներու պողոտային (boulevard) ծայրը կը գտնուի։

Ռօտոլֆ իր իշխանական կարգին վայել պատիւներէն աղատ մը-նալու մտօք՝ Բարիզ հասնելէն 'ի վեր՝ ծպտեալ կը պտըտէր, և Գաղղիոյ կառավարութեան մօտ գտնուող գործակատարը յայտներ էր այս առթիւ, առ որ անկնէ, թէ իր վեհապետը պաշտօնական անհրաժեշտ այցելութիւնները պիտի կատարէ կոմս գը Տէ-բէն անուանով։ Հիւսիսային տերութիւններուն այս առօրեայ սովորութեան շնորհիւը իշխան մ'ազատօրէն և զուարճութեամբ կրնէ իր ճամբորդութիւնը և տաղտկալի ներկայացումի ձանձրոյթէն զերծ կը մնայ։ Թէև յայտնի ծպտեալ՝ Ռօտոլֆի ինչպէս որ կը վայլէր, մեծաշէն ու զարդարուն տուն տեղ շտկեր էր։ Ընթերցողը Բլիմէ փողոցին ապարանը պիտի տանինք Շուրինէօրի գէպ 'ի ձէզայիր ուղևորութեան հետևեալ օրը։

Ժամը տասն զարկեր էր։

Գետնայարկին ընդարձակ մէկ սրահին մէջ՝ որուն ներսի կողմը կը գտնուէր Ռօտոլֆին դրասենեակը, Մըրֆի սեղանի մ'առջև նստած՝ շատ մը նամակներ կը գմուէր։

Սև հագուած և վզէն արծթէ շղթայ մը կախած բարապան մը (huissier) դուռը կրնակի վրայ բացաւ և իմաց տուաւ —« Մեծածաշուք Պ. տը Կրաուն —» դալուստը։

Մըրֆ՝ առանց գործը թողլու՝ մտերմական և ընտանի կերպով մը այցելու պարոնը բարևեց։

— Պ. գործակատար— ըսաւ նա ժպտելով —բարէհաճէ քիչ մը տաքնալու, պահակէ մը զբաղումս կը լմննայ...։

— Պ. ներքին քարտուղար... հրամանիդ պիտի սպասեմ — պատասխանեց Պ. տը Կրաուն զուարթօրէն, և արծաթնտիր սեպուհին (squire) կատակելով խորին ակնածական ողջոյն մը տուաւ։

Պարոնը գրեթէ յիսուն տարեկան էր և աղէբեկ, ցանցառ և թեթև մը փոշոտ (poudré) և դանդուր մազեր ունէր։ Իր փոքր ինչ սեպագեղ ծնօտը՝ բազմածալ և ձիւնի պէս սպիտակ բեհեղէ լայն փողպատին մէջ կիսովին ծածկուեր էր։ Իր դիմագրութիւնը (physionomie) նրբամտութիւն, իր կերպերն՝ աղնուութիւն ունէին, և իր ասկի ակնոցին ապակիներուն տակէն խորագէտ և սուր աչուները կը փայլէին։ Թէև առաւօտեան ժամը տասն էր, Պ. տը Կրաուն սև զգեստներ հագեր էր. քաղաքավարութիւնն այսպէս կը պահանջէր. բազմանիշ բաց գունէ ժապաւէն մը կոճկնոցին կապեր էր։ Իրփեղոյրը աթոռի մը վրայ դրաւ, և վառարանին մօտեցաւ, մինչև Մըրֆ գործը կը շարունակէր։

— Կ'երևի թէ Նորին վսեմափայլութիւնն այս գիշեր շատ նստած է, սիրելիդ իմ Մըրֆ, վասն զի կը նայիմ որ թղթակցութիւնդ վերջ չունի։

— Մեր վսեմափայլ տէրն այս առտու ժամը վեցին անկողին մտաւ։ Շատ մը գիրերէ զատ՝ ութ երեսէ բաղկացեալ նամակ մը գրեց սպարապետին, և գրեթէ անոր չափ երկայն գիր մ'ալ ինքը թելադրեց ինձ բարձրագոյն ատեանին նախագահ՝ Հերքօզէն-Օլդենչալ իշխանին, որ Նորին վսեմափայլութեան եղբօրորդին է։

— Գիտէք արդեօք որ իր որդին Հանրի իշխանը Աւստրիոյ վեհափառ կայսեր ծառայութեան մտաւ իբր պահապան զօրաց տեղակալ։

— Այո՛ մեր վսեմափայլ իշխանը զինքն՝ իբր իր ազգականը՝ մասնաւորապէս կայսեր խնամոյ յանձներ էր. ընտիր և արի պատանի մ'է. հրեշտակի գեմք և ոսկի սիրտ մ'ունի։

— Բանն այն է, սիրելի Մըրֆ, որ եթէ Նորատի իշխանը Ս. Հերմենկիլա կուսարանը մտնէ ելնէ, քանի որ արքայուհին իր մօրաքոյրն է... չգիտեմ թէ թշուառ կայսերը...։

— Լաւ, պարոն, պարոն...։

— Ինչ օգուտ... Բարիզի օգը...։ Բայց կատակը մէկդի։ Հարկ է սպասել որ իշխանը արթննայ քանի մը կարևոր տեղեկութիւններս հաղորդելու համար։

— Հարկ չկայ, իմ սիրելի պարոն...։ Իշխանը պատուիրեց որ միջօրէի ժամը երկու երեքէն առաջ զինքը չարթնցընեն, կը փափաքի որ սոյն նամակներն այս առտու մասնաւոր սուրհանդակով մը ճամբայ հանես, փոխանակ մինչև երկուշաբթի սպասելու... եւ քաղաք ծանօթութիւններդ ինձ հաղորդես, որպէս զի արթննալուն իրեն պատմեմ, ահա այս է իր հրամանը...։

— Քաջ է, յուսամ թէ իշխանը բերած լուրերէս շատ գոհ պիտի ըլլայ...։ Բայց, սիրելիդ իմ Մըրֆ, կարծեմ թէ այս արտաքոյ կարգի սուրհանդակը դեշ նշան մը չէ...։

— Վերջին նամակներն զոր պատիւ ունեցայ մեր իշխանին յանձնելու...

— Կը յայտնէին թէ այն կողմը ամէն բան կարգին է. և ահա ճիշտ այդ պատճառաւ է որ իշխանը կը փափաքի որ այսօր իսկ սուրհանդակ մը հանես, որպէս զի ժամ առաջ իր գոհունակութիւնը բայտարէ բարձր. ատեանին նախագահ Հերքօզէն-Օլտենչալ իշխանին։

— Մեր իշխանին բնութիւնն ասկից ալ կը ճանչցուի. եթէ յանդիմանութեան արժանի բան մ'ըլլար, այսչափ չէր շատպեր։

— Իսկ հոս, նոր բան մը չկա՞յ, պարոն, ձայն ձուն չելլա... մեր գաղանի արկածները...։

— Բոլորովին անյայտ են։ Մեր իշխանը Բարիզ գալէն հետէ՝ հաղիւ հազ կ'երևի այն սակաւաթիւ անձերուն տունն՝ ուր առջի անգամ ներկայացաւ. ուստի ամէն մարդ կը կարծէ թէ առանձնութիւնը կը սիրէ և Բարիզի շրջականները սաստկ'արշաւէ։ Սառա Մակ-Կրէկօր կոմսուհիէ և իր եղբօրէն զատ ոչ ոք գիտէ թէ մեր իշխանն ծպտեալ կը պտըտի. արդ՝ ոչ կոմսուհիին և ոչ իր եղբօրը քանին կրայ այս գաղանիքն երևան հանելու։

— Ա՛հ, սիրելի պարոն— բսաւ Մըրֆ հառաչելով —ինչ մեծ դժբաղդութիւն է այս անիծեալ կոմսուհիին հիմակ այրի ըլլալը։

— Միթէ նա 1827ին կամ 1828ին չկարդուե՞ր էր։

— 1827ին այն նորաբոյս թշուառ օրիորդին մահուանէ քիչ մ'ետքը, այն օրիորդին, որ այժմ տասն վեց կամ տասն եօթ տարեկան պիտի ըլլար... և զոր տակաւին մեր վսեմափայլ տէրը ամէն օր կ'ողբայ։

— Հիմնաւոր օրը մ'է այն, քանի որ Նորին վսեմափայլութիւնն իր ամուսնութենէ զաւակ չունեցաւ։

— Եւ ահա, սիրելի պարոն, մեր իշխանն հէք լա Կուաէօզին համար տարած խնամոյ մասնաւոր շարժառիթն այն է

որ իր դառնապէս լացած աղջիկը հիմակ այն խեղճ էակին տարեկից պիտի ըլլար։

— Եւ իրօք աղէտալի բան մ'է որ Սառա կոմուհին, որ մի գլխովին ազատել պէտք էր, անամուսին գտնուի։ Ճիշտ տասն ութ ամսէ ետքը որ մեր իշխանը՝ քանի մը տարուան ամուսնութենէ վերջը, իր չնաշխարհիկ կողակիցը կորցոյց։ Անտարակոյս կոմուհին կարծէ թէ այս կրկնակի սրբութեան մէջ բաղդին մատը կայ...

— Հետևապէս իր անհեթեթ յոյսերն աւելի ևս կարծարծին, թէև քաջ գիտէ թէ մեր իշխանն իրեն դէմ խորին ու արժանի ատելութիւն մը կը տածէ։ Ան չէ՞ որ իր աղջկին մահը պատճառեց անտարբերութեամբը. ան չէ՞ որ պատճառ եղաւ...։ Ա՛հ, պարոն— ըսաւ Մբրֆ իր խօսքը կիսատ թողլով— այս կինը աղէտաբեր կին մ'է...։ Տար Աստուած որ ուրիշ աղէտներ չբերէր մեր գլխին։

— Սակայն այսուհետև Սառա կոմուհիին ակնկալութիւնը հիմովին հակասական է. ասկից առաջ յիշուած հէք աղջկին մահը խորտակեց այն յետին կապն ալ՝ որով թերևս մեր իշխանն այս կնկան կապուէր. յիրաւի յիմար է նա եթէ տակաւին կը տածէ այսպիսի յոյսեր...։

— Այո՛, բայց վտանգաւոր յիմար մ'է...։ Արդէն գիտես որ Սառային եղբայրը՝ իր փառասէր ու յամառ միտումներուն կը մասնակցի, թէև այս ընտիր լծորդներն այնչափ պատճառներ ունին յուսահատելու... որչափ որ ունէին յուսալու ասկից տասն ութ տարի առաջ։

— Ա՛հ, այն ժամանակ ալ ինչ անհնարին չարիք պատճառեց դժոխային Բօլիտորին իր մեղսակից երեսպաշտութեամբը։

— Այս անզգամին խօսքը բանալուդ՝ չմոռնամ ըսելու որ մէկ կամ երկու տարիէ 'ի վեր այս տեղ կը գտնուի. ան տարակոյս խորին թշուառութեան մէջ ընկղմած է, կամ խաղարային արհեստի մը կը պարապի։

— Ի՛նչ սոսկալի ստորնութիւն է այնպիսի հմուտ, գիտուն և հանճարեղ մարդու մը համար։

— Եւ միանգամայն զաղբալի անզգամի մը համար...։ Երանի թէ կոմուհիին չհանդիպէր։ Այս երկու դիւահարներու միութիւնը շատ վտանգաւոր կրնայ ըլլալ։ Բայց, սիրելի պարոն, այս տեղեկութիւններդ վաւերաքա՞ն են։

— Անշուշտ, — ըսաւ պարոնը գրպանէն թուղթ մը հանելով։ —Այս թուղթը՝ լա Կուալէօզ անուն աղջկին ծննդեան և Մէդը տ'էքօլին որդի Գրանսուա ԹԷրմէնի արդի բնակութեան նկատմամբ եղած հետազօտութիւններուն կը վերաբերի։

— Այդ թուղթը կարդալու շնորհ կընե՞ս, իմ սիրելի տը Կրաուն, մեր իշխանին խորհուրդներն ինձի յայտնի են... և կրնամ դատել եթէ սոյն տեղեկութիւնները բաւական են...։ Միթէ դո՞հ ես միշտ արդի գործակալէդ։

— Անգին, ուշիմ, ճարպիկ և զաղտնապահ մարդ մ'է...։ Սաէպ իր եռանդը զսպելու կը բռնադատուիմ։ Վասն զի, կան մէկ քանի խնդիրներ որ մեր իշխանը անձամբ կուզէ հետազօտել, ինչպէս որ յայտնի է...։

— Եւ միթէ միշտ կը կարծէ թէ իշխանն այս բաներուս մէջ մատ չունի՞։

— Մի՛շտ...։ Իմ դեսպանական կացութիւնս անոր յանձնած խուզարկութիւններս արդարացնելու իբր պատրուակ կ'օգնէ։ Պ. Պատինօ (որ է մեր խուզարկու մարդուն անունը) ամէն դասի մարդերու հետ յայտնի կամ դաղտնի յարաբերութիւններ և շատ մը բանբերներ ունի. ատեն մը փաստաբան ըլլալով՝ թէև ստիպուեր է իր պաշտօնը վաճառել անվստահութեան ծանր յանցանքի համար, սակայն իր հին ծուխերուն թէ հարստութեան և թէ վիճակին վրայ ճշդիւտ տեղեկութիւններ գտներ է։ Շատ մը գաղանիքներ գիտէ՝ որմէ օգուտ քաղելը լրբօրէն կը խոստովանի ու կը պարծի. երկու երիք անգամ գործերու մէջ հարստացեր ու ընկեր է, և իր

անունն եղած ըլլալուն՝ նոր ձեռնարկութիւն մը փորձելը անկարող՝ փոքր 'ի շատէ ապօրէն միջոցներով օրն օրին ապրելու սովորեալ՝ տեսակ մը Ֆիկարօ դարձեր է տեսնելու արժանի. հոգւով մարմնով զինքը վճարողին ու իր շահուն գերին է, ուստի մեզ խաբելու պատճառ մը չունի: Բայց և այնպէս յատուկ մարդ մը սահմաներ եմ որ վրան կը հսկէ:

— Իրաւ է որ մեղի արդէն հաղորդած տեղեկութիւնները քօղբոլին ճշմարիտ էին:

— Ի՞նչ հասկցած կերպով ուղղութիւն մ'ունի, և ճշմարիտը, սիրելի Մըրֆ, Պ. Պատինոն այնպիսի խորհրդակեաց մարդերու բնատիպ տիպարն է, որոյ տեսակը միայն Բարիզի մէջ կարելի հանդիպիլ ու տեսնել. անտարակոյս իշխանը անոր տեսութենէ պիտի զուարճանար, եթէ ստիպուած չըլլար հետն անձնական յարաբերութիւն չունենալու:

— Պ. Պատինոյին ամենայանը կարելի է աւելցնել. միթէ աւելի բան մը տալ կարեւոր կը համարիս:

— Ամիսը հինգ հարիւր ֆրանք, ձեռաց տակի ծախսերէն զատ... որ նոյնչափ գումարի մը կը հասնի, կարծեմ թէ բաւական է; ինքը շատ գոհ կ'երեւի. այդ կիսին վրայ եաքէն ալ կը մտածենք:

— Եւ միթէ իր այս արհեստը իրեն ամօթ չտեսնո՞ր:

— Ո՞վ, ա՜ն. ընդհակառակն պատիւ կը սեպէ. իր յայտաղիրներն ինձ ներկայացնելու ատեն՝ միշտ կարեւոր... չըսեմ դեսպանական կերպարան մը կ'առնու. վասն զի այս թշուառականը հաւատալ կը կեղծէ թէ իր պաշտօնը տէրութեան գործերու կը վերաբերի և կզմայլի տեսնելով թէ օտարոտի շահերու և պետութիւններու ճակատագրին մէջ ի՞նչ թագուն յարաբերութիւններ կը գտնուին: Այո՛, ատեն ատեն կը ժպտի մինչև անգամ ըսելու ինձ: «Տէրութեան մը կառավարութեան մէջ ինչպիսի մէջէ մէջ բաներ կան ամենին անյայտ. և սակայն որո՞ւ մտքէն կանցնի, ազնիւ պարոն, որ ձեզի յանձնած ծրագիրներս Եւրոպայի գործերուն վրայ թերևս մեծ ազդեցութիւն մ'ունին:»

— Ի՞նչ և է, վատագոյի մարդիկ իրենց սարսռութիւնը ծածկելու համար այսպիսի պատրուակներ կը հնարեն, թող պարկեշտ մարդիկ ուրախանան: Բայց այս ծրագիրներն ի՞նչ պիտի ընես, սիրելի պարոն: Ահաւասիկ, Պ. Պատինոյին ըրած յայտարարութեան համեմատ խմբագրուած են:

— Կարդա՝ որ մտիկ ընեմ:

Պ. տը Կրաուն հետեւեալ ծրագիրը կարդայ:

ԾՐԱԳԻՐ ՖԼԻՕՐ-ՏԸ-ՄԱՐԻՈՒ ՎԵՐԱՐԵՐԵԱԼ:

«1827ին սկիզբները, Բիէր Դուրնըվին անուն մարդ մը, որ այժմ իբր դրամանենգ Ռոշֆորի թիարանը արգիլուած է, Շուէդ մականուանեալ ծէրվէ կնիկին առաջարկեց որ հինգ վեց տարու պզտիկ աղջիկ մ'իր խնամոց ներքև առնու և մի անգամի համար հազար ֆրանք վարձք ընդունի:

«Այս պայմանագրութենէ եաւ՝ մանկուհին երկու տարի այս կնկան մօտ մնաց, բայց անոր ձեռքէն քաշած նեղութիւններէն պրծելու համար, յանկարծ խոյս տուաւ: Շատ տարի կար որ լա Շուէդ այս աղջկին վրայ լուր մ'առած չէր, երբ ասկից վեց շաբաթ առաջ, առաջին անգամ Միջնաքաղքին մէկ գինետան մէջ տեսաւ զանի: Մանկուհին դեռաբոյս աղջիկ մ'եղեր էր և լա Կուալէջ մականունը կը կրէր:

«Այս հանդիպումէն մէկ քանի օր առաջ, Դուրնըվին, որ Մէդր ա'էքօլին հետ Ռոշֆորի թիարանը ծանօթութիւն ըրեր էր, մանրապատում նամակ մը ուղղեր էր Պրա-Ռուժին (թիարանի կամ աղատագիր ոճրագործներու ծածուկ ու սովորական թղթակից մը) լա Շուէդ մականուանեալ ծէրվէ կնկան երբեմն յանձնուած մանկուհին վրայ:

«Այս նամակէն և լա Շուէդին յայտարարութիւններէն կը հետևի որ Սերաֆէն անուն տիկին մը՝ ծաք ֆէրրան նոտարի մը վարչուհին, 1827ին Դուրնըվինէն խնդրեր էր իրեն կին մը գտնել, որ, հազար ֆրանք վարձքով՝ հինգ վեց տարու աղջկի մը հոգատարութիւնը, զոր ինչպէս որ վերը

քսինք, կուզէին երեսի վրայ ձգել, յանձն առնու։

« Լա Շուէդ այս առաջարկութիւնն ընդունեց։

« Այս տեղեկութիւնները Պրա-Ռուժին հաղորդելով՝ Դուրնրմինին նպատակն էր զանի մղել որ երրորդի մը միջոցաւ տիկին Սէրաֆէնէն ստակ քաշէ և սպառնայ որ այս 'ի վաղուց մոռցուած արկածը պիտի ձանձնէ եթէ մերժուի։ Դուրնրմին կը հաստատէր որ այս տիկին Սէրաֆէն անյայտ անձերու յատուկ հրամանակատարն էր։

« Պրա-Ռուժ այս գիրը լա Շուէդին յանձներ էր, որ բաւական ատենէ 'ի վեր Մէդր տ'էքօլին անօրէնութիւններուն գործակիցն էր. որով ակներև կը մեկնուի թէ ինչպէս աւազակն այս տեղեկութիւնը ստացեր՝ և ինչպէս լա Շուէդ լա Կուալէօզը Լաֆէն-Պլանշ դինետունը հանդիպելուն զանի տաղնապելու համար ըսեր էր. Քո՞ ծնողքդ գոնե, քայց պո՞ւ ղլխի ճանչա։

« Արդ՝ կը մնար ստուգել թէ Դուրնրմինի նամակը՝ երբեմն իր ձեռօքը լա Շուէդին յանձնուած մանկուհիին վրայ ճշմարտութիւնը կը պարունակէր թէ ոչ։

« Տիկին Սէրաֆէնի և ծաք Գէրրան նօտարին նկատմամբ քանի մը տեղեկութիւններ առինք։ Երկուքն ալ կենդանի են։ Նօտարը թիւ 41 Սանդիէ փողոցը կը բնակի, իբր խստակրօն և բարեպաշտ մարդ մը կը հռչակուի, լաւ ևս ըսեմ, եկեղեցիները շատ կը յաճախէ. առօրին գործերուն մէջ այնպիսի տարապայման կարգ կանոն կը պահէ որ իբր անդութ կը բամբասուի. աղուոր գրատուն մ'ունի. իր խնայողութիւնը աղահութեան կը հասնի. Տիկին Սէրաֆէն միշտ իր վարչուհին է։ Պ. ծաք Գէրրան, որ շատ աղքատ էր, իր պաշտօնը 350000 ֆրանքի դնեց. այս գումարին մէկ մասը՝ Բարիզի աղքային զօրաց վերին պաշտօնաւոր՝ Պ. Շարլ Ռօպէր իրեն տուաւ, շատ դեղեցիկ և տեսակ մ'ընկերութեան մէջ հռչակ ունեցող երիտասարդ մը։ Մէկ քանի բանսարկուներ կըսեն թէ՝ նօտարը Պ. Շարլ Ռօպէրի հետ ըրած պօրսայի գործե-

բէն այնչափ ստակ զարկած է, որ այժմ իր պաշտօնին վարձքը հատուցանելու կարողութիւն ունի, Բայց Պ. ծաք Գէրրան այնպիսի մաքուր անուն մը հանած է, որ ամէն մարդ ոյս ձայներն սոսկալի զրպարտութիւններ կը համարէ։ Ուրեմն տարակոյս չկայ որ այս սուրբ մարդուն վարչուհին, տիկին Սէրաֆէն կարող է լա Կուալէօզին ծննդեան վրայ անդին տեղեկութիւններ հաղորդել։»

— Խօսք չկայ, սիրելի պարոն— ըսաւ Մրրֆ. —Դուրնրմինի յայտարարութիւնները ճշմարտութեան երեսէն մ'ուներ։ Կարելի է որ այս թշուառ օրիորդին ծնողքը գտնելու միջոցները նօտարին քով գտնենք։ Հիմակ նայինք որ Մէդր տ'էքօլին որդւոյն վրայ սաացած տեղեկութիւններդ նոյնչափ ճշգրիտ են։

— Եթէ ոչ այնչափ ճշգրիտ... զէթ բաւական գոհացուցիչ են։

— Տիրաւի, քու Պատինոգ գանձ մ'է։

— Ես տեսնես որ սա Պրա-Ռուժ այս բաներուն շանժիչ լծակն է։ Պ. Պատինոն, որ անշուշտ ոսոիկանութեան հետքիչ շատ յարաբերութիւն ունի, արդէն ըսեր էր մեզ որ նա շատ մը ոճրագործներու միջնորդն է, նոյն միջոցին որ մեր իշխանն սկսաւ ամէն ջանքն ընել հրէշ Մէդր տ'էքօլին տարաբաղդ կին՝ ծօրժ Տիւրէսնէլի գաւակը գտնելու համար։

— Անտարակոյս. և մեր իշխանը Միջնաքաղքին՝ թիւ 13 Գէվ փողոցին մէջ Պրա-Ռուժին բնակարանը փնտռելու ատենն էր որ Շուրինէօրի և լա Կուալէօզի հանդիպեցաւ։ Ն. վսեմափայլութիւնն այս առթիւ այն սոսկալի որջերն ուզեր էր տեսնել, մտածելով որ թերևս այն տղմէն քանի մը թշուառներ ալ կ'աղատէ...։ Իր նախազգածումն անհիմն չէր, բայց քանի քանի վտանգներէ անցնելով. տէր Աստուած։

— Վտանգներ՝ որոց դու ալ քաջապէս մասնակից եղար, սիրելի Մրրֆ...։

— Եւ միթէ ասոր համար մեր իշխանին յոգոյ ածխոգոյնը

չե՞մ։— Պատասխանեց սեպուհը ժպտելով։

— Լաւագոյն է ըսել, իմ ազնիւ բարեկամ, որ անոր անվեհեր թիկնապահ պահապանն ես։ Բայց կրկնութիւնը պիտի ընեմ եթէ արիութեանդ և անձնուիրութեանդ վրայ խօսիմ։ Ուստի իմ յայտագիրս կը շարունակեմ...։— Ահաւասիկ տիկին Ժորժի և Մէդը տ'էքօլի կամ Ցիւրէսնէլ կոչուած անձին որդի՝ Ֆրանսուա Ժէրմէնի վերաբերող ծրագիրը։

« Գրեթէ տասն ութ ամիս կայ, երիտասարդ մը Ֆրանսուա Ժէրմէն անուն, Բարիզ հասաւ Նանդէն գալով, ուր նօսել և ընկեր. սեղանաւորին մօտ գրագիր էր։

« Մէդը տ'էքօլին խոստովանութեան և իր վրայ գտնուած շատ մը նամակներու նայելով՝ այն եղերնագործը՝ որուն Մէդը տ'էքօլ իր որդին յանձներ էր որ վատթարէ, օր մ'իրաւունքէն գործերուն զանի աջակից ընելու մտօք, յայտնեց այս երիտասարդին դաւակցութիւն մը՝ որուն նպատակն էր Ֆրանսուա Ժէրմէնի ծառայած տան դէմ գողութեան և թալանութեան փորձ մը փորձել, և առաջարկեց անոր որ այս ձեռնարկին նպաստաւոր գտնուի։

« Ժէրմէն այս առաջարկութիւնը սրտմտութեամբ մերժեց. բայց իր դասակարակը բերան տալ չուզելով անանուն գիր մը գրեց գլխաւորին, ծանոյց անոր պատրաստուած գարանը և գաղանի ձգեց և հեռացաւ Նանդ քաղքէն, որպէս զի զինքն իրենց ոճիրներուն գործի և դաւակից ընելու աշխատող անձերուն ձեռքէն աղատ մնայ։

« Երբ այս անզգամներն Ժէրմէնի մեկնիլն լսեցին՝ Բարիզ եկան, Պրա-Ռուժին հետ բանակից եղան և Մէդը տ'էքօլին որդւոյն եաւէն ընկան, անշուշտ արիւնռուշտ դիտաւորութեամբ, վասն զի այս երիտասարդն իրենց խորհուրդներուն տեղեակ էր։ Երկար բարակ խուզարկութիւններ ընելէն ետև՝ անոր հասցէն գտնելու յաջողեցան, բայց ուշ.

Ժէրմէն քանի մ'օր առաջ զինքը որսալու աշխատող մարդոց սեսնելուն՝ անմիջապէս բնակութեան տեղը փոխեր էր, գուշակելով անոր Բարիզ գալուն շարժառիթը։ Այսպէս Մէդը տ'էքօլին որդին իր հալածողներուն երեսէն նորէն փախաւ։

« Սակայն շուրջ վեց շաբաթ կայ, ասոնք կարող եղան իմանալու որ երիտասարդը թիւ 17 Դամբլ փողոցը կը բնակի։ Երկուն մը տուն գտնալու տեսն մաղ մնաց որ թակարթը պիտի խնար. (Մէդը տ'էքօլ այս պարագան չյայտներ էր մեր տիրոջ)։

« Ժէրմէն իսկոյն գուշակեց թէ այս ծուղակը որուն գործն է. Դամբլ փողոցէն ելաւ և իր նոր բնակարանը անյայտ մնաց։ Հետազօտութիւններն այս վիճակի մէջ էին, երբ Մէդը տ'էքօլ իր յանցանաց պատիժը կրեց։

« Ճիշտ նոյն միջոցին էր նաև որ մեր Վ. տիրոջ հրամանով հետազօտութիւնները սկսան։

« Ահաւասիկ անոնց արդիւնքը։

« Ֆրանսուա Ժէրմէն գրեթէ երեք ամիս բնակեր է Դամբլ փողոցին թիւ 17 տունը. տուն մը՝ որ իրօք շատ հետաքրքրական է տնեցիներուն շատին ունեցած սյլանդակ բարուց և արհեստին համար։ Ժէրմէն՝ իր գուարթ, պաշտօնասէր և անկեղծ բնաւորութեամբն ամենուն սէրը գրաւեր էր։ Թէև իր հասոյթը կամ ամսականը խիստ չափաւոր կ'երևէր, նոյն տան վերնայարկը բնակող չքաւոր ընտանիքի մը մեծ հոգ և խնամք տարեր է։ Գարասպ տեղ հարց ու փորձեր եղան Դամբլ փողոցին մէջ իմանալու համար թէ Ժէրմէնի նոր բնակարանն ու արհեստն ինչ է. կը կարծուի թէ գրատան մը մէջ կամ վաճառականի մը քով կը ծառայէր, վասն զի առտու դուրս կ'ելնէր և իրկունը ժամը տասնին կը դառնար տունը։ Դամբլ փողոցի տան վարձուոր միանակ անձ մը կայ՝ որ տեղեակ է թէ սոյն երիտասարդը այժմ ուր կը բնակի, և այս դեռահասաղջիկն, որ կ'երևէր թէ սերտ յարաբերութիւն ունի Ժէրմէնի հետ, շատ սիրուն էրֆէզէ (խենշ) մ'է, օրիորդ Ռի-

կօլէդ անունով. . . . ԺԷրմէնի բնակած սենեկին պատկից խցի մը մէջ կը նստի։ Այն սենեակն որ սոյն երիտասարդին երթէն 'ի վեր, պարապ է, այժմ վարձու է։ Այս վերջին տեղեկութիւններն իր բնակութեան տեղը գտնելու առթիւ մեր ծանօթութեան հասած են. . . .»

— Ռիկօլէդ.— ըսաւ յանկարծ Մըրֆի, որ քանի մը վայրկենէ հետէ զինքը մոմոուքն առեր էր —Ռիկօլէդ, ես այս անունը լսեր եմ։

— Ի՞նչպէս, Վօլդր Մըրֆ սեպուհդ— յարեց պարոնը խնտալով —ինչպէս դու, ընտանեաց տէր՝ աղնիւ ու պատկառելի մարդ մը, դու խենէշներու հետ ալ գործ ունիս... ինչ, Ռիկօլէդ օրիորդին անունը քեզի ծանօթ է։ Ա՛հ, ամօթ. . . ամօթ. . . .։

— Իրաւ որ, մեր իշխանն այնպիսի աբսուրդ քաբէկանէրու ծանօթացուց զիս, որ իրաւունք չունիս այս բանին վրայ զարմանալ, պարոն։ Բայց քիչ մը համբերէ. . . . Այո՛, հիմակ միտքս ընկաւ. մեր տէրը լա Կուալէօզին պատմութիւնն ըսելու ատեն՝ այս Ռիկօլէդ այլանդակ անունին վրայ իր խնդուքը չկրցաւ բռնել. որչափ որ յիշողութիւնս կը զօրէ, այս անունը Ֆլէօր–տը–Մարիին բանտակից բարեկամուհիին անունն է կարծեմ։

— Ի՞նչ և է, այս պարագայիս մէջ օրիորդ Ռիկօլէդ կրնայ մեզ իրապէս օգնել։ տեղեկագիրս աւարտեմ։

«Գէշ չըլլար կարծեմ եթէ Դամբլ փողոցի տան պարապ սենեակը վարձու բռնուի։ Հետազօտութիւններն աւելի առաջ տանելու հրաման չկար, սակայն դռնապանուհիին բերնէն ելած մէկ քանի խօսքերէն իրաւամբ կը կարծուի թէ՝ ոչ միայն օրիորդ Ռիկօլէդին ձեռօք շատ դիւրին է Մէդր տ'Էքսլին որդւոյն վրայ ճշդրիտ տեղեկութիւններ ստանալ, այլ և մեր Վ. տէրը ասով առիթ մը կունենայ այնպիսի վարք ու բարք, ճարտարութիւններ և մանաւանդ տառապանքներ դիտելու, որոց դ[illegible] [illegible] [illegible] [

ժանաժողովին խորհուրդներուն վրայ, ուր գերմանիկ իշխաններուն իրաւանց անօրէնութիւնն եղաւ։ Կերևի ինձ որ 1815ին, երբ Ծերունի տ'Արվիլ մարքիզը դահակալ մեծ դրսին հետը կը գրաստուէր, մեր Վ. տիրոջև դեռահասակ տ'Արվիլի բարեկամութիւնը սկսաւ, վասն զի ան ժամանակ երկուքն ալ տղայ էին։

— Այո՛, այն մանկական երանաւէտ օրերուն անուշ յիշատակը դեռ կը պահեն։ Այս բաւական չէ, իշխանն այնպիսի խորին երախտագիտութիւն մը կը տածէ այն մարդուն, որուն բարեկամութիւնը իր հօրը չափազանց օգտակար եղած է, որ տ'Արվիլի գերդաստանէն եղող անձերն իր բարերարութեան իրաւունք մ'ունին։ Ուստի տիկին Ժօրժն ալ ոչ միայն իր աղէկից և առաքինի վարուց պատճառաւ շնորհ և երախտիք դտած է իշխանին քով, այլ և սոյն արենակցութեան համար ալ։

— Տիկին Ժօրժ, Տիւբէզնէլի կինը, Մէդը տ'Էքօլ անուանեալ եղեռնագործին ամուսինը։ — գոչեց պարոնը։

— Այո՛... մեր փնտռած Գրանսուա Ժէրմէնի մայրը, այն պատանին, որուն հետքը... յուսամ որ պիտի գտնենք...։

— Պ. տ'Արվիլին ազգականն է։

— Իր մօրը քեռադուստրը և սրտակից բարեկամուհին էր։ Ծերունի մարքիզը տիկին Ժօրժին համար անձնուէր բարեկամութիւն կը տածէր։

— Բայց, սիրելի Մըրֆ, ինչպէս տ'Արվիլի գերդաստանը թողուց որ տիկին Ժօրժ այն հրէշին, Տիւբէզնէլին հետ կարգուի։

— Այս տարաբաղդ կնոջ հայրը, Պ. տը Լայնի, որ յեղափոխութենէ առաջ Լանկտօգի տեղակալ էր, շատ կալուածներ ունէր, և ժամանակին հալածումէն ղերծ մնաց։ Երբ այն սոսկալի օրերուն խաղաղութիւնը յաջորդեց՝ փոյթ տարաւ իր աղջիկն ամուսնացնելու։ Իրը հետամուտ Տիւբէզնէլ ներկայացաւ։ Ընտիր ոստանիկ գերդաստանէ էր, և հարուստ։ կեղծ ու պատիր կերպերովն կը պարտկէր իր վատշուէր յօժարամտութիւնները։ ուստի օրիորդ տը Լայնին իրեն կին

առաւ։ Այս մարդուն մալի կիրքն, որ ատեն մը թաղունէ՝ին, շատ չանցաւ երևան ելան։ այնչափ ստակ կը վատնէր, և ինքզինքը խաղի և յետին ծայր շուայտութեան տուեր էր որ քիչ ատենէն իր ու կողակցին հարստութիւնն ցոփութեան և խաղամոլութեան մէջ փճացուց։ Տիկին Ժօրժ Տիւբէզնէլի ընակած հողերն ալ ծախուեցան և այն ատեն իր որդին հետն առնելով՝ մարքիզուհի տ'Արվիլին մօտ եկաւ, որ զինքը իր կնոջ պէս կը սիրէր։ Տիւբէզնէլ այսպէս կործանելով՝ ապրուստը ճարելու համար տպօրէն միջոցներու ձեռք զարկաւ և սկսաւ ոճիրներ գործել։ ուստի դրամակոփ, դող և մարդասպան եղաւ, ցմահ թիարանի դատապարտեցաւ և կերպով մը կնկանը քովէն որդին գողցաւ՝ որպէս զի իրեն նման անընդդիմի մը յանձնէ...։ Մնացածը գիտես։ Իր էրիկին դատապարտութենէն ետև՝ տիկին Ժօրժ, առանց պատճառ յայտնելու, այրի մարքիզուհի տ'Արվիլին քովէն հեռացաւ և Բարիզ գալով՝ ուզեց իր նախատինքը պարտիկել և յետին թշուառութեան մէջ ընկաւ։ Երկար կը լայ պատմել քեզ այն պարագաներն որով մեր իշխանը այս ընտիր կնոջ տառապանքն և տ'Արվիլ գերդաստանին հետ ունեցած ազգակցութիւնն իմացաւ. այս միայն ըսեմ որ վերհանձնօրէն անոր օգնեց և Բարիզէն հանելով՝ զանի Պուգվալ աղարակը բնակեցուց, ուր կը գտնուի հիմակ լա Կուալէօզին հետ։ Այս անպորրաւէտ վայրն, եթէ ոչ երջանկութիւն, իր հանգըստութիւնը գտաւ թշուառ կինը, և աղարակը վարելով կրնայ իր յաւերը սփոփել...։ Իսկ իշխանը, մէկ կողմէն տիկին Ժօրժին վշտալի սիրտը չայլայլելու, և միւս կողմէն ըրած բարիքը ճանչնալ չսիրելուն, Պ. տ'Արվիլին չիմացուց անդամ որ իր ազգականն անհնարին չքաւորութենէ մ'ազատեր է։

— Ահա հիմա կը հասկընամ թէ ինչ պատճառաւ իշխանն այսչափ հոգ ունի այս խեղճ կնկան զաւակը գտնելու։

— Ասիկ ալ կ'իմացուի, սիրելի պարոն, տ'Արվիլի բոլոր

ցերդաստանին համար ունեցած սէրը, և որչափ ցաւ կը զգայ դեռահաս մարքիզին արամութիւնը տեսնելով, թէև երջանիկ ապրելու ամէն միջոցներն ունի։

— Եւ արդարև, ինչ կը պակսի Պ. տ'Արվիլլին։ Ամէն ջան ունի, ազնուականութիւն, հարստութիւն, խելք, երիտասարդութիւն, իր կինն չքնաղ է, թէ կեղանի և թէ խոհեմ...։

— Իրաւ է, և իշխանը Պ. տ'Արվիլլին սև մելամաղձութեան պատճառն 'ի զուր թափանցելու աշխատելէն եաւ՝ ուզեց հասու ըլլալ այն տեղեկութիւններուն, որոց վրայ արդէն խօսեցանք. մարքիզը չափազանց շնորհակալ եղաւ իշխանին բարեսրտութեան, բայց իր արամութեան մասին ոչ ինչ յայտնեց։ Թերևս սրտի ցաւ մ'է ունեցածը։

— Սակայն կըսեն թէ շատ կը սիրէ իր կինը, և կինն ալ քնաւ նախանձի առիթ մը չտար։ Սոնէպ կը հանդիպիմ անոր ընկերութիւններուն մէջ, և ինչպէս ամէն նորարոյս և չքնաղ կին, ինքն ալ շատ մը սիրարկուներ ունի. բայց իր անուանին արատ մը բերած չէ ամենևին։

— Այո՛, մարքիզը՝ իր կնոջ համար միշտ զոհութիւն կը յայտնէ...։ Մինակ պզտիկ վէճ մ'ունեցաւ անոր հետ Սառա Մակ-Կրեկոր կոմտուհիին նկատմամբ։

— Ուրեմն անոր հետ տեսութիւն կընէ մարքիզուհին։

— Տ'Արվիլ մարքիզին հայրը, դժպատեհ առթիւ մը տասն եօթ կամ տասն ութ տարի կայ, Սառա Եէյդօն որ չէզպրին և իր եղբայրը ճանչցաւ, երբ Բարիզ կը բնակէին և Անդղլոյ դեսպանուհին անոնց մեծ պատիւ կը ցուցնէր։ Ծերունի մարքիզն իմանալով որ քոյր ու եղբայր Գերմանիա կերթան յանձնարարական գիրեր առաւ անոնց առ մեր իշխանին հայրն, որուն հետ շքեղանակ կը թղթակցեր։ Աւաղ Պ. որ Նրաուն, եթէ այս յանձնարարական գիրերը շարուէին շատ մը գժբաղդութիւններ թերևս չէին պատահեր, վասն զի այն առեն մեր իշխանն այս կինն երբեք պիտի չճանչեր։

Վերջապէս երբ Սառա կոմտուհին վերադարձաւ, քաջ գիտնալով որ իշխանն մարքիզին սերտ բարեկամն է, տ'Արվիլլի ապարանը ներկայացաւ, իշխանին հետ տեսութիւն ընելու յուսով, վասն զի ինչ յամառութեամբ որ կոմտուհին իշխանին եաեէն ընկած է, նոյնպիսի յամառութեամբ իշխանն ալ անոր երեսէն խոյս տալու կ'աշխատի...։

— Մարդու հագուստով ծպտիլ և իշխանին ետեէն մինչև Միջնաքաղաքն արշաւել... այսպիսի գործ մը միայն կոմտուհիին ձեռքէն կրայ...։

— Թերևս կը յուսար որ իշխանին սիրտը կը շարժէ և հետը տեսութիւն մ'ընելու կսպասէ, թէև միշտ մերժած է...։ Բայց տիկին տ'Արվիլլին դառնալով՝ իր ամուսինն՝ ուրուն մեր իշխանը պէտք եղածին պէս խօսեր է Սառայի վրայ, յորդորեր էր իր կինն որ կարելի եղածին չափ քիչ տեսնուի Սառային հետ. բայց դեռահաս մարքիզուհին, կոմտուհիին սուտ ու պատիր խօսքերէն հրապուրուելով՝ փոքր ինչ անսասանեց Պ. տ'Արվիլլին խորհուրդներուն։ Ասոր վրայ թեթև անհամաձայնութիւն մ'ընկաւ անոնց մէջ, թէև կարելի բան չէ կարծել որ մարքիզին ծանր թախծութեան պատճառն այս ըլլայ։

— Ա՛հ, կիները... կիները, սիրելիդ իմ Մըրֆ. շատ կը յաւիմ որ տիկին տ'Արվիլ Սառային հետ յարակցութիւն ունի... Այս դեռաբոյս չքնաղ՝ մարքիզուհին այնպիսի սադայելի մը հետ տեսնուելով իր անուան արատ կրնայ բերել։

— Սադայէլ ըսելուդ— յարեց Մըրֆ —միտքս ընկաւ սա նամակը՝ որ Սէոիլի՝ արժանաւոր Դաւթին անարժան կնոջ կը վերաբերի։

— Խօսքը մեր մէջը, սիրելի Մըրֆ, այս յանդուգն և խառնածին կինը[1] (métisse) արժանի է արդարև այն սոսկալի պատժին՝ զոր իր երիկը, մեր սիրելի հնդիկ բժիշկը, իշխանին

[1] Գաղթածին մը՝ որ ապիտակամերթ հօրէ և թիւամերթ գերուհի մը կամ սերի։ Խառնածիններն՝ քանի մ'անշնորհալի նշաններով կը տարբերին ձերմակներէն։ (Ծ. Հ.)

հրամանաւ Սէդր տ'Էքօլին տնօրինեց։ Այս կինն ալ արքունի թափած և ապականութեան յետին ծայրը հասած է։

— Բայց և այնպէս, որչափ զեղանի, որչա՛փ հրապուրիչ է։ Շնորհալի երևոյթով վաշուէր հոգի մը միշտ կրկնակի ատելում կը պատճառէ ինձ։

— Այս նկատմամբ Սէսիլին իրօք զղուելի է. բայց յուսամ որ այս անզգամ կնոջ մասին՝ իշխանին կողմն տրուած վերջին հրամաններն չեն գործադրուիր սոյն նամակին ուժովը։

— Ես հակառակը կը մտածեմ... պարոն...։

— Իշխանը կուզէ որ Սէսիլին մշտապէս փակուած բերդէն ազատելու համար իրեն օգնեն։

— Այո՛։

— Եւ իր կարծեցեալ առևանգը զինքը Գաղղիա, Բարիզ բերէ։

— Այո՛, այս բաւական չէ... այս նամակը կը հրամայէ որ ըստ կարի Սէսիլիի փախուստը փութացնեն և շուտ մը ձամբայ հանեն, որպէս զի կարող ըլլայ քիչէն քիչ տասն հինգ օրուան մէջ Բարիզ գտնուիլ։

— Խելքս չհասնիր այս բանին... իշխանը Սէսիլիին համար միշտ ատելութիւն ունէ՛ր...։

— Հիմա ատելի ևս ունի, եթէ կարելի է ատելի ունենալ։

— Եւ սակայն իր քովը կանչել կտայ զանի։ Բայց դարձեալ, ինչպէս որ քաջ մտածեր է իշխանը, միշտ դիւրին է Սէսիլին վերստին բանտարկել, եթէ չկատարէ ինչ որ անոր կը յուսայ։ Հրաման տրուած է բանտապահին տղուն որ Սէսիլիին սէր կեղծելով զանի արևանդէ. այս խորհուրդը գլուխ հանելու համար ամէն կերպով անոր ձեռնտու պիտի գտնուին...։ Խառնածին կինն այս ազատումն առիթը ձեռքէ չհանելու համար իր առևանդին կը հետևի, Բարիզ կը հասնի իրաւ է, բայց միշտ դատապարտութեան տակ կը մընայ, միշտ փախստական կալանաւոր կին մ'է, և պէտք եղած միջոցներն տնօրինած եմ, որպէս զի, երբ մեր իշխանն հաճի, զանի ձերբակալ ընելով բանտ դնել տամ։

— Այլ, սիրելի պարոն, երբ Դաւիթ իշխանին բերնէն իմացաւ Սէսիլիի գալուստը քար կտրեցաւ. ապա գոռաց։ «Յուսամ, վսեմափայլ տէր, որ չէք բռնադատեր զիս այն հրէշը տեսնելու։— «Անհոգ եղիր— պատասխանեց իշխանը— ոչ չպիտի տեսնես զանի... բայց անորմէ պէտք ունիմ մէկ քանի խորհուրդներս գործադրելու համար։» Ասոր վրայ կարծես թէ Դաւիթին սրտին վրայէն մեծ բեռ մ'ելաւ։ Սակայն, հաւատի եմ որ, վշտալի յիշատակներ անոր միտքը պաշարեցին։

— Թշուառ հնդիկ... կերևի թէ միշտ զանի կը սիրէ։ կըսեն թէ միշտ սիրուն է Սէսիլին։

— Շատ չքնաղ... շատ չքնաղ է։ Գաղթածնի մը անագորոյն աչքը պէտք է որ կարող ըլլայ հասկնալ խոսքեան այն անանշմարելի մութ երանգն որ այս խառնածին կնոջ վարդագոյն ըղձանքներուն պակը թեթև մը կը գունաւորէ։ Մեր հիւսիսային թարմաւէտ զեղանի կիները անոր չափ թափանցիկ ու սպիտակ մարմ մը չունին։

— Գաղղիա էի երբ իշխանն Ամերիկայէն վերադարձաւ։ Հետը բերելով Դաւիթն ու Սէսիլին. Գիտեմ որ այս ընտիր մարդն այն ատենն 'ի վեր իշխանին կապուած է երախտագիտական ջերմ ոգւով մը. բայց միշտ անպէտ էի թէ ինչ առթիւ մեր իշխանին ծառայութեան մէջ մտեր, և ինչպէս Սէսիլին, զոր ամուսնութենէ գրեթէ տարի մ'ետքը տեսայ։ իրեն կին ընտրեր է, և Աստուած գիտէ թէ արդէն ինչ մեծ գայթակղութեան տեղի կտար...։

— Իմ սիրելի պարոն, կարող եմ քու փափաքած տեղեկութիւններդ լիովին հաղորդել քեզի. ես ալ ուղեկից էի իշխանին, մինչ Ամերիկա էր, ուր ամենահաճելի վիճակէ մ'ազատեց Դաւիթն ու իր խառնածին կինը։

— Մեծապէս շնորհապարտ եմ քեզ, սիրելի Մըրֆ, — ըսաւ Պարոնը —պատրաստ եմ մտիկ ընելու։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

		Երես
ԳԼՈՒԽ Ա.	ԿԱՏԱԼՈՆ	17
Բ.	ՕԿՐՈՒԱԻ	25
Գ.	ԼԱ ԿՈՒԱԼԻՕԶԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ	38
Դ.	ՇՈՒՐԻՆԻՕՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ	55
Ե.	ՉԵՌՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ	68
Զ.	ԹՈՄԱՄ ՍԷՅԹՕՆ ԵՒ ՍԱՌԱՆ ԿՈՄՍՈՒՀԻՆ	76
Է.	ՔՍԱԿ ԿԱՄ ՄԱՀ	84
Ը.	ՃԵՄԵԼԻՔ	89
Թ.	ԽՆՂ	100
Ժ.	ԻՂՁԵՐ	109
ԺԱ.	ՄԸՐԹ ԵՒ ՌՕՑՈՒՂՔ	127
ԺԲ.	ՃԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ	145
ԺԳ.	ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ	158
ԺԴ.	ԱՐԻՒՆՈՑ ՍԻՐՑ	165
ԺԵ.	ԵԿՈՒՂ	174
ԺԶ.	ՀԻՒԱՆԴՊԱՀ	178
ԺԷ.	ՊԱՏԻԺ	194
ԺԸ.	ԻԼ–ԱՏԱՄ	210
ԺԹ.	ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ	216
Ի.	ԵՐԹ	225
ԻԱ.	ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ	228

75 n.

202

2 202

2469
2470

14-96

2013